ԾՐԱԳՐԱՅԻՆ
ԱՋԴԱԳԻՐ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»
փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ

Երևան 2023

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՋԴԱԳԻՐ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»
Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը
0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 10, հեռ.
(+374 60) 757-000, (+374 11) 757-000
Էլ.փոստ՝ info@armswissbank.am,
ինտերնետային կայք՝ www.armswissbank.am

Առաջին տրանշ

Արժեթղթերի տեսակը ՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը ՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը ՝	200,000 (երկու հարյուր հազար) հատ
Արժեթղթերի անվանական արժեքը՝	50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ
Արժեկտրոնը ՝	11.75 %
Շրջանառության ժամկետը ՝	4 տարի
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

Երկրորդ տրանշ

Արժեթղթերի տեսակը ՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը ՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը ՝	100,000 (մեկ հարյուր հազար) հատ
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեկտրոնը ՝	6.00 %
Շրջանառության ժամկետը ՝	4 տարի
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

Երրորդ տրանշ

Արժեթղթերի տեսակը ՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը ՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը ՝	100,000 (մեկ հարյուր հազար) հատ
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (մեկ հարյուր) Եվրո
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	10,000,000 (տասը միլիոն) Եվրո
Արժեկտրոնը ՝	4.50 %
Շրջանառության ժամկետը ՝	4 տարի
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»
Տեղաբաշխողի անվանումը

Փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

0010 Հայաստանի հանրապետություն, ք. Երևան, Վ. Սարգսյան 10,
հեռ. (37460) 757000, (37411) 757000,
Էլ. Փոստ՝ info@armswissbank.am
Ինտերնետային կայք՝ www.armswissbank.am

«ՀՀ կենտրոնական բանկի կողմից Ծրագրային ազդագրի (Այսուհետ՝ Ազդագիր) գրանցումը չի հավաստում ներդրման ապահովությունը, ներկայացված տեղեկատվության ճշտությունը կամ իսկությունը»:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի բովանդակությունը:

Ստորագրող անձինք

18.05.23թ.

Վարտան Սիրմակես
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ խորհրդի նախագահ

18.05.23թ.

Գևորգ Չաքմիշյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ

18.05.23թ.

Ռաֆֆի Բալյոզյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ

18.05.23թ.

Արմենակ Դարբինյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ

18.05.23թ.

Մերուժան Գալստյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի անդամ

Գևորգ Մաչանյան 18.05.23թ.
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության նախագահ - Գործադիր տնօրեն

Արկադի Փինաչյան 18.05.23թ.
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Ներդրումային դեպարտամենտի տնօրեն

Գրիգոր Մովսիսյան 18.05.23թ.
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման դեպարտամենտի տնօրեն

Գրիգոր Հովհաննիսյան 18.05.23թ.
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Վարկավորման դեպարտամենտի տնօրեն

Գևորգ Խաչատրյան 18.05.23թ.
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն

Արա Մակարյան 18.05.23թ.
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Գործադիր տնօրենի տեղակալ – Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն

Անժելա Բարսեղյան
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Առևտրի ֆինանսավորման և թղթակցային հարաբերությունների դեպարտամենտի տնօրեն

Սեդրակ Բադդասարյան 18.05.23թ.
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրինության անդամ,
Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտի տնօրեն
Գլխավոր հաշվապահ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ 7

1. ԲԱԺԻՆ. ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԻ ԵՎ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 7

Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ 7

Բանկին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր 14

Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ 14

Աուդիտ իրականացնող անձ 15

Բանկի կառավարման մարմինների կազմի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն 16

Բանկի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ 17

Բանկի՝ առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները 18

Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները 28

2. ԲԱԺԻՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 30

Ռիսկային գործոններ 30

Հիմնական տեղեկատվություն 31

Առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը 31

3. ԲԱԺԻՆ. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 43

Անկախ աուդիտորները 43

Ռիսկային գործոններ 43

Տեղեկատվություն Բանկի մասին 46

Բիզնեսի նկարագիրը 48

Բանկի կառուցվածքը 59

Բանկի զարգացման վերջին միտումները 60

Բանկի շահույթի կանխատեսումը 60

Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 61

Բանկի կառավարման մարմինների գործունեությունը 72

Հսկող անձինք 72

Տեղեկատվություն Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին 73

Էական պայմանագրեր 73

Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը 73

Այլ տեղեկատվություն 73

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

Ամփոփաթերթը հանդիսանում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) և վերջինիս կողմից թողարկվող պարտատոմսերի համառոտ նկարագրություն, հետևաբար առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական փաստաթղթի վրա:

Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու դեպքում ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք կրում են քաղաքացիական պատասխանատվություն:

Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ վերջիններիս ինտերնետային կայքում՝ www.armswissbank.am:

1. ԲԱԺԻՆ. ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԻ ԵՎ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղեկատվություն Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է
հայերեն ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ռուսերեն ՝ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО “АРМСВИСБАНК”.
անգլերեն ՝ “ARMSWISSBANK” CLOSED JOINT STOCK COMPANY.
Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է
հայերեն ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ռուսերեն ՝ ЗАО “АРМСВИСБАНК”
անգլերեն ՝ “ARMSWISSBANK” CJSC
Բանկի պետական գրանցման վայրն է՝
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10:
Բանկի պետական գրանցման համարն է 26:
Բանկի գտնվելու վայրն է՝
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10
Կապի միջոցները՝
հեռ. (37460) 757-000,
ֆաքս (37410) 54-06-27,
էլ. փոստ info@armswissbank.am,
ինտերնետային կայք՝ www.armswissbank.am:
Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:
Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապնվել Բանկի մասնագետների հետ հետևյալ հեռախոսահամարով՝
(37460) 757-001:

Բանկը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2004թ. սեպտեմբերի 15-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 2004թ-ի հոկտեմբերի 7-ին: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N 0476: 2005թ. փետրվարի 25-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 84 լիցենզիան:

Բանկի ապրանքային նշանն է՝

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ARMSWISSBANK

որը գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 25.08.2005թ.:

Բանկի հիմնադրումը: Բանկը ավելի քան 18 տարի է ծավալում է գործունեություն ՀՀ բանկային շուկայում: Բանկի հիմնադիր է հանդիսանում շվեյցարական ժամացույցների «Ֆրանկ Մյուլլեր Ուոչլանդ» ընկերության հիմնադիր, սեփականատեր և գործադիր տնօրեն, հայազգի գործարար Վարտան Սիրմակեսը: Ներկայումս Վարտան Սիրմակեսը հանդիսանում է Բանկի անուղղակի նշանակալից մասնակից (վերջնական շահառու):

Բանկի առաքելությունն է հաճախորդներին մատուցել նորարարական, առաջադեմ և միջազգային շուկաներում ընդունված բանկային ծառայություններ՝ հմուտ և պրոֆեսիոնալ անձնակազմի շնորհիվ ու տրամադրել նրանց մեր ժամանակը և ռեսուրսները՝ հավատարիմ մնալով սոցիալական պատասխանատվության ու կայուն ֆինանսավորման մեր սկզբունքներին:

Բանկի տեսլականն է՝ բանկային ծառայությունների ու կայուն ֆինանսավորման ճկուն լուծումների միջոցով դառնալ Հայաստանի Հանրապետությունում առաջատար կորպորատիվ և ներդրումային բանկ ՝ մեր հաճախորդների համար ֆինանսական շուկայում լինելով լավագույն գործընկեր:

Բանկի հեռանկարային նպատակներն են՝

1. իրավաբանական անձ հաճախորդներին առաջարկել կորպորատիվ բանկային ծառայությունների լայն փաթեթ, որը կներառի ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական բանկային ծառայություններ, մասնավորապես՝ վարկեր, վարկային գծեր, հիփոթեքային վարկավորում, օվերդրաֆթ, ֆակտորինգ, լիզինգ, ինչպես նաև առևտրի ֆինանսավորման գործիքներ (ակրեդիտիվ, երաշխիք, գնման պատվերի ֆինանսավորում, արտահանման խթանման ֆինանսավորում և այլն), և հաճախորդի կարիքներից բխող այլ ծառայություններ:

2. ՀՀ ֆինանսական շուկայում լինել առաջատարներից, ինչպես ՀՀ այնպես էլ արտասահմանյան արժեթղթերով իրականացվող ներդրումային գործառնությունների գծով:

3. Կորպորատիվ արժեթղթերի շուկայում մատուցել անդերրայթինգի և մարքեթ մեյքերության ծառայություններ և այս գծով զբաղեցնել առաջատար դիրքեր:

4. ՀՀ ֆինանսական շուկայում ամրապնդել հաստատված դիրքը որպես կայուն և վստահելի ֆինանսական կառույց, ինչպես նաև լինել լավագույններից որպես բանկերի և ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների համար մարքեթմեյքեր հաստատություն:

5. Իրականացնել միջազգային շուկաներում Բանկի ներդրումային ծառայությունների առաջմղման ուղղությամբ միջոցառումներ:

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 10,000,200,000.00 (տասը միլիարդ երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 16,667 (տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսի, յուրաքանչյուրը 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի 14,588 (տասնչորս հազար հինգ հարյուր ութսուներ) հատ (87.53%) սովորական բաժնետոմսերի սեփականատեր է հանդիսանում «Էյչ Վի Էս Հոլդինգ» Ջի Էմ Բի Էյչ-ն, իսկ 2,079 (երկու հազար յոթանասունինը) հատ (12.47%) սովորական բաժնետոմսերի սեփականատերն է հանդիսանում «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն:

Միևնույն ժամանակ որպես վերջնական շահառու՝ 16,667 (տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերով Վարտան Սիրմակեսը հանդիսանում է անուղղակի նշանակալից մասնակից:

Բիզնեսի համառոտ նկարագիր: Բանկը համաձայն իր կողմից որդեգրված ռազմավարության՝ իր հաճախորդներին մատուցում է հետևյալ ֆինանսական ծառայությունները.

1. **Վարկային ծառայություններ**

Կորպորատիվ վարկավորում,

ՓՄՁ վարկավորում

Կորպորատիվ վարկերի պորտֆելում ընդգրկված են խոշոր և ՓՄՁ հաճախորդներին շրջանառու և կապիտալ ներդրումների նպատակով, այդ թվում՝ առևտրի ֆինանսավորման, գյուղատնտեսական (պետական ծրագրերի շրջանակում) նպատակներով տրված վարկերը և ֆինանսական վարձակալությունները, վարկային գծերը, օվերդրաֆտները, և այլն, բացառությամբ նախագծային ֆինանսավորման շրջանակում տրված վարկերի պորտֆելի (որի մասին ներկայացված է առանձին բաժնով): Բիզնես վարկավորման ոլորտում մեծ նշանակություն ունեն ՀՀ կառավարության կողմից տարբեր ոլորտների աջակցության նպատակով ներդրված սուբսիդավորման ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկային գործիքները (վարկեր, վարկային գծեր և այլն) և առևտրի ֆինանսավորման նպատակով տրված վարկերը: Հատկանշական է, որ պետական և մասնավոր ընկերությունների պատվերների ավելացմանը զուգահեռ նկատվում է բանկային երաշխիքների պորտֆելի աճ: Միևնույն ժամանակ էականորեն աճել է լիզինգային գործիքների ծավալները, ինչը պայմանավորված է կառավարության կողմից համապատասխան ոլորտում սուբսիդավորման ծրագրերի առկայությամբ: ԱՖԾ ոլորտում Բանկը երկար տարիներ համագործակցում է ՎԶԵԲ-ի, ԱԶԲ-ի հետ, իսկ 2022թ-ից արդեն ԵԱԶԲ-ի հետ՝ 5 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափի շրջանակում և ՏՀՄԲ-ի հետ՝ 5 մլն եվրո սահմանաչափի շրջանակում՝ հաճախորդներին մատուցելով ներմուծման և արտահանման կարճաժամկետ վարկեր, ակրեդիտիվներ, ինկասոներ, միջազգային երաշխիքներ:

Նախագծային ֆինանսավորում

Այստեղ կենտրոնացված է Բանկի վարկային պորտֆելի այն հատվածը, որը իրենից ներկայացնում է վերականգնվող էներգիայի, շինարարության, գյուղատնտեսության և այլ ոլորտների նոր սկսնակ բիզնես նախագծերի կապիտալ ներդրումների ֆինանսվորում:

2022թ-ին նախագծերի ֆինանսավորման ոլորտում առանձնահատուկ ակտիվ են եղել բնակելի և հասարակական կառուցապատման, ինչպես նաև սեփական կարիքների ու արդյունաբերական բիզնես նպատակով կառուցված արևային ֆոտովոլտային կայանների նախագծերի ֆինանսավորումները:

2022թ-ի վերջի դրությամբ Բանկը հաջողությամբ իրականացրել է շուրջ 150 հատ՝ ավելի քան 20 մլրդ ՀՀ դրամ ծավալով արևային կայանների կառուցման ծրագրերի ֆինանսավորում, որն իր ծավալներով ՀՀ բանկային համակարգում լավագույն ցուցանիշներից է: Այսպիսի արդյունքներ հնարավոր է եղել գրանցել KfW բանկի Վերկանգնվող էներգիայի աջակցության ծրագրի և ՎԶԵԲ հետ կնքված Էներգաարդյունավետության ծրագրի շրջանակում մատչելի պայմաններով ներգրավված, ինպես նաև Բանկի սեփական ռեսուրսների հաշվին: Նույն ժամանակահատվածի վերջի դրությամբ Բանկի սեփական ռեսուրսների հաշվին ֆինանսավորված շինարարական նախագծերի թիվը կազմել է 14՝ շուրջ 10 մլրդ ՀՀ դրամի ծավալով: Բանկը Գերմանահայկական Հիմնադրամի էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար ծրագրի շրջանակում առաջինն է, որ ֆինանսավորել է էներգաարդյունավետ բնակելի շենքի շինարարության նախագիծ և այժմ էլ շարունակում է նման նախագծերի ֆինանսավորումը:

Իրականացվել է նաև «Scaling up green finance practices in Armenia» դրամաշնորհային ծրագրի ամփոփիչ և ՀՀ-ում կանաչ ֆինանսավորման ճանապարհային քարտեզի ներկայացմանը նվիրված աշխատաժողով:

Առևտրի ֆինանսավորում և ֆակտորինգ (ներքին և միջազգային)

Առևտրի ֆինանսավորումը և ֆակտորինգը Բանկի գործունեության առանցքային ուղղություններից են: Բանկն առևտրի ֆինանսավորման և ֆակտորինգի ոլորտում հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի առաջատարներից ինչպես տեխնոլոգիաների և պրոդուկտների գործիքակազմի, այնպես էլ ցուցանիշների առումով: Այդ իմաստով ընթացիկ տարին ևս բացառություն չէր, ինչի մասին են վկայում 2022 թ-ին Բանկին շնորհված մրցանակները, այդ թվում՝

- ՎԶԵԲ-ի կողմից չորրորդ տարին անընդմեջ շնորհված «Հայաստանի ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակը,
- ԱԶԲ-ի կողմից երկրորդ անգամ շնորհված «Առաջատար գործընկեր բանկ ՀՀ-ում» մրցանակը և «Լավագույն ՓՄՁ գործարք-Թողարկող Բանկ» մրցանակը,
- Ֆակտորինգային միջազգային ասոցիացիայի (FCI) պլատֆորմում ՎԶԵԲ ԱՖԾ տեխնոլոգիաներով Բանկի կողմից իրականացրած առաջին միջազգային ֆակտորինգային գործարքի համար FCI-ի կողմից «Տարվա լավագույն գործարք» անվանակարգում տրված մրցանակը:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է միջազգայնորեն ընդունված առևտրի ֆինանսավորման գործիքների մեծ տեսականի, մասնավորապես՝ ներքին ռեգրեսային, ոչ

ռեգրեսային ֆակտորինգ և դեբիտորական պարտքի ֆինանսավորում, ինչպես նաև ՎՋԵԲ-ի, ԱՋԲ-ի, ԵԱՋԲ-ի, ՏՀՄԲ-ի, ՀԱԱԳ-ի հետ համագործակցության և FCI-ին անդամակցության շրջանակներում առաջարկում է նաև արտահանման և ներմուծման ֆակտորինգ, ակրեդիտիվ, ինկասո, միջազգային երաշխիք, հետարտահանման և նախաարտահանման ֆինանսավորում: Ավելին, Բանկը դրսևորում է շատ ճկուն քաղաքականություն՝ հաճախորդների ֆինանսական կարիքներին առավելագույնս համապատասխանող լուծումները գտնելու նպատակով:

2022թ-ի վերջի դրությամբ ֆակտորինգի ընդհանուր պորտֆելը, որը ներառում է ներքին և միջազգային ֆակտորինգը, ինչպես նաև հետարտահանման և նախաարտահանման ֆինանսավորումները, կազմել է շուրջ 10.3 մլրդ ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆակտորինգի պորտֆելում կիրառվող գործիքակազմը կրում է կարճաժամկետ բնույթ, արժե դիտարկել նաև 2022թ-ի ընթացքում ընդհանուր տրամադրումների ծավալը, ինչը կազմել է շուրջ 38.6 մլրդ ՀՀ դրամ:

Ներկայումս Բանկի ֆակտորինգային գործարքներից օգտվում են հիմնականում թեթև արդյունաբերության, ձկնաբուծության, խմիչքների արդյունաբերության, պտուղ-բանջարեղենի վերամշակման և պահածոյացման, բեռնափոխադրումների, մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի ընկերությունները:

Անհատական վարկավորում

Մասնագիտացված չլինելով մանրածախ բանկային ծառայությունների շուկայում՝ Բանկը ծառայությունների ամբողջականության ապահովման նպատակով անհատական վարկեր (հիփոթեքային, սպառողական և քարտային վարկեր) է առաջարկում Բանկի կորպորատիվ հաճախորդների սեփականատերերին, ղեկավար անձնակազմին և աշխատակիցներին: Բացի այդ, Բանկն առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում հիփոթեքային վարկավորման ոլորտին, որտեղ տարիներ շարունակ արձանագրել է կայուն աճի տեմպեր:

Բանկն առաջարկում է հիմնականում Երևան քաղաքում բնակարանների ձեռք բերման, վերանորոգման և կառուցապատման վարկեր, ինչպես ֆիքսված, այնպես էլ փոփոխական տոկոսադրույքով մինչև 20 տարի մարման ժամկետով: Հիփոթեքային վարկերի ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում սեփական ռեսուրսները, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման, էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրերից ստացված ծրագրային միջոցները:

Միևնույն ժամանակ Բանկը համագործակցում է մի շարք կառուցապատող ընկերությունների հետ, որոնցից անշարժ գույքի ձեռքբերման վարկերը նույնպես իրականացվում են հիմնականում Բանկի կողմից շուկայում առկա մրցակցային պայմաններով: Այժմ Բանկը համագործակցում է շուրջ 12 կառուցապատող ընկերությունների հետ, որոնց կողմից առաջարկվում են տարբեր արժեքների և տարբեր չափերի բնակարաններ (Մոտ 1,500 բնակարան): Բանկը բարձր է գնահատում նաև կառուցվող շենքերի էներգաարդյունավետությունը և հետևաբար նմանատիպ շենքերից անշարժ գույքի ձեռքբերման վարկերի մասով իրականացնում է ակտիվ վարկավորում:

2. Ներդրումային ծառայություններ

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական, ռուսական և այլ երկրների ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, արժեթղթերով ռեպո և մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ոսկով գործառնություններ, պահառուական ծառայություններ, սվոփ, օպցիոն, ֆորվարդ, ֆյուչերս և այլն:

Բրոքերային գործունեության շրջանակներում Բանկն իր անունից և հաճախորդի հաշվին կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին հաճախորդի հանձնարարականների հիման վրա իրականացնում է արժեթղթերի առք/վաճառք, ինչպես նաև այլ գործողություններ և գործարքներ՝ կապված բրոքերային գործունեության իրականացման հետ:

Արժեթղթերի պահառության շրջանակներում Բանկը հաճախորդներին առաջարկում է հետևյալ ծառայությունները

- Հաճախորդի արժեթղթերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցում.
- Հաճախորդի արժեթղթերի անվանատեր հանդես գալը.
- Հաճախորդի համար առանձին դեպո հաշվի բացում և վարում.
- Հաճախորդին արժեթղթերի վերաբերյալ թողարկողից, Կենտրոնական դեպոզիտարիայից և այլ պահառուից ստացված ամբողջական տեղեկատվության տրամադրում.
- Արժեթղթերի պահառությանն առնչվող և օրենքով թույլատրվող այլ ծառայություններ:

Բանկը պահառության ծառայություններ է մատուցում ՀՀ տարածքում և դրանից դուրս շրջանառվող ազատ շրջանառության իրավունքով ոչ փաստաթղթային արժեթղթերի համար:

Դրամային իրացվելիության կառավարման նպատակով Բանկն իր հաշվետեր հաճախորդներին առաջարկում է ռեպո գործարքների կնքում մինչև 3 ամիս ժամկետով: Ռեպո գործարքների առարկա կարող են հանդիսանալ պետական պարտատոմսերը և Բանկի կողմից Հայաստանի ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջանում գնանշվող կորպորատիվ պարտատոմսերը:

Ժամանակակից շուկաների նորանոր մարտահրավերներին դիմագրավելու, ինչպես նաև ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար Բանկն իր հաճախորդներին առաջարկում է նաև արժեթղթերի բորսայական ու արտաբորսայական շարժի ապահովման, միջազգային տիրույթում շրջանառվող արժեթղթերի ձեռքբեման, կորպորատիվ հաճախորդների արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման կազմակերպման և այլ ծառայություններ:

3. Հաշվարկաղրամարկղային ծառայություններ

Հաշվարկաղրամարկղային ծառայությունների շրջանակներում Բանկի կողմից մատուցվում են հետևյալ հիմնական ծառայությունները.


- Հաշիվների բացում, ավանդների ընդունում, ավանդի գրավով վարկերի տրամադրում

- Էսքրու, դեպո հաշիվների բացում և սպասարկում
- Դրամական և միջազգային փոխանցումներ
- Արտարժութային և ոսկով, կանխիկ գործառնություններ, այդ թվում՝ ոսկու ձուլակտորներով
- Ածանցյալ գործառնություններ
- Անհատական պահախցիկներ
- Քարտերի, ՊՈՍ տերմինալների տրամադրում և սպասարկում,

Ծառայությունների մշակման և մատուցման ժամանակ Բանկն առանձնանում է մի շարք առավելություններով, ինչպիսիք են արագությունը, սպասարկմա բարձր որակը, հուսալիությունը, անհատականացված մոտեցումը և այլն:

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը հետևյալն է.



Բանկը ներկայումս մասնաճյուղեր և ներկայացուցչություններ չունի և չի հանդիսանում որևէ խմբի անդամ:

Բանկին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր

Ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, Բանկն իր գործունեության ընթացքում բախվում է տարբեր ռիսկային գործոնների հետ: Ներդրողները, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է տեղյակ լինեն այդ ներդրման հետ կապված ռիսկերի մասին:

Ընդհանուր առմամբ, պարտատոմսերում ներդրում կատարողները բախվում են ինչպես թողարկող կազմակերպության գործունեության հետ կապված, այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից առաջացող ռիսկերի (շուկայական ռիսկ) և պարտատոմսերի իրացվելիության ռիսկի հետ:

1.2.1. Թողարկողի ռիսկը կապված է վերջինիս ֆինանսատնտեսական գործունեության առանձնահատկությունների հետ: Այս առումով,

Բանկի համար առավել էական ռիսկերն են.

- ***Գործընկերների կամ վարկային ռիսկը***, ինչի էությունը կայանում է նրանում, որ գործընկերները/հաճախորդները չեն կատարի Բանկի նկատմամբ ստանձնած իրենց վարկային պարտավորությունները,
- ***Իրացվելիության ռիսկը***, երբ Բանկի ազատ դրամական միջոցները բավարար չեն ստանձնած պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու համար,
- ***Ընդհանուր տնտեսության ռիսկերը***, երբ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումը կարող են բացասաբար ազդել Բանկի գործունեության, մասնավորապես վարկավորման ծավալների վրա,
- ***Օրենսդրական ռիսկը***, երբ օրենսդրական դաշտի փոփոխությունները կարող են բացասաբար ազդել Բանկի գործունեության վրա,
- ***Գործառնական ռիսկը***, ինչը կարող է ի հայտ գալ ինչպես Բանկի կողմից օգտագործվող տեխնիկական միջոցների խափանման, այնպես և մարդկային գործոնի պատճառով:
- ***Տոկոսադրույքների ռիսկ՝*** տոկոսադրույքների փոփոխման ռիսկը կարող է ազդել Բանկին պատկանող արժեթղթերի պորտֆելի կառավարման արդյունավետության վրա: Մասնավորապես, շուկայում տոկոսադրույքների բարձրացման դեպքում, պարտատոմսի գինը նվազում է, ինչի արդյունքում Բանկը կարող է չստանալ նախատեսվող շահույթը, կամ անգամ վնասներ կրել:

Պարտատոմսերին առնչվող ռիսկերից կարելի է առանձնացնել՝

- ***Տոկոսադրույքների ռիսկ՝*** տոկոսադրույքների փոփոխման ռիսկը կարող է ազդել պարտատոմսերի գրավչության վրա: Մասնավորապես, շուկայում տոկոսադրույքների բարձրացման դեպքում, պարտատոմսի գինը նվազում է, ինչի արդյունքում ներդրողը կարող է չստանալ նախատեսվող շահույթը, կամ անգամ վնասներ կրել:
- ***Արտարժույթի ռիսկ՝*** արտարժույթի ռիսկը առաջանում է փոխարժեքի տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացված եկամուտների վրա:
- ***Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ՝*** պարտատոմսերի շուկայի զարգացվածության ցածր մակարդակի պայմաններում կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ պարտատոմսի սեփականատերը ցանկացած պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների կբախվի:

Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի Գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք օպերատիվ արձագանքում են շուկայական իրավիճակի

փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազեցնելով տարբեր ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը:
2022 թ-ի ընթացքում Բանկի ակտիվները նվազել են մոտ 13.2 մլրդ ՀՀ դրամով՝ պայմանավորված արժեթղթերի պորտֆելի նվազմամբ: Բանկի ստացված զուտ շահույթը 2021 թ-ի համեմատ նվազել է 0.57 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով մոտ 7.2 մլրդ ՀՀ դրամ: Բանկի ընդհանուր կապիտալը 2022թ-ի ընթացքում նվազել է 14,11%-ով և կազմել 50.7 մլրդ ՀՀ դրամ՝ պայմանավորված արժեթղթերի վերագնահատման պահուստների նվազմամբ: 2021թ-ի համեմատ 2022թ-ին Բանկի զուտ տոկոսային եկամուտը նվազել է 27.14%-ով՝ կազմելով 7,9 մլրդ ՀՀ դրամ:

	2022/31/12	2021/31/12	2020/31/12
Զուտ տոկոսային եկամուտ	7,943,785	10,903,095	10,283,044
Գործառնական եկամուտ	12,359,571	11,920,345	16,010,783
Շահույթ մինչև հարկումը	8,929,620	9,408,996	7,453,193
Զուտ շահույթ	7,199,715	7,765,459	6,026,075
Ընդհանուր ակտիվներ	385,172,182	398,420,438	386,139,335
Ընդհանուր պարտավորություններ	334,437,260	339,353,492	323,207,050
Ընդհանուր կապիտալ	50,734,922	59,066,946	62,932,285

Աուդիտ իրականացնող անձ

Բանկի 2020 և 2021 թթ անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից:
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեյշնալի» անդամ:
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0012, Վաղարշյան 8/1
հեռ. +37410 26-09-54, ինտերնետային կայքի հասցեն է՝ https://www.grantthornton.am/:
Կազմակերպության տնօրեն է հանդիսանում Արմեն Հովհաննիսյանը:
2019թ. հոկտեմբերի 14-ին Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից որպես Բանկի 2019-21թթ. գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպություն է ընտրվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

2022. նոյեմբերի 11-ին Բանկը պայմանագիր է կնքել «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության հետ, որի հիմքով 2022թ անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է վերոնշյալ ընկերության կողմից:

Աուդիտորական ընկերության փոփոխությունը պայմանավորված է ՀՀ ԿԲ **«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ»** Կանոնակարգ 22-ի պահանջներով, համաձայն որի՝ «Աուդիտորական կազմակերպությունը կարող է իրականացնել միևնույն ֆինանսական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը անընդմեջ առավելագույնը 6 տարի, ընդ որում, տվյալ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել տվյալ ֆինանսական կազմակերպության

աուդիտը առավելագույնը 3 տարի»:
«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ն գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում 1999թ. հուլիսի 20-ին: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, «Նորդ» բիզնես-կենտրոն, գրասենյակ 27:
Ընկերությունն աուդիտորական ծառայությունների մատուցման լիզենցիա է ստացել Հայաստանի Հանրապետության կառավարությունից և ծառայություններ է մատուցում ձեռնարկատիրական և բանկային ոլորտի հաճախորդներին:
Կազմակերպության գլխավոր տնօրեն է հանդիսանում Էրիկ Հայրապետյան:

Բանկի կառավարման մարմինների կազմի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը, այսուհետ նաև ժողով,
- Խորհուրդ,
- Գործադիր մարմին:

Բանկի 14,588 (տասնչորս հազար հինգ հարյուր ութսունութ) հատ (87.53 %) սովորական բաժնետոմսերի սեփականատեր է հանդիսանում «Էյչ Վի Էս Հոլդինգ» Ջի Էմ Բի Էյչ-ն, իսկ 2,079 (երկու հազար յոթանասունինը) հատ (12.47%) սովորական բաժնետոմսերի սեփականատերն է հանդիսանում «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն:

Միևնույն ժամանակ որպես վերջնական շահառու՝ 16,667 (տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերով Վարտան Սիրմակեսը հանդիսանում է անուղղակի նշանակալից մասնակից:

Բանկի Խորհուրդը բաղկացած է հինգ անդամից.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն
1	Վարտան Սիրմակես	Խորհրդի նախագահ
2	Արմենակ Դարբինյան	Խորհրդի անդամ
3	Րաֆֆի Բալյոզյան	Խորհրդի անդամ
4	Գևորգ Չաքմիշյան	Խորհրդի անդամ
5	Մերուժան Գալստյան	Խորհրդի անդամ

Բանկի Գործադիր մարմինը բաղկացած է.

Գևորգ Մաչանյան, տ.գ.թ.
Տնօրինության նախագահ, Գործադիր տնօրեն

Գևորգ Մաչանյանն ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի Գործադիր տնօրենն է հիմնադրման օրվանից: Նա ունի ավելի քան քառասունամյա աշխատանքային փորձ բանկային համակարգում, որից քսանը ղեկավար պաշտոններ է զբաղեցրել ՀՀ կենտրոնական բանկում:
Ծնվել է 22/08/1959թ. -ին, ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտը:

Գրիգոր Մովսիսյան

Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ - Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման դեպարտամենտի տնօրեն

Ծնվել է 26/03/1974թ.-ին, ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտը: Բանկում աշխատում է Բանկի հիմնադրման օրվանից:

Գրիգոր Հովհաննիսյան

Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ-Վարկավորման դեպարտամենտի տնօրեն

Ծնվել է 16/02/1974թ-ին, ավարտել է Երևանի Պետական Ճարտարագիտական Համալսարանը, բանկում աշխատում է 2009թ-ից:

Արկադի Փինաչյան

Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ-Ներդրումային դեպարտամենտի տնօրեն

Ծնվել է 18/02/1976թ-ին, ավարտել է Երևանի պետական համալսարանը:
Բանկում աշխատում է 2006թ. հունվարից:

Սեդրակ Բաղդասարյան

Տնօրինության անդամ, Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտի տնօրեն-Գլխավոր հաշվապահ

Ծնվել է 27/04/1976թ-ին, ավարտել է Երևանի Պետական Տնտեսագիտական Ինստիտուտը: Բանկում աշխատում է 2005թ. -ի հոկտեմբերից:

Գևորգ Խաչատրյան

Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ-Հաճախորդների սպասարկման դեպարտամենտի տնօրեն

Ծնվել է 29/06/1970թ-ին, ավարտել է Երևանի պետական համալսարանը:
Բանկում աշխատում է Բանկի հիմնադրման օրվանից:

Արա Մակարյան

Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ – Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն

Ծնվել 1990թ-ի հուլիսի 31-ին: 2011թ-ին ավարտել է Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի Մարքեթինգի և Բիզնեսի Կազմակերպման ֆակուլտետը: Բանկում սկսել է աշխատել 2017թ-ից:

Բանկի աշխատակիցների թիվը 06.03.2023թ.-ի դրությամբ կազմում է 147 աշխատակից:

Բանկի կողմից թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

Բանկը թողարկել է բաժնետոմսեր և պարտատոմսեր:

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 10,000,200,000.00 (տասը միլիարդ երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 16,667 (տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսի, յուրաքանչյուրը 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի 14,588 (տասնչորս հազար հինգ հարյուր ութսունութ) հատ (87.53 %) սովորական բաժնետոմսերի սեփականատեր է «Էյչ Վի Էս Հոլդինգ» Ջի Էմ Բի Էյչ-ն, իսկ 2,079 (երկու հազար յոթանասունինը) հատ (12.47%) սովորական բաժնետոմսերի սեփականատերն է հանդիսանում «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով Բանկի կազմակերպաիրավական ձևը՝ Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում: Բանկի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

2015-2023թթ. ընկած ժամանակահատվածում Բանկը թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր ներքոնշյալ աղյուսակում ներկայացված հիմնական պայմաններով.

Բանկի կողմից 2015-2023թթ. Ընթացքում թողարկված պարտատոմսեր.

Տարբերակիչ ծածկագիր ISIN	Թողարկման ծավալ/անվանական	Տեղաբաշխված ծավալ/անվանական	Շրջանառության ժամկետ	Արժեկտրոն	Արժեկտրոնի վճարման պարբերականություն
AMSWISB21ER7 /մարված/	2,000,000 ԱՄՆ դոլար	2,000,000 ԱՄՆ դոլար	3 (երեք) տարի /մարված/	7.50%,	եռամսյակային
AMSWISB22ER5 /մարված/	3,000,000 ԱՄՆ դոլար	3,000,000 ԱՄՆ դոլար	4 (չորս) տարի	8.00%,	Եռամսյակային
AMSWISB23ER3 /մարված/	5,000,000 ԱՄՆ դոլար	5,000,000 ԱՄՆ դոլար	5 (հինգ) տարի	8.50%,	եռամսյակային
AMSWISB24ER1	10,000,000 ԱՄՆ դոլար	10,000,000 ԱՄՆ դոլար	7 (յոթ) տարի	6.75 %	կիսամյակային
AMSWISB25ER8	10,000,000 Եվրո	10,000,000 Եվրո	6 (վեց) տարի	5.00 %	կիսամյակային
AMSWISB26ER6 /մարված/	2,000,000,000 ՀՀ դրամ	2,000,000,000 ՀՀ դրամ	4 (չորս) տարի	12.75 %	կիսամյակային
AMSWISB27ER4 /մարված/	6,000,000,000 ՀՀ դրամ	6,000,000,000 ՀՀ դրամ	5 (հինգ) տարի	11.50 %	կիսամյակային
AMSWISB28ER2	6,000,000 ԱՄՆ դոլար	6,000,000 ԱՄՆ դոլար	7 (յոթ) տարի	6.50 %	կիսամյակային
AMSWISB29ER0	10,000,000 ԱՄՆ դոլար	10,000,000 ԱՄՆ դոլար	6 (վեց) տարի	6.00 %	եռամսյակային
AMSWISB2AER6	5,000,000 ԱՄՆ դոլար	5,000,000 ԱՄՆ դոլար	6 (վեց) տարի	6.50%	կիսամյակային
AMSWISB2BER4	3,000,000 Եվրո	3,000,000 Եվրո	4 (չորս) տարի	4.00%	կիսամյակային
AMSWISB2CER2	10,000,000,000 ՀՀ դրամ	10,000,000,000 ՀՀ դրամ	5 (հինգ) տարի	9.00 %	կիսամյակային
AMSWISB2DER0	10,000,000 ԱՄՆ դոլար	10,000,000 ԱՄՆ դոլար	6 (վեց) տարի	6.00 %	կիսամյակային
AMSWISB2EER8	5,000,000 Եվրո	5,000,000 Եվրո	5 (հինգ) տարի	3.50 %	կիսամյակային
AMSWISB2FER5	10,000,000,000 ՀՀ դրամ	10,000,000,000 ՀՀ դրամ	6 (վեց) տարի	8.50 %	կիսամյակային

Բանկի՝ առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

1. Դրամային պարտատոմսերի թողարկման պայմանները

1.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական, ֆիքսված արժեկտրոնով.

1.2 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային.

1.3 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի.

1.4 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ.

1.4.1 Բանկն իրավասու է թողարկվող պարտատոմսերը /միևնույն թողարկումը/ տեղաբաշխելու ամբողջությամբ կամ մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով: Յուրաքանչյուր վերաբացման ծավալը վերջնական պայմաններով հրապարակվում է դրա տեղաբաշխման օրվանից նվազագույնը երեք օր առաջ: Թողարկված հերթական վերաբացված ծավալն ամբողջությամբ չտեղաբաշխվելու դեպքում չտեղաբաշխված պարտատոմսերի ծավալը գումարվում է ազդագրով առաջարկի շրջանակներում տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալին:

1.4.2 Հերթական տեղաբաշխման ժամանակ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալը, տեղաբաշխման /առաջարկի եղանակը/ Շուկա ստեղծողի/ստեղծողների կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալը, գինը, անհրաժեշտության դեպքում նաև այլ պայմաններ հաստատված համարել Բանկի Գործադիր մարմնի կողմից սահմանված պայմանների համաձայն՝ Բանկի Խորհրդի նիստի արձանագրությամբ սահմանված սահմանափակման ներքո:

1.5 Պարտատոմսերի քանակը՝ 200,000 (երկու հարյուր հազար) հատ.

1.6 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ.

1.7 Պարտատոմսերի թողարկման օրը՝ Բանկի գործադիր մարմնի կողմից սահմանված հրապարակային տեղաբաշխման առաջին օրը:

1.8 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը.

1.9 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում.

1.10 Հերթական տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկը տեղաբաշխման վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով.

1.11 Պարտատոմսերի մարման օրը՝ Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է,

ապա պարտատոմսերի մարումը կատարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.12 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ֆիքսված՝ տարեկան 11.75%

1.13 Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ, 48-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.14 Արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 2,937.50 (երկու հազար ինը հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ և 50 լումա յուրաքանչյուր վճարման ժամանակ յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց:

1.15 Պարտատոմսերի գինը՝ Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

P – պարտատոմսի անվանական արժեքը,

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C- տարեկան արժեկտրոնի գումարը.

y- մինչև մարում եկամտաբերություն.

1.16 Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով.

1.17 Պարտատոմսերի ապահովվածությունը՝ չապահովված.

1.18 Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների հաշվառման համակարգը՝ Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից.

1.19 Արժեկտրոնները հաշվարկվում են թողարկման օրվանից և վճարումներն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով.

1.20 Պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով.

1.21 Արժեկտրոնների վճարումներն և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը մարման օրը համապատասխան գումարները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածաքում գործող բանկերում բացված համապատասխան բանկային հաշիվներին (ՀՀ դրամով) (այսուհետ՝ բանկային հաշիվ).

1.22 Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են.

1.23 Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են.

1.24 Բանկը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Բանկը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Բանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ.

1.25 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Բանկը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով.

1.26 Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում չի սահմանվում.

1.27 Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնում է Բանկը.

1.28 Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված տեղաբաշխում.

2. Դոլարային պարտատոմսերի թողարկման պայմանները

2.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական, ֆիքսված արժեկտրոնով.

2.2 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային.

2.3 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի.

2.4 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար.

2.4.1 Բանկն իրավասու է թողարկվող պարտատոմսերը /միևնույն թողարկումը/ տեղաբաշխելու ամբողջությամբ կամ մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով: Յուրաքանչյուր վերաբացման ծավալը վերջնական պայմաններով հրապարակվում է դրա տեղաբաշխման օրվանից նվազագույնը երեք օր առաջ: Թողարկված հերթական ծավալն /առաջին տեղաբաշխման կամ վերաբացված/ ամբողջությամբ չտեղաբաշխվելու դեպքում չտեղաբաշխված պարտատոմսերի ծավալը գումարվում է ազդագրով առաջարկի շրջանակներում տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալին:

2.4.2 Հերթական տեղաբաշխման ժամանակ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալը, տեղաբաշխման/առաջարկի եղանակը, Շուկա ստեղծողի/ստեղծողների կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալը, գինը, անհրաժեշտության դեպքում նաև այլ պայմաններ հաստատված համարել Բանկի Գործադիր մարմնի կողմից սահմանված պայմանների համաձայն՝ Բանկի Խորհրդի նիստի արձանագրությամբ սահմանված սահմանափակման ներքո:

2.5 Պարտատոմսերի քանակը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) հատ.

2.6 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար:

2.7 Պարտատոմսերի թողարկման օրը՝ Բանկի գործադիր մարմնի կողմից սահմանված հրապարակային տեղաբաշխման առաջին օրը:

2.8 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը.

2.9 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում.

2.10 Տեղաբաշխման առաջին օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով.

2.11 Պարտատոմսերի մարման օրը՝ Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է,

ապա պարտատոմսերի մարումը կատարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը.

2.12 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ֆիքսված՝ տարեկան 6.00%

2.13 Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ, 48-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը.

2.14 Արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 3.00 (երեք) ԱՄՆ դոլար յուրաքանչյուր վճարման ժամանակ յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց:

2.15 Պարտատոմսերի գինը՝ Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

P – պարտատոմսի անվանական արժեքը

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N- հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C- տարեկան արժեկտրոնի գումարը

y- մինչև մարում եկամտաբերություն.

2.16 Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով.

2.17 Պարտատոմսերի ապահովվածությունը՝ չապահովված.

2.18 Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների հաշվառման համակարգը՝ Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից.

2.19 Արժեկտրոնները հաշվարկվում են ԱՄՆ դոլարով, թողարկման օրվանից: Վճարումներն իրականացվում է ԱՄՆ դոլարով, անկանխիկ եղանակով:

2.20 Պարտատոմսերի մարումն իրականացվում է ԱՄՆ դոլարով, անկանխիկ եղանակով.

2.21 Արժեկտրոնների վճարումները և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը մարման օրը համապատասխան գումարները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածաքում գործող բանկերում բացված համապատասխան բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ).

2.22 Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են.

2.23 Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են.

2.24 Բանկը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Բանկը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Բանկըերեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ.

2.25 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Բանկը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով.

2.26 Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում չի սահմանվում.

2.27 Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնում է Բանկը.

2.28 Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված տեղաբաշխում.

3. Եվրոյով պարտատոմսերի թողարկման պայմանները

3.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական, ֆիքսված արժեկտրոնով.

3.2 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային.

3.3 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի.

3.4 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 10,000,000 (տասը միլիոն) Եվրո.

3.4.1 Բանկն իրավասու է թողարկվող պարտատոմսերը /միևնույն թողարկումը/ տեղաբաշխելու ամբողջությամբ կամ մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով: Յուրաքանչյուր վերաբացման ծավալը վերջնական պայմաններով հրապարակվում է դրա տեղաբաշխման օրվանից նվազագույնը երեք օր առաջ: Թողարկված հերթական ծավալն /առաջին տեղաբաշխման կամ վերաբացված/ ամբողջությամբ չտեղաբաշխվելու դեպքում չտեղաբաշխված պարտատոմսերի ծավալը գումարվում է ազդագրով առաջարկի շրջանակներում տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալին:

3.4.2 Հերթական տեղաբաշխման ժամանակ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալը, տեղաբաշխման/առաջարկի եղանակը, Շուկա ստեղծողի/ստեղծողների կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալը, գինը, անհրաժեշտության դեպքում նաև այլ պայմաններ հաստատված համարել Բանկի Գործադիր մարմնի կողմից սահմանված պայմանների համաձայն՝ Բանկի Խորհրդի նիստի արձանագրությամբ սահմանված սահմանափակման ներքո:

3.5 Պարտատոմսերի քանակը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) հատ.

3.6 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 (Մեկ հարյուր) Եվրո:

3.7 Պարտատոմսերի թողարկման օրը՝ Բանկի գործադիր մարմնի կողմից սահմանված հրապարակային տեղաբաշխման առաջին օրը:

3.8 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը.

3.9 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում.

3.10 Տեղաբաշխման առաջին օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով.

3.11 Պարտատոմսերի մարման օրը՝ Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարումը կատարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը.

3.12 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ֆիքսված՝ տարեկան 4.50%

3.13 Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ, 48-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը.

3.14 Արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 2.25 (երկու ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) Եվրո յուրաքանչյուր վճարման ժամանակ յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց:

3.15 Պարտատոմսերի գինը՝ Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

P – պարտատոմսի անվանական արժեքը

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N- հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C- տարեկան արժեկտրոնի գումարը

y- մինչև մարում եկամտաբերություն.

3.16 Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով.

3.17 Պարտատոմսերի ապահովվածությունը՝ չապահովված.

3.18 Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների հաշվառման համակարգը՝ Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից.

3.19 Արժեկտրոնները հաշվարկվում են եվրոյով, թողարկման օրվանից, իսկ վճարումներն իրականացվում է եվրոյով, անկանխիկ եղանակով:

3.20 Պարտատոմսերի մարումն իրականացվում է եվրոյով, անկանխիկ եղանակով.

3.21 Արժեկտրոնների վճարումները և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը մարման օրը համապատասխան գումարները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածաքում գործող բանկերում բացված համապատասխան բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ).

3.22 Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են.

3.23 Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են.

3.24 Բանկը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Բանկը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Բանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ.

3.25 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Բանկը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով.

3.26 Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում չի սահմանվում.

3.27 Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնում է Բանկը.

3.28 Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված տեղաբաշխում.

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են վարկերի տրամադրմանը և ներդրումերի իրականացմանը:

Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Ստորև ներկայացվում են Բանկի 2020-2022թթ. ամփոփ ֆինանսական տվյալները.

Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Ստորև ներկայացվում են Բանկի 2020-2022թթ. ամփոփ ֆինանսական տվյալները.

Ցուցանիշի անվանումը	2022/31/12	2021/31/12	2020/31/12
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո (ԶՇ), 1000 ՀՀ դրամ	7,199,715	7,765,459	6,026,075
Սեփական կապիտալի միջին մեծություն **(ՄԿ)**, 1000 ՀՀ դրամ	54,900,934	60,999,616	61,333,498
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)% = (ԶՇ)/(ՄԿ)	13.11	12.73	9.83
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո **(ԶՇ)**, 1000 ՀՀ դրամ	7,199,715	7,765,459	6,026,075
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն **(ՄԱ)**, 1000 ՀՀ դրամ	391,796,310	392,279,887	334,144,404
Ակտիվների շահութաբերություն (ROA)% = (ԶՇ)/(ՄԱ)	1.84	1.98	1.80
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո **(ԶՇ)**, 1000 ՀՀ դրամ	7,199,715	7,765,459	6,026,075
Գործառնական եկամուտ **(ԳԵ)**, 1000 ՀՀ դրամ	12,359,571	11,920,345	16,010,783
Զուտ շահույթի մարժա (NPM) % (ԶՇ)/ (ԳԵ)	58.25	65.14	37.64
Գործառնական եկամուտ **(ԳԵ)**, 1000 ՀՀ դրամ	12,359,571	11,920,345	16,010,783
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն **(ՄԱ)**, 1000 ՀՀ դրամ	391,796,310	392,279,887	334,144,404
Ակտիվների օգտագործման գործակից % (AU) = (ԳԵ)/(ՄԱ)	3.15	3.04	4.79
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն **(ՄԱ)**, 1000 ՀՀ դրամ	391,796,310	392,279,887	334,144,404
Սեփական կապիտալի միջին մեծություն **(ՄԿ)**, 1000 ՀՀ դրամ	54,900,934	60,999,616	61,333,498
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = (ՄԱ)/(ՄԿ)	7.14	6.43	5.45
Զուտ տոկոսային եկամուտ **(ԶՏԵ)**, 1000 ՀՀ դրամ	7,943,785	10,903,095	10,283,044
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն **(ՄԵԱ)**, 1000 ՀՀ դրամ	348,730,305	352,592,378	298,004,317
Զուտ տոկոսային մարժա (NIM) (A/B)	0.02	0.03	0.03
Տոկոսային եկամուտ **(ՏԵ)**, 1000 ՀՀ դրամ	34,112,068	33,691,387	27,321,456
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն **(ՄԵԱ)**, 1000 ՀՀ դրամ	348,730,305	352,592,378	298,004,317
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն (ՏԵ)/(ՄԵԱ),	0.10	0.10	0.09

Տոկոսային ծախսեր (**ՏԾ**), 1000 ՀՀ դրամ	26,168,283	22,788,292	17,038,412
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր (**ՄԾՊ**), 1000 ՀՀ դրամ	332,011,309	336,814,353	320,185,341
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են ծախսեր (ՏԾ)/(ՄԾՊ)	0.08	0.07	0.05
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո (**ԶՇ**), 1000 ՀՀ դրամ	7,199,715	7,765,459	6,026,075
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (**ԲՔ**)	16667	16,667	16,667
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) (ԶՇ)/(ԲՔ), 1000 ՀՀ դրամ	431.97	465.92	361.56
ՄՊՐԵԴ = (ՏԵ)/(ՄԵԱ)-(ՏԾ)/(ՄԾՊ)	0.019	0.028	0.038

Բանկի տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ կից ծանոթագրությունները տեղադրված են Բանկի ինտերնետային էջում, հետևյալ հասցեով՝

http://www.armswissbank.am:

2. ԲԱԺԻՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռիսկային գործոններ

2.1.1 Ներդրումները պարտատոմսերում, ինչպես և այլ արժեթղթերում, ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ինչպես թողարկողի ֆինանսատնտեսական վիճակից և գործունեության արդյունքներից (թողարկողի ռիսկ), այնպես էլ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից (շուկայական ռիսկ)։ Ներդրողը ներդրում կատարելու վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում պետք է մանրակրկիտ ուսումնասիրի և վերլուծի ներդրման հետ կապված և սույն փաստաթղթում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը

2.1.2 Շուկայական ռիսկը առաջանում է տնտեսությունում պարտատոմսերի գնի վրա ազդող գործոնների փոփոխության հետևանքով, ինչի արդյունքում ներդրողը կարող է կրել կորուստներ։

2.1.3 Պետք է հաշվի առնել նաև, որ սույն փաստաթղթում ներկայացված ռիսկերի ցանկը սպառիչ չէ և հնարավոր է անկանխատեսելի բնույթ ունեցող որևէ իրադարձության/ռիսկի (այլ ռիսկեր) ի հայտ գալը, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրումների վերադարձելիության կամ արժեքի վրա։ Ներդրողը պետք է ներդրման որոշումը կայացնելիս ամբողջությամբ գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով և ակնկալիքներով։

2.1.4 ***<u>Շուկայական ռիսկ՝</u>*** շուկայական ռիսկի հիմնական տարատեսակներն են տոկոսադրույքի ռիսկը և արտարժութային ռիսկը։

Տոկոսադրույքի ռիսկը առաջանում է շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով՝ տոկոսադրույքների աճի դեպքում պարտատոմսերի գինը նվազում է, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ներդրողը, մինչև մարումը պարտատոմսը վաճառելու դեպքում կարող է կրել վնասներ, կամ չստանալ նախատեսված եկամուտը։

Արտարժույթի ռիսկը առաջանում է ազգային դրամի փոխարժեքի տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի պարտատոմսերից ստացված եկամուտների վրա, երբ ներդրողը պարտատոմսից ստացված եկամուտը գնահատում է ՀՀ դրամով (օրինակ՝ ներդրում կատարելու համար ներդրողը ՀՀ դրամը փոխարկել է արտարժույթի և պարտատոմսի մարումից հետո ստացված արտարժույթը փոխարկում է ՀՀ դրամի)։ Մասնավորապես, ազգային արժույթի արժեվորման դեպքում, պարտատոմսի մարումից ստացված գումարները (ներառյալ տոկոսները) փոխարկելու դեպքում, ՀՀ դրամով հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ (բացասական) լինել։ Նույն տրամաբանությունը գործում է նաև այն դեպքում, երբ ներդրում կատարելու համար ներդրողը արտարժույթը փոխարկել է ՀՀ դրամի և պարտատոմսի մարումից հետո ստացված արտարժույթը փոխարկում է արտարժույթի։ Այս դեպքում արդեն ազգային արժույթի արժեզրկման դեպքում, պարտատոմսի մարումից ստացված գումարները (ներառյալ տոկոսները) փոխարկելու դեպքում, արտարժույթով հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ (բացասական) լինել։

2.1.5 ***Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ՝*** պարտատոմսերի շուկայի զարգացվածության ցածր մակարդակի պայմաններում, շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության, ինչպես նաև, Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ պարտատոմսի սեփականատերը ցանկացած

պահի պարտատոմսերը վաճառելու հետ կապված դժվարությունների բախվի: Մասնավորապես, հնարավոր է, որ պարտատոմսի սեփականատերը չկարողանա իր ուզած պահին վաճառել պարտատոմսը կամ ստիպված լինի այն վաճառել ցածր գնով, կրելով վնասներ: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով Բանկը նախատեսում է ապահովել թողարկվող պարտատոմսերի համար շուկա ստեղծողի գործառույթների իրականացում, այդ դեպքում ներդրողը ցանկացած պահին կկարողանա վաճառել իր պարտատոմսերը, բայց դա չի երաշխավորում պարտատոմսի սեփականատիրոջ կողմից շահավետ գնով վաճառք: Համաձայն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ «Շուկա ստեղծողի կանոնների»՝ Կորպորատիվ պարտատոմսերի յուրաքանչյուր դասի /տրանշի/ համար գնման և/կամ վաճառքի հայտում /հայտերի համախմբում/ նշվող նվազագույն գնանշման ծավալը սահմանվում է մեկ արժեթղթի ճշտությամբ՝ տվյալ դասի /տրանշի/ թողարկված պարտատոմսերի քանակի 1.00 (մեկ) տոկոսի չափով:

2.1.6 Վերը նշված ռիսկերից բացի Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի հետ, որոնք Բանկը սույն փաստաթղթում նշելու համար էական չի համարել:

Հիմնական տեղեկատվություն

Բանկի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվելու են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը, այն է վարկերի տրամադրմանը և այլ ներդրումների իրականացմանը:

Առաջարկի ծրագրի համակողմանի նկարագիրը

2.3.1 Սույն ազդագրի շրջանակներում Բանկը տեղաբաշխելու է 10,000,000,000 /տասը միլիարդ/ ՀՀ դրամ, 10,000,000 /տասը միլիոն/ ԱՄՆ դոլար և 10,000,000 /տասը միլիոն/ Եվրո անվանական ծավալով պարտատոմսեր: Պարտատոմսերը տեղաբաշխվելու են ամբողջությամբ կամ մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով: Յուրաքանչյուր վերաբացման ծավալը վերջնական պայմաններով հրապարակվում է դրա տեղաբաշխման օրվանից նվազագույնը երեք օր առաջ: Թողարկված հերթական ծավալն ամբողջությամբ չտեղաբաշխվելու դեպքում չտեղաբաշխված պարտատոմսերի ծավալը գումարվում է Ազդագրով առաջարկի շրջանակներում տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալին: Հերթական վերաբացված ծավալներն ենթակա են տեղաբաշխման բաց բաժանորդագրության եղանակով: Յուրաքանչյուր վերաբացված տրանշը տեղաբաշխվում է նույն ԱՄՏԾ-ով, սեփականատիրոջը տալիս է նույն իրավունքները, ունենում է նույն մարման օրը և արժեկտրոնային եկամտաբերությունը:

2.3.2 Բանկի պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր են, որոնց թողարկումն իրականացվում է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների և որոնց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.3.3 Պարտատոմսերի ռեեստրը վարվում է «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից՝ համաձայն Բանկի և ՀԿԴ-ի միջև 2023 թ-ի մարտի 15-ին կնքված թիվ **25000/17/2023**, **25000/18/2023, 25000/19/2023** պայմանագրի:

2.3.4 ՀԿԴ կողմից պարտատոմսերին շնորհված ԱՄՏԾ-ն է (արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիր) համապատասխանաբար՝

Առաջին տրանշ ՝AMSWISB2HER1

Երկրորդ տրանշ՝AMSWISB2IER9
Երրորդ տրանշ AMSWISB2JER7

2.3.5 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝
Առաջին տրանշ 50,000.00 (հիսուն հազար) ՀՀ դրամ: Թողարկման արժույթը՝ ՀՀ դրամ
Երկրորդ տրանշ 100.00 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար: Թողարկման արժույթը՝ ԱՄՆ դոլար:
Երրորդ տրանշ 100.00 (մեկ հարյուր) Եվրո: Թողարկման արժույթը՝ Եվրո:

Թողարկվող պարտատոմսերի քանակը՝
Առաջին տրանշ 200,000 (երկու հարյուր հազար) հատ պարտատոմս՝ 10,000,000,000.00 (տասը միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով,
Երկրորդ տրանշ 100,000 (մեկ հարյուր հազար) հատ պարտատոմս՝ 10,000,000.00 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական արժեքով,
Երրորդ տրանշ 100,000 (մեկ հարյուր հազար) հատ պարտատոմս՝ 10,000,000.00 (տասը միլիոն) Եվրո ընդհանուր անվանական արժեքով,

2.3.6 Պարտատոմսերի արժեկտրոնները վճարվելու են կիսամյակային պարբերականությամբ:
2.3.7 Պարտատոմսերը փոխարկելի չեն:
2.3.8 Բանկն օգտվելու է շուկա ստեղծողի/ների (marketmaker)-ի ծառայություններից:
2.3.9 Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» օրենքի Բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝
ա) առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.
բ) երկրորդ՝ այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և Կենտրոնական բանկի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.
գ) երրորդ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ:
դ) չորրորդ՝ բանկի այլ պարտավորությունները, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների.
ե) հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.
ե.1) վեցերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.
զ) յոթերորդ՝ բանկի մասնակիցների պահանջները:
Սույն կետով սահմանված՝ բանկի պարտատերերի պահանջների բավարարման հերթականության «գ», «դ» և «ե.1» ենթակետերով սահմանված պարտատերերի թվից

բացառություն են կազմում բանկի մասնակիցները և բանկի հետ կապված անձինք, որոնց նկատմամբ բանկի պարտավորությունները բավարարվում են «զ» ենթակետով սահմանված հերթում:

Սույն կետի «գ» ենթակետով սահմանված անձի՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է «գ» ենթակետով սահմանված հերթում, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ «դ» ենթակետով սահմանված հերթում:

Ավանդների երաշխավորման համակարգի շրջանակներում, երաշխավորված գումարը հատուցելուց հետո օրենքով սահմանված երաշխավորողը փաստացի հատուցված գումարի չափով պահանջի իրավունք է ձեռք բերում բանկի նկատմամբ այն հերթում (հերթերում), որի ընթացքում տվյալ ավանդատուն (պարտատերը) համաձայն սույն հոդվածի իրավունք կունենար ստանալ իր ավանդը (հաշվի մնացորդը):

Սույն կետի «դ» ենթակետով սահմանված բանկի այլ պարտավորությունները ներառում են նաև Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը:

Միևնույն հերթի պարտատերերն ունեն իրենց պահանջների բավարարման հավասար իրավունքներ: Միևնույն հերթի պարտատերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի բոլոր պահանջները լրիվ բավարարելուց հետո:

Բանկի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

Պարտատոմսերի թողարկմամբ ներգրավված միջոցները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով և նույն օրենքով սահմանված կարգով ենթակա են հատուցման հետևյալ չափերով՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է.

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է.

գ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով.

դ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

2.3.10 **Պարտատոմսերի ապահովվածությունը**՝ չապահովված:

2.3.11 **Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն**.

2.3.11.1 ինքնուրույնաբար տնօրինել, տիրապետել և օգտագործել իր սեփականության ներքո գտնվող Պարտատոմսերը,

2.3.11.2 Պարտատոմսերով իրականացնել ցանկացած գործառույթ, որը բխում է սեփականության իրավունքից,

2.3.11.3 Թողարկման օրվանից հաշված կիսամյակային պարբերությամբ՝ համապատասխան արժեկտրոնների վճարման օրերին ստանալ արժեկտրոնային եկամուտը: Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,

2.3.11.4 Պարտատոմսերի մարման օրը ստանալ պարտատոմսերի անվանական արժեքը (մարման գումարը): Եթե տվյալ օրը ոչ աշխատանքային օր է, ապա պարտատոմսերի մարման գումարի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,

2.3.11.5 Բանկի կողմից Պարտատոմսերի մարման գումարը, ինչպես նաև արժեկտրոնի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու հիմքով դատական կարգով օգտվել պարտատիրոջ օրենքով վերապահված իրավունքներից,

2.3.11.6 գրավադրել Պարտատոմսերը՝ օրենքով սահմանավաձ կարգով,

2.3.11.7 ՀԿԴ հաշվի օպերատորների միջոցով ստանալ իր արժեթղթերի հաշվից քաղվածք,

2.3.11.8 Օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

2.3.12 **Պարտատոմսերի սեփականատիրոջ պարտավորությունները.**

2.3.12.1 Պարտատոմսերում պոտենցիալ ներդրողները պարտավոր են մինչև Պարտատոմսերի ձեռք բերումը ՀԿԴ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ ՀԿԴ ենթապահառու հանդիսացող այլ անձանց մոտ ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ:

2.3.12.2 իր հաշվին կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման և/կամ գործարքների ձևակերպման հետ:

2.3.12.3 կատարել Պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործառնություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն:

2.3.12.4 Պարտատոմսերը տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության միջոցով

2.3.13 Պարտատոմսերի թողարկման վերաբերյալ թիվ 08-2023 որոշումն ընդունվել է 2023 թ-ի փետրվարի 10-ին Բանկի Խորհրդի կողմից:

Պարտատոմսերի թողարկման օրը՝

Բանկի գործադիր մարմնի կողմից սահմանված հրապարակային տեղաբաշխման առաջին օրը,

Պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատված՝

Պարտատոմսերի առաջարկի սկիզբ և ավարտ՝ սահմանվում է Բանկի Գործադիր մարմնի որոշմամբ

Տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկը տեղաբաշխման վերջնական պայմանները հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով.

2.3.14 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝

Առաջին տրանշ ֆիքսված՝ տարեկան 11.75%,

Երկրորդ տրանշ ֆիքսված՝ տարեկան 6.0%,

Երրորդ տրանշ ֆիքսված՝ տարեկան 4.5%,

2.3.15 Արժեկտրոնի արժույթը՝

Առաջին տրանշ՝ ՀՀ դրամ, վճարումն իրականացվում է ՀՀ դրամով,

Երկրորդ տրանշ՝ ԱՄՆ դոլար, վճարումն իրականացվում է ԱՄՆ դոլարով,

2.3.16 **Երրորդ տրանշ՝** Եվրո, վճարումն իրականացվում է Եվրոյով:Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝

Առաջին տրանշ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ և 48-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը: Արժեկտրոնը սկսվում է հաշվարկվել թողարկման օրվանից:

Երկրորդ տրանշ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ և 48-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը: Արժեկտրոնը սկսվում է հաշվարկվել թողարկման օրվանից:

Երրորդ տրանշ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ և 48-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը: Արժեկտրոնը սկսվում է հաշվարկվել թողարկման օրվանից:

Արժեկտրոնի կուտակումը սկսում է հաշվարկվել պարտատոմսերի թողարկման օրվանից,

2.3.17 Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C- տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց

y- մինչև մարում եկամտաբերություն:

2.3.18 Պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը բոլոր տրանշների համար հաշվարկվում է 2.3.17 կետում ներկայացված բանաձևի միջոցով:

2.3.19 Պարտատոմսերի մարման օրը՝

Առաջին տրանշ պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը,

Երկրորդ տրանշ պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը,

Երրորդ տրանշ պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը,

2.3.20 Արժեկտրոնները հաշվարկվում են՝

Առաջին տրանշ՝ ՀՀ դրամով, ֆիքսված գումար՝ 2,937.50 (երկու հազար ինը հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ և 50 լումա յուրաքանչյուր վճարման ժամանակ մեկ հատ պարտատոմսի դիմաց: Վճարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով.

Երկրորդ տրանշ՝ ԱՄՆ դոլարով, արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 3.00 (երեք) ԱՄՆ դոլար՝ յուրաքանչյուր վճարման ժամանակ մեկ հատ պարտատոմսի դիմաց: Վճարումն իրականացվում է ԱՄՆ դոլարով, անկանխիկ եղանակով.

Երրորդ տրանշ՝ Եվրոյով, արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 2.25 (երկու) եվրո և 25 ցենտ յուրաքանչյուր վճարման ժամանակ մեկ հատ պարտատոմսի դիմաց: Վճարումն իրականացվում է Եվրոյով, անկանխիկ եղանակով.

Արժեկտրոնների վճարումներն և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը մարման օրը համապատասխան գումարները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի՝ համապատասխան բանկային հաշիվներին (ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով) (այսուհետ՝ բանկային հաշիվ): ԱՄՆ դոլարով և/կամ Եվրոյով իրականացվող վճարումները (փոխանցումները) Ներդրողի՝ ՀՀ տարածքից դուրս գործող Բանկային հաշվեհամարներին փոխանցվելու պարագայում, միջազգային փոխանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է տվյալ Ներդրողը (վերջնական շահառուն):

2.3.21 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան գումարների մուտքագրում:

2.3.22 Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են: Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են:

2.3.23 Բանկը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Բանկն այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Բանկը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ:

2.3.24 Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված չէ,

2.3.25 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Բանկը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով: Պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում չապահովվելու դեպքում, թողարկումը

համարվում է չեղյալ: Թողարկումը չեղյալ համարվելու դեպքում Բանկը՝ ՀԿԴ-ից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ցուցակի հիման վրա 5 աշխատանքային օրվա ընթացքում հետ է վերադարձնում Պարտատոմսերի սեփականատերերի վճարված գումարները, ներառյալ վճարման օրվա դրությամբ կուտակված տոկոսները, Ներդրողների համապատասխան հաշիվներին փոխանցելու միջոցով:

Համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին օրենքի» 129-րդ հոդվածի 3-րդ կետի Շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն արգելվում է վաճառել տվյալ շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի.

1) մասնավոր գործարքների համար, այն է՝ այնպիսի գործարքների, որոնց կողմերը նախապես հայտնի են.

Համաձայն ՀՀ ԿԲ խորհրդի 27.11.2012թ. 331-Ն որոշման համաձայն մասնավոր գործարքներ են համարվում՝

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կնքվող գործարքները,
- թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,
- արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները:

2) արժեթղթերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար.

3) շուկայում առևտրին թույլատրված արժեթուղթն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար.

2.3.26 Պարտատոմսերից ստացված եկամուտը ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

- Շահութահարկ,
- Եկամտային հարկ:

2.3.27 Ընդհանուր առմամբ, պարտատոմսերից եկամուտ ստացվում է հետևյալ տեսքով.

1. Տոկոսային եկամուտ (պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոս),
2. Կապիտալի հավելաճ (ձեռք բերումից հետո պարտատոմսի գնի աճ, իսկ կապիտալի հավելաճը հաշվարկվում է, որպես մինչև մարումը վաճառքի և ձեռք բերման գնի դրական տարբերություն) :

2.3.28 Շահութահարկ վճարող են համարավում ՀՀ տարածքում գործող ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Հարկվող շահույթը հարկատուի՝ ՀՀ հարկային օրենսգրքով /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 104/ սահմանված համախառն եկամտի և սահմանված նվազեցումների /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 110/ դրական տարբերությունն է: Ներկայումս շահութահարկի դրույքը կազմում է հարկվող շահույթի 18%: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց շահութահարկի դրույքաչափը պարտատոմսերում ներդրումներից ստացված եկամտի (տոկոսներ, կապիտալի հավելաճ) համար կազմում է 10%: Բանկի պարտատոմսերում ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ներդրողների համար Բանկը հանդիսանում է հարկային գործակալ:

2.3.29 Եկամտային հարկ վճարող են համարվում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ: Հարկվող եկամուտը հաշվարկվում է, որպես ֆիզիկական անձի՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված համախառն եկամտի /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 141/ և սահմանված նվազեցումների /ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 147/ դրական տարբերություն: Ֆիզիկական անձանց համար

պարտատոմսերից ստացված միայն տոկոսային եկամուտն է ենթակա հարկման, իսկ հարկման դրույքաչափը ներկայումս սահմանված է 10%: Բանկի պարտատոմսերում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողների համար Բանկը հանդիսանում է հարկային գործակալ:

2.3.30 Թողարկվող պարտատոմսերում ներդրում իրականացնելու ցանկություն հայտնող անձինք պետք է հաշվի առնեն նաև 24/01/2020թ. ՀՀ ԱԺ կողմից ընդունված օրենքը, համաձայն որի `

ա) Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի,հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի կողմից թողարկված այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է 2 տարուց:

բ) ա) կետով սահմանված արժեթղթեր ձեռք բերելու դեպքում ֆիզիկական անձանց՝ պարտատոմսերից ստացվող տոկոսային եկամուտը **հարկման ենթակա չէ:**

ՀՀ հարկային օրենսգրքի 126-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝

- ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ինչպես նաև տվյալ բաժնետմոսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով,
- ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:

2.3.31 Վերը նշված դրույթները վերաբերում են ՀՀ ֆոնդային բորսայի՝ բաժնետոմսերի և պարտատոմսերի հիմնական ու երկրորդային ցուցակներում ընդգրկված արժեթղթերին և և տարածվում են այն արժեթղթերի (դրանց դասերի) վրա, որոնք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ քան **2024 թ-ի դեկտեմբերի 31-ը**:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բանկը Թողարկվող պարտատոմսերի մասով Ազդագրում սահմանված ժամկետներում նախաձեռնելու է ցուցակման գործընթաց, Բորսայի կողմից դրական եզրակացության դեպքում՝ Թողարկվող պարտատոմսերի վրա կտարածվեն ՀՀ հարկային օրենսգրքի վերոնշյալ դրույթները:

Առաջարկի ժամկետները և պայմանները

2.4.1 ***Առաջարկի պայմանները, առաջարկի վիճակագրությունը, ակնկալվող ժամանակացույցը և այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են առաջարկից օգտվելու համար***

2.4.1.1 Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի ծավալը կազմում է՝

<u>Առաջին տրանշ</u> 10,000,000,000.00 (տասը միլիարդ) ՀՀ դրամ, 200,000 (երկու հարյուր հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 50,000.00 (հիսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով,

<u>Երկրորդ տրանշ</u> 10,000,000.00 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար, 100,000 (մեկ հարյուր հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 100.00 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով,

<u>Երրորդ տրանշ</u> 10,000,000.00 (տասը միլիոն) Եվրո, 100,000 (մեկ հարյուր հազար) հատ պարտատոմս, յուրաքանչյուրը 100.00 (մեկ հարյուր) եվրո անվանական

արժեքով,

2.4.1.2 Պարտատոմսերը տեղաբաշխվում են հրապարակային տեղաբաշխման միջոցով

2.4.1.3 Պարտատոմսերի թողարկման օրը՝

Բանկի Գործադիր մարմնի որոշմամբ սահմանված հրապարակային առաջարկի առաջին օրը:

2.4.1.4 Պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատված՝

Պարտատոմսերի յուրաքանչյուր բացված/վերաբացված տրանշի ծավալը, առաջարկի սկիզբը և ավարտը՝ սահմանվում է Բանկի Գործադիր մարմնի որոշմամբ:

Յուրաքանչյուր հերթական առաջարկի առաջին օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկն այդ մասին տեղեկատվությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում:

Վերջինս նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով:

Բանկը յուրաքանչյուր վերաբացման ծավալի վերջնական պայմանները հրապարակում է իր պաշտոնական կայքում դրա տեղաբաշխման օրվանից նվազագույնը երեք օր առաջ:

2.4.1.5 Ներդրողները կարող են Պարտատոմսերի Ազդագրին ծանոթանալ Բանկի գործունեության վայրից (հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վ.Սարգսյան 10, ինչպես նաև Բանկի ինտերնետային կայքից www.armswissbank.am հասցեով:

2.4.1.6 Պարտատոմսերում ներդրում իրականացնել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են մասնակցել հրապարակային տեղաբաշխմանը հետևյալ կարգով.

2.4.1.6.1 Պարտատոմսերում ներդրում իրականացնել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են մասնակցել հրապարակային տեղաբաշխմանը Պարտատոմսեր ձեռք բերելու նպատակով Բանկի կողմից սահմանված ձևով Հայտը (Հավելված 4/5) պատշաճ կերպով լրացնելու և Բանկ ներկայացնելու միջոցով

2.4.1.6.2 Հայտերը կարող են ներկայացվել տեղաբաշխման ժամկետի ցանկացած աշխատանքային օրվա ընթացքում՝ թղթային տարբերակով, էլեկտրոնային կապի միջոցներով ժամը 10:00-17:00-ն ընկած ժամանակահատվածում,

2.4.1.6.3 Թղթային տարբերակով Հայտը ներկայացնելու դեպքում Ներդրողը Բանկում պատշաճ ձևով լրացնում և ներկայացնում է Հայտը Բանկի՝ հաճախորդների սպասարկման համար պատասխանատու ստորաբաժանում,

2.4.1.6.4 Էլեկտրոնային կապի միջոցներով ներկայացվող Հայտը պետք է Ներդրողի կողմից ուղարկվի հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ investments@armswissbank.am, կամ ֆաքսիմիլային կապի միջոցով՝ (010) 54-06-27 հեռախոսահամարով:

2.4.1.6.5 Պարտատոմսերի փաստացի ձեռքբերումն իրականացվում է Ներդրողի կողմից Հայտում նշված ծավալով Պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցները (որը որոշվում է հետևյալ ձևով՝ Պարտատոմսերի ձեռքբերվող քանակ բազմապատկած գին՝ հաշվարկված սույն Ազդագրի 2.3.17 կետում սահմանված բանաձևով) Բանկում այդ նպատակով բացված՝

ՀՀ դրամ՝ 2500039300060300

ԱՄՆ դոլար՝ 2500039300060201

Եվրո՝ 2500039300060165

տարանցիկ հաշվին/հաշիվներին մուտքագրելուց հետո:

2.4.1.6.6 Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարները 2.4.1.6.5 կետում նշված հաշվին մուտքագրվում են անկանխիկ, ֆիզիկականական անձանց կողմից նաև կանխիկ եղանակով: Կանխիկ եղանակով գումարները մուտքագրելու դեպքում Ներդրողը Հայտին կից Բանկ է ներկայացնում նաև անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև /եթե տվյալ ներդրողը չի հանդիսանում Բանկի հաճախորդ/ հայտում նշում է այլ բանկում ունեցած համապատասխան արժույթով հաշվի համար սույն

Ազդագրի 2.4.1.6.16 կետում նշված դեպքերի համար: Անկանխիկ եղանակով գումար փոխանցելու դեպքում Ներդրողը Հայտին կից պարտավոր է ներկայացնել նաև ձեռք բերման ենթակա Պարտատոմսերի դիմաց վճարումը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը, եթե տվյալ Ներդրողը Բանկի հաճախորդ չի հանդիսանում:

2.4.1.6.7 Եթե Ներդրողի կողմից համապատասխան դրամական միջոցները 2.4.1.6.5 կետում նշված տարանցիկ հաշվին մուտքագրվել են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված կհամարվեն տվյալ աշխատանքային օրը, իսկ եթե համապատասխան գումարները մուտքագրվել են տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված կհամարվեն մուտքագրմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը և համապատասխան պարտատոմսերի տեղաբաշխման գինը կորոշվի այդ օրվա հաշվարկով: Ընդ որում, եթե Հայտում նշված Պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարը 2.4.1.6.5 կետում նշված հաշվին մուտքագրվում է մաս առ մաս, ապա Հայտի համապատասխան դրամական միջոցների մուտքագրման ժամ կհամարվի դրամական միջոցների վերջին մասի մուտքագրման ժամը:

2.4.1.6.8 Բանկը մերժում է Բանկի սույն բաժնով սահմանված կարգից շեղումներով ներկայացված Հայտերի կատարումը:

2.4.1.6.9 Հայտերը բավարարվում են ըստ 2.4.1.6.5 կետում նշված հաշվին Հայտերի համապատասխան գումարների մուտքագրման հերթականության: Եթե տեղաբաշխման որևէ օրվա ընթացքում միևնույն ժամին ներկայացված Հայտերում նշված Պարտատոմսերի ծավալը գերազանցում է չվաճառված պարտատոմսերի ծավալին, ապա՝ Հայտերը բավարարվում են համամասնորեն՝ ըստ Հայտերի ծավալների: Ընդ որում՝ եթե առաջանում են ոչ ամբողջական պարտատոմսեր, ապա դրանք ենթակա են կլորացման թվաբանական կլորացման եղանակով: Չբավարարված/մասնակի բավարարված Հայտերի համապատասխան դրամական միջոցները Բանկի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Հայտերում Ներդրողի կողմից նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.4.1.6.10 Բանկը 2.4.1.6.5 կետում նշված տարանցիկ հաշվին գումարի մուտքագրման օրվա ընթացքում ՝ որպես «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ (այսուհետ՝ ՀԿԴ) Հաշվի օպերատոր, ՀԿԴ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կատարում է արժեթղթերի տեղաբաշխման գրառում՝ ՀԿԴ-ի կանոններով սահմանված կարգով:

2.4.1.6.11 Տեղաբաշխման ընթացքում ներդրողները պարտատոմսերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկություններ կարող են ստանալ Բանկից կամ այն Հաշվի օպերատոր հանդիսացող կազմակերպությունից, որի հետ Ներդրողն ունի կնքած համապատասխան պայմանագրեր (որտեղ բացված է տվյալ ներդրողի արժեթղթերի հաշիվը):

2.4.1.6.12 Ներդրողը կարող է հետ կանչել նախկինում ներկայացված Հայտը համապատասխան դիմում (Հավելված 6) ներկայացնելու միջոցով՝ եթե տվյալ Հայտը մասնակի կամ ամբողջությամբ չի բավարարվել և տվյալ Հայտի հիման վրա գործարք չի կատարվել:

2.4.1.6.13 Հայտի հետկանչման դիմումը բավարարելու արդյունքում Ներդրողին վերադարձման ենթակա գումարը, Հայտում կամ Դիմումի մեջ նշված հաշվին փոխանցվում կամ կանխիկ տրամադրվում է Դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.1.6.14 Տեղաբաշխումը չեղյալ ճանաչվելու դեպքում Ներդրողների գումարները վերադարձ-

վում են տեղաբաշխման չեղյալ ճանաչելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով (Հայտերում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով):

2.4.1.6.15 Տեղաբաշխման ողջ ընթացքում, յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար, 2.4.1.6.5 կետում նշված տարանցիկ հաշվին հավաքագրված ողջ գումարը կարող է ազատ տնօրինվել Բանկի կողմից:

2.4.1.6.16 Ազդագրի 2.4.1.6.9 և 2.4.1.6.14 կետերով սահմանված դեպքերում գումարների հետ փոխանցումը Բանկն իրականացնում է իր հաշվին:

2.4.1.6.17 Տեղաբաշխման ընթացքում Հայտերի բացակայությունը և պարտատոմսերով գործարքների չկատարումը պարտատոմսերի տեղաբաշխումը չեղյալ ճանաչելու հիմք չեն:

2.4.2 *Տեղաբաշխման պլանը*

2.4.2.1 Սույն փաստաթղթով ներկայացվող առաջարկն ուղղված է ներդրողների բոլոր խմբերին՝ հանրությանը, ինստիտուցիոնալ ներդրողներին և այլն,

2.4.2.2 Ներդրողն իր կողմից ներկայացված հայտի բավարարման մասին տեղեկանում է Բանկից, մինչև Հայտի ներկայացման աշխատանքային օրվա ավարտը հնարավոր սեղմ ժամկետներում:

2.4.3 *Առաջարկի գինը*

2.4.3.1 Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց /Հրապարակային տեղաբաշխման ողջ ընթացքում Պարտատոմսերը վաճառվում են անվանական արժեքով՝ ներառյալ կուտակված արժեկտրոնը ըստ յուրաքանչյուր օրվա/:

2.4.3.2 Պարտատոմսերի գինը հաշվարկվում է սույն Ազդագրի 2.3.17 կետում սահմանված բանաձևով:

2.4.3.3 Հրապարակային տեղաբաշխման մասնակցության հայտեր ընդունելու համար որևէ ծախս Բանկի կողմից նախատեսված չէ:

2.4.4 *Տեղաբաշխումը*

2.4.4.1 Սույն փաստաթղթով առաջարկվող պարտատոմսերի տեղաբաշխման համար նախատեսված չէ երաշխավորված տեղաբաշխում:

2.4.4.2 Սույն Ազդագրով նախատեսված պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնում է Բանկը:

2.4.4.3 Բանկի Գործադիր մարմնի որոշմամբ սույն Ազդագրի շրջանակներում թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխման /ներառյալ վերաբացված ծավալի տեղաբաշխման/ ժամկետը կարող է երկարաձգվել:

Առևտրին թույլտվություն և առևտրի կազմակերպումը

2.5.1 Սույն փաստաթղթում ներկայացված պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Բանկը դիմելու է Բորսա տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրելու համար: Բորսան կարող է չբավարարել Բանկի հայտը: Այս դեպքում թողարկումը համարվում է չեղյալ և Պարտատոմսերի սեփականատերերին հետ են վերադարձվում համապատասխան գումարները Ազդագրի 2.4.1.6.14 կետում սահմանված կարգով:

2.5.2 Երկրորդային շուկայում սույն Ազդագրի շրջանակներում տեղաբաշխվող Պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու նպատակով Բանկը նախատեսում է կնքել Շուկա ստեղծողի ծառայությունների մատուցման պայմանագիր նման ծառայություններ մատուցող իրավաբանական անձի/անձանց հետ:

Լրացուցիչ տեղեկություններ

2.5.3 Պարտատոմսերի մասին տեղեկությունների մասում ներկայացված տեղեկությունների հետ կապված խորհրդատու հանդես չի եկել։

2.5.4 Պարտատոմսերի մասում ներկայացված տեղեկությունները Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի չի ենթարկվել։

2.5.5 Պարտատոմսերի մասին տեղեկությունների մեջ երրորդ անձից ստացված տեղեկատվություն չկա։

2.5.6 Բանկին և թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել։

3. ԲԱԺԻՆ. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկախ աուդիտորները

Բանկի 2020 և 2021 թթ. անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության կողմից:
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն հանդիսանում է «Գրանթ Թորնթոն Ինտերնեյշնալի» անդամ:
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ ք. Երևան 0012, Վաղարշյան 8/1
հեռ.՝+37410 26-09-54, ինտերնետային կայքի հասցեն է՝ https://www.grantthornton.am/:
Կազմակերպության տնօրեն է հանդիսանում Արմեն Հովհաննիսյանը:
2019թ-ի հոկտեմբերի 14-ին Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից որպես Բանկի 2019-21թթ. գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպություն է ընտրվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի եզրակացությունները ներկայացված են կից Հավելվածներում:

2022. նոյեմբերի 11-ին Բանկը պայմանագիր է կնքել «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպության հետ, որի հիմքով 2022թ անկախ աուդիտորական ստուգումն իրականացվել է վերոնշյալ ընկերության կողմից:

Աուդիտորական ընկերության փոփոխությունը պայմանավորված է ՀՀ ԿԲ **«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ»** Կանոնակարգ 22-ի պահանջներով, համաձայն որի՝ «Աուդիտորական կազմակերպությունը կարող է իրականացնել միևնույն ֆինանսական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը անընդմեջ առավելագույնը 6 տարի, ընդ որում, տվյալ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել տվյալ ֆինանսական կազմակերպության աուդիտը առավելագույնը 3 տարի»:
«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ն գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում 1999թ-ի հուլիսի 20-ին: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, «Նորդ» բիզնես-կենտրոն, գրասենյակ 27:
Ընկերությունն աուդիտորական ծառայությունների մատուցման լիզենցիա է ստացել Հայաստանի Հանրապետության կառավարությունից և ծառայություններ է մատուցում ձեռնարկատիրական և բանկային ոլորտի հաճախորդներին:
Կազմակերպության գլխավոր տնօրեն է հանդիսանում Էրիկ Հայրապետյան:

Ռիսկային գործոններ

3.2.1 Յանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ Բանկի պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ: Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ներքո շարադրած ռիսկերի ամփոփ նկարագրությունը և սույն փաստաթղթում տեղ գտած բոլոր այլ տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ներդրողը պետք է գիտակցի, որ նկարագրված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որոնք Բանկը կարող է երբևէ կրել: Բանկը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք համարել է էական: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Բանկն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն նրան, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է հանգեցնել ներդրողի կողմից ներդրված գումարի մասնակի կամ ամբողջական կորստին:

3.2.2 Բանկի գործունեությանն առնչվող հիմնական ռիսկերն են.

- **Վարկային ռիսկ:** Վարկային ռիսկը Բանկի վարկառուների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների ժամանակին և ամբողջական չկատարելու ռիսկն է, որը կարող է հանգեցնել բանկի շահույթի և/կամ կապիտալի նվազմանը: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի և փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Նշված ռիսկը կառավարելու համար Բանկը սահմանել է վարկային ռիսկի կենտրոնացման սահմանաչափեր առանձին փոխառուների և նրանց փոխկապակցված խմբերի, տնտեսության ճյուղերի և աշխարհագրական վայրերի նկատմամբ:

Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ ռիսկի դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	2022/31/12	2021/31/12	2020/31/12
Ստանդարտ	122,825,906	116,775,871	121,246,071
Հսկվող	1,416,832	1,579,728	1,721,054
Ոչ ստանդարտ	2,894,874	2,938,988	6,670,838
Կասկածելի	4,138,048	4,172,790	96,517
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	**131,275,659**	**125,467,377**	**129,734,480**
Հնարավոր կորուստների պահուստ	-6,272,611	-8,935,867	-6,236,256
Խնդրահարույց վարկեր/Վարկային պորտֆել	6.44%	6.93%	6.54%

3.2.3 Իրացվելիության ռիսկ: Իրացվելիության ռիսկը Բանկի կողմից իր պարտավորությունները ժամանակին և ամբողջական կերպով չկատարելու ռիսկն է, որը կարող է առաջանալ ակնկալվող դրամական հոսքերի չստացման, անակնկալ կորուստների, օրեսդրական փոփոխությունների և այլ պատճառներով: Իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորություններն ըստ ժամկետների մարելու համար, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը և վերահսկել իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Բանկն իր միջոցների մի մասը ներդնում է բարձր իրացվելի ակտիվներում, ինչպես նաև հնարավորինս համապատասխանեցնում է ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետներն ու ծավալները և իրականացնում դրամական հոսքերի պարբերական մոնիթորինգ: 31.12.2022թ-ի դրությամբ, սթրես թեստերը ցույց են տալիս, որ ի հաշիվ իրացվելիության նորմատիվների բարձր մակարդակի (Ն21 և Ն22 նորմատիվները կազմում են 53.84% և 509.9% նախատեսված 15% և 60%-ի փոխարեն), ֆիզիկական անձանց կողմից ժամկետային ավանդների 30%-ի հետ պահանջումը կունենա համապատասխանաբար ընդամենը 0.85% և 17.15%-ի ազդեցություն:

3.2.4 Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը Բանկի՝ կորուստներ կրելու հավանականություն է շուկայական տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով: Նշված ռիսկի զսպման նպատակով Բանկում վերահսկվում է և պարբերաբար վերանայվում է ակտիվների գնագոյացման գործընթացը: Բանկում տոկոսադրույքի կառավարման նպատակով կիրառվում են եկամտաբերության

կորի փոփոխության, տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ժամկետային անհամապատասխանության և շուկայական տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների գծով ռիսկերի գծով վերլուծություններ: 31.12.2022թ-ի դրությամբ, սթրես թեստերը ցույց են տալիս, որ շուկայական տոկոսադրույքների 1% աճի դեպքում Բանկի կորուստը չի գերազանցի Բանկի ընդհանուր կապիտալի 1.5%-ը, իսկ ՀՀ դրամով պարտատոմսերի եկամտաբերության կորի համամասնական 1% աճը կհանգեցնի ընդհանուր նորմատիվային կապիտալի 10.8%-ով նվազմանը, ընդ որում ընդհանուր կապիտալի համարժեքությունը կնվազի մոտ 0.4%-ով:

3.2.5 Արտարժութային ռիսկ: Արտարժութային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արտարժութային ռիսկի զսպման նպատակով Բանկը սահմանել է արտարժութային դիրքերի ներքին առավելագույն սահմանաչափեր և իրականացնում է դրանց պահպանման օրական վերահսկողություն: Փակ դիրքերի քաղաքականության պայմաններում ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% տատանման դեպքում արտարժույթի ճեղքվածքի գծով Բանկի կորուստները չեն գերազանցի կապիտալի 0.4%-ը:

- **Գործառնական ռիսկ:** Գործառնական ռիսկը ներքին գործընթացների և համակարգերի ոչ համարժեքության կամ խափանումների, ինչպես նաև մարդկանց և արտաքին գործոնների անբարենպաստ ազդեցության արդյունքում կորուստների առաջացման հավանականությունն է: Գործառնական ռիսկերը բավական տարաբնույթ են և կարող են պայմանավորված լինել ինչպես տեխնիկական միջոցների խափանմամբ, այնպես էլ մարդկային գործոններով: Տեխնիկական միջոցների խափանման հետ կապված ռիսկերից Բանկի համար առավել մեծ նշանակություն ունեն տվյալների բազայի ամբողջական պահպանմանը վտանգող ռիսկերը: Այս առումով Բանկն իրականացնում է տվյալների բազայի պարբերաբար արխիվացում, որոնց կրկնօրինակները պահվում են ինչպես Բանկի սերվերների և համակարգիչների մեջ, այնպես էլ արտաքին կրիչների վրա: Ընդ որում, արտաքին կրիչները պահվում են ինչպես Բանկի տարածքում՝ չհրկիզվող պահարանում, այնպես էլ Բանկի տարածքից դուրս: Մարդկային գործոններով պայմանավորված ռիսկերը նվազեցնելու նպատակով Բանկում ներդրված է ներքին հսկողության համակարգ, ինչի տարր են հանդիսանում գործարքների կրկնակի ստուգումը և առնվազն երկու անձի կողմից հաստատումը: Գործառնական ռիսկի նույնականացման և գնահատման հիմնական գործիքներն են գործարար գործընթացների պարբերական ուսումնասիրություններն ու գծապատկերումը, ինքնագնահատումը, ներքին/արտաքին աուդիտորների բացահայտումները, ռիսկի ցուցիչները (ռիսկի ցուցիչների օրինակներ են արագ աճը, նոր ծառայությունները, սխալների և թերացումների քանակը, համակարգերի խափանումների քանակը, բողոքների հաճախականությունը, աշխատակիցների հոսունությունը և այլն) և այլն:
- **Օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկ:** Օրենսդրական դաշտի փոփոխությունների ռիսկերի առաջացման աղբյուր կարող են հանդիսանալ օրենսդրության փոփոխությունները, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում

է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:

- **Մրցակցային ռիսկ:** Մրցակցային ռիսկն առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում: ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, և Բանկն իր մրցակցային դիրքերն ամրապնդելու նպատակով հետևողականորեն առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, իրականացնում է իր կառավարման համակարգի ինստիտուցիոնալ համակարգված բարեփոխումներ, ներդնում է բանկային ինովացիոն առաջավոր տեխնոլոգիաներ, բարձրացնում է մատուցվող ծառայությունների որակն ու մատչելիությունը:

3.2.6 Վերը նշված ռիսկերից բացի Թողարկողը կարող է բախվել նաև այլ ռիսկերի հետ, որոնք Բանկը սույն փաստաթղթում նշելու համար էական չի համարել:

3.2.7 Գիտակցելով վերը նշված ռիսկերը և մշտապես գնահատելով գործունեության միջավայրի փոփոխություններն ու դրանցով պայմանավորված մարտահրավերները՝ Բանկը պատրաստ է իրականացնելու այլընտրանքային ռազմավարություններ՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել իր գործունեության վրա դրանց բացասական ազդեցությունն ու ապահովել հիմնական թիրախային ցուցանիշների կատարումը:

Տեղեկատվություն Բանկի մասին

Բանկի պատմությունը և զարգացումը.

3.3.1 **Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է**

***հայերեն*՝** «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
***ռուսերեն*՝** ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО “АРМСВИСБАНК”.
***անգլերեն*՝** “ARMSWISSBANK” CLOSED JOINT STOCK COMPANY.
Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է
հայերեն՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО “АРМСВИСБАНК”
անգլերեն՝ “ARMSWISSBANK” CJSC

3.3.2 Բանկը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում 2004թ-ի սեպտեմբերի 15-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն: «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 2004թ-ի հոկտեմբերի 7-ին: Բանկի պետական գրանցման վկայականի համարն է N 0476: 2005թ-ի փետրվարի 25-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 84 լիցենզիան:

Բանկի ապրանքային նշանն է՝

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ  ARMSWISSBANK

որը գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 25.08.2005թ.:

3.3.3 ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը հիմնադրման օրվանից ի վեր, շուրջ 10 տարի, ծավալում է գործունեություն ՀՀ բանկային շուկայում: Բանկի հիմնադիր և հիմնական բաժնետերն է

հանդիսանում շվեյցարական ժամացույցների «Ֆրանկ Մյուլլեր Ուոչլանդ» ընկերության հիմնադիր, սեփականատեր և գործադիր տնօրեն, հայազգի գործարար Վարտան Սիրմակեսը:

3.3.4 **Բանկի պետական գրանցման վայրն է՝**

ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10:

Բանկի պետական գրանցման համարն է 26:

Բանկի գտնվելու վայրն է՝

ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10,

Կապի միջոցները՝

հեռ. (37410) 58-44-19, (37410) 52-95-93

ֆաքս (37410) 54-07-28

էլ. փոստ info@armswissbank.am,

ինտերնետային կայք՝ www.armswissbank.am:

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

3.3.5 Բանկը մասնաճյուղեր և ներկայացուցչություններ չունի:

3.3.6 Ներքոնշյալ աղյուսակում ներկայացվում են Բանկային գործունեության վերահսկման նպատակով ՀՀ ԿԲ կողմից սահմանված տնտեսական նորմատիվների, մասնավորապես, պոտենցիալ ներդրողների կողմից Բանկի իրացվելիության մասին գնահատական տալու համար անհրաժեշտ տեղեկատվություն՝

Բանկի՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված տնտեսական նորմատիվների մեծությունները 2020-2022թթ.

Նորմատիվի անվանումը	**ՀՀ ԿԲ-ի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծություն**	**Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2022թ.**	**Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2021թ.**	**Նորմատիվի փաստացի մեծություն 31.12.2020թ.**
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	Նվազագույնը 15%	53.84%	56.97%	52.94%
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	Նվազագույնը 60%	509.90%	577.56%	533.46%

Հիմնական գործունեություն

3.4.1 Բանկն իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով բանկերին թույլատրված ֆինանսական գործառնություններ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում:

3.4.2 Բանկը ֆինանսական գործառնություններն իրականացնում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.4.3 Բանկն իր գործունեությունն իրականացնում է կորպորատիվ և ներդրումային ուղղություններով՝ ներդնելով միջազգային բանկային համակարգում ընդունված փրայվիթ բանկային տեխնոլոգիաները և ձեռնպահ մնալով զանգվածային ծառայությունների մատուցումից:

3.4.4 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի թղթակցային նոստրո հաշիվներ 17 բանկում, որից 14-ը ոչ ռեզիդենտ են և 6 բանկերի թղթակցային լորո հաշիվներ: Բանկը դեպո հաշիվներ ունի 3 ֆինանսական կազմակերպություններում, որից 1-ը արտասահմանյան բանկում և 2-ը արտասահմանյան ֆինանսական ընկերություններում:

3.4.5 Իր գործունեությունն իրականացնելու համար Բանկը օգտվում է ինչպես միջազգային SWIFT վճարային, Bloomberg և Reuters տեղեկատվական, այնպես էլ ՀՀ գործող BankMail և CBANet համակարգերից:

3.4.6 Բանկը համաձայն իր կողմից որդեգրված ռազմավարության՝ իր հաճախորդներին մատուցում է հետևյալ ֆինանսական ծառայությունները.

3.4.6.1 Վարկային ծառայություններ

Վարկավորման ընդհանուր ներդրումների ծավալը 31.12.2022թ-ի դրությամբ կազմել են Բանկի ակտիվների 32.4%-ը: Բանկի որդեգրած քաղաքականությամբ վարկավորման գործունեության մեջ Բանկը շարունակում է նախապատվություն տալ կայուն բիզնես, զարգացման տեսանելի հեռանկարներ, կառավարման որակյալ համակարգ և բարի համբավ ունեցող կայացած կորպորատիվ հաճախորդներին: Բանկը պատրաստակամ է համագործակցել այն հաճախորդների հետ, որոնք հետաքրքրված են կամ ակտիվորեն օգտվում են Բանկի կողմից առաջարկվող այլ ծառայություններից: Բանկը շարունակում է հաճախորդներին առաջարկել վարկային գործիքների լայն փաթեթ. վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, այդ թվում՝ քարտային օվերդրաֆտներ, բանկային երաշխիքներ, ակրեդիտիվներ, գնման պատվերի ֆինանսավորում, նախաարտահանման և հետարտահանման ֆինանսավորում, ֆակտորինգ, նախագծային ֆինանսավորում, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետ նախագծերի և մեզանին ֆինանսավորում, լիզինգային ֆինանսավորում և հաճախորդների կարիքներից բխող այլ ծառայություններ:

Անհատական վարկային ծառայությունների շրջանակից Բանկը տարեցտարի ակտիվացնում է իր գործունեությունը հիփոթեքային շուկայում՝ հաճախորդներին հետևողականորեն առաջարկելով մրցակցային պայմաններով վարկային գործիքներ: Բանկի կողմից տնտեսության վարկավորման հիմնական ոլորտներ են հանդիսանում արդյունաբերությունը (հանքային, սննդի արդյունաբերություն, հանրային սնունդ և սպասարկում, թեթև արդյունաբերություն), էներգետիկան, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի ոլորտը, առևտուրը, գյուղատնտեսությունը (գյուղատնտեսական ապրանքների արտադրություն, վերամշակում, պտղատու այգիների հիմնում և այլն) և տուրիզմը:

2022թ-ի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը դրամային արտահայտությամբ կազմել է 131,276 մլն ՀՀ դրամ, որը նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշի համեմատությամբ աճել է 4.63%-ով:

Վարկային պորտֆելի կառուցվածքի բաշխվածությունն ըստ արժույթների՝ 2020-2022թթ.
Ժամանակահատվածի համար

	Արժույթ	2022/31/12 Տեսակարար կշիռ (%)	2021/31/12 Տեսակարար կշիռ (%)	2020/31/12 Տեսակարար կշիռ (%)
1	ՀՀ դրամ	61.2	45.5%	31.7
2	ԱՄՆ դոլար	30.1	41.4%	42.4
3	Եվրո	8.0	11.6%	24.1
4.	ՌՈՒ	0.7	1.6%	1.8

Վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ աշխարհագրական դիրքի՝ 2020-2022թթ.
Ժամանակահատվածի համար

Անվանում	*Տեսակարար կշիռը վարկային պորտֆելում*		
	2022/31/12	2021/31/12	2020/31/12
Երևան	58.2%	60.4%	56.4%
Կոտայք	9.3%	9.6%	7.4%
Սյունիք	1.7%	1.3%	3.4%
Վայոց Ձոր	6.5%	7.0%	2.3%
Արագածոտն	2.3%	2.7%	0.9%
Շիրակ	3.2%	3.6%	3.3%
Արմավիր	6.4%	5.2%	6.2%
Արարատ	8.0%	5.6%	2.3%
ՀՀ այլ մարզեր	2.7%	2.7%	1.3%
ԼՂՀ	0.2%	0.1%	14.2%
Արտասահման	1.5%	1.8%	2.3%

Վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի՝ 2020-2022թթ.
ժամանակահատվածի համար

Անվանում	*Տեսակարար կշիռը վարկային պորտֆելում*		
	2022/31/12	2021/31/12	2020/31/12
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնաբուծություն	7.3%	5.9%	10.2%
Մշակող արդյունաբերություն	30.6%	29.1%	23.2%
Էլեկտրականության, գազի,	13.3%	13.0%	11.9%

գոլորշու և լավորակ օդի մատակարարում			
Շինարարություն	10.2%	11.4%	11.8%
Առևտուր	14.4%	16.0%	15.2%
Հյուրանոցային գործունեություն և կացության կազմակերպում	5.0%	4.3%	5.2%
Հիփոթեքային վարկեր	14.2%	14.2%	13.3%
Սպառողական վարկեր	1.2%	2.3%	2.2%
Տնտեսության այլ ճյուղեր	3.7%	3.9%	7%

Բանկում վարկավորումը զարգացել է հետևյալ հիմնական ուղղություններով.

- ✓ Կորպորատիվ վարկավորում
- ✓ Նախագծային ֆինանսավորում
- ✓ Անհատական վարկավորում
- ✓ Արտահանման ֆինանսավորում և Ֆակտորինգ:

Կորպորատիվ վարկավորում, այդ թվում ՓՄՁ

Կորպորատիվ վարկերի պորտֆելում ընդգրկված են խոշոր և ՓՄՁ հաճախորդներին շրջանառու և կապիտալ ներդրումների նպատակով, այդ թվում՝ առևտրի ֆինանսավորման, գյուղատնտեսական (պետական ծրագրերի շրջանակում) նպատակներով տրված վարկերը և ֆինանսական վարձակալությունները, վարկային գծերը, օվերդրաֆտները, և այլն, բացառությամբ նախագծային ֆինանսավորման շրջանակում տրված վարկերի պորտֆելի (որի մասին ներկայացված է առանձին բաժնով): Բիզնես վարկավորման ոլորտում մեծ նշանակություն ունեն ՀՀ կառավարության կողմից տարբեր ոլորտների աջակցության նպատակով ներդրված սուբսիդավորման ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկային գործիքները (վարկեր, վարկային գծեր և այլն) և առևտրի ֆինանսավորման նպատակով տրված վարկերը: Հատկանշական է, որ պետական և մասնավոր ընկերությունների պատվերների ավելացմանը զուգահեռ նկատվում է բանկային երաշխիքների պորտֆելի աճ: Միևնույն ժամանակ էականորեն աճել է լիզինգային գործիքների ծավալները, ինչը պայմանավորված է կառավարության կողմից համապատասխան ոլորտում սուբսիդավորման ծրագրերի առկայությամբ: ԱՖԾ ոլորտում Բանկը երկար տարիներ համագործակցում է ՎՋԵԲ-ի, ԱՋԲ-ի հետ, իսկ 2022թ-ից արդեն ԵԱՋԲ-ի հետ՝ 5 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափի շրջանակում և ՏՀՄԲ-ի հետ՝ 5 մլն եվրո սահմանաչափի շրջանակում՝ հաճախորդներին մատուցելով ներմուծման և արտահանման կարճաժամկետ վարկեր, ակրեդիտիվներ, ինկասոներ, միջազգային երաշխիքներ:

Նախագծային ֆինանսավորում

Այստեղ կենտրոնացված է Բանկի վարկային պորտֆելի այն հատվածը, որը իրենից ներկայացնում է վերականգնվող էներգիայի, շինարարության, գյուղատնտեսության և այլ ոլորտների նոր սկսնակ բիզնես նախագծերի կապիտալ ներդրումների ֆինանսավորում:

2022թ-ին նախագծերի ֆինանսավորման ոլորտում առանձնահատուկ ակտիվ են եղել բնակելի և հասարակական կառուցապատման, ինչպես նաև սեփական կարիքների ու արդյունաբերական բիզնես նպատակով կառուցված արևային ֆոտովոլտային կայանների նախագծերի ֆինանսավորումները:

2022թ-ի վերջի դրությամբ Բանկը հաջողությամբ իրականացրել է շուրջ 150 հատ՝ ավելի քան 20 մլրդ ՀՀ դրամ ծավալով արևային կայանների կառուցման ծրագրերի ֆինանսավորում, որն իր ծավալներով ՀՀ բանկային համակարգում լավագույն ցուցանիշներից է: Այսպիսի արդյունքներ հնարավոր է եղել գրանցել KfW բանկի Վերկանգնվող էներգիայի աջակցության ծրագրի և ՎԶԵԲ հետ կնքված Էներգաարդյունավետության ծրագրի շրջանակում մատչելի պայմաններով ներգրավված, ինպես նաև Բանկի սեփական ռեսուրսների հաշվին: Նույն ժամանակահատվածի վերջի դրությամբ Բանկի սեփական ռեսուրսների հաշվին ֆինանսավորված շինարարական նախագծերի թիվը կազմել է 14՝ շուրջ 10 մլրդ ՀՀ դրամի ծավալով: Բանկը Գերմանահայկական Հիմնադրամի էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար ծրագրի շրջանակում առաջինն է, որ ֆինանսավորել է էներգաարդյունավետ բնակելի շենքի շինարարության նախագիծ և այժմ էլ շարունակում է նման նախագծերի ֆինանսավորումը:

Իրականացվել է նաև «Scaling up green finance practices in Armenia» դրամաշնորհային ծրագրի ամփոփիչ և ՀՀ-ում կանաչ ֆինանսավորման ճանապարհային քարտեզի ներկայացմանը նվիրված աշխատաժողով:

Անհատական վարկավորում

Մասնագիտացված չլինելով մանրածախ բանկային ծառայությունների շուկայում՝ Բանկը ծառայությունների ամբողջականության ապահովման նպատակով անհատական վարկեր (հիփոթեքային, սպառողական և քարտային վարկեր) է առաջարկում Բանկի կորպորատիվ հաճախորդների սեփականատերերին, ղեկավար անձնակազմին և աշխատակիցներին: Բացի այդ, Բանկն առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում հիփոթեքային վարկավորման ոլորտին, որտեղ տարիներ շարունակ արձանագրել է կայուն աճի տեմպեր:

Բանկն առաջարկում է հիմնականում Երևան քաղաքում բնակարանների ձեռք բերման, վերանորոգման և կառուցապատման վարկեր, ինչպես ֆիքսված, այնպես էլ փոփոխական տոկոսադրույքով մինչև 20 տարի մարման ժամկետով: Հիփոթեքային վարկերի ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում սեփական ռեսուրսները, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման, էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրերից ստացված ծրագրային միջոցները:

Միևնույն ժամանակ Բանկը համագործակցում է մի շարք կառուցապատող ընկերությունների հետ, որոնցից անշարժ գույքի ձեռքբերման վարկերը նույնպես իրականացվում են հիմնականում Բանկի կողմից շուկայում առկա մրցակցային պայմաններով: Այժմ Բանկը

համագործակցում է շուրջ 12 կառուցապատող ընկերությունների հետ, որոնց կողմից առաջարկվում են տարբեր արժեքների և տարբեր չափերի բնակարաններ (Մոտ 1,500 բնակարան): Բանկը բարձր է գնահատում նաև կառուցվող շենքերի էներգաարդյունավետությունը և հետևաբար նմանատիպ շենքերից անշարժ գույքի ձեռքբերման վարկերի մասով իրականացնում է ակտիվ վարկավորում:

Առևտրի ֆինանսավորում և ֆակտորինգ (ներքին և միջազգային)

Առևտրի ֆինանսավորումը և ֆակտորինգը Բանկի գործունեության առանցքային ուղղություններից են: Բանկն առևտրի ֆինանսավորման և ֆակտորինգի ոլորտում հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի առաջատարներից ինչպես տեխնոլոգիաների և պրոդուկտների գործիքակազմի, այնպես էլ ցուցանիշների առումով: Այդ իմաստով ընթացիկ տարին ևս բացառություն չէր, ինչի մասին են վկայում 2022 թ-ին Բանկին շնորհված մրցանակները, այդ թվում՝

- ՎՋԵԲ-ի կողմից չորրորդ տարին անընդմեջ շնորհված «Հայաստանի ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակը,
- ԱՋԲ-ի կողմից երկրորդ անգամ շնորհված «Առաջատար գործընկեր բանկ ՀՀ-ում» մրցանակը և «Լավագույն ՓՄՁ գործարք-Թողարկող Բանկ» մրցանակը,
- Ֆակտորինգային միջազգային ասոցիացիայի (FCI) պլատֆորմում ՎՋԵԲ ԱՖԾ տեխնոլոգիաներով Բանկի կողմից իրականացրած առաջին միջազգային ֆակտորինգային գործարքի համար FCI-ի կողմից «Տարվա լավագույն գործարք» անվանակարգում տրված մրցանակը:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է միջազգայնորեն ընդունված առևտրի ֆինանսավորման գործիքների մեծ տեսականի, մասնավորապես՝ ներքին ռեգրեսային, ոչ ռեգրեսային ֆակտորինգ և դեբիտորական պարտքի ֆինանսավորում, ինչպես նաև ՎՋԵԲ-ի, ԱՋԲ-ի, ԵԱՋԲ-ի, ՏՀՄԲ-ի, ՀԱԱԳ-ի հետ համագործակցության և FCI-ին անդամակցության շրջանակներում առաջարկում է նաև արտահանման և ներմուծման ֆակտորինգ, ակրեդիտիվ, ինկասո, միջազգային երաշխիք, հետարտահանման և նախաարտահանման ֆինանսավորում: Ավելին, Բանկը դրսևորում է շատ ճկուն քաղաքականություն՝ հաճախորդների ֆինանսական կարիքներին առավելագույնս համապատասխանող լուծումները գտնելու նպատակով:

2022թ-ի վերջի դրությամբ ֆակտորինգի ընդհանուր պորտֆելը, որը ներառում է ներքին և միջազգային ֆակտորինգը, ինչպես նաև հետարտահանման և նախաարտահանման ֆինանսավորումները, կազմել է շուրջ 10.3 մլրդ ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆակտորինգի պորտֆելում կիրառվող գործիքակազմը կրում է կարճաժամկետ բնույթ, արժե դիտարկել նաև 2022թ-ի ընթացքում ընդհանուր տրամադրումների ծավալը, ինչը կազմել է շուրջ 38.6 մլրդ ՀՀ դրամ՝ նույնպես ապահովելով նախորդ տարվա ցուցանիշը:

Ներկայումս Բանկի ֆակտորինգային գործարքներից օգտվում են հիմնականում թեթև արդյունաբերության, ձկնաբուծության, խմիչքների արդյունաբերության, պտուղ-բանջարեղենի վերամշակման և պահածոյացման, բեռնափոխադրումների, մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտի ընկերությունները:

3.4.6.2 Ներդրումային ծառայություններ

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական, ռուսական և այլ երկրների ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, արժեթղթերով ռեպո և մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ոսկով գործառնություններ, պահառուական ծառայություններ, սվոփ, օպցիոն, ֆորվարդ, ֆյուչերս և այլն:

Բրոքերային գործունեության շրջանակներում Բանկն իր անունից և հաճախորդի հաշվին կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին հաճախորդի հանձնարարականների հիման վրա իրականացնում է արժեթղթերի առք/վաճառք, ինչպես նաև այլ գործողություններ և գործարքներ՝ կապված բրոքերային գործունեության իրականացման հետ:

Արժեթղթերի պահառության շրջանակներում Բանկը հաճախորդներին առաջարկում է հետևյալ ծառայությունները

Հաճախորդի արժեթղթերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցում.

Հաճախորդի արժեթղթերի անվանատեր հանդես գալը.

Հաճախորդի համար առանձին դեպո հաշվի բացում և վարում.

Հաճախորդին արժեթղթերի վերաբերյալ թողարկողից, Կենտրոնական դեպոզիտարիայից և այլ պահառուից ստացված ամբողջական տեղեկատվության տրամադրում.

Արժեթղթերի պահառությանն առնչվող և օրենքով թույլատրվող այլ ծառայություններ:

Բանկը պահառության ծառայություններ է մատուցում ՀՀ տարածքում և դրանից դուրս շրջանառվող ազատ շրջանառության իրավունքով ոչ փաստաթղթային արժեթղթերի համար:

Դրամային իրացվելիության կառավարման նպատակով Բանկն իր հաշվետեր հաճախորդներին առաջարկում է ռեպո գործարքների կնքում մինչև 3 ամիս ժամկետով: Ռեպո գործարքների առարկա կարող են հանդիսանալ պետական պարտատոմսերը և Բանկի կողմից Հայաստանի ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջանում գնանշվող կորպորատիվ պարտատոմսերը:

Ժամանակակից շուկաների նորանոր մարտահրավերներին դիմագրավելու, ինչպես նաև ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար Բանկն իր հաճախորդներին առաջարկում է նաև արժեթղթերի բորսայական ու արտաբորսայական շարժի ապահովման, միջազգային տիրություում շրջանառվող արժեթղթերի ձեռքբեման, կորպորատիվ հաճախորդների արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման կազմակերպման և այլ ծառայություններ:

3.4.6.3 Հաշվարկադրամարկղային ծառայություններ

Հաշվարկադրամարկղային ծառայությունների շրջանակներում Բանկի կողմից մատուցվում են հետևյալ հիմնական ծառայությունները.

- Հաշիվների բացում, ավանդների ընդունում, ավանդի գրավով վարկերի տրամադրում
- Էսքրու, դեպո հաշիվների բացում և սպասարկում
- Դրամական և միջազգային փոխանցումներ

- Արտարժութային և ոսկով, կանխիկ գործառնություններ, այդ թվում՝ ոսկու ձուլակտորներով
- Ածանցյալ գործառնություններ
- Անհատական պահախցիկներ
- Քարտերի, ՊՈՍ տերմինալների տրամադրում և սպասարկում,

Ծառայությունների մշակման և մատուցման ժամանակ Բանկն առանձնանում է մի շարք առավելություններով, ինչպիսիք են արագությունը, սպասարկմա բարձր որակը, հուսալիությունը, անհատականացված մոտեցումը և այլն:

Հիմնական շուկաները

3.4.7 Բանկը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, շարունակում է գործունեություն ծավալել և մասնագիտանալ կորպորատիվ և ներդրումային բանկային ծառայությունների մատուցման ոլորտում՝ իր առջև ունենալով Հայաստանում այդ ուղղությամբ առաջատար բանկ դառնալու տեսլականը:

3.4.8 Բանկն առանձնանում է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող համալիր ծառայությունների լայն տեսականիով՝ սկսած ավանդական բանկային ծառայություններից (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորում և այլն) մինչ ոչ ավանդական բանկային ծառայություններ (այլընտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվության մատուցում և այլն):

3.4.9 Առևտրի ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային և ֆինանսական ֆյուչերսները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ոլորտում գործող հաճախորդներին՝ նպատակ ունենալով պահպանել նրանց մրցունակությունը տեղական և միջազգային շուկաներում, ընձեռելով նոր շուկաներ ներթափանցելու հնարավորություն: 2008թ-ից Բանկն անդամակցում է Factors Chain International-ին (Միջազգային ֆակտորինգային ասոցիացիա), ինչը հնարավորություն է տալիս Բանկին միջազգային ֆակտորինգային գործառնություններ իրականացնել ավելի քան 90 երկրում գտնվող շուրջ 400 անդամ-բանկերի միջոցով:

3.4.10 Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների մատուցումը: Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, եվրոպական, ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ոսկով գործառնություններ և այլն:

3.4.11 Ֆինանսավորման ածանցյալ գործիքների միջոցով Բանկի հաճախորդներն առավել արդյունավետ կարող են իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը, ինչպես նաև դրամական հոսքերի կառավարումը:

3.4.12 Ժամանակակից շուկաների նորանոր մարտահրավերներին դիմագրավելու, ինչպես նաև

ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար Բանկն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ:

3.4.13 Բանկը շարունակում է իր ակտիվ մասնակցությունը ՀՀ արժեթղթերի շուկայի ֆինանսական միջնորդության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներին վերաբերող նախաձեռնություններին:

3.4.14 Բանկն իր հաճախորդներին առաջարկում է անհատականացված (tailor-made) պրոդուկտների փաթեթ՝ արժեթղթերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորում, բրոքերային ու պահառուական ծառայություններ, ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվության մատուցում: Ճկունությունը հաճախորդների հետ աշխատելիս կարևոր գործոն է Բանկի առաջանցիկ զարգացման ապահովման «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» բրենդի առաջմղման գործում:

3.4.15 Բանկն իր հաճախորդների հետ ձևավորում է երկարատև ու գործընկերային հարաբերություններ, որոնց հիմքում ընկած են սերտ ու փոխշահավետ համագործակցությունը: Հմուտ և փորձառու անձնակազմի շնորհիվ Բանկը բացահայտում է հաճախորդների կարիքները և ժամանակին տալիս բարձրակարգ ֆինանսական լուծումներ:

3.4.16 Հաշվի առնելով բանկային համակարգում առկա մրցակցությունը՝ Բանկը մշտապես իրականացնում է մրցակցային դիրքի վերլուծություններ, շուկայում գործող ծառայությունների պայմանների և տոկոսադրույքների ուսումնասիրություններ:

3.4.17 Շարունակաբար կատարելագործել և զարգացնել Բանկի կազմակերպական կառուցվածքը՝ համահունչ դարձնելով Բանկի առջև դրված խնդիրները: Առավել մեծ ուշադրություն է դարձվելու Բանկի համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների զարգացմանը, Բանկում հաճախորդների սպասարկման նոր որակի տեխնոլոգիաների ներդրմանը և հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցմանը:

3.4.18 Բանկը մշտապես ձգտել է առաջատար դիրքեր գրավել և այդ դիրքերը պահպանել բարձրակարգ բանկային ծառայությունների որակական հատկանիշների ապահովմամբ, ինչպես նաև առաջատար դիրքերում է որոշակի ծառայությունների մատուցմամբ և ներդրմամբ, մասնավորապես՝

- Առևտրի ֆինանսավորում և ֆակտորինգ,
- Լիզինգային ֆինանսավորում
- Մետաղական հաշիվներով գործառնություններ,
- Ոսկու ձուլակտորների առք ու վաճառք,
- Պարտատոմսերի տեղաբաշխման/թողարկման կազմակերպում, ինչպես նաև գործառնություններ երկրորդային շուկայում,
- Կորպորատիվ հաճախորդների համար համալիր լուծումներ:

Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տեսականին և ծավալները շարունակում են ընդլայնվել հետևյալ գործոնների առկայության պարագայում՝ սպասարկման որակ,

աշխատակիցների պրոֆեսիոնալիզմ, նոր տեխնոլոգիաների կիրառում, տարածքի՝ միջազգային չափանիշներին համապատասխանող պայմաններ: Այս շրջանակում Բանկի գործունեության ծավալների և աշխատակազմի ավելացմանը զուգընթաց,ինչպես նաև հաճախորդներին մատուցվող ծառայությունների քանակի ավելացման ու որակի բարելավման անհրաժեշտությունից ելնելով՝ պլանավորվում է 2023թ-ին ավարտին հասցնել նոր և առավել հարմարավետ գլխամասային գրասենյակի շինարարական աշխատանքները, ինչպես նաև ինտերիերի դիզայներական, ներքին հարդարման և տեղափոխման աշխատանքները:

3.4.19 Միջազգային կառույցների հետ համագործակցությունը Բանկի համար ռազմավարական նշանակություն ունի և հիմնական նպատակներից մեկը այդ համագործակցությունները ընդլայնելը և նորերով ավելացնելն է: Միջազգային կառույցների հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս Բանկին իր հաճախորդներին առաջարկել հստակ նպատակայնություն ունեցող բարենպաստ պայմաններով վարկային գործիքներ, մեծացնել հստակ ոլորտներում պորտֆելի ծավալը, ներգրավել նոր հաճախորդներ: Միևնույն ժամանակ միջազգային ֆոնդերը տրամադրում են նաև տեխնիկական աջակցություն, ինչը բարձրացնում է Բանկի ներքին կարողությունները: Հետագայում ևս Բանկն իր հաճախորդներին կառաջարկի արդյունավետ համակցված վարկատեսակներ և այլ պրոդուկտներ՝ պահպանելով հիմնականում կորպորատիվ հաճախորդների ներգրավման և սպասարկման սկզբունքները: Մասնավորապես.

- ՎԶԵԲ-ի հետ համատեղ համագործակցության ողջ ընթացքում հաջողությամբ ֆինանսավորվել են ՓՄՁ, Առևտրի ֆինանսավորման և էներգախնայողության մի շարք ծրագրեր: 2022թ-ին շարունակվել է ՓՄՁ և GCF-GEFF Armenia էներգաարդյունավետության ծրագրերի շրջանակներում ընդհանուր 8 մլն ԱՄՆ դոլար ծավալով ներգրավված միջոցների տեղաբաշխումը: Ակնկալվում է նաև 2023թ-ին ՎԶԵԲ-ից ներգրավել նոր վարկային միջոցներ ՓՄՁ և էներգաարդյունավետ ներդրումների ֆինանսավորման համար: Միաժամանակ, ԱՖԾ-ի սահմանաչափը ավելացվել է 6.5մլն ԱՄՆ դոլարով և սահմանվել է 28.5 մլն ԱՄՆ դոլարի նոր սահմանաչափ, որը ՀՀ բանկային համակարգում ամենամեծ սահմանաչափերից է: Բացի այդ, Բանկը համագործակցում է ՎԶԵԲ-ի հետ ՀՀ պետական պարտատոմսերով հակադարձ ռեպո գործարքների ուղղությամբ, որի մանրամասները ներկայացված են «Ներդրումային գործունեություն» բաժնում: Հատկանշական է նաև, որ 2022թ-ի մայիսի 10-12-ը Մարաքեշում (Մարոկկո) կայացած ՎԶԵԲ տարեկան ժողովի շրջանակում Առևտրի Ֆինանսավորման ծրագրի ոլորտում նախորդ տարվա ցուցանիշների արդյուքներից ելնելով՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն չորրորդ անգամ անընդմեջ արժանացել է ՀՀ-ում ամենաակտիվ թողարկով բանկ մրցանակին: Մրցանակի շնորհումը վկայում է ՎԶԵԲ-ի հետ Առևտրի Ֆինանսավորման ոլորտում Բանկի տարեցտարի ընդլայնվող արդյունավետ համագործակցության մասին:
- Բանկն ԱԶԲ-ի հետ համագործակցում է Առևտրի ֆինանսավորման ծրագրի (ԱՖԾ) շրջանակում և 2022թ-ի սեպտեմբերի դրությամբ սահմանել է 9 մլն ԱՄՆ դոլարի սահմանաչափ: Բանկը 2022թ-ին երկրորդ տարին անընդմեջ արժանացել է Ասիական զարգացման Բանկի կողից ԱՖԾ մրցանակների՝ 2021թ. «Առաջատար գործընկեր-բանկ Հայաստանում» և «Լավագույն ՓՄՁ գործարք-Թողարկող Բանկ»: 2022թ-ին ԱԶԲ-ի հետ համատեղ մշակվել է Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ուղեցույցը, որի հետ կապված աշխատանքները նախատեսվում է ավարտել 2023թ-ի

առաջին եռամսյակում: 2023թ-ին նախատեսվում է խորացնել համագործակցությունը վարկավորման այլ ուղղություններով:


- Բանկը շարունակել է համագործակցությունը ԳՀՀ-ի հետ մի շարք ուղղություններով, մասնավորապես.
  - Բանկը 2021 թ-ի հունիսին միացել է KfW բանկի կողմից իրականացվող «ՄՓՄՁ Աջակցում» վարկային ծրագրի երկրորդ փուլին՝ իրականացնելով ՓՄՁ-ների շրջանառու միջոցների և կապիտալ ներդրումների համալրան նպատակով ՀՀ դրամով ֆինանսավորում: 2022թ-ի ընթացքում այս ծրագրի միջոցները սպառվել են:
  - KfW բանկի վարկային վերականգնվող էներգիայի զարգացման ծրագրի շրջանակում շարունակել է իրականացնել իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների արևային կայանների տեղադրման ծրագրերի ՀՀ դրամով ֆինանսավորում:
  - KfW բանկի Էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի շրջանակում շարունակել է իրականացնել ՓՄՁ-ների էներգաարդյունավետ ծրագրերի ՀՀ դրամով ֆինանսավորում: Բանկը տվյալ ծրագրի շրջանակներում եղել է առաջին ֆինանսական կառույցը, որը ֆինանսավորել է էներգաարդյունավետ բնակելի շենքի շինարարության նախագիծ:
  - ԵՆԲ-ի «Մասնավոր հատվածի ֆինանսավորում ՓՄՁ-ների և միջին կապիտալիզացիայի կազմակերպությունների համար» ծրագրի 3-րդ փուլի շրջանակում շարունակել է իրականացնել գյուղատնտեսության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման, զբոսաշրջության, արտահանումը խթանող և արդյունաբերության ոլորտներում գործունեություն ծավալող ընկերություններին ՀՀ դրամով ֆինանսավորում:
- Եվրասիական Զարգացման Բանկի (ԵԱԶԲ) և Բանկի միջև կնքվել է Առևտրի ֆինանսավորման խթանման նպատակով նոր վարկային պայմանագիր՝ 5 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափով: Մասնավորապես տվյալ ռեսուրսի գրավիչ կողմը կայանում է նրանում, որ հնարավորություն է ստեղծվում ծառայություններ մատուցել ՌԴ շուկայի հետ համագործակցող հաճախորդներին և հիմնականում ՌԴ ռուբլով: 30.09.2022թ-ի դրությամբ նշված սահմանաչափի շուրջ կեսը տեղաբաշխված է: Հաշվի առնելով ՌԴ շուկայի նկատմամբ առկա սահմանափակումները այլ կառույցների կողմից, կարծում ենք որ ԵԶԲ այս ծրագրի ծավալները առաջիկա տարում ունեն աճելու պոտենցիալ:
- Տնտեսական Համագործակցության Միջազգային Բանկի (ՏՀՄԲ) հետ կնքվել է Ֆինանսավորման գլխավոր համաձայնագրիր 5 մլն եվրո սահմանաչափի շրջանակում
- Հիփոթեքային վարկավորման շրջանակում Բանկը հաջողությամբ համագործակցում է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների ծրագրերի հետ: Նշված ծրագրերի շրջանակներում ներկայումս գործում են համապատասխանաբար 2 մլրդ և 1 մլրդ ՀՀ դրամի սահմանաչափեր: 2022թ-ին Բանկը միացել է նաև հետևյալ ծրագրերին՝ «Բնակարանային ֆինանսավորում - V» ծրագիր (ԱՀԸ-ի կողմից վերաֆինանսավորվող բնակարանային էներգաարդյունավետ վարկեր) և «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիր»: Նախատեսվում է 2023թ-ին Անհատական Վարկավորման պորտֆելում ավելացնել էներգախնայող շենքերում բնակարանների ձեռք բերման համար տրամադրվող վարկերի ծավալը և քանակը:
- Բանկն արտահանման ֆինանսավորման շրջանակներում շարունակում է համագործակցել ՀԱԱԳ-ի հետ՝ իրականացնելով նրա հավաստագրի ապահովությամբ նախաարտահանման և հետարտահանման վարկավորում:
- Բանկը 2023թ-ին կշարունակի ակտիվ աշխատանքները միջազգային և տեղական ֆինանսական գործընկերների հետ, ինչպես նաև նոր գործընկերներ բացահայտելու ուղղությամբ՝ ՓՄՁ, էներգաարդյունավետության, ԱՖԾ ծրագրերի ոլորտների համար

մատչելի պայմաններով լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու ուղղությամբ: Նոր բանակցությունների փորձ կկատարվի մի շարք այլ միջազգային զարգացման գործակալությունների հետ, ինչպես նաև աշխատանքային հանդիպումներ են նախատեսված նաև Ամերիկյան և Չինական բանկերի հետ՝ թղթակցային հաշիվների սպասարկման և այլ ուղղություններով քննարկումների նպատակով: Նախատեսվում է ռեսուրսների ներգրավման համար բանակցություններ ունենալ նաև կենսաթոշակային հիմնադրամների և մանսավոր ֆոնդերի հետ:

- Բանկը 2022թ-ի ընթացքում հավատարմագրման (ակրեդիտացման) գործընթացի շրջանակներում շարունակել է համագործակցությունը միջազգային Green Climate Fund կազմակերպության հետ: Հավատարմագրման գործընթացը փոքր-ինչ դանդաղել է, ինչի վերաբերյալ նաև տեղեկացվել է Ազգային լիազոր մարմիններին: Դանդաղումները այմանավորված են հայտերի մեծ քանակով: Green Climate Fund-ի կողմից ակրեդիտացվելու դեպքում Բանկը հնարավորություն կունենա ներգրավել շուկայականից մատչելի և երկարաժամկետ ֆինանսական միջոցներ, ինչպես նաև հնարավորություն կընձեռնվի միջնորդ հանդիսանալ ֆոնդի և ՀՀ ներդրողների միջև: Վերոնշյալ գործընթացին զուգահեռ Բանկը հաջողությամբ շարունակել է Green Climate Fund-ի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ կազմակերպվող Կանաչ կլիմայի հիմնադրամի պատրաստվածության աջակցության ծրագրի գործընկերոջ պարտականությունների իրականացումը: Իրականացվել են մի շարք հետազոտություններ, վերլուծություններ, որոնք ներկայացվում են շահառուներին: Այս ծրագրի ավարտվել է 13.10.22թ-ին:
- Բանկը շարունակում է իր ակտիվ մասնակցությունը Պետության կողմից իրականացվող տնտեսության արդիականացման և գյուղատնտեսության ոլորտի աջակցության ծրագրերին: Մասնավորապես Բանկը ակտիվորեն մասնակցում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող գյուղատնտեսական հումքի մթերումների, տնտեսության արդիականացման և ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցության, ինչպես նաև ինտենսիվ այգեգործության ծարգացման ծրագրերին:

Բանկի կառուցվածքը

Բանկը որևէ խմբի անդամ չէ: Ստորև ներկայացվում է Բանկի ներքին վարչակազմակերպչական կառուցվածքը:



Բանկի զարգացման վերջին միտումները

3.5.1 Վերջին հաշվետու տարվա ավարտից մինչև Ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածում Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների էական աճ չի գրանցվել, որոնք ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:
Ստորև բերված աղյուսակում Պոտենցիալ ներդրողների համար ներկայացված է համապարփակ տեղեկատվություն նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվապասիվային ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ:

Բանկի ներգրաված և տեղաբաշխված միջոցների ցուցանիշներ 2020-2022թթ.

Միջոցների ներգրավում	**2022/31/12**	**2021/31/12**	**2020/31/12**	**Աճ/Նվազում/%**
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից	10,300,385	18,659,479	17,814,397	(8,359,094)/ 45%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	129,536,044	136,066,628	134,700,221	(6,530,584)/ 5%
Միջոցների տեղաբաշխում	**2022/31/12**	**2021/31/12**	**2020/31/12**	**Աճ/Նվազում/%**
Հաճախորդներին տրված վարկեր	131,275,659	125,467,377	129,734,480	5,808,282/ 5%
Բանկերին և ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ	2,252,499	786,367	2,669,412	1,466,132/ 186%
Ներդրումային արժեթղթեր (ներառյալ ռեպո համաձայնագրերով գրավադրված)	212,151,030	243,775,021	221,380,000	(31,623,991)/ -13%

Բանկի շահույթի կանխատեսումը

3.6.1 Բանկի 2023-2025թթ-ի հեռանկարային զարգացման ծրագրով 2023թ-ի համար կանխատեսվող չբաշխված զուտ շահույթի մեծությունը կազմում է 8.0 մլրդ ՀՀ դրամ: Ու թեև համաշխարհային ֆինանսա-տնտեսական համակարգի ներկայիս զարգացումներով պայմանավորված անորոշությունը կարող են բացասաբար ազդել Բանկի գործունեության ծավալների հետագա աճի վրա, սակայն դիվերսիֆիկացված ու առողջ վարկային պորտֆելն ու հիմնականում բարձր եկամտաբերությամբ պետական

պարտատոմսերով ձևավորված արժեթղթերի պորտֆելը հնարավորություն կտան ապահովել կանխատեսվող չբաշխված զուտ շահույթի մեծության կատարումը:

3.6.2 Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

– Բանկի ներգրավող և տեղաբաշխվող միջոցների ծավալների կառավարում,
– Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում և կառավարում,
– Բանկի տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական համակարգերի արդիականացմանն ուղղված ներդրումներ,
– Բանկի անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման ծախսեր,
– Բանկի գործունեության ապահովման ծախսեր:

Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.


– ավանդատուների վարքագիծ,
– ֆինանսական շուկայի տոկոսադրույքների վարքագիծ,
– փոխարժեքների վարքագիծ,
– անհաղթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը:

Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.7.1 Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները.

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ ժողով),
- Խորհուրդը,
- Գործադիր մարմին:

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև



3.7.2 Բանկի կանոնադրությամբ Բանկի կառավարման մարմիններին վերապահված են հետևյալ իրավասությունները.

3.7.2.1 Բաժնետերերի ընդհանուր ժողովը (Ժողով)

Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Ժողովի բացառիկ իրավասություններն են՝

ա) Բանկի Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի Կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
բ) Բանկի վերակազմակերպումը,

գ) Բանկի լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

դ) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ Ընդհանուր ժողովներում կարող է քննարկվել, եթե արտահերթ Ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

ե) բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման ճանապարհով կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի մեծացումը,

զ) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

է) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահաբաժինների չափի հաստատումը,

ը) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում,

թ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան) և բաժանումը,

ժ) օրենքով սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համաձայնությունը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին),

ժա) Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով նախատեսված դեպքերում,

ժբ) Խորհրդի նախագահի և անդամների վարձատրության չափի սահմանումը,

ժգ) օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ

3.7.2.2 Բանկի խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և Բանկի կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

Խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

ա) որոշել Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ընդունել Բանկի զարգացման տնտեսական ծրագրեր, Բանկի ֆինանսական դրության առողջացման ծրագրեր,

բ) գումարել Բանկի տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողով, հաստատել Ընդհանուր ժողովի օրակարգը,

գ) սահմանել Բանկում ներքին հսկողության ստանդարտները, ձևավորել Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը, հաստատել նրա տարեկան աշխատանքային ծրագիրը, հաստատել ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և վարձատրության պայմանները,

դ) լուծել Ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերը, այդ թվում՝ սահմանել Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը,

ե) նշանակել Բանկի Գործադիր տնօրենին, վաղաժամկետ դադարեցնել նրա լիազորությունները, Գործադիր տնօրենի ներկայացմամբ նշանակել Բանկի գլխավոր հաշվապահին և Գործադիր տնօրենի տեղակալներին:

զ) հաստատել Բանկի տարեկան ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը,

է) հաստատել Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը, հաստատել Բանկի Գործադիր տնօրենի աշխատավարձը, սահմանել Բանկի աշխատակիցների աշխատանքի վարձատրման առավելագույն և նվազագույն սահմանները,

ը) օրենքով սահմանված կարգով որոշել Բանկի գույքի (ներառյալ թողարկվող բաժնետոմսերի) շուկայական արժեքը,

թ) սահմանել Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքները, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը և կարգերը,

ժ) սահմանել Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարի չափը,

ժա) Ընդհանուր ժողովին ներկայացնել առաջարկություններ տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,

ժբ) օգտագործել Բանկի պահուստային հիմնադրամը, Ընդհանուր ժողովի լիազորությամբ հաստատել շահույթից ձևավորված այլ ֆոնդերի օգտագործման կարգը,

ժգ) սահմանել վարկավորման, դրամարկղային սպասարկման, տնտեսական գործունեության, արժեթղթերով գործառնությունների, այլ ներդրումների իրականացման քաղաքականությունը,

ժդ) օրենքով սահմանված կարգով որոշում ընդունել Բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50%-ի չափով),

ժե) որոշում ընդունել դուստր ընկերությունների ստեղծման, նրանց և այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցության չափի մասին,

ժզ) որոշում ընդունել շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման մասին,

ժէ) հաստատել Գործադիր տնօրենի կողմից Բանկի պարտապանների պարտավորությունների վրա տոկոսների հաշվարկի դադարեցման, պարտքերի զեղչման կամ ներման հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու կարգը,

ժը) տարեկան Ընդհանուր ժողովի գումարումից առաջ նախնական հաստատել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունները,

ժթ) որոշումներ ընդունել Բանկի տարաձքային ստորաբաժանումների ստեղծման և լուծարման մասին,

ի) հաստատել Բանկի տարաձքային ստորաբաժանումների կանոնադրությունները,

իա) հաստատել Բանկի գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերի ընդունման, հաստատման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու, դրանք ուժը կորցրած ճանաչելու կարգը,

իբ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը, դրանց տեղաբաշխման և մարման կարգի և պայմանների սահմանումը

իգ) իրականացնել սույն Կանոնադրությամբ և օրենքով Խորհրդին վերապահված այլ լիազորություններ

3.7.2.3 Բանկի գործադիր մարմինը

Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը:
Բանկի գործադիր մարմինը.
Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Տնօրինությունը և Բանկի Գործադիր տնօրենը. Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, Գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ: Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Տնօրինության անդամ չի կարող լինել այն անձը, որին օրենքով արգելված է լինել Բանկի ղեկավար և/կամ որը չի համապատասխանում Կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին: Տնօրինության քանակական կազմը սահմանվում է Խորհրդի կողմից: Տնօրինության անդամները նշանակվում են Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ: Տնօրինության կազմում պարտադիր ընդգրկվում են բանկի Գործադիր տնօրենը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը: Բանկի Տնօրինության կազմում Խորհրդի որոշմամբ կարող են ընդգրկվել նաև Բանկի աշխատակից հանդիսացող այլ անձինք:
Տնօրինությունը լիազորված և իրավասու է.
ա)քննարկել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը,
բ) քննարկել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Խորհրդի կողմից հաստատվող կարգերը, կանոնակարգերը, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների կանոնադրությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը և այլ ներքին իրավական ակտերը,
գ) իր իրավասությունների սահմաններում հաստատել Բանկի գործունեության հետ կապված ընթացակարգեր, հրահանգներ և այլ ներքին իրավական ակտեր,
դ) հաստատել Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, բացառությամբ անհատական սակագների,
ե) որոշում ընդունել Բանկի պարտապանների պարտքի վրա տույժերի հաշվարկի դադարեցման, հաշվարկված տույժերի և տուգանքների զեղչման կամ ներման մասին՝ խորհրդի կողմից սահմանված կարգով և գումարների (սահմանաչափերի) սահմաններում,
զ) ապահովել ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
է) կազմավորել մշտապես գործող աշխատանքային, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ,
ը) հաստատել ստորաբաժանումների կողմից ներկայացվող հաշվետվությունները, աշխատանքային գործունեության պլանները և դրանց կատարողականը,
թ) տրամադրել վարկեր՝ Բանկի Խորհրդի կողմից սահմանված կարգով,
ժ) քննարկել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահարմարության հարցերը,
ժա) քննարկել ներքին և արտաքին աուդիտորների, ինչպես նաև այլ արտաքին մարմինների կողմից իրականացվող ստուգման արդյունքները, անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ որոշումներ կայացնել,
ժբ) իրականացնել օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի և Տնօրինության կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ բանկի գործունեության հետ կապված այլ իրավասություններ

3.7.3 Տեղեկություններ Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ.

Բանկի 14,588 (տասնչորս հազար հինգ հարյուր ութսունութ) հատ (87.53 %) սովորական բաժնետոմսերի սեփականատեր է հանդիսանում «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» Ջի Էմ Բի Էյչ -ն, իսկ 2,079 (երկու հազար յոթանասունինը) հատ (12.47%) սովորական բաժնետոմսերի սեփականատերն է

հանդիսանում «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն: Միևնույն ժամանակ որպես վերջնական շահառու՝ 16,667 (տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերով Վարտան Սիրմակեսը հանդիսանում է անուղղակի նշանակալից մասնակից:

Խորհուրդ

Անուն, Ազգանուն	**Զբաղեցրած պաշտոնը**	**Բնակության վայր**	**Իրավասություններն ու պարտականությունները**	**Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը**
Վարտան Սիրմակես	Բանկի խորհրդի նախագահ	Ժնև, Նան դ'Արժանի 22 բիս, 1223 Կոլոնի	ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները. բ) գումարում է խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք. գ) կազմակերպում է Ընդհանուր Ժողովի և Խորհրդի նիստերի արձանագրության վարումը. դ) նախագահում է Ընդհանուր ժողովում, ե) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքները,	«Էյչ-Վի-Էս Հոլդինգ ՋԻ Էմ բի Է3Ջ-ի 100% մասնակից, տնօրեն , «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ի անուղղակի մասնակից, «Խրոնո Սթար Անդամների Միջազգային Խումբ Ֆրանկ Մյուլլեր» Ս.Ա.-ի 60% մասնակից, «Ֆրանկ Մյուլլեր Ուոչ Դիսթրիբյուշն» ՓԲԸ-ի վերջնական շահառու, Շվեյցարիայի «Ֆրանկ Մյուլլեր Ուոչլանդ ԲԸ» Երևանի մասնաճյուղի վերջնական շահառու, «Ֆրանկ Մյուլլեր Փերֆում Լիմիթեդ»ի վերջնական շահառու, «Ուոչ Փարթս Դիվելփմենթ» ՓԲԸ-ի վերջնական շահառու, «ՋԻ. էֆ. էՄ. ՈՒՈՉԼԱՆԴ» Ս.Ա.-ի տնօրեն, «ԱՄԻՏԵՔ» ՓԲԸ-ի վերջնական շահառու, «Է3ԷԼՋԻ ԴԵՎԵԼՈԹՄԵՆԹ ԿՈՆՅԵՊՏ» ՓԲԸ-ի վերջնական շահառու,

				«ԳՈԼԴԵՆ ՖԻՇ-Կ» ՍՊԸ-ի վերջնական շահառու, «Թեխնոսերտ» Ս.Ա.-ի 80% մասնակից, Նախագահ, «Արցախբանկ» ՓԲԸ-ի անուղղակի նշանակալից մասնակից, «Տ.Ս.Ա. ՍՊԸ»-ի 100% բաժնետեր, «ԿԱՇԻ» ԲԲԸ-ի 100% բաժնետեր, «ՖԴՍ» ՓԲԸ-ի 100% բաժնետեր, «ՍիրԿապ Արմենիա» ՓԲԸ-ի 50% բաժնետեր, «ՍիրԿապ Արմենիա» ՓԲԸ Երևանի մասնաճյուղի վերջնական շահառու, «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի 45% բաժնետեր, «Վեհ Արարատ» ՍՊԸ-ի 50% մասնակից, «Փրիսթիժն Դայմոնդ» ՓԲԸ- ի 50% բաժնետեր, «Հայաստանի բիզնես հիմնադրամ» ՓԲԸ-ի 100% բաժնետեր, «Հայկ ֆուտբոլային ակումբ» ՓԲԸ-ի 25% բաժնետեր, «Ֆուտբոլային ակումբ Արարատ» ՀՁ ՓԲԸ-ի 48% բաժնետեր, «Հայս» ՍՊԸ-ի 35% մասնակից, «Վ.Պ.Բ.Պ.» ՓԲԸ-ի 100% բաժնետեր, տնօրեն,

				«ԴԵՆԴՐՈՊԱՐԿ ՌԵԶԻԴԵՆՇԼ» ՍՊԸ-ի վերջնական շահառու, «ՌԵՆԵՍԱՆՍ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի վերջնական շահառու, «Ագրոպերսպեկտիվա» ՓԲԸ-ի 100% բաժնետեր, «Տիգրան երկրորդ» ՓԲԸ-ի 40% բաժնետեր, «Էյ Դաբլյու Այ» ՓԲԸ-ի 100% բաժնետեր, «Այր Սիրկապ» ՓԲԸ-ի 25% բաժնետեր, «Մուլտիկոնտինենտալ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ի անուղղակի մասնակից, Մուլտիկոնտինենտալ Դիստրիբյուշն (Ասիա) ԴիԷմՍիՍի վերջնական շահառու, «Գենթոդ Գլոբալ Վելթ Մենեջ-մենթ» Ս.Ա.-ի խորհրդի նախագահ, «ԱՀՀ Ֆանդ» ՓԲԸ-ի գործադիր մարմնի ղեկավար, «ԱՀՀ Թրասթ» ՓԲԸ-ի գործադիր մարմնի ղեկավար, «Եվրոսվիս ՄՇՀՀ» ՓԲԸ-ի վերջնական շահառու, «Լավսերտ» ՓԲԸ Երևանի մասնաճյուղ-ի վերջնական շահառու, «ԱՄՈՒՐ ՔՆՍՏՐԱՔՇՆՍ» ՍՊԸ-ի վերջնական շահառու, Մոնտի Հիմնադրամի

				հիմնադիր, ԿՀՀ Հիմնադրամի հիմնադիր, «Հով Պատ» ՍՊԸ-ի 100% բաժնետեր, «ԱԼԵՔՊՈԼ ՓՐՈՋԵՔԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ի իրական շահառու, «ՊԼԱՆԵՏԱ ՖԻՇ» ՍՊԸ-ի իրական շահառու, «ՄԱՐՇԱԼԼ ԷՆԴ ՄԻԼԼԵՐ» ՍՊԸ-ի իրական շահառու, «ԷՍԷՌԷԼ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ -ի վերջնական շահառուն է, «ԱՍՏՂԻԿ 21» ՓԲԸ-ի վերջնական շահառու, «Օլդ սիթի» ՓԲԸ-ի վերջնական շահառու։
Արմենակ Դարբինյան	Բանկի Խորհրդի անդամ	Ա.Տիգրանյան նրբ., 7 տուն	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ։ Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Բանկի կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով։	Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտ ՍՊԸ, մասնակից։

Րաֆֆի Բալյոզյան	Բանկի խորհրդի անդամ	1262 Էյսինս, Առնեքս փողոց 3, Շվեյցարիա	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Բանկի կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:	«Ֆրանկ Մյուլլեր Գրուպ» Ս.Ա.-ի Ֆինանսների վարչության ներդրումային մենեջեր, «ԱՐՅԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի խորհրդի անդամ:
Գևորգ Չաքմիշյան	Բանկի խորհրդի անդամ	ՀՀ, ք. Երևան, Գ. Նժդեհի փող., 31/36, 19	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Բանկի կանոնադրությամբ և ներքին կարգերով սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:	«ԼԵՔՍ ԼԱԲ»ՍՊԸ-ի տնօրեն:
Մերուժան Գալստյան	Բանկի խորհրդի անդամ	Ք. Երևան, Ծարավ Աղբյուրի փողոց, 55/5 շենք, 39 բն.	Մասնակցում է Խորհրդի նիստերին, կարծիք/առաջարկություն է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ: Խորհրդի անդամն իր պարտականություններն ու իրավասությունները իրականացնում է օրենքով, Բանկի կանոնադրությամբ և ներքին կարգերով	«Մաակսուս» ՍՊԸ-ի 100% բաժնետեր, տնօրեն:

			սահմանված իրավասությունների սահմաններում՝ Խորհրդի նիստում առաջարկությունների ներկայացման և որոշումների ընդունման քվեարկության միջոցով:	

Գործադիր մարմին

Անուն, Ազգանուն	**Զբաղեցրած պաշտոնը**	**Բնակության վայր**	**Իրավասություններն ու պարտականությունները**	**Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը**
Գևորգ Մաչանյան	**Տնօրինության նախագահ, Գործադիր տնօրեն**	ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս, 13 շենք, բնակարան 18	Իրականացնում է Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը:	«ԷՄ.ՄԱՇԻՆԵՐԻ» ՓԲԸ-ի տնօրեն, «ՌԱԵԼ ԳԷՍ» ՍՊԸ-ի 36 % բաժնետեր, «Իմաստ» ՍՊԸ-ի 25% բաժնետեր, «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» վարկային բյուրոյիխորհրդի նախագահի տեղակալ:
Գրիգոր Մովսիսյան	**Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ- Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման դեպարտամենտի տնօրեն**	ՀՀ, ք. Վաղարշապատ, Հ. Հակոբյան փողոց, 4-րդ փակուղի, 3ա տուն	Մասնակցում է Տնօրինության նիստերին, ներկայացնում է առաջարկություններ, հայտնում կարծիքներ, քվեարկում ներառված հարցի վերաբերյալ, իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամդ և Բանկի խորհրդի կողմից սահմանված այլ գործառույթներ:	Ադեն Ռեզորթ ՍՊԸ-ի, 100 % բաժնետեր, տնօրեն, «ԱՖՐԻԿՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔ» ՍՊԸ-ի 25% բաժնետեր, «Ակվանար» ՍՊԸ-ի 50% բաժնետեր:

Գրիգոր Հովհաննիսյան	**Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ-Վարկավորման դեպարտամենտի տնօրեն**	ք. Երևան, Վ. Համբարձումյան 14/4, բն.18	Մասնակցում է Տնօրինության նիստերին, ներկայացնում է առաջարկություններ, հայտնում կարծիքներ, քվեարկում ներառված հարցի վերաբերյալ, իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամդ և Բանկի խորհրդի կողմից սահմանված այլ գործառույթներ:	
Արա Մակարյան	**Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ-Բիզնեսի զարգացման դեպարտամենտի տնօրեն**	ք. Երևան, Արղության փ., տուն 21	Մասնակցում է Տնօրինության նիստերին, ներկայացնում է առաջարկություններ, հայտնում կարծիքներ, քվեարկում ներառված հարցի վերաբերյալ, իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամդ և Բանկի խորհրդի կողմից սահմանված այլ գործառույթներ:	
Սեդրակ Բաղդասարյան	**Տնօրինության անդամ, Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների դեպարտամենտի տնօրեն-Գլխավոր հաշվապահ**	Կոտայքի մարզ, գ. Առինջ, Դուրյան թաղամաս 1փ., տուն11	Մասնակցում է Տնօրինության նիստերին, ներկայացնում է առաջարկություններ, հայտնում կարծիքներ, քվեարկում ներառված հարցի վերաբերյալ, իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամդ և Բանկի խորհրդի կողմից սահմանված այլ գործառույթներ:	

Գևորգ Խաչատրյան	**Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ- Հաճախորդների սպաս արկման դեպարտամենտի տնօրեն**	ՀՀ, ք. Երևան, Օրբելի փ. 63/1, բն. 25	Մասնակցում է Տնօրինության նիստերին, ներկայացնում է առաջարկություններ, հայտնում կարծիքներ, քվեարկում ներառված հարցի վերաբերյալ, իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամդ և Բանկի խորհրդի կողմից սահմանված այլ գործառույթներ:	«Միջնաբերդ Ալկո» ՍՊԸ 50 % բաժնետեր:
Արկադի Փինաչյան	**Տնօրինության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ- Ներդրումային դեպարտամենտի տնօրեն**	ՀՀ, ք. Երևան, Հ. Քոչար, 147/1, բն. 11	Մասնակցում է Տնօրինության նիստերին, ներկայացնում է առաջարկություններ, հայտնում կարծիքներ, քվեարկում ներառված հարցի վերաբերյալ, իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ՀՀ օրենսդրությամդ և Բանկի խորհրդի կողմից սահմանված այլ գործառույթներ:	«Գազաթ» Համատիրության Նախագահ ՀՊՏՀ կառավարման խորհրդի անդամ

3.7.4 Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև սույն փաստաթղթի ներկայացման պահի դրությամբ շահերի բախման դեպքեր և հիմքեր չկան:

Բանկի կառավարման մարմինների գործունեությունը

3.8.1 Բանկում ներդրված կորպորատիվ կառավարման սկզբունքները համապատասխանում են «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

Հսկող անձինք

3.9.1 Բանկի հսկող անձինք են հանդիսանում՝

- Բանկի 14,588 (տասնչորս հազար հինգ հարյուր ութսունութ) հատ (87.53 %) սովորական բաժնետոմսերի սեփականատեր է հանդիսանում «Էյչ Վի Էս Հոլդինգ» Ջի Էմ Բի Էյչ-ն, իսկ 2,079 (երկու հազար յոթանասունինը) հատ (12.47%) սովորական բաժնետոմսերի սեփականատերն է հանդիսանում «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն:

- Միևնույն ժամանակ որպես վերջնական շահառու՝ 16,667 (տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերով Վարտան Սիրմակեսը հանդիսանում է անուղղակի նշանակալից մասնակից:

Տեղեկատվություն Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

3.10.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2020, 2021 և 2022 թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները և անկախ Աուդիտորական եզրակացությունները (պատճենները):

3.10.2 Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

Ազդագրում ներառված վերջին (ամենաթարմ) ֆինանսական հաշվետվության վերջին օրվանից մինչև ազդագիրը գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

3.10.3 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Սույն փաստաթղթի պատրաստմանը նախորդող 12 ամսիների ընթացքում Բանկի նկատմամբ դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ չեն կիրառվել:

Էական պայմանագրեր

Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում Բանկի կողմից չի կնքվել բնականոն գործունեությունից դուրս որևէ էական պայմանագիր:

Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը

Սույն փաստաթղթում պարտատոմսերի թողարկման հիմնական պայմանների և դրանց տնտեսական հիմնավորվածության հետ կապված որևէ խորհրդատու հանդես չի եկել:

Այլ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.armswissbank.am հասցեով:

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ԱՆԴՈՐԱԳԻՐ N 007823 [224249592]

PAYMENT ORDER RECEIPT

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

ՊԿ\ID 310

Ամսաթիվ\Date 29/03/23 17:25

Դեբետ\Debit	Կրեդիտ\Credit	Գումար\Amount
2500074270098	900005016119	AMD 50,000.00

Վճարող\Remitter
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Վճարողի բանկ\Remitter's Bank
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code **2302574955**

Շահառու\Beneficiary
Արժեթղթերի ազդագրերի գրանցման համար
Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Կենտրոնական գանձապետարան

Գումարը բառերով\Amount in Words
Հիսուն հազար դրամ
Նպատակ\Details
«Արմսվիսբանկ» ՓԲԸի կողմից թող Պարտատոմսերի ազդագրի գրանցման համար, համձ 29.03.2023թ ջեկուցագրի

Կատարող\Maker **Համեստ Դանիելյան**

1 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ «ArmSwissBank» CJSC

L.S.

ST.

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ARMSWISSBANK
PRIVATE & INVESTMENT BANKING

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Բաժնետերերի Ընդհանուր ժողովի

27.10.2004թ. թիվ 1-2004 որոշմամբ

ՓՈՓՈԽՎԱԾ Է՝

Բաժնետերերի Արտահերթ Ընդհանուր ժողովի

14.10.2022թ. թիվ 02-2022 որոշմամբ

Բանկի Խորհրդի նախագահ՝

Վարուժան Սիրմակես

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ՀՀ Կենտրոնական բանկում

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ՝

Digitally signed by Martin Galstyan
Date: 2022.11.29 11:36:51 AMT
Reason: Գրանցած է 25.11.2022թ.

Մարտին Գալստյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ)

Gevorg Machanyan

Digitally signed by Gevorg Machanyan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=ARMSWISSBANK CJSC, email=info@armswissbank.am, cn=Gevorg Machanyan
Date: 2022.10.21 10:14:49 +04'00'

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) շահույթ ստանալու նպատակ հետապնդող առևտրային կազմակերպություն է:

1.2. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման բոլոր մարմինների համար:

1.3. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցվելու օրվանից:

1.4. Բանկն իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ Կենտրոնական բանկից բանկային գործունեության լիցենզիա ստանալու օրվանից:

1.5. Բանկը երաշխավորում է իր հաճախորդների բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանումը օրենքով սահմանված կարգով:

1.6. Բանկը պատասխանատվություն չի կրում իրավասու մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.7. Բանկն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով (միջոցներով), եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.8. Բանկն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք, օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիքներ, որոնց հայերեն տեքստը կարող է զուգակցվել անգլերեն և/կամ ռուսերեն տեքստով, դրոշմներ, բլանկներ և համարային կնիքներ Բանկի տարածքային ստորաբաժանումների համար:

1.9. Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր կամ պատասխանող դատարաններում:

1.10. Բանկի գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10: Բանկի փոստային հասցեն է՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10:

1.11. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ռուսերեն՝ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО “АРМСВИСБАНК”
անգլերեն՝ “ARMSWISSBANK” CLOSED JOINT STOCK COMPANY.

1.12. Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО “АРМСВИСБАНК”
անգլերեն՝ “ARMSWISSBANK” CJSC.

2. Բանկի տարածքային ստորաբաժանումները

2.1. Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնվելու դեպքում գրանցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իսկ արտասահմանում՝ տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

2.2. Բանկի տարածքային ստորաբաժանումները գործում են Բանկի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

2.3. Բանկի տարածքային ստորաբաժանումների ստեղծումը, գրանցումը և լուծարումն իրականացվում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

2.4. Մասնաճյուղը Բանկի անունից իրականացնում է բանկային գործունեություն և մասնաճյուղի կանոնադրությունում նախատեսված ֆինանսական գործառնություններ, ինչպես նաև ներկայացուցչական ֆունկցիա:

2.5. Ներկայացուցչությունը ներկայացնում է Բանկի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը, առանց բանկային գործունեություն կամ օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնելու:

2.6. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես Բանկի հաշվեկշռում, այնպես էլ դրանց առանձին հաշվեկշիռներում:

2.7. Բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են Բանկի կողմից և գործում են Բանկի կողմից երեք տարուց ոչ ավելի ժամկետով տրված լիազորագրի հիման վրա:

3. Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները և այլ գործարքները

3.1. Բանկը բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և այլ

իրավական ակտերով բանկերին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները, այդ թվում՝

ա) ընդունել ցպահանջ և ժամկետային ավանդներ,

բ) տրամադրել առևտրային և սպառողական վարկեր, այդ թվում՝ հիփոթեքային վարկեր, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

գ) տրամադրել բանկային երաշխիքներ և ակրեդտիվներ (վարկային նամակներ),

դ) բացել և վարել հաշիվներ, այդ թվում՝ այլ բանկերի թղթակցային հաշիվներ,

ե) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ և (կամ) այլ կերպ սպասարկել հաճախորդների հաշիվները,

զ) թողարկել, գնել (զեղչել), վաճառել և սպասարկել արժեթղթեր, վճարային փաստաթղթեր, ճանապարհային չեկեր, քարտեր և այլ գործիքներ, կատարել նման այլ գործառնություններ,

է) իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն,

ը) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց արժեթղթերն ու ներդրումները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում),

թ) գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային (ստանդարտացված) ձուլակտորներ և հուշադրամ,

ժ) գնել և վաճառել (փոխանակել) արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,

ժա) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

ժբ) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

ժգ) մատուցել ֆինանսական և ինվեստիցիոն խորհրդատվություն,

ժդ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն:

3.2. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է բանկային գործունեություն իրականացնելու համար:

3.3. Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե բանկերի համար դրանք թույլատրված չեն օրենքով:

3.4. Բանկը ֆինանսական գործառնություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով, ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ ձևով:

3.5. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, իր կողմից տրամադրվող վարկերի, սեփական արժեթղթերի տոկոսադրույքները և իր ծառայությունների միջնորդավճարների չափը:

3.6. Բանկի և հաճախորդի միջև հարաբերությունները կարգավորվում են օրենքով և կողմերի միջև կնքված պայմանագրով:

4. Բանկի կանոնադրական հիմնադրամը, այլ հիմնադրամներ

4.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 10,000,200,000 (տասը միլիարդ երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ներառում է տեղաբաշխված 16,667 (տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) հատ սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 600,000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

Բանկի 14,588 (տասնչորս հազար հինգ հարյուր ութսունութ) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերն է հանդիսանում «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» Ս.ա.ր.լ.-ն, իսկ 2079 (երկու հազար յոթանասունինը) հատ սովորական բաժնետոմսերի սեփականատերն է հանդիսանում «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն:

4.2. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամի չափը Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե փաստացի տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարվել են:

4.3. Բանկի կանոնադրական հիմնադրամը համալրվում է Հայաստանի Հանրապետության արժույթով:

4.4. Բանկը կարող է թողարկել և տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր, որոնց տեսակարար կշիռը կանոնադրական հիմնադրամում չի կարող ավելի լինել 25%-ից:

4.5. Բանկը, իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո, կարող է շահույթի մի մասը ներդնել կանոնադրական հիմնադրամում՝ բաժնետերերին տեղաբաշխելով նոր բաժնետոմսեր կամ ավելացնելով տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքը:

4.6. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումն արգելվում է՝ անկախ նվազեցման եղանակից:

4.7. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի ոչ պակաս 15%-ի չափով, որն օգտագործվում է Բանկի կրած կորուստները (վնասները) ծածկելու, Բանկի թողարկած պար-

տատոմսերը մարելու համար, եթե Բանկի շահույթը այդ նպատակին չի բավարարում:

4.8. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից՝ տարեկան արդյունքները Ընդհանուր ժողովի կողմից հաստատելուց հետո: Պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների չափը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից, ոչ պակաս տարեկան զուտ շահույթի 5%:

4.9. Բանկը օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ստեղծում է հիմնական միջոցների, արժեթղթերի, թանկարժեք մետաղների և արտարժույթի վերագնահատման, անհուսալի վարկերի և դեբիտորական պարտքերի դուրսգրման ֆոնդեր (պահուստաֆոնդեր):

4.10. Բանկի էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն Բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու համար, կամ կարող է ուղղվել Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմանը:

5. Բանկի բաժնետոմսերը

5.1. Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով:

5.2. Բանկի մեկ սովորական բաժնետոմսն իր սեփականատիրոջը տալիս է Ընդհանուր ժողովում մեկ ձայնի իրավունք:

5.3. Բանկի բաժնետերերի ռեեստրը վարվում է նման գործունեություն իրականացնելու թույլտվություն ունեցող անձի կողմից:

5.4. Ընկերության բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են:

6. Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը

6.1. Բանկն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ արժեթղթեր:

6.2. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է Խորհրդի որոշմամբ, որում սահմանվում են պարտատոմսերի մարման ձևը, ժամկետները և պայմանները:

7. Բանկի բաժնետերերը

7.1. Բանկի բաժնետեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ենթարկվելով օրեն-

քով և սույն Կանոնադրությամբ բաժնետերերի համար նախատեսված սահմանափակումներին:

7.2. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

7.3. Բանկին պարտադիր ցուցում տալու իրավունք կամ Բանկի գործունեությունը օրենքով չարգելված այլ կերպ կանխորոշելու հնարավորություն ունեցող բաժնետերը (բաժնետերերը) Բանկի անվճարունակության դեպքում Բանկի պարտավորությունների դիմաց կրում է (են) լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն, եթե նշված իրավունքը կամ հնարավորությունը ունեցող բաժնետերը (բաժնետերերը) դրանք իրագործելիս նախօրոք իմացել է (են), որ դրա հետևանքով Բանկը կհայտնվի օրենքով սահմանված անվճարունակության վիճակում, այդ թվում՝ կսպառի հիմնական կապիտալի զգալի մասը:

7.4. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը,

բ) ձեռնպահ մնալ Բանկի հաճախորդների և Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումից կամ այլ կերպ այլ անձանց դրանք հայտնի դարձնելուց,

գ) ենթարկվել օրենքների, այլ իրավական ակտերի և սույն Կանոնադրության պահանջներին:

7.5. Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի՝

ա) անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով՝ ըստ իր բաժնետոմսերի քանակի,

բ) օրենքներով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը,

գ) ստանալ շահաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից,

դ) ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

ե) ծանոթանալ Բանկի հաշվեկշռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին,

զ) առաջնահերթության կարգով ձեռք բերել Բանկի կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը,

է) Բանկի սեփական միջոցների հաշվին Բանկի կանոնադրական հիմնադրամի չափն ավելացնելիս անվճար ստանալ համապատասխան քանակությամբ սովորական բաժնետոմսեր,

ը) Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը,

թ) սույն Կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը,

ժ) իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

8. Բանկի շահույթի բաշխումը

8.1. Տարեկան գործունեության արդյունքում Բանկի ստացած համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության:

8.2. Բանկի զուտ շահույթը որոշվում է որպես Բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված շահութահարկի դրական տարբերություն:

8.3. Զուտ շահույթի բաշխումն իրականացվում է սույն Կանոնադրությամբ և Ընդհանուր ժողովի կողմից սահմանված ֆոնդերի համալրման և սովորական բաժնետոմսերի սեփականատերերին շահաբաժինների վճարման նպատակով:

8.4. Շահաբաժինները վճարվում են ֆինանսական (հաշվետու) տարվա զուտ շահույթից, Հայաստանի Հանրապետության դրամով՝ տարեկան շահաբաժինների վճարման ձևով:

8.5. Տարեկան շահաբաժինների վճարման, շահաբաժնի չափի և ձևի մասին որոշումը ընդունում է Ընդհանուր ժողովը՝ սահմանելով նաև վճարման ամսաթիվը:

Բանկի բաժնետերերին շահաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե տվյալ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

9. Բանկի կառավարման մարմինները

9.1. Բանկի կառավարման մարմիններն են՝
- բաժնետերերի Ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր ժողով),
- Բանկի Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),
- Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի Տնօրինությունը (այսուհետ՝ Տնօրինություն) և Բանկի Գործադիր տնօրենն - Տնօրինության նախագահը (այսուհետ՝ Գործադիր տնօրեն):

10. Կառավարման մարմիններ: Ընդհանուր ժողով: Գումարման կարգը: Իրավասությունները: Որոշումների ընդունման կարգը

10.1. Ընդհանուր ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

10.2. Ընդհանուր ժողովները կարող են գումարվել հերթական կամ արտահերթ:

10.3. Ընդհանուր ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ նիստի կամ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Հեռակա քվեարկության կարգով չեն կարող ընդունվել սույն Կանոնադրության 10.19 կետի «բ», «գ» և «է» ենթակետերով նախատեսված հարցերի վերաբերյալ որոշումները: Ընդ որում, Ընդհանուր ժողովի նիստը, որի ժամանակ Ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամային ռեժիմում, հեռակա կարգով անցկացված նիստ չի համարվում:

10.4. Տարեկան ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

10.5. Արտահերթ ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ: Արտահերթ ժողովներ կարող են գումարվել նաև Բանկի Գործադիր տնօրենի, Բանկի արտաքին աուդիտն անցկացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի սովորական բաժնետոմսերի առնվազն 10%-ի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով, եթե պահանջը ներկայացված է օրենքով սահմանված կարգով:

10.6. Բանկի Գործադիր տնօրենի, Բանկի արտաքին աուդիտն անցկացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի սովորական բաժնետոմսերի առնվազն 10%-ի սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով պահանջ ներկայացնելու դեպքում Խորհուրդը պարտավոր է 10 օրվա ընթացքում որոշում ընդունել արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման մասին և գումարել այն պահանջը ներկայացնելու պահից ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում: Խորհրդի կողմից Ընդհանուր ժողով չգումարելու դեպքում այն կարող է գու-

մարվել պահանջը ներկայացրած անձանց կողմից՝ սույն Կանոնադրությամբ Ընդհանուր ժողով գումարելու համար սահմանված կարգով:

10.7. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա Խորհրդի սահմանած ամսաթվի դրությամբ:

10.8. Բանկը պարտավոր է ցանկացած բաժնետիրոջը վերջինիս առաջին իսկ պահանջով տրամադրել տեղեկանք՝ նրան բաժնետերերի ցուցակում ընդգրկված լինելու կամ չլինելու մասին:

10.9. Ընդհանուր ժողովի գումարման մասին Խորհուրդը Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը օրենքով սահմանված կարգով ծանուցում է առնվազն 15 օր առաջ:

10.10. Հեռակա քվեարկության կարգով Ընդհանուր ժողով գումարելու դեպքում, ի լրումն օրենքով սահմանված տեղեկությունների, պատվիրված նամակով բաժնետերերին առաքվում են նաև քվեաթերթիկները, Ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկությունները և նյութերը:

10.11. Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առնվազն 10%-ի սեփականատեր բաժնետիրոջը տրամադրվում է նաև Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը:

10.12. Բաժնետերն իրավունք ունի հեռակա նիստի ձևով գումարվող Ընդհանուր ժողովի քվեարկությանը մասնակցել իր կողմից լրացված քվեաթերթիկը Բանկին ուղարկելու միջոցով, եթե քվեաթերթիկը Բանկին հասել է մինչև Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Նշված ժամկետում Բանկին հասած քվեաթերթիկը գրանցվում է Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ցուցակում և հաշվի է առնվում քվեարկության ժամանակ:

10.13. Ընդհանուր ժողովում սովորական բաժնետոմսի սեփականատեր բաժնետերերն ունեն Բանկի կանոնադրական հիմնադրամում իրենց լրիվ վճարված սովորական բաժնետոմսերին համամասնական ձայնի իրավունք, եթե բացակայում են սույն Կանոնադրությամբ սահմանված սահմանափակումները՝ կապված նշանակալից մասնակցության տիրապետման հետ:

10.14. Ընդհանուր ժողովի քվորումն ապահովված է համարվում, եթե Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել է Բանկի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի 50%-ից ավելին համատեղ տիրապետող բաժնետերերը (ներկայացուցիչները), կամ նրանց կողմից լրացված քվեաթերթիկները:

10.15. Քվորումի բացակայության դեպքում Խորհուրդը նշանակում է նոր Ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը և այդ ամսաթվից առնվազն 15 օր առաջ նոր Ընդհանուր ժողով գումարելու մասին օրենքով սահմանված կարգով ծանու-

ցում է Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերին և պատվիրված նամակներով բաժնետերերին ծանուցում է նոր Ընդհանուր ժողով գումարելու մասին՝ նույն նամակով ուղարկելով նաև քվեաթերթիկը:

10.16. Եթե նոր Ընդհանուր ժողովի գումարման ամսաթիվը Խորհուրդը տեղափոխում է առաջին Ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից 20 օրից պակաս ժամկետով, ապա Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակներ չեն կազմվում: Հակառակ դեպքում նոր Ընդհանուր ժողովի գումարման ամսաթվին նախորդող 20-րդ օրը Խորհրդի կողմից սահմանվում է Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակների կազմման ամսաթիվ:

10.17. Նոր Ընդհանուր ժողովի քվորումն ապահովված է համարվում, եթե Ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են բաժնետերերի ցուցակում ընդգրկված և Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 30%-ից ավելին համատեղ տիրապետող բաժնետերերը (ներկայացուցիչները), կամ նրանց կողմից լրացված քվեաթերթիկները:

10.18. Ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները բաժնետերերին հայտնվում են պատվիրված նամակներով կամ առնվազն 1000 տպաքանակ ունեցող մամուլի միջոցում տրված հայտարարությամբ՝ որոշման ընդունման օրվանից 45 օրվա ընթացքում:

10.19. Ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

ա) Բանկի Կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Բանկի Կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

բ) Բանկի վերակազմակերպումը,

գ) Բանկի լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

դ) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցը Բանկի արտահերթ Ընդհանուր ժողովներում կարող է քննարկվել, եթե արտահերթ Ընդհանուր ժողովը որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

ե) բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման ճանապարհով կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի մեծացումը,

զ) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

է) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահաբաժինների չափի հաստատումը,

ը) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում,

թ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան) և բաժանումը,

ժ) օրենքով սահմանված դեպքերում Բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման համաձայնությունը (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին),

ժա) Բանկի կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը օրենքով նախատեսված դեպքերում,

ժբ) Խորհրդի նախագահի և անդամների վարձատրության չափի սահմանումը,

ժգ) օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

10.20. Որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն Կանոնադրության 10.19. կետի «ա», «բ», «գ», «ը» և «ժ» ենթակետերով սահմանված հարցերի, որոնց շուրջ որոշումներն ընդունվում են Ընդհանուր ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

10.21. Սույն Կանոնադրության 10.19. կետում նշված իրավասությունները հանդիսանում են Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները և չեն կարող փոխանցվել Բանկի Խորհրդին, ինչպես նաև Բանկի Գործադիր տնօրենին, նրա տեղակալներին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի:

10.22. Ընդհանուր ժողովի քննարկմանը չեն կարող դրվել օրենքում կամ սույն Կանոնադրության 10.19. կետով Ընդհանուր ժողովի իրավասությանը չվերապահված հարցեր:

10.23. Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է 2 օրինակից, Ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում, որոնք ստորագրվում են Ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

11. Կառավարման մարմիններ: Խորհուրդ

11.1. Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը հանդիսացող հարցերի:

11.2. Խորհրդի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ այն գործունակ անձը, որը բավարարում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին:

11.3. Յուրաքանչյուր բաժնետեր Խորհրդում կարող է զբաղեցնել մեկ տեղ: Բանկի բաժնետեր չհանդիսացող անձինք ևս կարող են ընտրվել Խորհրդի կազմում:

11.4. Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան Ընդհանուր ժողովում Բանկի ներկա բաժնետերերի, իսկ Բանկի Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ընդհանուր ժողովում Բանկի ներկա բաժնետերերի ձայների 3/4-ով: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

11.5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու ամսաթվի դրությամբ Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10%-ի սեփականատերը կամ վերջինիս բաժնետոմսերի անվանական սեփականատերը իրավունք ունի առանց ընտրության ընդգրկվելու խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իր ներկայացուցչին՝ օրենքով սահմանված կարգով:

11.6. Խորհրդի կազմը սահմանվում է առնվազն 5 (հինգ) հոգի:

11.7. Խորհրդի անդամը պարտավոր է Խորհրդին, ներքին աուդիտին և արտաքին աուդիտն իրականացնող անձին տրամադրել օրենքով սահմանված տեղեկություններ՝ Բանկի գործարքներում իր շահագրգռվածության, Բանկի հետ գործարք իրականացնող անձանց հետ իր փոխկապակցվածության մասին:

11.8. Խորհրդի նիստերը գումարվում են Խորհրդի նախագահի կողմից՝ իր նախաձեռնությամբ, Խորհրդի անդամի, Բանկի Գործադիր տնօրենի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (մասնակիցների) գրավոր պահանջով:

11.9. Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն 2 (երկու) ամիսը մեկ: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից հաստատված Խորհրդի Կանոնակարգով:

11.10. Խորհրդում քվեարկությունը կարող է անցկացվել նաև հեռակա կարգով: Ընդ որում, խորհրդի նիստը, որի ժամանակ Խորհրդի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամային ռեժիմում, հեռակա կարգով անցկացված նիստ չի համարվում:

11.11. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են առնվազն Խորհրդի 3 (երեք) անդամ:

11.12. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

11.13. Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի չի թույլատրվում:

11.14. Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է, ընդ որում Խորհրդի նախագահը պարտավոր է իր կարծիքը հայտնել վերջինը:

11.15. Խորհրդի նիստերն արձանագրվում են նիստի ավարտից հետո 10-օրյա ժամկետում: Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

11.16. Խորհուրդը լիազորված և իրավասու է՝

ա) որոշել Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ընդունել Բանկի զարգացման տնտեսական ծրագրեր, Բանկի ֆինանսական դրության առողջացման ծրագրեր,

բ) գումարել Բանկի տարեկան և արտահերթ Ընդհանուր ժողով, հաստատել Ընդհանուր ժողովի օրակարգը,

գ) սահմանել Բանկում ներքին հսկողության ստանդարտները, ձևավորել Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը, հաստատել նրա տարեկան աշխատանքային ծրագիրը, հաստատել ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման և վարձատրության պայմանները,

դ) լուծել Ընդհանուր ժողովի նախապատրաստման և գումարման հետ կապված հարցերը, այդ թվում՝ սահմանել Ընդհանուր ժողովին մաս-

նակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթիվը,

ե) նշանակել Բանկի Գործադիր տնօրենին, վաղաժամկետ դադարեցնել նրա լիազորությունները, Գործադիր տնօրենի ներկայացմամբ նշանակել Բանկի գլխավոր հաշվապահին և Գործադիր տնօրենի տեղակալներին:

զ) հաստատել Բանկի տարեկան ծախսերի նախահաշիվը և դրա կատարողականը,

է) հաստատել Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը, հաստատել Բանկի Գործադիր տնօրենի աշխատավարձը, սահմանել Բանկի աշխատակիցների աշխատանքի վարձատրման առավելագույն և նվազագույն սահմանները,

ը) օրենքով սահմանված կարգով որոշել Բանկի գույքի (ներառյալ թողարկվող բաժնետոմսերի) շուկայական արժեքը,

թ) սահմանել Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքները, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը և կարգերը,

ժ) սահմանել Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարի չափը,

ժա) Ընդհանուր ժողովին ներկայացնել առաջարկություններ տարեկան շահաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,

ժբ) օգտագործել Բանկի պահուստային հիմնադրամը, Ընդհանուր ժողովի լիազորությամբ հաստատել շահույթից ձևավորված այլ ֆոնդերի օգտագործման կարգը,

ժգ) սահմանել վարկավորման, դրամարկղային սպասարկման, տնտեսական գործունեության, արժեթղթերով գործառնությունների, այլ ներդրումների իրականացման քաղաքականությունը,

ժդ) օրենքով սահմանված կարգով որոշում ընդունել Բանկի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքման վերաբերյալ (Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50%-ի չափով),

ժե) որոշում ընդունել դուստր ընկերությունների ստեղծման, նրանց և այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցության չափի մասին,

ժզ) որոշում ընդունել շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման մասին,

ժէ) հաստատել Գործադիր տնօրենի կողմից Բանկի պարտապանների պարտավորությունների վրա տոկոսների հաշվարկի դադարեցման, պարտքերի զեղչման կամ ներման հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու կարգը,

ժը) տարեկան Ընդհանուր ժողովի գումարումից առաջ նախնական հաստատել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունները,

ժթ) որոշումներ ընդունել Բանկի տարածքային ստորաբաժանումների ստեղծման և լուծարման մասին,

ի) հաստատել Բանկի տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունները,

իա) հաստատել Բանկի գործունեությունը կանոնակարգող ներքին ակտերի ընդունման, հաստատման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու, դրանք ուժը կորցրած ճանաչելու կարգը,

իբ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը, դրանց տեղաբաշխման և մարման կարգի և պայմանների սահմանումը,

իգ) իրականացնել սույն Կանոնադրությամբ և օրենքով Խորհրդին վերապահված այլ լիազորություններ:

11.17. Սույն Կանոնադրության 11.16. կետով սահմանված լիազորությունները Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցեր են և չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց:

11.18. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կազմից Խորհրդի անդամների կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

11.19. Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

բ) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում դրանցում,

գ) կազմակերպում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,

դ) նախագահում է Ընդհանուր ժողովում,

ե) ստորագրում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի ընդունած որոշումները, դրանցով հաստատված փաստաթղթերը,

զ) Գործադիր տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր,

է) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:

11.20. Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում, նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

12. Կառավարման մարմիններ: Գործադիր մարմին

12.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում են Տնօրինությունը և Բանկի Գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, Գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ: Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Տնօրինության անդամ չի կարող լինել այն անձը, որին օրենքով արգելված է լինել Բանկի ղեկավար և/կամ որը չի համապատասխանում Կենտրոնական բանկի որակավորման համապատասխանության չափանիշներին: Տնօրինության քանակական կազմը սահմանվում է Խորհրդի կողմից: Տնօրինության անդամները նշանակվում են Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ: Տնօրինության կազմում պարտադիր ընդգրկվում են բանկի Գործադիր տնօրենը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը: Բանկի Տնօրինության կազմում Խորհրդի որոշմամբ կարող են ընդգրկվել նաև Բանկի աշխատակից հանդիսացող այլ անձինք:

12.2. Տնօրինությունը լիազորված և իրավասու է՝

ա) քննարկել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը,

բ) քննարկել և Խորհրդի հաստատմանը ներկայացնել Խորհրդի կողմից հաստատվող կարգերը, կանոնակարգերը, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների կանոնադրությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը և այլ ներքին իրավական ակտերը,

գ) իր իրավասությունների սահմաններում հաստատել Բանկի գործունեության հետ կապված ընթացակարգեր, հրահանգներ և այլ ներքին իրավական ակտեր,

դ) հաստատել Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագները, բացառությամբ անհատական սակագների,

ե) որոշում ընդունել Բանկի պարտապանների պարտքի վրա տույժերի հաշվարկի դադարեցման, հաշվարկված տույժերի և տուգանքների զեղչման կամ ներման մասին՝ խորհրդի կողմից սահմանված կարգով և գումարների (սահմանաչափերի) սահմաններում,

զ) ապահովել ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,

է) կազմավորել մշտապես գործող աշխատանքային, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ,

ը) հաստատել ստորաբաժանումների կողմից ներկայացվող հաշվետվությունները, աշխատանքային գործունեության պլանները և դրանց կատարողականը,

թ) տրամադրել վարկեր՝ Բանկի Խորհրդի կողմից սահմանված կարգով,

ժ) քննարկել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահարմարության հարցերը,

ժա) քննարկել ներքին և արտաքին աուդիտորների, ինչպես նաև այլ արտաքին մարմինների կողմից իրականացվող ստուգման արդյունքները, անհրաժեշտության դեպքում դրանց վերաբերյալ որոշումներ կայացնել,

ժբ) իրականացնել օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի և Տնօրինության կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ բանկի գործունեության հետ կապված այլ իրավասություններ:

12.3. Տնօրինությունը գործում է ՀՀ օրենսդրության, սույն Կանոնադրության, ինչպես նաև Բանկի Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին փաստաթղթերի (կանոնակարգերի, աշխատակարգերի և այլ փաստաթղթերի) հիման վրա, որոնք սահմանում են Տնօրինության նիստերի հրավիրման, անցկացման և արձանագրման կարգը, ինչպես նաեւ նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

12.4. Գործադիր տնօրենը լիազորված և իրավասու է՝

ա) ներկայացնել Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքել գործարքներ, գործել Բանկի անունից առանց լիազորագրի, տալ լիազորագրեր,

բ) տնօրինել Բանկի գույքը և ֆինանսական միջոցները, կնքել բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ գործարքներ կամ լիազորել դրանց կնքումն այլ անձի (գույքի օտարման և ձեռք բերման դեպքում՝ Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25%-ից ավելի արժեքով գործարքները կնքելով միայն Խորհրդի (մինչև 50%) կամ Ընդհանուր ժողովի (50%-ից ավելի) համաձայնության առկայության դեպքում),

գ) ստորագրել և իրավասու մարմիններին ներկայացնել Բանկի ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվությունները, հայցադիմումներ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

դ) ապահովել Ժողովի, Խորհրդի և Տնօրինության որոշումների, այդ թվում՝ հեռանկարային զարգացման ծրագրի և ներքին ակտերի կատարումը,

ե) Խորհրդի հաստատմանը ներկայացնել իր տեղակալերի, Գլխավոր հաշվապահի և Տնօրինության անդամների թեկնածուներին,

զ) իր իրավասության սահմաններում կազմավորել աշխատանքային, խորհրդակցական և այլ տիպի մարմիններ,

է) աշխատանքի ընդունել և աշխատանքից ազատել Բանկի աշխատակիցներին, Խորհրդի կողմից հաստատված Բանկի աշխատակիցների աշխատանքի վարձատրման առավելագույն և նվազագույն սահմաններում հաստատել նրանց աշխատավարձը, խորհրդի կողմից հաստատված կարգով, Բանկի աշխատավարձի ֆոնդի սահմաններում, աշխատանքի ընդունել և աշխատանքից ազատել արտահաստիքային աշխատակիցների,

ը) սահմանել իր տեղակալների աշխատանքային ոլորտները,

թ) իր իրավասության սահմաններում վերահսկել ստորաբաժանումների ղեկավարների գործողությունները,

ժ) իր իրավասության սահմաններում արձակել հրամաններ, կարգադրություններ, կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը,

ժա) իր իրավասության սահմաններում Խորհրդի հաստատմանը ներկայացնել Խորհրդի կողմից քննարկման ենթական հարցերը,

ժբ) հաստատել Բանկի կողմից մատուցվող ծառայությունների անհատական սակագները,

ժգ) Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառել խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ժդ) տրամադրել վարկեր՝ Բանկի Խորհրդի կողմից սահմանված կարգով,

ժե) իրականացնել Տնօրինության նախագահի գործառույթները՝

- կազմակերպել Տնօրինության աշխատանքները,
- նախագահել Տնօրինության նիստերը,
- ներկայացնել Տնօրինությունը Խորհրդի նիստերին,
- ստորագրել Տնօրինության նիստերի որոշումները,
- իրականացնել Տնօրինության աշխատանքները կանոնակարգող իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ,

ժզ) իրականացնել օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից ընդունված իրավական ակտերով նախատեսված Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ,

ժէ) իրականացնել օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ կամ Բանկի ներքին ակտերով Ընդհանուր ժողովին, Խորհրդին կամ Տնօրինությանը չվերապահված այլ իրավասություններ:

12.5. Գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմիններին, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ՝ եթե Գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

12.6. Խորհրդի կողմից Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի Գործադիր տնօրեն (բանկի ղեկավար),

գ) նա օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

13. Բանկի լուծարումը

13.1. Բանկը լուծարվում է՝ Կենտրոնական բանկի կողմից լիցենզիան անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու դեպքում, Բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ և օրենքով նախատեսված այլ հիմքերով:

13.2. Բանկը կարող է Ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարվել միայն օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունն ստանալուց հետո:

13.3 Նախնական համաձայնությունն ստանալուց հետո Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Բանկի լուծարման մասին, եթե Բանկն ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ:

13.4. Բանկի լուծարումն իրականացվում է Ընդհանուր ժողովում ընդունված լուծարային ծրագրին համապատասխան, օրենսդրությամբ սահմանված կարգով: Լուծարային հանձնաժողովը կազմվում է առնվազն հինգ անդամից:

13.5. Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք:

13.6. Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում Բանկի կառավարման լիազորությունները:

13.7. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ձևով, հաճախականությամբ և ժամկետներում հաշվետվություններ ներկայացնել Կենտրոնական բանկ:

13.8. Բանկի լուծարային միջոցները օրենքով սահմանված հերթականությամբ ուղղվում են Բանկի պարտավորությունների մարմանը:

13.9. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը, որը Բանկի Ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը ներկայացնում է Կենտրոնական բանկ:

13.10. Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը Բանկի լուծարման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով տեղեկանք է հրապարակում, որից հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է Բանկի լուծարման հետ կապված պարտավորություններից:

13.11. Բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, Կենտրոնական բանկի կողմից բանկերի գրանցումների մատյանում Բանկին գրանցումից հանելու մասին գրառում կատարելուց հետո:

Հավելված 6

Հաճախորդների սպասարկման
դեպարտամենտի տնօրեն պրն՝

Դիմում

Խնդրում եմ չեղյալ համարել իմ կողմից /--/--/----/ ներկայացված «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ կողմից թողարկված պարատատոմսերի ձեռք բերման Հայտը:

Դիմող՝
(ստորագրություն)

/--/--/----/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 08-2023 «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ	MINUTES No 08-2023 OF BOARD MEETING OF ARMSWISSBANK CLOSED JOINT STOCK COMPANY
ք. Ժնև	Geneva
2023թ. Փետրվարի 10-ին, Երևանի ժամանակով ժամը 17:00-ին տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Խորհրդի նիստը:	"ARMSWISSBANK" CJSC Board meeting took place on February 10, 2023 at 05:00PM Yerevan time.
Նիստին մասնակցում էին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Խորհրդի նախագահ Վարտան Սիրմակեսը, Խորհրդի անդամներ Րաֆֆի Բալյոզյանը, Գևորգ Չաքմիշյանը, Արմենակ Դարբինյանը և Մերուժան Գալստյանը:	Chairman of the Board Vartan Sirmakes, Board members Raffi Balyozyan, Gevorg Chakmishyan, Armenak Darbinyan and Meruzhan Galstyan participated at the meeting.
Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էր նաև Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյանը:	Gevorg Machanyan, Executive Director of "ARMSWISSBANK" CJSC participated at the meeting with the right of consulting vote.
Գևորգ Մաչանյանը, Արմենակ Դարբինյանը և Մերուժան Գալստյանը մասնակցում էին հեռախոսով՝ ուղիղ միացմամբ, իրական ժամանակի ռեժիմում:	Gevorg Machanyan, Armenak Darbinyan and Meruzhan Galstyan participated by direct telephone connection in real time mode.
ՕՐԱԿԱՐԳ	AGENDA
1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից պարտատոմսերի նոր թողարկման առաջարկության քննարկում: (Հավելված 1,2,3)	1. Discussion of the proposal for new issuing bonds by "ARMSWISSBANK" CJSC. (Enclosure 1,2,3)
Օրակարգի հարցով արտահայտվեցին Րաֆֆի Բալյոզյանն ու Գևորգ Չաքմիշյանը՝ հայտնեցին, որ քննարկման ներկայացված հարցով դրական են տրամադրված և առաջարկեցին հաստատել ներկայացված առաջարկությունը:	Raffi Balyozyan and Gevorg Chakmishyan were expressed and informed that have a positive attitude to the question submitted for discussion and proposed to approve the suggestion.
Որոշվեց՝	It was decided:
<u>Օրակարգի առաջին հարցով</u> <u>(զեկուցող՝ Գ. Մաչանյան)՝</u> 1. Թողարկել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի պարտատոմսեր ներքոնշյալ աղյուսակում սահմանված պայմաններով՝	<u>Regarding the first question of the agenda</u> <u>(reporter – G. Machanyan):</u> 1. To issue "ARMSWISSBANK" CJSC bonds on the terms and conditions set forth in the table below.

Արժույթ	Թողարկման ծավալ	Ժամկետ	Արժեկտրոն /առավելագույն/, վճարման պարբերականություն
ՀՀ դրամ	10,000,000,000	4 տարի	11.75% կիսամյակային
ԱՄՆ դոլար	10,000,000	4 տարի	6.00% կիսամյակային
ԵՎՐՈ	10,000,000	4 տարի	4.50% կիսամյակային

Currency	Total face value	Term	Coupon /maximum/, payment frequency
AMD	10,000,000,000	4 years	11.75% semiannual
USD	10,000,000	4 years	6.00% semiannual
EUR	10,000,000	4 years	4.50% semiannual

Որոշումն ընդունվեց միաձայն:
Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:

The decision was made unanimously.
There are no other proposals and special opinion.

Օրակարգի հարցով քվեարկության արդյունքներն են՝

Վ. Սիրմակես	կողմ	V. Sirmakes	pro.
Գ. Չաքմիշյան	կողմ	G. Chakmishyan	pro.
Ռ. Բալյոզյան	կողմ	R. Balyozyan	pro.
Ա. Դարբինյան	կողմ	A. Darbinyan	pro.
Մ. Գալստյան	կողմ	M. Galstyan	pro.

Օրակարգի հարցով որոշումն ուժի մեջ է մտնում 2023թ.-ի Փետրվարի 10-ից:

The resolution on the question of the agenda comes into force starting from February 10, 2023.

Սույն արձանագրությունը բաղկացած է 3 (երեք) էջից, կազմվել է մեկ օրինակից, հայերեն և անգլերեն լեզուներով:

The present minutes consists of 3 (three) pages, is composed in one copy, in Armenian and English languages.

Խորհրդի նախագահ՝ Chairman of the Board:

Վ. Սիրմակես V. Sirmakes

Խորհրդի անդամներ՝ Board members:

Գ. Չաքմիշյան G. Chakmishyan

Ռ. Բալյոզյան R. Balyozyan

Ա. Դարբինյան — A. Darbinyan

Մ. Գալստյան — M. Galstyan

Գործադիր տնօրեն՝ — Executive Director:

Գ. Մաչանյան — G. Machanyan

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ**» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. <u>Պարտատոմսերի թողարկման պայմանները</u>

1.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական, ֆիքսված արժեկտրոնով.

1.2 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային.

1.3 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի.

1.4 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 10,000,000,000 (տասը միլիարդ) ՀՀ դրամ.

1.4.1 Բանկն իրավասու է թողարկվող պարտատոմսերը /միևնույն թողարկումը/ տեղաբաշխելու ամբողջությամբ կամ մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով: Յուրաքանչյուր վերաբացման ծավալը վերջնական պայմաններով հրապարակվում է դրա տեղաբաշխման օրվանից նվազագույնը երեք օր առաջ: Թողարկված հերթական վերաբացված ծավալն ամբողջությամբ չտեղաբաշխվելու դեպքում չտեղաբաշխված պարտատոմսերի ծավալը գումարվում է ազդագրով առաջարկի շրջանակներում տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալին:

1.4.2 Հերթական տեղաբաշխման ժամանակ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալը, տեղաբաշխման /առաջարկի եղանակը/ Շուկա ստեղծողի/ստեղծողների կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալը, գինը, անհրաժեշտության դեպքում նաև այլ պայմաններ հաստատված համարել Բանկի Գործադիր մարմնի կողմից սահմանված պայմանների համաձայն՝ Բանկի Խորհրդի նիստի արձանագրությամբ սահմանված սահմանափակման ներքո:

1.5 Պարտատոմսերի քանակը՝ 200,000 (երկու հարյուր հազար) հատ.

1.6 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ.

1.7 Պարտատոմսերի թողարկման օրը՝ Բանկի գործադիր մարմնի կողմից սահմանված հրապարակային տեղաբաշխման առաջին օրը:

1.8 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը.

1.9 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում.

1.10 Հերթական տեղաբաշխման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկը տեղաբաշխման վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով.

1.11 Պարտատոմսերի մարման օրը՝ Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարումը կատարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.12 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ֆիքսված՝ տարեկան 11.75%

1.13 Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ, 48-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.14 Արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 2,937.50 (երկու հազար ինը հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ և 50 լումա յուրաքանչյուր վճարման ժամանակ յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց:

1.15 Պարտատոմսերի գինը՝ Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

P – պարտատոմսի անվանական արժեքը,

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C- տարեկան արժեկտրոնի գումարը.

y- մինչև մարում եկամտաբերություն.

1.16 Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով.

1.17 Պարտատոմսերի ապահովվածությունը՝ չապահովված.

1.18 Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների հաշվառման համակարգը՝ Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից.

1.19 Արժեկտրոնները հաշվարկվում են թողարկման օրվանից և վճարումներն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով.

1.20 Պարտատոմսերի մարումն իրականացվում է ՀՀ դրամով, անկանխիկ եղանակով.

1.21 Արժեկտրոնների վճարումներն և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը մարման օրը համապատասխան գումարները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածաքում գործող բանկերում բացված համապատասխան բանկային հաշիվներին (ՀՀ դրամով) (այսուհետ՝ բանկային հաշիվ).

1.22 Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են.

1.23 Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են.

1.24 Կազմակերպությունը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Կազմակերպությունը այլ

կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ.

1.25 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Կազմակերպությունը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով.

1.26 Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում չի սահմանվում.

1.27 Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնում է Բանկը.

1.28 Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված տեղաբաշխում.

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ**» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. <u>Պարտատոմսերի թողարկման պայմանները</u>

1.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական, ֆիքսված արժեկտրոնով.

1.2 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային.

1.3 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի.

1.4 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար.

1.4.1 Բանկն իրավասու է թողարկվող պարտատոմսերը /միևնույն թողարկումը/ տեղաբաշխելու ամբողջությամբ կամ մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով: Յուրաքանչյուր վերաբացման ծավալը վերջնական պայմաններով հրապարակվում է դրա տեղաբաշխման օրվանից նվազագույնը երեք օր առաջ: Թողարկված հերթական ծավալն /առաջին տեղաբաշխման կամ վերաբացված/ ամբողջությամբ չտեղաբաշխվելու դեպքում չտեղաբաշխված պարտատոմսերի ծավալը գումարվում է ազդագրով առաջարկի շրջանակներում տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալին:

1.4.2 Հերթական տեղաբաշխման ժամանակ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալը, տեղաբաշխման/առաջարկի եղանակը, Շուկա ստեղծողի/ստեղծողների կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալը, գինը, անհրաժեշտության դեպքում նաև այլ պայմաններ հաստատված համարել Բանկի Գործադիր մարմնի կողմից սահմանված պայմանների համաձայն՝ Բանկի Խորհրդի նիստի արձանագրությամբ սահմանված սահմանափակման ներքո:

1.5 Պարտատոմսերի քանակը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) հատ.

1.6 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար:

1.7 Պարտատոմսերի թողարկման օրը՝ Բանկի գործադիր մարմնի կողմից սահմանված հրապարակային տեղաբաշխման առաջին օրը:

1.8 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը.

1.9 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում.

1.10 Տեղաբաշխման առաջին օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով.

1.11 Պարտատոմսերի մարման օրը՝ Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարումը կատարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.12 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ֆիքսված՝ տարեկան 6.00%

1.13 Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ, 48-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.14 Արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 3.00 (երեք) ԱՄՆ դոլար յուրաքանչյուր վճարման ժամանակ յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց:

1.15 Պարտատոմսերի գինը՝ Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

P – պարտատոմսի անվանական արժեքը

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N- հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C- տարեկան արժեկտրոնի գումարը

y- մինչև մարում եկամտաբերություն.

1.16 Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով.

1.17 Պարտատոմսերի ապահովվածությունը՝ չապահովված.

1.18 Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների հաշվառման համակարգը՝ Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից.

1.19 Արժեկտրոնները հաշվարկվում են ԱՄՆ դոլարով, թողարկման օրվանից: Վճարումներն իրականացվում է ԱՄՆ դոլարով, անկանխիկ եղանակով:

1.20 Պարտատոմսերի մարումն իրականացվում է ԱՄՆ դոլարով, անկանխիկ եղանակով.

1.21 Արժեկտրոնների վճարումները և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը մարման օրը համապատասխան գումարները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածաքում գործող բանկերում բացված համապատասխան բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ).

1.22 Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են.

1.23 Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են.

1.24 Կազմակերպությունը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Կազմակերպությունը այլ

կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ.

1.25 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Կազմակերպությունը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով.

1.26 Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում չի սահմանվում.

1.27 Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնում է Բանկը.

1.28 Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված տեղաբաշխում.

ՀԱՎԵԼՎԱԾ 3

«**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ**» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ, ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. <u>Պարտատոմսերի թողարկման պայմանները</u>

1.1 Պարտատոմսերի տեսակը՝ անվանական, ֆիքսված արժեկտրոնով.

1.2 Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային.

1.3 Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի.

1.4 Պարտատոմսերի թողարկման ծավալը՝ 10,000,000 (տասը միլիոն) Եվրո.

1.4.1 Բանկն իրավասու է թողարկվող պարտատոմսերը /միևնույն թողարկումը/ տեղաբաշխելու ամբողջությամբ կամ մաս-մաս՝ թողարկման վերաբացման միջոցով: Յուրաքանչյուր վերաբացման ծավալը վերջնական պայմաններով հրապարակվում է դրա տեղաբաշխման օրվանից նվազագույնը երեք օր առաջ: Թողարկված հերթական ծավալն /առաջին տեղաբաշխման կամ վերաբացված/ ամբողջությամբ չտեղաբաշխվելու դեպքում չտեղաբաշխված պարտատոմսերի ծավալը գումարվում է ազդագրով առաջարկի շրջանակներում տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալին:

1.4.2 Հերթական տեղաբաշխման ժամանակ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալը, տեղաբաշխման/առաջարկի եղանակը, Շուկա ստեղծողի/ստեղծողների կողմից ձեռք բերման ենթակա պարտատոմսերի նվազագույն ծավալը, գինը, անհրաժեշտության դեպքում նաև այլ պայմաններ հաստատված համարել Բանկի Գործադիր մարմնի կողմից սահմանված պայմանների համաձայն՝ Բանկի Խորհրդի նիստի արձանագրությամբ սահմանված սահմանափակման ներքո:

1.5 Պարտատոմսերի քանակը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) հատ.

1.6 Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 (Մեկ հարյուր) Եվրո:

1.7 Պարտատոմսերի թողարկման օրը՝ Բանկի գործադիր մարմնի կողմից սահմանված հրապարակային տեղաբաշխման առաջին օրը:

1.8 Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ մինչև պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը.

1.9 Պարտատոմսերի մարման կատարում և/կամ արժեկտրոնների վճարում՝ պարտատոմսերի մարման օրը և/կամ արժեկտրոնների վճարման օրը պարտատոմսի սեփականատիրոջ բանկային հաշվին համապատասխան վճարումների մուտքագրում.

1.10 Տեղաբաշխման առաջին օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Բանկն այդ մասին տեղեկությունը հրապարակում է իր պաշտոնական կայքում: Վերջինս նշված տեղեկությունը կարող է հրապարակել/տարածել նաև այլ միջոցներով.

1.11 Պարտատոմսերի մարման օրը՝ Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը: Եթե պարտատոմսերի մարման օրը ոչ աշխատանքային է, ապա պարտատոմսերի մարումը կատարվում է մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.12 Արժեկտրոնի տոկոսադրույքը՝ ֆիքսված՝ տարեկան 4.50%

1.13 Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային (2 անգամ օրացուցային տարվա մեջ), թողարկման օրվան հաջորդող 6-րդ, 12-րդ, 18-րդ, 24-րդ, 30-րդ, 36-րդ, 42-րդ, 48-րդ ամիսների համապատասխան օրը: Եթե արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնների վճարման օր է հանդիսանում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը.

1.14 Արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 2.25 (երկու ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) Եվրո յուրաքանչյուր վճարման ժամանակ յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց:

1.15 Պարտատոմսերի գինը՝ Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

DP- Պարտատոմսի գինն է,

DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է,

P – պարտատոմսի անվանական արժեքը

f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է,

N- հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը

C- տարեկան արժեկտրոնի գումարը

y- մինչև մարում եկամտաբերություն.

1.16 Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով.

1.17 Պարտատոմսերի ապահովվածությունը՝ չապահովված.

1.18 Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների հաշվառման համակարգը՝ Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Դեպոզիտարիա) կողմից.

1.19 Արժեկտրոնները հաշվարկվում են եվրոյով, թողարկման օրվանից, իսկ վճարումներն իրականացվում է ՀՀ դրամով, հաշվարկված վճարման իրականացման օրվա համար գործող ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքով, անկանխիկ եղանակով:

1.20 Պարտատոմսերի մարումն իրականացվում է եվրոյով, անկանխիկ եղանակով.

1.21 Արժեկտրոնների վճարումները և պարտատոմսերի մարումն իրականացվում է արժեկտրոնի վճարման օրվան և/կամ պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրվա վերջի (ժամը 24:00–ի) դրությամբ Դեպոզիտարիայից ստացված պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքի հիման վրա, համաձայն որի Բանկը մարման օրը համապատասխան գումարները փոխանցում է Պարտատոմսերի սեփականատերերի՝ ՀՀ տարածաքում գործող բանկերում բացված համապատասխան բանկային հաշիվներին (այսուհետ՝ բանկային հաշիվ).

1.22 Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը նույնն են.

1.23 Արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) նույնն են.

1.24 Կազմակերպությունը չի փոխանցում վճարումները այն սեփականատերերին, որոնց բանկային հաշվի մասին տեղեկությունները բացակայում են Դեպոզիտարիայից ստացված

պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրից քաղվածքում և Կազմակերպությունը այլ կերպ չի տիրապետում այդ տեղեկությանը: Այս դեպքում Կազմակերպությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ սեփականատերերի վճարումները փոխանցում է նոտարի դեպոզիտ.

1.25 Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Կազմակերպությունը սահմանված կարգով դիմում է Բորսա՝ պարտատոմսերի շրջանառությունը կարգավորվող շուկայում ապահովելու նպատակով.

1.26 Պարտատոմսերի ազատ շրջանառելիության սահմանափակում չի սահմանվում.

1.27 Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնում է Բանկը.

1.28 Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը՝ չերաշխավորված տեղաբաշխում.

Հավելված 2

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

Անվանական արժեկտրոնային պարտատոմսեր

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը, դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր:
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը,	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	10,000,000 /տասը միլիոն/ ԱՄՆ դոլար
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Պարտատոմսերը ստորադաս չեն: Առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծրագրային ազդագրի 2.3.9 կետում
6.	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ որտեղ՝ DP- Պարտատոմսի գինն է,

		DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, P – պարտատոմսի անվանական արժեքը, f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է, N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C- տարեկան արժեկտրոնի գումարը. y- մինչև մարում եկամտաբերություն:
8.	Անվանական արժեքը	100 /մեկ հարյուր/ ԱՄՆ դոլար
9.	Քանակը	100,000 /մեկ հարյուր հազար/ հատ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից:
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից:
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMSWISB2IER9
13.	Թողարկման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի 10.02.2023թ. թիվ 08-2023 որոշում,
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից: Պարտատոմսերի թողարկման և արժեկտրոնի հաշվարկման առաջին օրերը համընկնում են:
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Արժեկտրոնի տոկոսադրույք՝ 6.00%, վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:

16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	ACT/ACT
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 3.00 (երեք) ԱՄՆ դոլար, յուրաքանչյուր վճարման ժամանակ յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց: Վճարումն իրականացվում է ԱՄՆ դոլարով՝ անկանխիկ եղանակով
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 /մեկ հարյուր/ ԱՄՆ դոլար մեկ հատ պարտատոմսի դիմաց
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ**» ՓԲԸ, Վազգեն Սարգսյան 10.
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Ոչ կիրառելի
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին:
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին	Տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում)

	թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Բանկը դիմելու է «Հայաստանի ֆոնդային Բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ ՀՖԲ) տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակման համար: ՀՖԲ-ն կարող է չբավարարել Բանկի հայտը: Այս դեպքում թողարկումը համարվում է չեղյալ և Պարտատոմսերի սեփականատերերին հետ են վերադարձվում համապատասխան գումարները Ազդագրով սահմանված կարգով:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Պարտատոմսերի փաստացի ձեռքբերումն իրականացվում է Ներդրողի կողմից Հայտում նշված ծավալով Պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցները (որը որոշվում է հետևյալ ձևով՝ Պարտատոմսերի ձեռքբերվող քանակ բազմապատկած գին՝ հաշվարկված սույն Ազդագրի 2.3.17 կետում սահմանված բանաձևով) Բանկում այդ նպատակով բացված՝ ԱՄՆ դոլար՝ 2500039300060201 տարանցիկ հաշվին մուտքագրելուց հետո:

Հավելված 3

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

Անվանական արժեկտրոնային պարտատոմսեր

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը, դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր:
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը,	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	10,000,000 /տասը միլիոն/ Եվրո
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Պարտատոմսերը ստորադաս չեն: Առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծրագրային ազդագրի 2.3.9 կետում
6.	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ որտեղ՝ DP- Պարտատոմսի գինն է,

		DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, P – պարտատոմսի անվանական արժեքը, f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է, N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C- տարեկան արժեկտրոնի գումարը. y- մինչև մարում եկամտաբերություն:
8.	Անվանական արժեքը	100 /մեկ հարյուր/ Եվրո
9.	Քանակը	100,000 /մեկ հարյուր հազար/ հատ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից:
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից:
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMSWISB2JER7
13.	Թողարկման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի 10.02.2023թ. թիվ 08-2023 որոշում,
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից: Պարտատոմսերի թողարկման և արժեկտրոնի հաշվարկման առաջին օրերը համընկնում են:
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Արժեկտրոնի տոկոսադրույք՝ 4.50%, վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:

16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	ACT/ACT
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 2.25 (երկու ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) Եվրո, յուրաքանչյուր վճարման ժամանակ յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց: Վճարումն իրականացվում է ԱՄՆ դոլարով՝ անկանխիկ եղանակով
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 /մեկ հարյուր/ Եվրո մեկ հատ պարտատոմսի դիմաց
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ**» ՓԲԸ, Վազգեն Սարգսյան 10.
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Ոչ կիրառելի
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին:

29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Բանկը դիմելու է «Հայաստանի ֆոնդային Բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ ՀՖԲ) տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակման համար: ՀՖԲ-ն կարող է չբավարարել Բանկի հայտը: Այս դեպքում թողարկումը համարվում է չեղյալ և Պարտատոմսերի սեփականատերերին հետ են վերադարձվում համապատասխան գումարները Ազդագրով սահմանված կարգով:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Պարտատոմսերի փաստացի ձեռքբերումն իրականացվում է Ներդրողի կողմից Հայտում նշված ծավալով Պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցները (որը որոշվում է հետևյալ ձևով՝ Պարտատոմսերի ձեռքբերվող քանակ բազմապատկած գին՝ հաշվարկված սույն Ազդագրի 2.3.17 կետում սահմանված բանաձևով) Բանկում այդ նպատակով բացված՝ ԱՄՆ դոլար՝ 2500039300060165 տարանցիկ հաշվին մուտքագրելուց հետո:

Հավելված 1

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ

Անվանական արժեկտրոնային պարտատոմսեր

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը, դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր:
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը,	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	10,000,000,000 /տասը միլիարդ/ ՀՀ դրամ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Պարտատոմսերը ստորադաս չեն: Առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծրագրային ազդագրի 2.3.9 կետում
6.	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{P}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ որտեղ՝ DP- Պարտատոմսի գինն է,

		DSN- գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է, DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է, P – պարտատոմսի անվանական արժեքը, f-արժեկտրոնի վճարման հաճախականությունն է, N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C- տարեկան արժեկտրոնի գումարը. y- մինչև մարում եկամտաբերություն:
8.	Անվանական արժեքը	50,000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ
9.	Քանակը	200,000 /երկու հարյուր հազար/ հատ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից:
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից:
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMSWISB2HER1
13.	Թողարկման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի 10.02.2023թ. թիվ 08-2023 որոշում,
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից: Պարտատոմսերի թողարկման և արժեկտրոնի հաշվարկման առաջին օրերը համընկնում են:
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Արժեկտրոնի տոկոսադրույք՝ 11.75 %, վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:

16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման բանկի Տնօրինության կողմից:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	ACT/ACT
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Արժեկտրոնի գումար՝ ֆիքսված գումար՝ 2,937.50 (երկու հազար ինը հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ և հիսուն լումա, յուրաքանչյուր վճարման ժամանակ յուրաքանչյուր մեկ հատ պարտատոմսի դիմաց: Վճարումն իրականացվում է ՀՀ դրամով՝ անկանխիկ եղանակով
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 48-րդ ամսվա համապատասխան օրը
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	50,000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ մեկ պարտատոմսի համար
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«**ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ**» ՓԲԸ, Վազգեն Սարգսյան 10.
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Ոչ կիրառելի
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին:

29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Տեղաբաշխման ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում (հնարավոր սեղմ ժամկետներում) Բանկը դիմելու է «Հայաստանի ֆոնդային Բորսա» ԲԲԸ (այսուհետ՝ ՀՖԲ) տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակման համար: ՀՖԲ-ն կարող է չբավարարել Բանկի հայտը: Այս դեպքում թողարկումը համարվում է չեղյալ և Պարտատոմսերի սեփականատերերին հետ են վերադարձվում համապատասխան գումարները Ազդագրով սահմանված կարգով:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Պարտատոմսերի փաստացի ձեռքբերումն իրականացվում է Ներդրողի կողմից Հայտում նշված ծավալով Պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցները (որը որոշվում է հետևյալ ձևով՝ Պարտատոմսերի ձեռքբերվող քանակ բազմապատկած գին՝ հաշվարկված սույն Ազդագրի 2.3.17 կետում սահմանված բանաձևով) Բանկում այդ նպատակով բացված՝ ՀՀ դրամ՝ 2500039300060300 տարանցիկ հաշվին մուտքագրելուց հետո:

Հավելված 4

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՅՏ

PURCHASE FORM

Ֆիզիկական անձանց համար

For individuals

ՆԵՐԴՐՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

INFORMATION ABOUT THE INVESTOR

Անուն, ազգանուն Name, surname	
Անձնագրային տվյալներ Passport details	
Բնակության վայրը Residence address	
Կապի միջոցներ (Հեռ, Ֆաքս, Էլ փոստ) Contact details (Tel., Fax, E-mail)	
Արժեթղթերի հաշվի համարը Securities account	
Արժեթղթերի հաշիվը վարող անձի անվանումը Name of the custodian	
Դրամական հաշվի համարը Money account	
Դրամական հաշիվը վարող բանկի անվանում Beneficiary bank	

Ձեռք բերման վերաբերյալ տեղեկատվություն

Information on investment

Տարբերակիչ ծածկագիր ISIN	
Պարտատոմսերի քանակ Quantity of bonds	
Պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը Total face value	
Գործարքի գումար Transaction amount	

Ես, ստորագրելով սույն փաստաթուղթը, տեղեկացնում եմ, որ.

By signing this document, I verify that:

1. Ծանոթացել եմ **«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ** պարտատոմսերի Ծրագրային ազդագրին.
   I have read the entire Prospectus of "ARMSWISSBANK" CJSC bonds:
2. Գիտակցում եմ սույն պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը.
   I realize the risks related to investment in offered bonds

Ներդրող /լիազորված անձ/

Authorised person

Ստորագրություն/կնիք

Signature/seal

Լրացվում է Բանկի լիազորված աշխատակցի կողմից

For the Bank use only

Հայտի ներկայացման ամսաթիվ

Submission date ---------- ----------

Վճարման ամսաթիվ

Payment date ---------- ----------

Նշում հայտի ընդունված լինելու վերաբերյալ

Accepted

Լիազորված աշխատակից

Authorised employee Անուն, ազգանուն ստորագրություն

Հավելված 5

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՅՏ

PURCHASE FORM

Իրավաբանական անձանց համար

For legal entities

ՆԵՐԴՐՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

INFORMATION ABOUT THE INVESTOR

Անվանում Name	
Գրանցման տվյալներ Registration details	
Գտնվելու վայրը Legal address	
Կապի միջոցներ (Հեռ, Ֆաքս, Էլ փոստ) Contact details (Tel., Fax, E-mail)	
Արժեթղթերի հաշվի համարը Securities account	
Արժեթղթերի հաշիվը վարող անձի անվանումը Name of the custodian	
Դրամական հաշվի համարը Money account	
Դրամական հաշիվը վարող բանկի անվանում Beneficiary bank	

Ձեռք բերման վերաբերյալ տեղեկատվություն

Information on investment

Տարբերակիչ ծածկագիր ISIN	
Պարտատոմսերի քանակ Quantity of bonds	
Պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը Total face value	
Գործարքի գումար Transaction amount	

Ես, ստորագրելով սույն փաստաթուղթը, տեղեկացնում եմ, որ.

By signing this document, I verify that:

1. Ծանոթացել եմ **«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ** պարտատոմսերի ազդագրին.
   I have read the entire Prospectus of "ARMSWISSBANK" CJSC bonds:
2. Գիտակցում եմ սույն պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը.
   I realize the risks related to investment in offered bonds

Ներդրող /լիազորված անձ/

Authorised person

Ստորագրություն/կնիք

Signature/seal

Լրացվում է Բանկի լիազորված աշխատակցի կողմից

For the Bank use only

Հայտի ներկայացման ամսաթիվ

Submission date ---------- ----------

Վճարման ամսաթիվ

Payment date ---------- ----------

Նշում հայտի ընդունված լինելու վերաբերյալ

Accepted


Լիազորված աշխատակից

Authorised employee Անուն, ազգանուն ստորագրություն

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

31 դեկտեմբերի 2020թ.



Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	9
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	11
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	13
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	15

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9
Հ. + 374 10 500 964
Ֆ.+ 374 10 500 961

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia
T + 374 10 500 964
F + 374 10 500 961

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետիրոջը.

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքներն ու դրամական հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

Բանկի վերահսկողությունից դուրս հանգամանքներով պայմանավորված՝ կախված COVID-19-ի համաճարակի տարածման կանխարգելման և Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված ռազմական գործողություններին Հայաստանի Հանրապետության ներգրավվմամբ, Բանկի ղեկավարությունը լիարժեքորեն չի կարողացել գնահատել 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրամադրված վարկերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստի վրա այս հանգամանքների ազդեցությունը: Բացի այդ, Բանկի կողմից ակնկալվող պարտքային կորուստների պահուստի հաշվարկման մոդելում իրականացված փոփոխությունները հնարավոր է բավարար չլինեն արտացոլելու համար ՀՀ ներկայիս և կանխատեսվող մակրոտնտեսական միջավայրի փոփոխությունների հնարավոր ազդեցությունները: Մենք անկարող էինք ձեռք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակնկալվող պարտքային կորուստների պահուստի վրա ՀՀ բիզնես միջավայրի փոփոխության ազդեցության վերաբերյալ: Հետևաբար, ստեղծված անորոշության և նախադեպը չունեցող իրավիճակում մենք անկարող էինք որոշել Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա այս համգամանքների

ֆինանսական ազդեցությունը:

Աուդիտի առանցքային հարցեր

Բացառությամբ *«Վերապահումով կարծիքի հիմքեր»* բաժնում նկարագրված հարցի՝ մենք որոշել ենք, որ մեր եզրակացությունում ներկայացման ենթակա աուդիտի առանցքային այլ հարցեր չկան:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի տարեկան հաշվետվությունը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք տրամադրում կարծիք, որը որևէ այլ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Մեր կողմից իրականացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռքբերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ինչպես նկարագրված է *«Վերապահումով կարծիքի հիմք»* բաժնում, մենք անկարող էինք ձեռք բերել բավարար քանակի համապատասխան ապացույցներ՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների պահուստի վրա ՀՀ բիզնես միջավայրի փոփոխության ազդեցության վերաբերյալ: Հետևաբար, մենք անկարող ենք եզրակացնել՝ արդյոք այլ տեղեկատվությունը նշված հարցի հետ կապված էականորեն խեղաթյուրված է:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունները:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք մեր բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Արմեն Հովհաննիսյանն է:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն
Առաջադրանքի պատասխանատու

12 ապրիլի 2021թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2020	2019
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	7	27,321,456	22,701,678
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	7	(17,038,412)	(14,143,305)
Զուտ տոկոսային եկամուտներ		10,283,044	8,558,373
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	8	335,405	253,808
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	8	(156,108)	(131,698)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		179,297	122,110
Զուտ առևտրային եկամուտ/(ծախս)	9	(26,554)	294,804
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման գծով զուտ օգուտ		4,838,026	4,272,379
Այլ եկամուտներ	10	736,970	272,157
Արժեզրկման ծախս	11	(5,737,484)	(768,784)
Անձնակազմի գծով ծախսեր	12	(1,717,430)	(1,366,981)
Հիմնական միջոցների մաշվածություն	20	(176,592)	(170,229)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	21	(22,000)	(16,252)
Այլ ծախսեր	13	(904,084)	(523,689)
Շահույթ մինչև հարկումը		7,453,193	10,673,888
Շահութահարկի գծով ծախս	14	(1,427,118)	(2,146,085)
Տարվա շահույթ		6,026,075	8,527,803

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2020	2019
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում			
Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում (ծանոթ. 14)		-	24,593
		-	24,593
Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)			
Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում		(3,699,396)	2,150,324
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		250,006	238,564
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		620,890	(430,000)
Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում (ծանոթ. 14)		-	274,981
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ/(վնաս)		(2,828,500)	2,233,869
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		(2,828,500)	2,258,462
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		3,197,575	10,786,265

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 15-ից մինչև 103-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	27,746,794	24,328,959
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16	8,980	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	6,824,674	2,072,086
Հաճախորդներին տրված վարկեր	18	123,498,224	96,611,921
Ներդրումային արժեթղթեր			
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	19	77,784,974	67,487,498
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	19	63,064,705	60,572,411
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	19	80,530,321	26,458,580
Կանխավճարներ շահութահարկի գծով		281,865	-
Հիմնական միջոցներ	20	1,760,180	1,989,716
Ոչ նյութական ակտիվներ	21	83,196	64,153
Բռնագանձված ակտիվներ	22	2,266,870	1,161,904
Այլ ակտիվներ	23	2,288,552	1,402,245
Ընդամենը՝ ակտիվներ		386,139,335	282,149,473
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	24	55,923,236	3,412,007
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	16	168,784	969
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	25	50,823,392	47,734,267
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	26	134,700,221	120,840,386
Թողարկված պարտքային արժեթղթեր	27	64,911,905	32,489,020
Ստորադաս փոխառություններ	28	13,826,587	13,353,624
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		-	1,143,955
Հետաձգված հարկային պարտավորություն	14	1,713,682	2,408,573
Այլ պարտավորություններ	29	1,139,243	1,031,962
Ընդամենը՝ պարտավորություններ		323,207,050	222,414,763

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	30	10,000,200	10,000,200
Էմիսիոն եկամուտ		6,205,548	6,205,548
Գլխավոր պահուստ		25,000,000	20,000,000
Այլ պահուստներ		9,936,706	12,765,206
Չբաշխված շահույթ		11,789,831	10,763,756
Ընդամենը՝ սեփական կապիտալ		62,932,285	59,734,710
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		386,139,335	282,149,473

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. ապրիլի 12-ին՝

Գևորգ Մաչանյան
Գործադիր տնօրեն

Սեդրակ Բաղդասարյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 15-ից մինչև 103-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	10,000,200	6,205,548	20,000,000	11,630,503	1,134,703	10,763,756	59,734,710
Տարվա շահույթ	-	-	-	-	-	6,026,075	6,026,075
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	1,086,273	-	-	1,086,273
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների վաճառքից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ գումար	-	-	-	(4,785,669)	-	-	(4,785,669)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	250,006	-	-	250,006
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	620,890	-	-	620,890
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(2,828,500)	-	6,026,075	3,197,575
Հատկացում պահուստին	-	-	5,000,000	-	-	(5,000,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	5,000,000	-	-	(5,000,000)	-
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,000,200	6,205,548	25,000,000	8,802,003	1,134,703	11,789,831	62,932,285

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	8,752,800	1,347,241	16,000,000	9,396,634	1,110,110	6,235,953	42,842,738
Տարվա շահույթ	-	-	-	-	-	8,527,803	8,527,803
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	6,535,856	-	-	6,535,856
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների վաճառքից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ գումար	-	-	-	(4,385,532)	-	-	(4,385,532)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	238,564	-	-	238,564
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	(430,000)	-	-	(430,000)
Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում	-	-	-	274,981	24,593	-	299,574
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	2,233,869	24,593	8,527,803	10,786,265
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,247,400	4,858,307	-	-	-	-	6,105,707
Հատկացում պահուստին	-	-	4,000,000	-	-	(4,000,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	1,247,400	4,858,307	4,000,000	-	-	(4,000,000)	6,105,707
Հաշվեկշիռը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,000,200	6,205,548	20,000,000	11,630,503	1,134,703	10,763,756	59,734,710

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 15-ից մինչև 103-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2020	2019
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	7,453,193	10,673,888
Ճշգրտումներ		
Ֆինանսական ակտիվների արժեզրկման ծախս	5,737,484	768,784
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	198,592	186,481
Ստացվելիք տոկոսներ	(2,855,171)	(587,715)
Վճարվելիք տոկոսներ	345,023	294,175
Հիմնական միջոցների արժեզրկման ծախս	169,795	-
Արտարժութային փոխարկումից զուտ (եկամուտ)/ծախս	(701,828)	3,843
Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ վնաս	158,835	-
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	10,505,923	11,339,456
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(4,602,075)	1,608,520
Հաճախորդներին տրված վարկեր	(22,239,749)	(24,466,353)
Այլ ակտիվներ	(842,549)	(919,581)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Հետգնման համաձայնագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	48,999,992	(17,999,992)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(361,463)	7,700,627
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	9,391,964	27,264,794
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	969
Այլ պարտավորություններ	58,027	431,186
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր մինչև շահութահարկը	40,910,070	4,959,626
Վճարված շահութահարկ	(2,926,939)	(1,556,193)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	37,983,131	3,403,433

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի առք	(67,241,263)	(20,623,474)
Հիմնական միջոցների առք	(73,845)	(42,909)
Ոչ նյութական ակտիվների առք	(41,043)	(8,929)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(67,356,151)	(20,675,312)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի ավելացում	-	6,105,707
ՀՀ ԿԲ-ից վարկերի ստացում	3,423,162	742,877
Ֆինանսական կազմակերպերպություններից վարկերի ստացում	494,293	10,925,864
Պարտքային արժեթղթերի թողարկումից զուտ աճ	28,098,352	5,567,520
Ստորադաս փոխառության մարում	-	105
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(45,450)	(36,480)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	31,970,357	23,305,593
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	2,597,337	6,033,714
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	24,328,959	18,215,567
Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստներ	-	(3,744)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	820,498	83,422
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 15)	27,746,794	24,328,959
Լրացուցիչ տեղեկատվություն՝		
Ստացված տոկոսներ	24,466,285	22,113,963
Վճարված տոկոսներ	(16,693,389)	(13,849,130)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 15-ից մինչև 103-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 2004 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 07 հոկտեմբերի 2004 թվականին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N84 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորում և ավանդների ընդունումն է, (ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը), ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համաճարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Ընդհանուր առմամբ 2020թ. ֆինանսական շուկայում դիտվում է վարկավորման անկում, քանի որ բանկերը վերագնահատում են իրենց հաճախորդների բիզնես-մոդելները, ինչպես նաև վերջիններիս հետագա գործունեության իրականացման հնարավորությունները՝ հաշվի առնելով փոխարժեքի տատանումները և գործարար ակտիվության անկումը:

Բանկի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Բանկը օրական կտրվածքով վերահսկում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Վերոնշյալ իրադարձությունները, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին, կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Բանկի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը բանկի գործունեության վրա:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով, բացառությամբ շենքերի, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2020թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2020թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:*(թողնել միայն բանկի համար կիրառելիները)*

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները,
- Ձեռնարկատիրական գործունեության սահմանում (ՖՀՄՄ 3 փոփոխություններ),
- Էականության սահմանումը (ՀՀՄՄ 1 և ՀՀՄՄ 8 փոփոխություններ),
- Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ),
- COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ (ՖՀՄՄ 16 փոփոխություններ)

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- «Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 39, ՖՀՄՄ 16, ՖՀՄՄ 4 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՄ 17 *«Ապահովագրության պայմանագրեր»*
- *«Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը»* (ՀՀՄՄ 16 փոփոխություններ)
- *«Հղումներ հայեցակարգային հիմունքներին»* (ՖՀՄՄ 3 փոփոխություններ)
- Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսեր (ՀՀՄՄ 37 փոփոխություններ)
- 2018-2020թթ. ՖՀՄՄ-ների տարեկան բարեփոխումներ-(ՖՀՄՄ 1, ՖՀՄՄ 9, ՀՀՄՄ 41, ՖՀՄՄ 16 փոփոխություններ):
- *«Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ»* (ՀՀՄՄ 1 փոփոխություններ)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու սպասվող պարտքային վնասը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ սպասվող պարտքային վնասը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տես 4.4.6 ծանոթագրությունում:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարչական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան: Ակտիվների կառավարման գծով վճարները ճանաչվում են ծառայությունների մատուցման ժամանակաշրջանում: Նույն սկզբունքն է կիրառվում կարողությունների կառավարման, ֆինանսական պլանավորման և ակտիվների պահպանման ծառայությունների դեպքում, որոնք ենթադրում են ծառայությունների մատուցման երկար ժամկետ:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2020թ. **դեկտեմբերի** 31	2019թ. **դեկտեմբերի 31**
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	522.59	479.70
ՀՀ դրամ/1 Եվրո	641.11	537.26

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Բանկն սկզբնապես ճանաչում է վարկերը, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են դրանց ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման դեպքում ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները որոշակի ժամկետներում հանգեցնում են դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի գծով տոկոսագումարների վճարումներն են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» կազմված է փողի ժամանակային արժեքի և պարտքային ռիսկի փոխհատուցումից, այլ ռիսկերի և ֆինանսական ակտիվի պահպանման հետ կապված ծախսերի փոխհատուցումից (օրինակ՝ իրացվելիության ռիսկ և վարչական ծախսեր), ինչպես նաև շահույթի մարժայից: Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը կամ ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման առանձնահատկությունները,
- վաղաժամկետ մարման և երկարաձգման հնարավորությունը,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի պահանջի իրավունքի ակտիվների պայմանավորվածություններ) և
- առանձնահատկությունները, որոնք փոխում են դրամի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա տարածվող հաշվեկշռային արժեքի) և (i) ստացված փոխհատուցման գումարի տարբերությունը (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված ցանկացած կուտակված օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային բաժնային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված ցանկացած կուտակային օգուտ/վնաս չի ճանաչվում շահույթում կամ վնասում այդ արժեթղթերի ապաճանաչման դեպքում: Մասնակցությունն ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում, որն առաջանում է կամ պահպանվում է Բանկի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի՝ որպես փոխառության տրամադրման և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են առոչինչ: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տես 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տես 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմաններով հիմնավորված նոր ֆինանսական պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Բանկի առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Բանկը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- վարկերի տրամադրման պարտավորվածություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Բանկը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք պայմանավորված են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում տեղի ունեցող դեֆոլտ առաջացնող իրադարձություններով:

Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում դեֆոլտի բոլոր հնարավոր դեպքերի հետևանքով:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Բանկը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 36.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Բանկը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Բանկը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Բանկը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված խումբ - ձեռքբերված կամ ստեղծման պահին արժեզրկված ակտիվները սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները դեֆոլտի հավանականության, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի, դեֆոլտի ժամանակ վնասի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Դեֆոլտի հավանականություն (PD): Այն տվյալ ժամանակահավածում դեֆոլտի հավանականության գնահատումն է: Դեֆոլտ կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակաշրջանի միայն որոշակի ժամանակահատվածում, եթե պարտականությունը նախկինում չի ապաճանաչվել և շարունակում է մնալ պորտֆելում:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD): Այն ներկայացնում է դեֆոլտի ապագա ամսաթվի դրությամբ ռիսկի ենթարկված գումարի չափի գնահատումը՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ռիսկի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսագումարների մարումը՝ անկախ նրանից պայմանագրով նախատեսված է, թե ոչ, պարտավորության սպասվող օգտագործումը և չկատարված վճարումների հաշվեգրված տոկոսները:

Վնասը դիֆոլտի ժամանակ (LGD): Այն արտահայտում է վնասի չափը, որը առաջանում է տվյալ ժամանակահատվածում վարկի դիֆոլտային կարգավիճակում: Այն հիմնված է պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն հույս ունի ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը: Որպես կանոն, այն արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարի (EAD) նկատմամբ տոկոսով:

Դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը և դեֆոլտի ժամանակ վնասը ավելի մանրամասն բացահայտվում են 36.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տես՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասկան ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- էմիտենտի կամ փոխառուի էական ֆինանսական դժվարություններ,
- պայմանագրային պայմանների խախտում, օրինակ՝ դեֆոլտ կամ վճարման ուշացում,
- վարկերի պայմանների այնպիսի վերանայում, որը Բանկն այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորման հավանականություն,
- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Փոխառուի ֆինանսական դժվարությունների հետևանքով վերանայված վարկը սովորաբար դիտարկվում է որպես արժեզրկված, միայն եթե առկա չէ վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր չստանալու ռիսկը էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- երկրի կարողությունը մուտք գործել կապիտալ շուկաներ նոր պարտքի թողարկման համար:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների (FVOCI) արժեզրկումից կորուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ այդ ակտիվների հաարժեքը հավասար է իրենց իրական արժեքին: Այնուամենայնիվ, արժեզրկումից կորուստները բացահայտվում և ճանաչվում են իրական արժեքի ճշգրտման պահուստում,
- վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Վարկային պարտավորվածության չօգտագործված մասի գծով գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Բանկը գնահատում է վարկային պարտավորվածությունների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - եթե ֆինանսական գործիքը ունի ինչպես օգտագործված, այնպես էլ չօգտագործված բաղադրիչ և Բանկը հնարավորություն չունի վարկերի տրամադրման պարտավորվածության ակնկալվող պարտքային կորուստները առանձնացնել օգտագործված բաղադրիչի ակնկալվող պարտքային կորուստներից, ապա Բանկը ներկայացնում է ակնկալվող պարտքային կորուստների համախմբված պահուստ երկու բաղադրիչների համար: Համախմբված գումարը ներկայացվում է որպես օգտագործված բաղադրիչի ընդհանուր հաշվեկշռային արժեքից նվազում: Օգտագործված բաղադրիչի համախառն գումարի նկատմամբ արժեզրկումից կորուստների ցանկացած գերազանցում ներկայացվում է պահուստի տեսքով:
  - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Բանկի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստների շրջանակում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային գործիքները դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Բանկը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Բանկի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորություններ

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորությունները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով, կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրային նպատակներով պահվող ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, ապա հետագայում չափվում իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ շահույթում կամ վնասում ճանաչված գործարքային ծախսերով: Իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են որպես շահույթում կամ վնասում զուտ առևտրային եկամտի մի մաս:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

4.8 Վարկեր

Վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.9 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- պարտքային և բաժնային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մմիջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և վերադարձ
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

4.10 Հետգնման և հակադարձ հետգնման համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.11 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.12 Վարձակալություն

2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո կնքված ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,

- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

Բանկը որպես վարձատու

Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ ՖՀՄՄ 16-ի համաձայն, համադրելի ժամանակաշրջանի համեմատ չի փոփոխվել:

Որպես վարձատու՝ Բանկը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

4.13 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ/վնաս հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.14 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքը ներկայացված է իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	**Տոկոսադրույք (%)**
Շենքեր	30	3.3
Համակարգիչներ և կապի միջոցներ	6	16.67
Տրանսպորտային միջոցներ	7	14.29
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով (մինչև 2020թ. հունվարի 1-ը կիրառվող): Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը

պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Շենքը վերագնահատվում է կանոնավոր կերպով մոտավորապես 3-5 տարի հետո: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.15 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 3-10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.16 Բռնագանձված ակտիվներ

Բանկի քաղաքականությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց

համապատասխան ակտիվների դաս սկզբնական ապահովված ակտիվի բռնագանձված կամ հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքն ավելի լավ տարբերակ է ճանաչվում, ըստ Բանկի քաղաքականության՝ փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը:

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.17 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Երբ Բանկը գնում է իրեն պատկանող արժեթղթերը, դրանք դուրս են գրվում հաշվեկշռից, և հաշվեկշռային արժեքի ու վճարված գումարի տարբերությունն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.18 Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորվածություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Վարկային պարտավորվածությունները նախապես որոշված պայմաններով և ժամկետներով վարկեր տրամադրելու պարտավորվածություններն են:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխավորությունների և վարկային պարտավորվածությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.19 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխիքների և վարկային

պարտավորվածությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.18 ծանոթագրությունում:

4.20 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.21 Հավատարմագրային գործառնություններ

Բանկն իրականացնում է հավատարմագրային գործառնություններ իր հաճախորդների համար: Բանկը նաև մատուցում է դեպոզիտարիոն ծառայություններ, ինչը ներառում է հաճախորդներին պատկանող արժեթղթերի դեպո հաշիվներով գործառնությունները: Բանկի կողմից կառավարվող ակտիվները, ինչպես նաև դրանցից ծագող պարտավորությունները չեն ներառվում Բանկի ֆինանսական հաշվետվություններում: Բանկը կրում է հավատարմագրային գործառնությունների գծով գործառնական ռիսկը, իսկ նշված գործառնությունների վարկային և շուկայական ռիսկը կրում են հաճախորդները:

Հավատարմագրային գործառնություններից ստացված վարձավճարները արտացոլվում են կոմիսիոն և այլ տեսքով եկամուտներում:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՄ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 33):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման հնարավորություններ

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 32):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում կանխատեսվող տեղեկատվության ներառումը (տես 36.1.2 ծանոթագրություն), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների (տես 31 ծանոթագրություն):

6 Անցման բացահայտում

6.1 ՖՀՄՄ 16

ՖՀՄՄ 16-ին անցնելիս Բանկը ճանաչել է լրացուցիչ օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ՝ տարբերությունը ճանաչելով չբաշխված շահույթում: Անցման ազդեցությունը ամփոփված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	**1 հունվարի** 2019**թ.**
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ- հիմնական միջոցներ	130,759
Հետաձգված հարկային պարտավորություն	(26,152)
Վարձակալության գծով պարտավորություններ	130,759
Հետաձգված հարկային ակտիվ	26,152
Ընդամենը փոփոխություն սեփական կապիտալում ՖՀՄՄ 16-ի ներդրման արդյունքում	-

Հետևյալ աղյուսակում արտացոլված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործառնական վարձակալության գծով պարտավորությունների (ինչպես բացահայտված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում) համադրումը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների հետ.

Ընդամենը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բացահայտված գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ	163,717
Զեղչում՝ լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի կիրառմամբ	(32,958)
Գործառնական վարձակալության գծով պարտավորություններ	130,759
Խելամտորեն որոշված երկարաձգման ընտրանք	-
Ընդամենը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորություններ	130,759

7 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Վարկեր հաճախորդներին	9,374,832	7,834,036
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	10,039,987	7,364,380
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	6,922,880	6,913,614
Ֆակտորինգից եկամուտ	463,656	316,057
Վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	90,015	29,854
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	248,289	99,276
Հակադարձ հետգնման գործառնություններ	172,688	138,122
Ակրեդիտիվների գծով եկամուտ	8,796	3,382
Այլ տոկոսային եկամուտ	313	2,957
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	27,321,456	22,701,678

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	10,528,567	8,455,249
Հետգնման գործառնություններ	1,654,529	1,741,237
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,515,933	1,502,530
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,316,928	2,429,674
Վարձակալության գծով պարտավորություններ	20,865	13,476
Այլ տոկոսային ծախսեր	1,590	1,139
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	17,038,412	14,143,305

8 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Դրամարկղային գործառնություններ	37,214	39,949
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	114,409	103,978
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	87,281	33,235
Բրոքերային գործառնություններ	78,022	59,416
Վճարային քարտերով գործառնություններ	15,443	13,966
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	3,036	3,264
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	335,405	253,808
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	62,955	41,310
Բրոքերային գործառնություններ	72,014	61,992
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	21,139	28,396
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	156,108	131,698

9 Զուտ առևտրային եկամուտ/(ծախս)

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Զուտ եկամուտ/(ծախս) ածանցյալ գործիքներից	(670,859)	4,158
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	644,305	290,646
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ/(ծախս)	(26,554)	294,804

10 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ	-	3,855
Բռնագանձված ակտիվների վաճառքից եկամուտ	670	12,422
Շահաբաժիններից եկամուտ	6,041	5,103
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ	701,828	-
Ֆինանսական միջնորդությունից եկամուտ	16,693	16,460
Ապահովագրական հատուցում	-	-
Արժեթղթերով գործառնություններից եկամուտ	4,051	229,201
Այլ եկամուտ	7,687	5,116
Ընդամենը այլ եկամուտներ	736,970	272,157

11 Արժեզրկման ծախս/(հակադարձում)

2020թ.

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	(5,168)	-	-	(5,168)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	13,751	-	-	13,751
Վարկեր հաճախորդներին	18	1,246,940	209,009	4,025,825	5,481,774
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	19	250,006	-	-	250,006
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	19	(3,804)	-	-	(3,804)
Այլ ակտիվներ	23	1,524	-	-	1,524
Ֆինանսական երաշխավորություններ և վարկային պարտավորվածություններ	31	(599)	-	-	(599)
Ընդամենը արժեզրկման ծախս		1,502,650	209,009	4,025,825	5,737,484

2019թ.

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	3,744	-	-	3,744
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	17	(19,422)	-	-	(19,422)
Վարկեր հաճախորդներին	18	(47,249)	516,861	(84,727)	384,885
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	19	238,564	-	-	238,564
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	19	144,109	-	-	144,109
Այլ ակտիվներ	23	(7,141)	-	-	(7,141)
Ֆինանսական երաշխավորություններ	31	24,045	-	-	24,045
Ընդամենը արժեզրկման ծախս/(հակադարձում)		336,650	516,861	(84,727)	768,784

12 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	1,715,632	1,356,122
Անձնակազմի ուսուցման ծախսեր	1,149	5,216
Այլ	649	5,643
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	1,717,430	1,366,981

13 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ոչ առևտրային ակտիվների արտարժութային փոխարկումներից զուտ վնաս	-	3,843
Թարնկարժեք մետաղներով գործառնություններից զուտ վնաս	1,152	-
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	69,736	60,480
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	95,956	109,021
Ներկայացուցչական ծախսեր	31,150	49,797
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	24,480	12,789
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	33,870	7,916
Վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	104,263	64,807
Ապահովագրության գծով ծախսեր	36,656	30,930
Գործուղման ծախսեր	6,490	28,575
Անվտանգության գծով ծախսեր	9,000	8,560
Վճարներ ֆինանսական հաշտարարին	28,313	23,537
Գրասենյակային ծախսեր	13,161	14,949
Վարկերի հավաքագրման վճարներ	18,509	27,201
Հիմնական միջոցների օտարման գծով ծախսեր	169,795	-
Վարկերի տրամադրման ծախսեր (ԱՔՌԱ)	7,802	6,783
Վճարահաշվարկային ծառայություններ (ԱրՔա)	38,569	34,423
Գովազդի ծախսեր	4,714	8,761
Բարեգործություն	187,331	21,840
Այլ ծախսեր	23,137	9,477
Ընդամենը այլ ծախսեր	904,084	523,689

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,578,733	2,263,748
Նախորդ տարիների ճշգրտումներ	(77,614)	-
Հետաձգված հարկ	(74,001)	(117,663)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,427,118	2,146,085

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2019թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված հարկերի մնացորդների հաշվարկվել են 18% դրույքաչափով (2019թ.՝ 18%)

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2020	Արդյունավետ դրույքաչափ (%)	2019	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	7,453,193		10,673,888	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2019: 20%)	1,341,575	18	2,134,778	20
Չնվազեցվող ծախսեր	5,439	-	9,369	-
Արտարժույթի բացասական փոխարժեքային տարբերություն	2,490	-	930	-
Արտոնություն հաշմանդամություն ունեցող աշխատողներին	-	-	(7,608)	-
Նախորդ տարիների ճշգրտումներ	77,614	1	-	-
Հարկային տոկոսադրույքի փոփոխման ազդեցություն	-	-	8,616	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,427,118	19	2,146,085	20

Հարկային դրույքաչափերի փոփոխություններ և ապագա հարկային վճարների վրա ազդող գործոններ

2019թ. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում ընդունվել են փոփոխություններ. 2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կնվազի 20-ից 18% -ի: Հետևաբար, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկերի մնացորդների հաշվարկվել են 18% դրույքաչափով: Այս փոփոխությունը հանգեցրել է 8,616 հազար ՀՀ դրամ վնասի, որը կապված է Բանկի շահույթ կամ վնասում ճանաչված ակտիվների վերահաշվարկման հետ և 299,574 հազար ՀՀ դրամի օգուտի կապված

այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված հետաձգված հարկային պարտավորությունների վերահաշվարկման հետ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում:

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	01 **հունվարի** 2020	**31 դեկտեմբերի** 2020				
	Զուտ մնացորդ	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված**	**Զուտ մնացորդ**	**Հետաձգված հարկային ակտիվ**	**Հետաձգված հարկային պարտավորություն**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(6,616)	6,616	-	-	-	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,002	(12,568)	-	(5,566)	-	(5,566)
Հաճախորդներին տրված վարկեր	133,925	152,259	-	286,184	286,184	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(2,411,776)	(32,615)	620,890	(1,823,501)	-	(1,823,501)
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	36,780	(684)	-	36,096	36,096	-
Հիմնական միջոցներ	(226,455)	(10,777)	-	(237,232)	-	(237,232)
Այլ ակտիվներ	1,959	(10,969)	-	(9,010)	-	(9,010)
Այլ պահուստներ	(25,053)	5,244	-	(19,809)	-	(19,809)
Վարձակալության գծով պարտավորություններ	19,396	(28,784)	-	(9,388)	-	(9,388)
Այլ պարտավորություններ	62,265	6,279	-	68,544	68,544	-
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(2,408,573)	74,001	620,890	(1,713,682)	390,824	(2,104,506)

Հազար ՀՀ դրամ	01 **հունվարի** 2019			**31 դեկտեմբերի** 2019		
	Զուտ մնացորդ	**Շահույթում կամ վնասում ճանաչված**	**Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված**	**Զուտ մնացորդ**	**Հետաձգված հարկային ակտիվ**	**Հետաձգված հարկային պարտավորություն**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(4,748)	(1,868)	-	(6,616)	-	(6,616)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,499	(497)	-	7,002	7,002	-
Հաճախորդներին տրված վարկեր	146,808	(12,883)	-	133,925	133,925	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(2,320,401)	63,644	(155,019)	(2,411,776)	-	(2,411,776)
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	12,045	24,735	-	36,780	36,780	-
Հիմնական միջոցներ	(245,927)	(5,121)	24,593	(226,455)	-	(226,455)
Այլ ակտիվներ	11,464	(9,505)	-	1,959	1,959	-
Այլ պահուստներ	(28,613)	3,560	-	(25,053)	-	(25,053)
Վարձակալության գծով պարտավորություններ	-	19,396	-	19,396	19,396	-
Այլ պարտավորություններ	26,063	36,202	-	62,265	62,265	-
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(2,395,810)	117,663	(130,426)	(2,408,573)	261,327	(2,669,900)

15 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Կանխիկ դրամական միջոցներ	1,951,867	2,155,378
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	24,726,715	17,747,800
Թղթակցային հաշիվներ բանկերում	885,647	3,055,208
Մինչև 90 օր տևողությամբ ավանդներ	182,565	1,375,741
	27,746,794	24,334,127
Արժեզրկումից պահուստներ	-	(5,168)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,746,794	24,328,959

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ 2%) և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով ամբողջությամբ ՀՀ դրամով: 2019թ. հունիսից բանկերը արտարժույթով ներգրաված միջոցների 10%-ը պահուստավորում են ՀՀ դրամով և 8%-ը՝ արտարժույթով: Այդ միջոցները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 14,025,198 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 13,781,523 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի թղթակցային հաշիվներ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), բաղառությամբ ՀՀ ԿԲ-ի, որի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	5,168	1,424
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(5,168)	3,744
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	5,168

16 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոպերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Բանկի պարտքային ռիսկը ներկայացնում է սվոպային պայմանագրերի փոխարինման

պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**			**31 դեկտեմբերի** 2019**թ.**		
	Պայմանա-կան գումար	**Ակտիվների իրական արժեք**	**Պարտավո-րությունների իրական արժեք**	**Պայմանա-կան գումար**	**Ակտիվների իրական արժեք**	**Պարտավո-րությունների իրական արժեք**
Արտարժույթով պայմանագրեր						
Արտաժութային սվոփ պայմանագրեր	2,808,844	-	68,369	561,147	-	969
Արժեթղթերի ֆորվարդ	2,111,914	8,980	100,415	-	-	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	4,920,758	8,980	168,784	561,147	-	969

17 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**	**31 դեկտեմբերի** 2019**թ.**
Վարկեր բանկերին	317,338	-
Միջազգանին ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	1,474,747	-
Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	877,327	394,144
Ավանդներ բանկերում	2,005,082	-
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	310,000	360,000
Դեպոնացված միջոցներ բանկերում	145,890	129,336
Դեպոնացված միջոցներ այլ ֆինանսական կազմակերպություններում	705,056	940,346
Հակադարձ հետգնման պայմանագրեր վարկային կազմակերպությունների հետ	1,011,058	280,453
Ռեգուլյար գնման պայմանագրեր՝ արտարժույթով սփոթ գործարքներ	4,405	-
Այլ հաշիվներ	34,065	14,350
	6,884,968	2,118,629
Արժեզրկումից պահուստներ	(60,294)	(46,543)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,824,674	2,072,086

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 446,851 հազար դրամ գումարի չափով դեպոնացված միջոցները ֆինանսական կազմակերպություններում (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 679,700 հազար դրամ՝ Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայում մարքեթ մեյքերության պայմանագրերով ստանձնված պարտավորությունների կատարման միջոցներ) իրենցից ներկայացնում են ՎԶԵԲ-ում սառեցված միջոցներ հետգնման պայմանագրերով ստանձնված պարտավորությունների կատարման համար:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի որևէ բանկի տրված միջոցներ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2019թ.**
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	**12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	46,543	65,965
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	13,751	(19,422)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	60,294	46,543

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2020		2019	
	Գրավի իրական արժեքը	**Վարկի հաշվեկշռային արժեք**	**Գրավի իրական արժեքը**	**Վարկի հաշվեկշռային արժեք**
ՀՀ կառավարության պարտատոմսեր արտարժույթով	-	-	281,149	280,453
ՀՀ կառավարության տեղական արժույթով	1,045,623	1,011,058	-	-
Ընդամենը գրավադրված ակտիվներ և հակադարձ ռեպո պայմանագրերով տրամադրված վարկեր	1,045,623	1,011,058	281,149	280,453

18 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			31 դեկտեմբերի 2019թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	16,620,599	(567,371)	16,053,228	11,658,499	(189,796)	11,468,703
Սպառողական վարկեր	2,257,717	(828,107)	1,429,610	2,441,448	(184,821)	2,256,627
Վարկային քարտեր	426,411	(7,132)	419,279	335,263	(9,974)	325,289
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	130,094	(796)	129,298	2,618,459	(16,312)	2,602,147
	19,434,821	(1,403,406)	18,031,415	17,053,669	(400,903)	16,652,766
Առևտրային վարկեր						
Առևտուր	19,233,313	(586,593)	18,646,720	14,345,704	(319,655)	14,026,049
Արդյունաբերություն	45,884,356	(3,704,208)	42,180,148	32,553,479	(775,779)	31,777,700
Գյուղատնտեսություն	13,032,676	(290,892)	12,741,784	10,832,540	(270,499)	10,562,041
Շինարարություն	16,072,482	(91,440)	15,981,042	10,382,582	(65,149)	10,317,433
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	1,669,336	(31,873)	1,637,463	582,406	(12,018)	570,388
Այլ	14,407,496	(127,844)	14,279,652	12,922,404	(216,860)	12,705,544
	110,299,659	(4,832,850)	105,466,809	81,619,115	(1,659,960)	79,959,155
Ընդամենը	129,734,480	(6,236,256)	123,498,224	98,672,784	(2,060,863)	96,611,921

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել վարկային պարտավորվածության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 1,121,596 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 492,214 հազար դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամով վարկերի համար 10.75% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11.77%) և ԱՄՆ դոլարով, Եվրոյով և Ռուբլիով վարկերի համար 7.87% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8.59%):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի էական կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 43,591,440 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 33.6%-ը) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապված անձանց (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 42,108,899 հազար դրամ կամ 42.6 %)՝

տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (տես՝ ծանոթագրություն 32): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 798,142 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,053,196 հազար դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ փոխառու և կապակցված կողմերի խումբ, որոնց վարկի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: Այս վարկերի համախառն արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 12,580,695 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18,598,822 հազար դրամ, համախառն վարկային պորտֆել, որը տրամադրվել է երկու փոխառուներին և կապակցված կողմերի խմբին):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ

2020	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	230,218	161,624	9,061	400,903
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	5,131	(5,131)	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(5,841)	5,841	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(259)	(108,846)	109,105	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	19,015	95,382	706,773	821,170
Նոր տրամադրված վարկեր	259,550	9,540	-	269,090
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(87,757)	(87,757)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	507,814	158,410	737,182	1,403,406

Հազար ՀՀ դրամ

2020

	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	853,604	770,268	36,088	1,659,960
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	16,977	(16,977)	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(26,590)	26,590	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(3,689)	(291,873)	295,562	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(66,401)	(65,125)	2,053,714	1,922,188
Նոր տրամադրված վարկեր	1,034,776	169,212	1,265,338	2,469,326
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,218,624)	(1,218,624)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,808,677	592,095	2,432,078	4,832,850

ազար ՀՀ դրամ

2019

	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	87,876	177,502	24,885	290,263
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	42,944	(42,944)	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(2,372)	21,523	(19,151)	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(243)	(7,596)	7,839	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(43,828)	6,153	538,298	500,623
Նոր տրամադրված վարկեր	145,841	6,986	-	152,827
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(542,810)	(542,810)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	230,218	161,624	9,061	400,903

Հազար ՀՀ դրամ				2019
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	715,265	567,633	47,422	1,330,320
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	295,404	(295,404)	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	(4,646)	4,646	-	-
- փոխանցում ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	(3,157)	(10,329)	13,486	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(753,753)	(236,833)	(624,882)	(1,615,468)
Նոր տրամադրված վարկեր	604,491	740,555	1,857	1,346,903
Զուտ վերականգնում տարվա ընթացքում	-	-	598,205	598,205
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	853,604	770,268	36,088	1,659,960

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նոր տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը 56,214,804 հազար դրամ էր (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 56,813,690 հազար դրամ):

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի եւ տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 36.1.2 ծանոթագրությունում:

Բանկն ընդունել է արժեթղթեր՝ որպես գրավ առևտրային վարկերի համար, որոնք թույլատրվում են վաճառել կամ վերագրավադնել: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**		**31 դեկտեմբերի** 2019**թ.**	
	Գրավի իրական արժեքը	**Վարկի հաշվեկշռային արժեք**	**Գրավի իրական արժեքը**	**Վարկի հաշվեկշռային արժեք**
ՀՀ պետական պարտատոմսեր	119,576	114,406	2,647,911	2,618,459
Արտարժույթով կորպորատիվ բաժնետոմսեր	25,769	15,688	-	-
Ընդամենը գրավադրված ակտիվներ և հետգնման պայմանագրերով տրամադրված վարկեր	145,345	130,094	2,647,911	2,618,459

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ, դեբիտորական պարտքեր՝		
Մինչև 1 տարի	424,986	144,709
Մինչև 1 տարի և 5 տարուց ավելի	1,426,844	529,525
5 տարուց ավելի	502,846	110,082
	2,354,676	784,316
Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ապագա ֆինանսական եկամուտ	(685,340)	(201,910)
Պահուստ	(31,873)	(12,018)
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ	1,637,463	570,388

Ֆինանսական վարձակալության գծով ենթադրվող տոկոսադրույքը կազմում է 12.62% (2019թ.՝ 11.57%):

Ինչպես նշված է 33 ծանոթագրությունում, 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի ժամկետային վերլուծությունը ներկայացված է 35 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 36 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է 32 ծանոթագրությունում:

19 Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2019թ.**
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	63,265,237	60,772,660
Արժեզրկումից պահուստներ	(200,532)	(200,249)
Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	63,064,705	60,572,411
Հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով ՀՀ պետական պարտատոմսեր	-	1,515,274
Արժեզրկումից պահուստներ	-	(4,087)
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	-	1,511,187

Ամորտիզացված արժեքով չափվող, ինչպես նաև հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2020	2019
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	**12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ. հունվարի 1-ի դրությամբ	204,336	60,227
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(3,804)	144,109
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	200,532	204,336

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2019թ.**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր- ՀՀ պետական պարտատոմսեր	67,642,663	60,821,335
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր- կորպորատիվ պարտատոմսեր	10,078,161	6,598,488
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր- բաժնային ներդրումներ	64,150	67,675
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	77,784,974	67,487,498
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ	80,530,321	24,947,393

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ինչպես նաև հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2020	2019
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	**12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ**
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	353,580	115,016
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	250,006	238,564
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	603,586	353,580

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանզի իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**		**31 դեկտեմբերի** 2019**թ.**	
	%	**Ժամկետ**	%	**Ժամկետ**
ՀՀ պետական պարտատոմսեր	7.12-16.52	2022-2050	7.12-16.62	2021-2047
ՀՀ պետական պարտատոմսեր արտարժույթային	3.84-6.86	2025-2029	3.84-6.63	2025-2029
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	2.25-12.50	2021-2025	4.33-12.50	2020-2022

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**		**31 դեկտեմբերի** 2019**թ.**	
	%	**Ժամկետ**	%	**Ժամկետ**
ՀՀ պետական պարտատոմսեր	8.00-10.69	2025-2047	10.63-10.69	2047

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով այլ բանկերում, Բանկի դեֆոլտի բացակայության դեպքում գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով, բայց գործընկերոջ կողմից պայմանագրի ժամկետի ավարտին արժեթղթերը հետ վերադարձնելու պայմանով: Բանկը սահմանել է, որ պահպանում է այդ արժեթղթերի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերն ու հատույցները և հետևաբար, չի ապաճանաչում դրանք: Որպես պարտավորությունների ապահովություն գրավադրված ֆինանսական ակտիվների ընդհանուր գումարը, ներառյալ վերոնշյալ գումարները, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է

80,530,321 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 26,462,667 հազար դրամ): Տե՛ս ծանոթագրություններ 24, 25:

20 Հիմնական միջոցներ

	Շենքեր	Կապիտալ ներդրումներով վարձակալված հիմանական միջոցներում	Սարքա-վորումներ	Համակար-գիչներ և կապի միջոցներ	Գրասե-նյակային սարքա-վորում	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ Շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	2,016,722	45,395	244,279	124,115	143,947	-	2,574,458
ՖՀՄՄ 16-ի ներդրման ազդեցությունը (ծանոթ. 6)	-	-	-	-	-	130,759	130,759
Ավելացում	881	-	31,906	132	9,990	-	42,909
Օտարում	-	-	(5,903)	-	(1,628)	-	(7,531)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,017,603	45,395	270,282	124,247	152,309	130,759	2,740,595
Ավելացում	-	13,670	46,286	-	13,889	43,006	116,851
Օտարում	-	-	(5,579)	-	(13,247)	-	(18,826)
Արժեզրկման ծախս	(196,341)	-	-	-	-	-	(196,341)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,821,262	59,065	310,989	124,247	152,951	173,765	2,642,279
Կուտակված մաշվածություն							
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	227,250	13,199	164,777	70,004	112,951	-	588,181
Տարվա ծախս	84,394	6,786	25,217	14,462	10,337	29,033	170,229
Օտարում	-	-	(5,903)	-	(1,628)	-	(7,531)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	311,644	19,985	184,091	84,466	121,660	29,033	750,879
Տարվա ծախս	84,564	9,087	27,915	8,040	10,144	36,842	176,592
Օտարում	-	-	(5,579)	-	(13,247)	-	(18,826)
Արժեզրկման ծախս	(26,546)	-	-	-	-	-	(26,546)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	369,662	29,072	206,427	92,506	118,557	65,875	882,099
Հաշվեկշիռային արժեք							
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,705,959	25,410	86,191	39,781	30,649	101,726	1,989,716
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,451,600	29,993	104,562	31,741	34,394	107,890	1,760,180

Ակտիվների վերագնահատում

Բանկի շենքի վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները: Իրական արժեքով շենքի գնահատման համար Ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողի կողմից ներկայացված արդյունքները:

Հիմնական միջոցների իրական արժեքի հիերարխիայի համար տես ծանոթագրություն 33.3-ը:

Բանկի ղեկավարության գնահատմամբ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց իրական արժեքից:

Եթե վերագնահատված հիմնական միջոցները՝ շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի մոդելի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքները կունենային հետևյալ տեսքը՝

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2019թ.**
Սկզբնական արժեք	748,647	748,647
Կուտակված մաշվածություն	(234,992)	(210,037)
Հաշվեկշռային արժեք	513,655	538,610

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի համար: Յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այլ պարտավորություններ տողում (տե՛ս ծանոթագրություն 29):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 261,950 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 202,643 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Պայմանագրային պարտավորություններ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը նախնական պայմանագիր ունի նոր գրասենյակային շենք ձեռք բերելու համար, նոր մասնաշենքի պայմանագրային գումարը կազմում է 1,500,000 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես): 2020թ. Բանկն արդեն որպես կանխավճար վճարել է 1,030,000 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 500,000 հազար դրամ (ծանոթ. 23): Բանկի ղեկավարությունը հատկացրել է

անհրաժեշտ ռեսուրսներ այս պարտավորության մարման համար: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ հետագա զուտ եկամուտները և ֆինանսավորումը կբավարարեն վճարելու այս և նմանատիպ այլ պարտավորությունները:

21 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Արտոնագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	97,087	67,738	164,825
Ավելացում	5,367	3,562	8,929
Օտարում	(2,153)	(1,737)	(3,890)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	100,301	69,563	169,864
Ավելացում	29,192	11,851	41,043
Օտարում	(12,160)	(1,504)	(13,664)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	117,333	79,910	197,243
Կուտակված ամորտիզացիա			
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	80,222	13,126	93,348
Մասհանումներ	7,782	8,470	16,252
Օտարում	(2,152)	(1,737)	(3,889)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	85,852	19,859	105,711
Մասհանումներ	12,826	9,174	22,000
Օտարում	(12,160)	(1,504)	(13,664)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	86,518	27,529	114,047
Հաշվեկշռային արժեք			
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,449	49,704	64,153
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,815	52,381	83,196

Պայմանագրային պարտավորություններ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի որևէ պայմանագրային պարտավորություն (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

Ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ:

22 Բռնագանձված ակտիվներ

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում ձեռք բերված ոչ

ֆինանսական ակտիվների մանրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Անշարժ գույք	1,910,001	805,035
Այլ ակտիվներ	356,869	356,869
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	2,266,870	1,161,904

23 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	215,989	98,143
Այլ ֆինանսական ակտիվներ	8,489	5,248
	224,478	103,391
Արժեզրկումից պահուստ	-	(3,412)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	224,478	99,979
Կանխավճարներ	1,127,007	1,075,199
Ոսկու ձուլակտորներ	834,280	114,016
Հաշվեգրված ծախսեր	81,753	101,326
Պահեստ	12,144	9,048
Այլ ակտիվներ	8,890	2,677
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	2,064,074	1,302,266
Ընդամենը այլ ակտիվներ	2,288,552	1,402,245

Կանխավճարները ներառում են Բանկի կողմից կապակցված կողմին կատարված 1,030,000 հազար դրամի չափով կանխավճարները (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 500,000 հազար դրամ), որպես Բանկի ընդհանուր 1,500,000 հազար դրամ արժեքով նոր մասնաշենքի կառուցման երաշխիք (ծանոթ.՝ 20):

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2020	2019
	Ակնկալվող պարտքային կորուստներ	**Ակնկալվող պարտքային կորուստներ**
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	3,412	11,503
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	1,524	(7,141)
Զուտ դուրսգրում	(4,936)	(950)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	3,412

24 Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2019թ.**
Հետգնման պայմանագրերով վարկեր	49,014,600	-
Վարկեր «Գերմանա-Հայկական հիմնադրամ»-ից	6,908,636	3,412,007
	55,923,236	3,412,007

«Գերմանա-Հայկական հիմնադրամ»-ից վարկերը ներգրավվել են «Վերականգնվող էներգիայի զարգացում» և «ՀՀ ՓՄՁ-ների Վարկավորում» վարկային ծրագրերի շրջանակում: Այս վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը 5.90% է (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5.98%): Հետգնման պայմանագրերով վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը 5.90% է:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2019թ.՝ ոչինչ):

25 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի 2020թ.**	**31 դեկտեմբերի 2019թ.**
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	17,814,397	15,748,747
Վարկեր ՀՀ ֆինանսական կազմակերպություններից	5,633,386	2,373,648
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	3,015,353	5,162,563
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	900,337	814,285
Ակրեդիտիվ	1,141,872	1,058,545
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	23,534	23,987
Հետգնման պայմանագրերով վարկեր	22,280,410	22,543,366
Այլ պարտավորություններ	14,103	9,126
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	50,823,392	47,734,267

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկերը ներառում են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից, responsAibility SICAV (Lux) և responsAibility Միկրո և ՓՄՁ ֆինանսավորման ֆոնդերից ստացված վարկերը:

Ֆինանսական կազմակերպություններից բոլոր ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Ֆինանսական կազմակերպություններից բոլոր վարկերն ունեն հաստատուն և լողացող տոկոսադրույքներ:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 6.81% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6.97%) 3.43% ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4.55%) 3.19%՝ Եվրոյով պարտավորությունների (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2.39%) և 6.7%՝ ռուբլիով պարտավորությունների համար:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ ընդամենը երկու ֆինանսական կազմակերպություն (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10% -ը: Այս վարկերի և ավանդների համախառն արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 34,520,267 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 28,685,212 հազար դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2019թ.՝ նույնպես):

26 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
ՀՀ Կառավարություն		
Այլ պարտավորություններ	20,000	20,000
	20,000	20,000
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	13,596,404	14,519,266
Ժամկետային ավանդներ	82,215,419	71,061,788
	95,811,823	85,581,054
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/ցպահանջ հաշիվներ	13,857,381	13,645,105
Ժամկետային ավանդներ	25,011,017	21,594,227
	38,868,398	35,239,332
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	134,700,221	120,840,386

Վարկերը և ավադները ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

ՀՀ կառավարությունից ստացված վարկերը իրենցից ներկայացնում են «Տնտեսության կայունության վարկավորման» ծրագրի շրջանակներում ստացված միջոցները:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների ընթացիկ և ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների գծով համապատասխանաբար

14,106,500 հազար դրամ գումարով (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,713,755 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի փոխկապակցված հաճախորդների երկու խումբ (ներառյալ կապակցված անձինք, ծանոթ. 32) (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10% -ը: Այս մնացորդների համախառն արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 104,963,288 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 97,624,271 հազար դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 10.95% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11.46%) ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար 4.85% և Եվրոյով պարտավորությունների համար 3.96% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,92% և 2.57%)

27 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Ոչ ընթացիկ պարտատոմսեր	64,911,905	32,489,020
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	64,911,905	32,489,020

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս (2019թ.՝ ոչինչ):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի փոխկապակցված հաճախորդների երեք խումբ (ներառյալ կապակցված անձինք, ծանոթ. 32) (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մեկ), որոնց պարտատոմսերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10% -ը: Այս մնացորդների համախառն արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 46,395,209 հազար դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 17,449,085 հազար դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Պարտատոմսի տեսակը	Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Անվանական արժեք	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
AMSWISB26ER6	15.06.17	AMD	50,000	40,000	12.75	15.06.2021	2,000,000,000
AMSWISB27ER4	24.05.18	AMD	50,000	120,000	11.50	24.05.2023	6,000,000,000
AMSWISB25ER8	15.06.17	EUR	100	100,000	5.00	15.06.2023	10,000,000
AMSWISB24ER1	15.06.17	USD	100	100,000	6.75	15.06.2024	10,000,000
AMSWISB29ER0	22.11.18	USD	100	100,000	6.00	22.11.2024	10,000,000
AMSWISB28ER2	24.05.18	USD	100	60,000	6.50	24.05.2025	6,000,000
AMSWISB2AER6	02.05.19	USD	100	50,000	6.50	02.05.2025	5,000,000
AMSWISB2BER4	02.05.19	EUR	100	30,000	4.00	02.05.2023	3,000,000
AMSWISB2CER2	01.06.20	AMD	50,000	200,000	9.00	01.06.2025	10,000,000,000
AMSWISB2DER0	01.06.20	USD	100	100,000	6.00	01.06.2026	10,000,000
AMSWISB2EER8	01.06.20	EUR	100	100,000	3.50	01.06.2025	10,000,000
AMSWISB2FER5	28.09.20	AMD	50,000	200,000	8.50	28.09.2026	10,000,000,000

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2019թ.՝ ոչինչ):

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը թողարկված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

28 Ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Իրավաբանական անձանց կողմից ստացված ստորադաս փոխառություններ	13,826,587	13,353,624
Ընդամենը ստորադաս փոխառություն	13,826,587	13,353,624

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկային համաձայնագիր, որը Բանկի անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2019թ.՝ ոչինչ):

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է Բանկի կապակցված կողմից ստացված գումարները (տես՝ ծանոթագրություն 32):

Իրավաբանական անձանց կողմից տրամադրված ստորադաս փոխառությունների մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

			31 դեկտեմբերի 2020թ.	
Տրամադրման տարի	Արժույթ	%	Մարման ժամկետ, տարի	Գումար, հազար ՀՀ դրամ
2015թ.	ԱՄՆ դոլար	3	9	2,613,809
2016թ.	ԱՄՆ դոլար	8	7	2,624,977
2016թ.	ՀՀ դրամ	14	7	8,064,438
2016թ.	ԱՄՆ դոլար	3	7	523,363
Ընդամենը ստորադաս փոխառություններ				13,826,587

29 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
Վճարվելիք գումարներ	228,730	284,879
Վարձակալության գծով պարտավորություններ	126,176	107,755
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	382,738	342,998
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	737,644	735,632
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	279,567	224,911
Ստացված կանխավճարներ	30,034	38,107
Պահուստներ*	29,195	29,794
Այլ	62,803	3,518
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	401,599	296,330
Ընդամենը այլ պարտավորություններ	1,139,243	1,031,962

*Պահուստները ստեղծվել են ֆինանսական երաշխիքների գծով կորուստներից: Վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերաբերյալ վերլուծությունը տես 31 ծանոթագրությունում:

Վարձակալության գծով պարտավորություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի համար: Յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այլ պարտավորություններ տողում (տե՛ս ծանոթագրություն 20):

Գույքի վարձակալությունները հիմնականում ունեն սկսած 0.6 տարուց մինչև 2.6 տարի վարձակալության ժամկետ: Վարձակալության վճարները հիմնականում ֆիքսված են:

Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	31 դեկտեմբերի 2019թ.
ՖՀՄՍ 16-ի կիրառման ազդեցությունը (հունվարի 1-ի դրությամբ)	107,755	130,759
Ավելացում	43,006	-
Տոկոսի կուտակում	20,865	13,476
Վճարումներ	(45,450)	(36,480)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	126,176	107,755

2020թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 11.1% (2019թ.՝ 11.2%):

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալաության գծով չզեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 35-ում:

30 Սեփական կապիտալ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 10,000,200 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 16,667 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 600 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով:

2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Էյչ-Վի-Էս Հոլդինգ Ս.ա.ր.լ.	8,752,800	87.53
«Բելեգինգսմաչեփիջ Ջոնգո» ՍՊԸ	1,247,400	12.47
	10,000,200	100

2020թ. Բանկը ավելացրել է բաժնետիրական կապիտալը 1,247,400 հազար ՀՀ դրամ գումարով:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

31 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել: Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Հետևաբար Բանկի կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**	**31 դեկտեմբերի** 2019**թ.**
Վարկային գծերի չօգտագործված մաս	4,144,978	3,857,459
Տրամադրված երաշխիքներ	4,123,067	1,829,400
Ֆակտորինգային սահմանաչափի չօգտագործված մաս	4,691,236	3,593,149
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	12,959,281	9,280,008

Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև: Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են այլ պարտավորություններում (տես ծանոթագրություն 18):

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**	**31 դեկտեմբերի** 2019**թ.**
	12-**ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ**	12-**ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ**
Ֆինանսական երաշխիքներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	29,794	5,749
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(599)	24,045
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,195	29,794

Կապիտալ բնույթի պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է 20, 21 ծանոթագրություններում:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող է համարվում շվեյցարացի գործարար Վարդան Սիրմաքեսը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2020		2019	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	**Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր**	**Բաժնետերեր և կապակցված կողմեր**	**Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր**
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Հունվարի 1-ի դրությամբ	2,004,164	-	-	-
Տարվա ընթացքում ստացված	546,838	-	4,082,332	-
Տարվա ընթացքում վճարված	(2,481,002)	-	(2,078,168)	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքների մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	70,000		2,004,164	
Արժեզրկումից պահուստ	-		(380)	
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,000	-	2,003,784	-

Հազար ՀՀ դրամ	2020		2019	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	**Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր**	**Բաժնետերեր և կապակցված կողմեր**	**Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր**
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում տրամադրված	2,162,452	-	-	-
Տարվա ընթացքում մարված	(157,370)	-	-	-
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	2,005,082		-	
Արժեզրկումից պահուստ	(18,306)		-	
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,986,776	-	-	-
Հաճախորդներին տրված վարկեր				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	9,586,904	768,122	7,184,937	455,371
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	7,055,700	601,587	12,309,967	504,659
Տարվա ընթացքում մարված վարկեր	(4,061,909)	(270,234)	(9,908,000)	(191,908)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	12,580,695	1,099,475	9,586,904	768,122
Արժեզրկումից պահուստ	(289,643)	(183,437)	(356,702)	(44,423)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,291,052	916,038	9,230,202	723,699
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	8,246	-	-	-
Տարվա ընթացքում ստացված	226,908	-	2,642,656	-
Տարվա ընթացքում վճարված	(225,606)	-	(2,634,410)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,548	-	8,246	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդներ 1 հունվարի դրությամբ	67,653,561	221,567	52,224,433	134,235
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	109,995,187	13,205,772	76,723,876	8,030,350
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(93,418,295)	(13,187,021)	(61,294,748)	(7,943,018)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	84,230,453	240,318	67,653,561	221,567

Հազար ՀՀ դրամ	2020		2019	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	**Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր**	**Բաժնետերեր և կապակցված կողմեր**	**Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր**
Թողարկված պարտատոմսեր				
Հունվարի 1-ի դրությամբ	12,575,995	683,304	11,980,249	521,321
Տարվա ընթացքում ստացված	25,663,238	633,985	3,253,743	323,847
Տարվա ընթացքում վճարված	(4,353,851)	(183,605)	(2,657,997)	(161,865)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	33,885,382	1,133,684	12,575,995	683,304
Սփորադաս փոխառություն				
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,826,587	-	13,353,624	-
Չօգտագործված վարկային պարտավորվածություններ	128,828	34,283	172,053	20,491
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով	-	-	4,164	-
Տոկոսային եկամուտ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	157,527	-	-	-
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրամադրված վարկերի գծով	821,007	60,917	667,833	44,050
Տոկոսային ծախսեր հաճախորդների նկատմամբ պարտավորությունների գծով	(7,824,969)	(6,017)	(5,806,536)	(4,173)
Տոկոսային ծախսեր թողարկված պարտատոմսերի գծով	(1,703,607)	(63,733)	(1,005,526)	(47,297)
Տոկոսային ծախսեր ստորադաս փոխառության գծով	(1,410,110)	-	(1,463,475)	-
Վարկային կորուստների արժեզրկման (ծախս)/ հակադարձում	49,133	(139,014)	(284,853)	(39,869)

Բաժնետերերին, ղեկավար անձնակազմին և կապակցված անձանց տրամադրված վարկերը վճարման են ենթակա 2021-2034թթ. ընկած ժամանակահատվածում և դրանց միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 7.22% (2019թ.՝ 7.18%):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 62.5% (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 55.9%) կազմում են բաժնետիրոջից (Բանկի վերջնական վերահսկող Վարդան Սիրմաքեսից) և նրա հետ կապակցված անձանցից ներգրաված միջոցները, որի գծով վճարված տարեկան տոկոսային ծախսերը կազմում են ընդհանուր տոկոսային ծախսերի 74.3% (2019թ.՝ 68.7%):

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Աշխատավարձ և պարգևատրումներ	624,376	376,907
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	624,376	376,907

33 Իրական արժեքի չափումը

Բանկի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ անշարժ գույքի և բռնագանձված ակտիվների գնահատման մեջ: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).
- Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

33.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը ո՞ր դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
31 դեկտեմբերի 2020թ.					
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	27,746,794	-	27,746,794	27,746,794
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	6,824,674	-	6,824,674	6,824,674
Հաճախորդներին տրված վարկեր	-	123,498,224	-	123,498,224	123,498,224
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր (ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր)	-	76,751,222	-	76,751,222	63,064,705
Այլ ֆինանսական ակտիվներ	-	224,478	-	224,478	224,478
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	-	55,923,236	-	55,923,236	55,923,236
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	50,823,392	-	50,823,392	50,823,392
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	134,700,221	-	134,700,221	134,700,221
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	65,993,662	-	65,993,662	64,911,905
Ստորադաս փոխառություն	-	13,826,587	-	13,826,587	13,826,587
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	737,644	-	737,644	737,644

Հազար ՀՀ դրամ

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
31 դեկտեմբերի 2019թ.					
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	24,328,959	-	24,328,959	24,328,959
Պահանջներ ֆինանսական կազմեկեպությունների նկատմամբ	-	2,072,086	-	2,072,086	2,072,086
Հաճախորդներին տրված վարկեր	-	96,605,703	-	96,605,703	96,611,921
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր (ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր)	-	70,669,202	-	70,669,202	62,083,598
Այլ ֆինանսական ակտիվներ	-	99,979	-	99,979	99,979

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	-	3,412,007	-	3,412,007	3,412,007
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	47,734,267	-	47,734,267	47,734,267
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	120,840,386	-	120,840,386	120,840,386
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	32,489,020	-	32,489,020	32,489,020
Ստորադաս փոխառություն	-	13,353,624	-	13,353,624	13,353,624
Այլ պարտավորություններ	-	735,632	-	735,632	735,632

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի պարտքային ռիսկից և տատանվում են 4% մինչև 18% տարեկան (2019թ.՝ 4% մինչև 21% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

33.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2020թ.
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ				
Պարտատոմսեր	8,872,948	149,378,197	-	158,251,145
Բաժնային ներդրումմներ	28,075	36,075	-	64,150
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	8,980	-	8,980
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	(168,784)	-	(168,784)
Ընդամենը	8,901,023	149,254,468	-	158,155,491

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2019թ.
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ				
Պարտատոմսեր	5,356,507	87,010,709	-	92,367,216
Բաժնային ներդրումմներ	35,957	31,718	-	67,675
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	(969)	-	(969)
Ընդամենը	5,392,464	87,041,458	-	92,433,922

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Գնանշվող ներդրումներ

Բոլոր ցուցակված արժեթղթերը և պարտատոմսերը թողարկվել են Հայաստանում հրապարակայնորեն գնանշվող ընկերությունների կողմից:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, արպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Բանկի կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային ֆորվարդային պայմանագրերից:

33.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ				**31 դեկտեմբերի** 2020**թ.**
	Մակարդակ 1	**Մակարդակ** 2	**Մակարդակ** 3	**Ընդամենը**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Շենքեր	-	*1,821,262*	-	*1,821,262*
Ընդամենը	-	1,821,262	-	1,821,262

Հազար ՀՀ դրամ				**31 դեկտեմբերի** 2019**թ.**
	Մակարդակ 1	**Մակարդակ 2**	**Մակարդակ 3**	**Ընդամենը**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Շենքեր	-	*2,017,603*	-	*2,017,603*
Ընդամենը	-	2,017,603	-	2,017,603

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են տնօրենների խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է կիրառելով համեմատական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հողին

հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

Շենքը վերագնահատվել է 2016թ փետրվարի 8-ին՝ կիրառելով շուկայական, եկամտային և ծախսային մեթոդների համադրություն:

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա:

Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվների շարժը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2020	2019
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Հունվարի 1-ի դրությամբ	2,017,603	2,016,722
Առք	-	881
Արժեզրկում	(196,341)	-
Զուտ իրական արժեք դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,821,262	2,017,603

34 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման համաձայնագրեր (Ծանոթ.17, 18)	1,141,152	-	1,141,152	-	1,141,152	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերով վարկեր (Ծանոթ. 24, 25)	71,295,010	-	71,295,010	(80,530,321)	-	(9,235,311)

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2019թ.					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման համաձայնագրեր (Ծանոթ. 17, 18)	2,898,912	-	2,898,912	-	2,898,912	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերով վարկեր (Ծանոթ. 25)	22,543,366	-	22,543,366	(26,462,667)	-	(3,919,301)

35 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 36.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020**թ.**						
	Ցպահանջ և մինչև 1 **ամիս**	1-**ից մինչև** 12 **ամիս**	**Մինչև** 12 **ամիս**, **ենթահաման-րագումար**	1-**ից** 5 **տարի**	5 **տարուց ավելի**	12 **ամսից ավելի**, **ենթահաման-րագումար**	**Ընդամենը**
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,746,794	-	*27,746,794*	-	-	-	27,746,794
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	14	171	*185*	712	8,083	*8,795*	8,980
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,984,131	4,444,545	*6,428,676*	395,998	-	*395,998*	6,824,674
Հաճախորդներին տրված վարկեր	3,905,883	39,076,774	*42,982,657*	59,104,405	21,411,162	*80,515,567*	123,498,224
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	65,310	6,874,070	*6,939,380*	7,944,726	62,900,868	*70,845,594*	77,784,974
- Ամորտիզացված արժեքով չափ-վող ներդրումային արժեթղթեր	-	2,054,480	*2,054,480*	996,580	60,013,645	*61,010,225*	63,064,705
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	75,407,917	5,122,404	*80,530,321*	-	-	-	80,530,321
Այլ ֆինանսական ակտիվներ	224,478	-	*224,478*	-	-	-	224,478
	109,334,527	57,572,444	*166,906,971*	68,442,421	144,333,758	*212,776,179*	379,683,150

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2020**թ.**

	Ցպահանջ և մինչև 1 **ամիս**	1-**ից մինչև** 12 **ամիս**	**Մինչև** 12 **ամիս, ենթահանրագումար**	1-**ից** 5 **տարի**	5 **տարուց ավելի**	12 **ամսից ավելի, ենթահանրագումար**	**Ընդամենը**
Պարտավորություններ							
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	49,604,562	632,828	*50,237,390*	3,880,252	1,805,594	*5,685,846*	55,923,236
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	68,651	8,008	*76,659*	33,354	58,771	*92,125*	168,784
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20,878,095	21,925,921	*42,804,016*	7,550,087	469,289	*8,019,376*	50,823,392
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	41,446,841	21,079,217	*62,526,058*	68,588,321	3,585,842	*72,174,163*	134,700,221
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	2,740,185	*2,740,185*	46,945,820	15,225,900	*62,171,720*	64,911,905
Ստորադաս փոխառություն	78,097	-	*78,097*	13,748,490	-	*13,748,490*	13,826,587
Վարձակալության գծով պարտավորություններ	3,645	42,238	*45,883*	80,293	-	*80,293*	126,176
Այլ ֆինանսական պարտավորություններ (բացառությամբ վարձակալության գծով պարտավորությունների)	611,468	-	*611,468*	-	-	-	611,468
	112,691,359	46,428,397	*159,119,756*	140,826,617	21,145,396	*161,972,013*	321,091,769
Զուտ Դիրք	(3,356,832)	11,144,047	7,787,215	(72,384,196)	123,188,362	*50,804,166*	58,591,381
Կուտակված ճեղքվածք	(3,356,832)	7,787,215		(64,596,981)	58,591,381		

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2019**թ.**

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	**Մինչև 12 ամիս, ենթահան-րագումար**	1-ից 5 տարի	**5 տարուց ավելի**	**12 ամսից ավելի, ենթահան-րագումար**	**Ընդամենը**
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	24,328,959	-	*24,328,959*	-	-	-	24,328,959
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,845,186	162,994	*2,008,180*	63,906	-	*63,906*	2,072,086
Հաճախորդներին տրված վարկեր	3,465,151	25,363,454	*28,828,605*	53,181,189	14,602,127	*67,783,316*	96,611,921
Ներդրումային արժեթղթեր							
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	24,037	320,752	*344,789*	7,203,456	59,939,253	*67,142,709*	67,487,498
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	1,811,203	*1,811,203*	-	58,761,208	*58,761,208*	60,572,411
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	20,489,632	5,968,948	*26,458,580*	-	-	-	26,458,580
Այլ ֆինանսական ակտիվներ	99,979	-	*99,979*	-	-	-	99,979
	50,252,944	33,627,351	*83,880,295*	60,448,551	133,302,588	*193,751,139*	277,631,434
Պարտավորություններ							
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	302,714	270,898	*573,612*	2,006,735	831,660	*2,838,395*	3,412,007
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	969	*969*	-	-	-	969
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	21,875,201	16,274,798	*38,149,999*	9,077,800	506,468	*9,584,268*	47,734,267
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	28,990,383	14,051,517	*43,041,900*	58,364,721	19,433,765	*77,798,486*	120,840,386
Թողարկված պարտքային արժեթղթեր	36,864	2,597,076	*2,633,940*	24,578,380	5,276,700	*29,855,080*	32,489,020
Ստորադաս փոխառություն	76,924	-	*76,924*	13,276,700	-	*13,276,700*	13,353,624
Վարձակալության գծով պարտավորություններ	2,012	23,633	*25,645*	82,110	-	*82,110*	107,755
Այլ ֆինանսական պարտավորություններ (բացառությամբ վարձակալության գծով պարտավորությունների)	552,873	75,004	*627,877*	-	-	-	627,877
	51,836,971	33,293,895	*85,130,866*	107,386,446	26,048,593	*133,435,039*	218,565,905
Զուտ դիրք	(1,584,027)	333,456	*(1,250,571)*	(46,937,895)	107,253,995	*60,316,100*	59,065,529
Կուտակված ճեղքվածք	(1,584,027)	(1,250,571)		(48,188,466)	59,065,529		

36 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Բանկի Խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Տնօրինություն

Տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեն իրականացնում է վարկային ռիսկի ընդհանուր կառավարումը և վերահսկողությունը, հաստատում է վարկեր իրեն հատկացված սահմանաչափերի շրջանակներում:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է հիմնականում ներդրումային ռիսկերի կառավարման սկզբունքների, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի մշակման և կիրառման համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը գնահատում է ընթացակարգերի ամբողջականությունը, Բանկի գործունեության համապատասխանությունը գործող ընթացակարգերին, ինչպես նաև Բանկի կողմից իրականացվող գործառնությունների արդյունավետությունը և դրանց կատարելագործման հնարավորությունները: Ներքին աուդիտի ստորաբաժանումը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է Բանկի

ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Բանկի Տնօրինությանն ու Խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է ղեկավարությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ կրեդիտային ռիսկի համապարփակ չափի, կանխատեսումային կրեդիտային ցուցանիշների, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, ռիսկի աստիճանի փոփոխության և այլ ցուցանիշների վերաբերյալ:

Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ արտարժութային դիրքերի կառավարման համար, ինչպես նաև ձեռք է բերում բանկային ռիսկերի համապարփակ, անշարժ և շարժական գույքի ապահովագրության վկայագրեր:

Բանկն ակտիվ կիրառում է ապահովումը, իր պարտքային ռիսկի նվազեցման համար (հավելյալ տեղեկությունը տե՛ս ստորև):

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

36.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել:

Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորվածություններ: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի ՌԿՎ պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին

36.1.1 Վարկերի որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի գումարները:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 36.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ				**31 դեկտեմբերի** 2020**թ.**
Ներքին վարկանիշեր	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Ստանդարտ	27,746,794	-	-	27,746,794
Համախառն հաշվեկշռային արժեք	27,746,794	-	-	27,746,794
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	27,746,794	-	-	27,746,794
Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	6,884,968	-	-	6,884,968
Համախառն հաշվեկշռային արժեք	6,884,968	-	-	6,884,968
Արժեզրկումից պահուստ	(60,294)	-	-	(60,294)
Զուտ հաշվեկշռային արժեք	6,824,674	-	-	6,824,674
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	17,940,675	-	-	17,940,675
Ստանդարտ	-	666,010	-	666,010
Ոչ ստանդարտ	-	33,522	-	33,522
Չաշխատող	-	-	794,614	794,614
Համախառն հաշվեկշռային արժեք	17,940,675	699,532	794,614	19,434,821
Արժեզրկումից պահուստ	(507,814)	(158,410)	(737,182)	(1,403,406)
Զուտ հաշվեկշռային արժեք	17,432,861	541,122	57,432	18,031,415

Հազար ՀՀ դրամ				**31 դեկտեմբերի** 2020**թ.**
Ներքին վարկանիշեր	**Փուլ 1**	**Փուլ 2**	**Փուլ 3**	**Ընդամենը**
Առևտրային վարկեր				
Բարձր	96,520,169	-	-	96,520,169
Ստանդարտ	-	7,688,754	-	7,688,754
Ոչ ստանդարտ	-	117,993	-	117,993
Չաշխատող	-	-	5,972,743	5,972,743
Համախառն հաշվեկշռային արժեք	96,520,169	7,806,747	5,972,743	110,299,659
Արժեզրկումից պահուստ	(1,808,677)	(592,095)	(2,432,078)	(4,832,850)
Զուտ հաշվեկշռային արժեք	94,711,492	7,214,652	3,540,665	105,466,809
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ	63,265,237	-	-	63,265,237
Համախառն հաշվեկշռային արժեք	63,265,237	-	-	63,265,237
Արժեզրկումից պահուստ	(200,532)	-	-	(200,532)
Զուտ հաշվեկշռային արժեք	63,064,705	-	-	63,064,705
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ	158,251,145	-	-	158,251,145
Հաշվեկշռային արժեք-իրական արժեք	158,251,145	-	-	158,251,145
Զուտ հաշվեկշռային արժեք	(603,586)	-	-	(603,586)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	224,478	-	-	224,478
Համախառն հաշվեկշռային արժեք	224,478	-	-	224,478
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	224,478	-	-	224,478
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Ստանդարտ	12,959,281	-	-	12,959,281
	12,959,281	-	-	12,959,281
Արժեզրկումից պահուստ*	(29,195)	-	-	(29,195)

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2019թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Ստանդարտ	24,334,127	-	-	24,334,127
Համախառն հաշվեկշռային արժեք	24,334,127	-	-	24,334,127
Արժեզրկումից պահուստ	(5,168)	-	-	(5,168)
Զուտ հաշվեկշռային արժեք	24,328,959	-	-	24,328,959
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	2,118,629	-	-	2,118,629
Համախառն հաշվեկշռային արժեք	2,118,629	-	-	2,118,629
Արժեզրկումից պահուստ	(46,543)	-	-	(46,543)
Զուտ հաշվեկշռային արժեք	2,072,086	-	-	2,072,086
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	15,821,815	-	-	15,821,815
Ստանդարտ	-	1,181,180	-	1,181,180
Չաշխատող	-	-	50,674	50,674
Համախառն հաշվեկշռային արժեք	15,821,815	1,181,180	50,674	17,053,669
Արժեզրկումից պահուստ	(230,218)	(161,624)	(9,061)	(400,903)
Զուտ հաշվեկշռային արժեք	15,591,597	1,019,556	41,613	16,652,766
Առևտրային վարկեր				
Բարձր	75,102,887	-	-	75,102,887
Ստանդարտ	-	6,167,837	-	6,167,837
Ոչ ստանդարտ	-	194,909	-	194,909
Չաշխատող	-	-	153,482	153,482
Համախառն հաշվեկշռային արժեք	75,102,887	6,362,746	153,482	81,619,115
Արժեզրկումից պահուստ	(853,604)	(770,268)	(36,088)	(1,659,960)
Զուտ հաշվեկշռային արժեք	74,249,283	5,592,478	117,394	79,959,155
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ	62,287,934	-	-	62,287,934
Համախառն հաշվեկշռային արժեք	62,287,934	-	-	62,287,934
Արժեզրկումից պահուստ	(204,336)	-	-	(204,336)
Զուտ հաշվեկշռային արժեք	62,083,598	-	-	62,083,598

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2019թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները				
Ստանդարտ վարկանիշ	92,367,216	-	-	92,367,216
Հաշվեկշռային արժեք- իրական արժեք	92,367,216	-	-	92,367,216
Արժեզրկումից պահուստ	(353,580)	-	-	(353,580)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	103,391	-	-	103,391
Համախառն հաշվեկշռային արժեք	103,391	-	-	103,391
Արժեզրկումից պահուստ	(3,412)	-	-	(3,412)
Զուտ հաշվեկշռային արժեք	99,979	-	-	99,979
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Ստանդարտ	9,280,008	-	-	9,280,008
	9,280,008	-	-	9,280,008
Արժեզրկումից պահուստ*	(29,794)	-	-	(29,794)

*Վերոնշյալ աղյուսակում վարկային պարտավորվածություններ և տրամադրված երաշխիքներում բացահայտված ակնկալվող պարտքային կորուստների պահուստը վերաբերում է միայն տրամադրված երաշխիքներին: Վարկային պարտավորվածությունների՝ վճարային քարտերի և օվերդրաֆտների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը ներառված է վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստում, քանի որ Բանկը չի կարող վարկային պարտավորվածության բաղադրիչը տարանջատել ֆինանսական գործիքի բաղադրիչից և ակնկալվող պարտքային կորուստները ճանաչել առանձին-առանձին:

36.1.2 Արժեզրկման գնահատում

2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող քաղաքականություն

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում,

երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա դեֆոլտի հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխավորությունների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ յուրաքանչյուր վարկանիշի.

Հազար ՀՀ դրամ		2020	2019
	Վարկանիշ	**12-ամսյա PD –ի միջակայք**	**12-ամսյա PD –ի միջակայք**
Հիփոթեքային և սպառողական վարկեր	Բարձր	0.30-8.87%	3.14-10.04%
	Ստանդարտ	17.94-36.15%	21.87-52.07%
	Ոչ ստանդարտ	17.94-36.15%	21.87-52.07%
	Չաշխատող	98.36-100%	97.86-100%
Վարկեր կոմերցիոն հաճախորդներին	Բարձր	0.75-5.54%	0.25-5.50%
	Ստանդարտ	0.38-83.62%	3.51-85.75%
	Ոչ ստանդարտ	0.38-83.62%	3.51-85.75%
	Չաշխատող	96.64-100%	76.63-100%

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

Միջազգային արտաքին վարկանիշային գործակալության (S&P) վարկանիշ	**Վարկանիշ**	2020 12-**ամսյա PD**	2019 12-**ամսյա PD**
AAA -ից A-	Բարձր	0.001-0.040%	0.001-0.040%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.059-7.207%	0.052-7.480%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	12.834-23.604%	13.385-29.130%
D	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապափակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Դեֆոլտի սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը դեֆոլտի ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Բանկը միջբանկային հաշիվները համարում է դեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ դեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն դեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,

- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ կանխատեսվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,

- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Կանխատեսվող փեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ակնկալվող պարտքային կորուստների վրա հաշվարկելու համար Բանկն օգտագործում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ որպես ելակետային տվյալներ իր մոդելների համար, այդ թվում՝

- ՀՆԱ-ի աճ
- ՀՆԱ (արտահայտված ՀՀ դրամով)
- Ջուտ ընթացիկ արտասահմանյան տրանսֆերտներ
- Գործազրկության մակարդակ
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում
- Առևտրի աճի տեմպ
- Արդյունաբերության աճի տեմպ
- Շինարարության աճի տեմպ
- Գյուղատնտեսության աճի տեմպ
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

36.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Բանկերի ակտիվների մեծ մասը տեղաբաշխված է Հայաստանի Հանրապետությունում:

36.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Բանկը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային

գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**	**31 դեկտեմբերի** 2019**թ.**
Անշարժ գույք	68,598,628	47,695,035
Շարժական գույք	13,634,964	3,770,991
ՀՀ կառավարության երաշխիքներ	10,348,387	10,440,915
Այլ կազմակերպությունների երաշխիքներ	9,990,875	19,661,656
Դրամական միջոցներ	7,437,933	3,906,869
Այլ կազմակերպությունների բաժնետոմսեր և ներդրումային արժեթղթեր	10,265,675	7,285,768
Այլ	9,458,018	5,911,550
Ընդամենը վարկեր (համախառն)	129,734,480	98,672,784

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

36.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ:

36.2.1 Շուկայական ռիսկ՝ Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում

են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով՝ ներառյալ հեջավորման գործիքների ազդեցությունը: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, ներառյալ հեջերի և որպես դրամական միջոցների հոսքերի հեջ բնորոշված սվոպերի ազդեցությունները, 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սվոպի իրացման ժամկետների: Կապիտալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ				2020
Արտարժույթ	**Փոփո-խություններ հիմնական տոկոսա-դրույքներում**	**Տոկոսային եկամուտի զգայունություն**	**Կապիտալի զգայունություն**	**Ընդամենը**
ՀՀ դրամ	+0.5	(15,236)	(5,501,265)	(5,516,501)
ԱՄՆ դոլար	+0.5	(33,924)	(358,883)	(392,807)
Ռուբլի	+0.5	(4,819)	-	(4,819)
ՀՀ դրամ	- 0.5	15,236	5,919,978	5,935,214
ԱՄՆ դոլար	- 0.5	33,924	369,389	403,313
Ռուբլի	- 0.5	4,819	-	4,819

Հազար ՀՀ դրամ				2019
Արտարժույթ	**Փոփո-խություններ հիմնական տոկոսա-դրույքներում**	**Տոկոսային եկամուտի զգայունություն**	**Կապիտալի զգայունություն**	**Ընդամենը**
ՀՀ դրամ	+0.5	(21,370)	(2,785,996)	(2,807,366)
ԱՄՆ դոլար	+0.5	(25,071)	(359,402)	(384,473)
ՀՀ դրամ	- 0.5	21,370	2,984,906	3,006,276
ԱՄՆ դոլար	- 0.5	25,071	371,129	396,200

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքեներում փոփոխությունների հետևանքով: Բանկը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական

կտրվածքով, և հեջավորման ռազամվարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա (կապված արտարժութային սվոպերի և որպես դրամական միջոցների հոսքերի հեջ օգտագործված արտարժույթի ֆորվարդների պայմանագրերի իրական արժեքի փոփոխմամբ և կապիտալի գործիքների հետ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**		**31 դեկտեմբերի** 2019**թ.**	
Արտարժույթ	**Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս**	**Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը**	**Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս**	**Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը**
ՀՀ դրամ	5	266,271	5	(101,953)
Եվրո	3	(23,276)	3	(8,987)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**			
	ՀՀ դրամ	**Ազատ փոխարկելի արժույթ/ թանկարժեք մետաղներ**	**Ոչ փոխարկելի արժույթ**	**Ընդամենը**
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12,354,384	15,116,347	276,063	27,746,794
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,486,180	1,286,376	52,118	6,824,674
Հաճախորդներին տրված վարկեր	40,287,495	81,027,969	2,182,760	123,498,224
Ներդրումային արժեթղթեր				
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	65,705,628	12,079,346	-	77,784,974
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	63,064,705	-	-	63,064,705
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	68,033,281	12,497,040	-	80,530,321
Այլ ակտիվներ	224,478	-	-	224,478
	255,156,151	122,007,078	2,510,941	379,674,170

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ/ թանկարժեք մետաղներ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
		31 դեկտեմբերի 2020**թ.**		
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	55,923,236	-	-	55,923,236
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23,821,829	24,978,730	2,022,833	50,823,392
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	84,017,923	50,191,058	491,240	134,700,221
Թողարկված պարտքային արժեթղթեր	28,567,415	36,344,490	-	64,911,905
Ստորադաս փոխառություն	8,064,438	5,762,149	-	13,826,587
Վարձակալության գծով պարտավորություններ	126,176	-	-	126,176
Այլ պարտավորություններ	592,163	19,305	-	611,468
	201,113,180	117,295,732	2,514,073	320,922,985
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	2,808,844	(2,877,213)	-	(68,369)
Զուտ դիրք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	56,851,815	1,834,133	(3,132)	58,682,816
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին	9,348,462	3,610,819	-	12,959,281
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	172,128,280	103,970,401	1,532,753	277,631,434
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	110,726,921	106,311,395	1,526,620	218,564,936
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	561,147	(562,116)	-	(969)
Զուտ դիրք 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	61,962,506	(2,903,110)	6,133	59,065,529
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2019թ. դեկտեմբերի 31-ին	5,941,225	3,338,783	-	9,280,008

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

36.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 15-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

	Աուդիտ չարված	
	2020, %	2019, %
Ն21- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	52.94	57.83
Ն22- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	533.46	568.53

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 35-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2020**թ.**

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 **ամիս**	1-**5 տարի**	**5 տարուց ավելի**	**Ընդամենը**	**Հաշվեկշռային արժեք**
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	49,611,216	818,916	4,764,846	2,069,451	57,264,429	55,923,236
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20,887,387	22,551,714	8,272,152	532,596	52,243,849	50,823,392
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	41,680,757	23,747,170	77,131,781	3,713,547	146,273,255	134,700,221
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	4,453,435	57,372,851	21,468,670	83,294,956	64,911,905
Ստորադաս փոխառություն	124,822	-	16,928,654	-	17,053,476	13,826,587
Վարձակալության գծով պարտավորություններ	4,552	49,817	81,956	-	136,325	126,176
Այլ ֆինանսական պարտավորություններ (բացառությամբ վարձակալության գծով պարտավորությունները)	611,468	-	-	-	611,468	611,468
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	112,920,202	51,621,052	164,552,240	27,784,264	356,877,758	320,922,985
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոպ պայմանագրեր						
Ներհոսք	2,807,373	1,471	-	-	2,808,844	-
Արտահոսք	(2,875,669)	(1,545)	-	-	(2,877,214)	(68,369)
ՀՀ պետական պարտատոմսերի ֆորվարդ պայմանագրեր						
Արտահոսք	(339)	(7,763)	(32,640)	(51,763)	(92,505)	(100,415)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	9,062,184	2,850,554	1,046,543	-	12,959,281	12,959,281

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	306,269	360,134	2,469,660	963,289	4,099,352	3,412,007
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	21,891,029	16,623,055	10,458,133	736,458	49,708,675	47,734,267
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	28,991,763	14,360,686	69,656,767	26,705,155	139,714,371	120,840,386
Թողարկված պարտքային արժեթղթեր	51,945	3,500,118	30,566,891	6,992,567	41,111,521	32,489,020
Ստորադաս փոխառություն	119,095	1,359,885	16,432,666	-	17,911,646	13,353,624
Վարձակալության գծով պարտավորություններ	3,040	33,440	90,756	-	127,236	107,755
Այլ ֆինանսական պարտավորություններ (բացառությամբ վարձակալության գծով պարտավորությունները)	552,873	75,004	-	-	627,877	627,877
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	51,916,014	36,312,322	129,674,873	35,397,469	253,300,678	218,564,936
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	9,280,008	-	-	-	9,280,008	-

36.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

37 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	2020					
	Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ստորադաս փոխառություն	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	3,412,007	15,748,747	32,489,020	13,353,624	107,755	65,111,153
Դրամային հոսքերից	*3,423,162*	*494,293*	*28,098,352*	-	*(45,450)*	*31,970,357*
Վճարումներ	(776,136)	(10,503,903)	(2,461,565)	-	(45,450)	(13,787,054)
Ստացված գումար	4,199,298	10,998,196	30,559,917	-	-	45,757,411
Ոչ դրամային հոսքերից	*73,467*	*1,571,357*	*4,324,533*	*472,963*	*63,871*	*6,506,191*
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	-	1,571,357	4,008,743	471,780	-	6,051,880
Վարձակալության ճշգրտում	-	-	-	-	43,006	43,006
Հաշվեգրված տոկոս	73,467	-	315,790	1,183	20,865	411,305
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,908,636	17,814,397	64,911,905	13,826,587	126,176	103,587,701

Հազար ՀՀ դրամ

2019

	Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ստորադաս փոխառություն	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	2,653,438	4,732,024	27,173,064	13,398,279	-	47,956,805
ՖՀՄՍ 16-ի ներդրման ազդեցությունը (ծանոթ. 6)	-	-	-	-	130,759	130,759
Դրամային հոսքերից	*742,877*	*10,925,864*	*5,567,520*	*105*	*(36,480)*	*17,199,886*
Վճարումներ	(429,494)	(6,332,572)	(9,392,254)	105	(36,480)	(16,190,695)
Ստացված գումար	1,172,371	17,258,436	14,959,774	-	-	33,390,581
Ոչ դրամային հոսքերից	*15,692*	*90,859*	*(251,564)*	*(44,760)*	*13,476*	*(176,297)*
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	-	(26,581)	(297,939)	(44,760)	-	(369,280)
Հաշվեգրված տոկոս	15,692	117,440	46,375	-	13,476	192,983
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,412,007	15,748,747	32,489,020	13,353,624	107,755	65,111,153

38 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	**31 դեկտեմբերի** 2020**թ.**	**31 դեկտեմբերի** 2019**թ.**
Հիմնական կապիտալ	54,796,362	42,337,304
Լրացուցիչ կապիտալ	15,874,930	12,701,191
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	70,671,292	55,038,495
Ռիսկով կշռված ակտիվներ	413,789,383	275,836,967
Կապիտալի համարժեքության նորմատիվ	17.08%	19.95%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափ 30,000,000 հազար ՀՀ դրամ:

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Բովանդակություն

Հաշվետվություն փաստացի ստացված տվյալների վերաբերյալ 3

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0015
Երևան Պլազա
Բիզնես Կենտրոն
Գրիգոր Լուսավորիչ 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich street
0015 Yerevan, Armenia
Հ. + 374 10 50 09 64/61

Հաշվետվություն փաստացի ստացված տվյալների վերաբերյալ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ղեկավարությանը

Մենք իրականացրել ենք Ձեզ հետ համաձայնեցված և ստորև թվարկած ընթացակարգեր՝ կապված «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (Բանկ) 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2021թ. ապրիլի 12-ին մեր կողմից արտահայտած վերապահումով կարծիք պարունակող աուդիտորական եզրակացության հիմքերի ուսումնասիրության հետ՝ 2021թ. մայիսի 31-ի դրությամբ: Մեր առաջադրանքն իրականացվել է համաձայնեցված ընթացակարգերի առաջադրանքների նկատմամբ կիրառելի Հարակից ծառայությունների միջազգային ստանդարտին համապատասխան: Ընթացակարգերն իրականացվել են բացառապես նպատակ ունենալով օժանդակել Ձեզ՝ ճշգրտորեն գնահատելու վերապահումով կարծիքի հիմքերի առկայությունը 2021թ. մայիսի 31-ի դրությամբ և ամփոփված են ստորև.

1 Մենք ստուգել ենք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերապահումով կարծիքի հիմք հանդիսացող 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խնդրահարույց վարկերի մնացորդը 2021թ. մայիսի 31-ի դրությամբ:

2 Ուսումնասիրել ենք վարկերի մարման հիմք հանդիսացող փաստաթղթերի և իրականացված գործառույթների օրինականությունը և ամբողջականությունը:

3 Նշված վարկերի գծով 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ձևավորված ակնկալվող պարտքային կորուստների գծով իրականացված ծախսերը համեմատել ենք 2021թ. մայիսի 31-ի դրությամբ նշված վարկերի մարման արդյունքում ձևավորված վնասների հետ:

Մեր կողմից փաստացի հայտնաբերված տվյալները ներկայացնում ենք ստորև.

ա) 1-ին կետի կապակցությամբ մենք պարզեցինք, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերապահումով կարծիքի հիմք հանդիսացող խնդրահարույց վարկերի մնացորդը Բանկի հաշվեկշռում 2021թ. մայիսի 31-ի դրությամբ զրո է:

բ) 2-րդ կետի կապակցությամբ մենք պարզեցինք, որ Բանկի 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերոնշյալ խնդրահարույց վարկերը 2021թ. մայիսի 25-ին մարվել են պահանջի իրավունքի զիջման պայմանագրերով:

գ) 3-րդ կետի կապակցությամբ մենք պարզեցինք, որ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերապահումով կարծիքի հիմք հանդիսացող խնդրահարույց վարկերի զիջման արդյունքում Բանկի վնասը 2021թ. մայիսի 31-ի դրությամբ չի գերազանցել 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ վարկերի հնարավոր կորուստների պահուստների գծով կատարված ծախսերը:

Ամփոփելով իրականացված աշխատանքները, մենք պարզեցինք, որ Արմսվիսբանկ ՓԲԸ-ի 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2021թ. ապրիլի 12-ին մեր կողմից արտահայտած վերապահումով կարծիքի հիմքերն այլևս առկա չեն:

Քանի որ վերը նշված ընթացակարգերը իրենցից չեն ներկայացնում աուդիտ կամ դիտարկում Աուդիտի միջազգային ստանդարտներին կամ Դիտարկման առաջադրանքների միջազգային ստանդարտներին համապատասխան, մենք չենք արտահայտում որևէ հավաստիացում 2021թ. մայիսի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:


Եթե մենք իրականացնեինք լրացուցիչ ընթացակարգեր կամ եթե մենք իրականացնեինք աուդիտ կամ դիտարկում՝ համաձայն Աուդիտի միջազգային ստանդարտներին կամ Դիտարկման առաջադրանքներին, ապա մեր ուշադրությունը կարող էին գրավել այլ հարցեր, որոնք կներառվեին Ձեզ ներկայացվող զեկույցի մեջ:

Մեր զեկույցը նախատեսված է բացառապես սույն զեկույցի 1-ին պարագրաֆում նշված նպատակի համար, և Ձեր տեղեկատվության համար: Սույն զեկույցը վերաբերում է միայն վերը հատկորոշված հարցերին և չի տարածվում Բանկի՝ ամբողջությամբ վերցված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն/
Առաջադրանքի պատասխանատու

9 հուլիսի 2021թ.



ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2021թ. ապրիլի 12-ին մեր կողմից արտահայտած վերապահումով կարծիքի հիմքերն այլևս առկա չեն (ծանոթագրություն 17):

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների՝ որպես մեկ ամբողջություն, մեր աուդիտի համատեքստում և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք այդ հարցերի վերաբերյալ առանձին կարծիք չենք տրամադրում:

- *Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 36.1-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:
- Գնահատվել է Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:
- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է

դրանց գործառնական արդյունավերությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:

- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:
- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:
- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:
- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:
- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:
- Ստուգվել է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:
- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):
- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը բաղկացած է Բանկի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար տարեկան հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվությունից, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը մեզ հասանելի կլինի սույն աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք դրանց վերաբերյալ որևէ ձևի հավաստիացման եզրակացություն չենք արտահայտելու:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության հաշվառման հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ

խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել Բանկի ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի համապատասխան պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:


Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցած հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ իրավական ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորական եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Grant Thornton

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է սույն աուդիտորական եզրակացությունը՝ Էմիլ Վասիլյանն է:


Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն



Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու



04 ապրիլ 2022թ.

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2021	2020
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	6	33,486,218	27,231,441
Այլ տոկոսային եկամուտ	6	205,169	90,015
Տոկոսային ծախսեր	6	(22,788,292)	(17,038,412)
Զուտ տոկոսային եկամուտներ		10,903,095	10,283,044
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	342,339	335,405
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(156,816)	(156,108)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ		185,523	179,297
Զուտ առևտրային եկամուտ/(ծախս)	8	797,111	(26,554)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման գծով օգուտ		1,878,617	4,838,026
Այլ եկամուտներ	9	80,784	736,970
Արժեզրկման ծախս	10	(1,614,778)	(5,737,484)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(1,569,591)	(1,717,430)
Հիմնական միջոցների մաշվածություն	19	(178,166)	(176,592)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	20	(26,498)	(22,000)
Այլ ծախսեր	12	(1,047,101)	(904,084)
Շահույթ մինչև հարկումը		9,408,996	7,453,193
Շահութահարկի գծով ծախս	13	(1,643,537)	(1,427,118)
Տարվա շահույթ		7,765,459	6,026,075

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2021	2020
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)		(14,407,850)	(3,699,396)
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում		223,951	250,006
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		2,553,101	620,890
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի գծով զուտ վնաս		(11,630,798)	(2,828,500)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի		(11,630,798)	(2,828,500)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(3,865,339)	3,197,575

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 17-ից մինչև 111-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ։

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	27,330,179	27,746,794
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	15	35,125	8,980
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	2,540,486	6,824,674
Հաճախորդներին տրված վարկեր	17	116,759,510	123,498,224
Ներդրումային արժեթղթեր	18	153,851,984	140,849,679
Վաճառքի և հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	18	89,923,037	80,530,321
Կանխավճարներ շահութահարկի գծով		-	281,865
Հիմնական միջոցներ	19	1,637,423	1,760,180
Ոչ նյութական ակտիվներ	20	78,693	83,196
Բռնագանձված ակտիվներ	21	1,794,760	2,266,870
Հետաձգված հարկային ակտիվ	13	929,187	-
Այլ ակտիվներ	22	3,540,054	2,288,552
Ընդամենը՝ ակտիվներ		398,420,438	386,139,335
Պարտավորություններ և սեփական կապիտալ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	23	77,904,758	55,923,236
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	15	64,242	168,784
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	53,653,716	50,823,392
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25	123,997,229	134,700,221
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	58,839,075	64,911,905
Ստորադաս փոխառություններ	27	23,417,085	13,826,587
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություն		476,439	-
Հետաձգված հարկային պարտավորություն	13	-	1,713,682
Այլ պարտավորություններ	28	1,000,948	1,139,243
Ընդամենը՝ պարտավորություններ		339,353,492	323,207,050

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	29	10,000,200	10,000,200
Էմիսիոն եկամուտ		6,205,548	6,205,548
Գլխավոր պահուստ		30,000,000	25,000,000
Այլ պահուստներ		(1,694,092)	9,936,706
Չբաշխված շահույթ		14,555,290	11,789,831
Ընդամենը՝ սեփական կապիտալ		59,066,946	62,932,285
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		398,420,438	386,139,335

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2022թ. ապրիլի 4-ին:

Գևորգ Մաչանյան — Սեդրակ Բաղդասարյան

Գործադիր տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 17-ից մինչև 111-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	10,000,200	6,205,548	25,000,000	8,802,003	1,134,703	11,789,831	62,932,285
Տարվա շահույթ	-	-	-	-	-	7,765,459	7,765,459
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	(12,146,863)	-	-	(12,146,863)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	(2,260,987)	-	-	(2,260,987)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	223,951	-	-	223,951
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	2,553,101	-	-	2,553,101
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(11,630,798)	-	7,765,459	(3,865,339)
Հատկացում պահուստին	-	-	5,000,000	-	-	(5,000,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	5,000,000	-	-	(5,000,000)	-
Հաշվեկշիռը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,000,200	6,205,548	30,000,000	(2,828,795)	1,134,703	14,555,290	59,066,946

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության պահուստ	Հիմնական միջոցների վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	10,000,200	6,205,548	20,000,000	11,630,503	1,134,703	10,763,756	59,734,710
Տարվա շահույթ	-	-	-	-	-	6,026,075	6,026,075
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	-	-	-	1,086,273	-	-	1,086,273
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրացումից շահույթին կամ վնասին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	(4,785,669)	-	-	(4,785,669)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների պահուստում զուտ փոփոխություններ	-	-	-	250,006	-	-	250,006
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	-	620,890	-	-	620,890
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	(2,828,500)	-	6,026,075	3,197,575
Հատկացում պահուստին	-	-	5,000,000	-	-	(5,000,000)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	5,000,000	-	-	(5,000,000)	-
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,000,200	6,205,548	25,000,000	8,802,003	1,134,703	11,789,831	62,932,285

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 17-ից մինչև 111-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2021	2020
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ մինչև հարկումը	9,408,996	7,453,193
Ճշգրտումներ		
Ֆինանսական ակտիվների արժեզրկման ծախս	1,614,778	5,737,484
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	204,664	198,592
Ստացվելիք տոկոսներ	(1,165,859)	(2,855,171)
Վճարվելիք տոկոսներ	413,135	345,023
Հիմնական միջոցների արժեզրկման ծախս	-	169,795
Հիմնական միջոցների օտարումից զուտ եկամուտ	(12,215)	-
Այլ ակտիվների օտարումից զուտ վնաս	58,778	-
Արտարժութային փոխարկումից զուտ (եկամուտ)/ծախս	310,007	(701,828)
Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ (օգուտ)/վնաս	(130,687)	158,835
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	10,701,597	10,505,923
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,145,618	(4,602,075)
Հաճախորդներին տրված վարկեր	(2,731,899)	(22,239,749)
Բռնագանձված ակտիվներ	345,082	-
Այլ ակտիվներ	(740,218)	(842,549)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Հետգնման համաձայնագրեր ՀՀ ԿԲ-ի հետ	16,999,989	48,999,992
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,403,427	(361,463)
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(5,962,566)	9,391,964
Այլ պարտավորություններ	(88,155)	58,027
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր մինչև շահութահարկը	25,072,875	40,910,070
Վճարված շահութահարկ	(975,001)	(2,926,939)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	24,097,874	37,983,131

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի զուտ ձեռքբերում	(37,379,111)	(67,241,263)
Հիմնական միջոցների ձեռք բերման կանխավճարներ	(590,000)	-
Հիմնական միջոցների առք	(56,167)	(73,845)
Հիմնական միջոցների վաճառք	13,792	-
Ոչ նյութական ակտիվների առք	(21,995)	(41,043)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(38,033,481)	(67,356,151)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
ՀՀ ԿԲ-ից վարկերի ստացում	4,899,615	3,423,162
Ֆինանսական կազմակերպերպություններից վարկերի ստացում	2,554,579	494,293
Պարտքային արժեթղթերի թողարկում/(մարում)	(2,000,000)	28,098,352
Ստորադաս փոխառություն	10,000,000	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(54,624)	(45,450)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	15,399,570	31,970,357
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	1,463,963	2,597,337
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	27,746,794	24,328,959
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,880,578)	820,498
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ (ծանոթ. 14)	27,330,179	27,746,794

Լրացուցիչ տեղեկատվություն՝

Ստացված տոկոսներ	32,525,528	24,466,285
Վճարված տոկոսներ	(22,375,157)	(16,693,389)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 17-ից մինչև 111-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 2004 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 07 հոկտեմբերի 2004 թվականին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N84 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորում և ավանդների ընդունումն է, (ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը), ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժութային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10:

2 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում և Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից:

2020թ. անկումից հետո Հայաստանի տնտեսությունը թևակոխել է կայուն վերականգնման փուլ: Ակնկալվում է, որ COVID-19-ի համավարակային իրավիճակի աստիճանական բարելավումը, Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ հրադադարի մասին համաձայնագիրը, ինչպես նաև պետական և մասնավոր ներդրումների ընդլայնումը կխթանեն 2022թ. աճը: Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված Կառավարության ջանքերը, ՓՄՁ-ների համար ֆինանսական հասանելիության ընդլայնումը, առաջնահերթ սոցիալական ծախսերի համար հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև կապիտալի շուկայի զարգացման ընդլայնված գործողությունների ծրագիրը նույնպես կարող են Հայաստանի տնտեսության կայունության և զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծել:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Բանկի գործունեության վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այնուամենայնիվ, ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Բանկի գործունեության վրա կարող են տարբերվել Բանկի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և

Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով շենքերի, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Համադրելի տեղեկատվություն

Շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացման փոփոխությունը հանդիսանում է «Այլ տոկոսային եկամուտ» առանձին տողի ներկայացումը:

3.5 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Ուղենշային տոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2)» (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*

3.6 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և

մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- *«Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը» (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)*
- *2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ-(ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ):*
- *Մեկ գործարքի հետ կապված ակտիվների և պարտավորությունների հետաձգված հարկ;*

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Բանկը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս 4.4.6 ծանոթագրությունում:

Այլ տոկոսային եկամուտ

Այլ տոկոսային եկամտի հաշվարկում անվանական տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն արժեքի նկատմամբ գծային հիմունքով:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը և ծախսերը, որոնք կազմում են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, ներառվում են արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով այլ եկամուտը, ներառյալ հաշիվների սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքների գծով միջնորդավճարները, տեղաբաշխման գծով միջնորդավճարները և վարկի սինդիկացման միջնորդավճարները, ճանաչվում են համապատասխան ծառայությունը մատուցելիս: Եթե չի ակնկալվում, որ փոխատվության հանձնառությունը կհանգեցնի վարկի տրամադրմանը, ապա համապատասխան փոխատվության հանձնառության գծով վճարը ճանաչվում է գծային մեթոդով՝ հանձնառության ժամկետի ընթացքում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որի արդյունքում Բանկի ֆինանսական հաշվետվություններում ճանաչվում է ֆինանսական գործիք, կարող է մասնակիորեն գտնվել ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում և մասնակիորեն՝ ՖՀՄՍ 15-ի գործողության ոլորտում: Նման դեպքերում Բանկը նախ կիրառում է ՖՀՄՍ 9-ը՝ առանձնացնելու և չափելու համար

պայմանագրի այն մասը, որը գտնվում է ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում, այնուհետև կիրառում է ՖՀՄՍ 15-ը՝ պայմանագրի մնացած մասի համար:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսերը հիմնականում վերաբերում են գործարքների գծով վճարներին և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունը ստանալիս:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը և ճանաչվում է շահույթում կամ վնասում երբ համապատասխան ծառայությունն արդեն մատուցված է:

4.2 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված դրամային արժեթղթերի (որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներդրումային արժեթղթեր դասակարգվող իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերություններ միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են սեփական կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսեր, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ բաժնային գործիքներ դասակարգված բաժնետոմսերինը, որոնց համար ընտրությունը կատարվել է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում իրական արժեքի հետագա փոփոխությունները ներկայացնելու տարբերակը, ընդգրկվում են կապիտալում՝ իրական արժեքի փոփոխությունների պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	480.14	522.59
ՀՀ դրամ/1 Եվրո	542.61	641.11

4.3 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.4 Ֆինանսական գործիքներ

4.4.1 Ճանաչում և սկզբնական չափում

Բանկն սկզբնապես ճանաչում է վարկերը, ավանդները, թողարկված պարտքային արժեթղթերը և ստորադաս պարտավորությունները դրանց ստեղծման օրվա դրությամբ: Բոլոր այլ ֆինանսական գործիքները (ներառյալ ֆինանսական ակտիվների կանոնավոր գնումները և վաճառքները) ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ, որը Բանկի՝ գործիքի պայմանագրային կողմ դառնալու ամսաթիվն է:

Սկզբնական ճանաչման պահին Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափում է իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

4.4.2 Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել

իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Բանկը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկը պորտֆելի մակարդակում գնահատում է բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանզի այս գնահատումը լավագույնս արտացոլում է բիզնեսի կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Դիտարկվող տեղեկատվությունը ներառում է.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Բանկի ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Բանկը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Այս գնահատման նպատակով «մայր գումար» է սահմանվում ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի ու ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար հատուցում և ներառում է շահույթի մարժան:

Գնահատելու համար՝ արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ են, Բանկը հաշվի է առնում գործիքի պայմանագրային պայմանները: Սա ներառում է նաև այն գնահատումը՝ արդյոք ֆինանսական ակտիվը ներառում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետն այնպես, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը:

Գնահատման ժամանակ Բանկը դիտարկում է.

- պայմանական դեպքեր, որոնք կարող են փոխել դրամական միջոցների հոսքերի գումարը և ժամկետը,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամկետ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են որոշակի ակտիվների նկատմամբ Բանկի պահանջը (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ակտիվների գծով պայմանավորվածություններ) և
- հատկանիշներ, որոնք փոխում են փողի ժամանակային արժեքը, օրինակ, տոկոսադրույքների պարբերական վերանայումը:

Վերադասակարգումներ

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանի, երբ Բանկը փոխում է իր բիզնես մոդելը ֆինանսական ակտիվների կառավարման նպատակով: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

4.4.3 Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (տես նաև ծանոթագրություն 4.4.4) կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ֆինանսական ակտիվի ապաճանաչման դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքի (կամ ապաճանաչված ակտիվի մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի) և (i)ստացված հատուցման (ներառյալ ցանկացած նոր ակտիվ հանած ցանկացած նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտի կամ վնասի տարբերությունը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող նախորոշված բաժնային ներդրումային արժեթղթերի գծով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված կուտակային օգուտը/կորուստը չի ճանաչվում շահույթում կամ վնասում նշված արժեթղթերի ապաճանաչման ժամանակ: Ապաճանաչման

պահանջները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվներում Բանկի կողմից ստեղծված կամ պահպանված մասնակցությունը ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Բանկը գործարքներ է կնքում, որոնց համաձայն՝ փոխանցում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահում է փոխանցված ակտիվների կա՛մ բոլոր, կա՛մ գրեթե բոլոր ռիսկերն ու հատույցները, կա՛մ դրանց մի մասը: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Այսպիսի գործարքների օրինակներ են արժեթղթերի փոխատվությունը և վաճառքի ու հետգնման գործարքները:

Եթե ակտիվները վաճառվում են երրորդ կողմին համանման գնով հետգնման սվոպով, գործարքը հաշվառվում է որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարք, որը նման է վաճառքի և հետգնման գործարքներին, քանի որ Բանկը պահպանում է նմանատիպ ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները:

Գործարքներում, որոնցում Բանկը չի պահպանում և չի փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով այն ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Որոշ գործարքներում Բանկը պահպանում է փոխանցված ֆինանսական ակտիվը վճարի դիմաց սպասարկելու պարտավորությունը: Փոխանցված ակտիվը ապաճանաչվում է, եթե բավարարում է ապաճանաչման չափանիշներին: Ակտիվը կամ պարտավորությունը ճանաչվում են սպասարկման պայմանագրով, եթե սպասարկման վճարը ավելին է (ակտիվ) կամ պակաս (պարտավորություն), քան պասարկման դիմաց բավարար չափով հատուցումը:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

4.4.4 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Բանկը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է (տե՛ս 4.4.3 ծանոթագրություն), իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Բանկը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում: Եթե նմանատիպ փոփոխությունը կատարվում է վարկառուի ֆինանսական դժվարությունների պատճառով (տե՛ս 4.4.6 ծանոթագրություն), ապա օգուտը

կամ վնասը ներկայացվում է արժեզրկումից կորուստների հետ միասին: Այլ դեպքերում՝ այն ներկայացվում է որպես տոկոսային եկամուտ:

Ֆինանսական պարտավորություններ

Բանկը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը, ըստ էության, տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

4.4.5 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում, օրինակ՝ Բանկի առևտրային գործունեության ընթացքում:

4.4.6 Արժեզրկում

Բանկը կանխատեսումների հիման վրա գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները («ECL») հետևյալ ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

- ֆինանսական ակտիվներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ
- վարձակալության գծով դեբիտորական պարտքեր
- փոխատվության հանձնառություններ
- ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Բաժնային ֆինանսական գործիքների համար արժեզրկում չի հաշվարկվում:

Բանկը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Բանկը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ պարտազանցման ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ե՛վ ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները, և՛ 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են կա՛մ անհատական, կա՛մ խմբային հիմունքներով՝ կախված ֆինանսական գործիքների հիմքում ընկած պորտֆելի բնույթից:

Բանկը մշակել է քաղաքականություն, որը թույլ է տալիս յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատել՝ արդյոք ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացած գործողության ժամկետի ընթացքում առաջացած պարտազանցման ռիսկի փոփոխությունը: Ավելի մանրամասն բացատրվում է 36.1.2 ծանոթագրությունում:

Վերոնշյալի հիման վրա՝ Բանկը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3 և գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված խմբերում, ինչպես նկարագրված է ստորև՝

- Փուլ 1 - երբ վարկերը ճանաչվում են առաջին անգամ, Բանկը ճանաչում է պահուստը 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների հիման վրա: Փուլ 1-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 2-ից:
- Փուլ 2 - երբ վարկը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Բանկը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Փուլ 2-ում դասակարգված վարկերը նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և վարկը վերադասակարգվել է փուլ 3-ից:
- Փուլ 3 – արժեզրկված վարկեր: Բանկը ձևավորում է ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ:
- Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների խումբ - գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվներն սկզբնական ճանաչման պահին արժեզրկված ֆինանսական ակտիվներ են: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվները հաշվարկվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման պահին, իսկ տոկոսային եկամուտը, ըստ էության, ճանաչվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքով: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են այն չափով, որքանով առկա է ակնկալվող պարտքային կորուստների հետագա փոփոխություն:

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ,

փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարն, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավի իրացումից: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Պարտազանցում տեղի ունենալու հավանականությունը պարտազանցման պահին պարտքի գումարը, պարտազանցման դեպքում կորստի գումարը մանրամասն բացահայտվում են 36.1.2 ծանոթագրությունում:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվներ

Եթե փոխառուի ֆինանսական դժվարությունների պատճառով ֆինանասական ակտիվի պայմանագրային պայմանները վերանայվում կամ փոփոխվում են կամ գոյություն ունեցող ֆինանսական ակտիվը փոխարինվում է նորով, ապա գնահատվում է ֆինանսական ակտիվի ապաճանաչման անհրաժեշտությունը (տե՛ս՝ ծանոթ. 4.4.4), և ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկվում են հետևյալ կերպ.

- եթե ակնկալվող վերանայումը չի հանգեցնում գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա փոփոխված ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերը ներառվում են գոյություն ունեցող ակտիվից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի պակասորդի հաշվարկում,
- եթե ակնկալվող վերանայումը հանգեցնում է գոյություն ունեցող ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը, ապա նոր ակտիվի ակնկալվող իրական արժեքը դիտարկվում է որպես ապաճանաչման պահին գոյություն ունեցող ակտիվի վերջնական դրամական հոսք: Այդ գումարը ներառվում է գոյություն ունեցող ֆինանասկան ակտիվից ակնկալվող դրամական միջոցների պակասորդի հաշվարկում, որոնք ակնկալվող ապաճանաչման ամսաթվից մինչև հաշվետու ամսաթիվ զեղչվում են գոյություն ունեցող ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները պարտքային առումով արժեզրկված են: Ֆինանսական ակտիվները համարվում են պարտքային առումով արժեզրկված, եթե տեղի են ունենում մեկ կամ ավելի իրադարձություններ, որոնք բացասաբար են անդրադառնում ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկման վկայություններ են հանդիսանում ստորև նշված իրադարձությունների վերաբերյալ տվյալների առկայությունը.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցությունը կամ ժամկետանց դառնալը,
- Բանկի կողմից վարկի կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի, կամ,

- ֆինանսական դժվարությունների հետևանքով արժեթղթերի ակտիվ ֆինանսական շուկայի վերացում,

Վարկը, որի պայմանները վերաբանակցվել են փոխառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է պարտքային առումով արժեզրկված, եթե գոյություն չունի ապացույց, որ պայմանագրային դրամական հոսքերը չստանալու ռիսկը նշանակալիորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ:

Պետական պարտատոմսերում ներդրման արժեզրկված լինելը գնահատելիս՝ Բանկը հաշվի է առնում հետևյալ գործոնները.

- վարկունակության շուկայական գնահատականը՝ արտացոլված պարտատոմսերի եկամտաբերությամբ,
- եկամտաբերության գնահատումը վարկանիշային գործակալությունների կողմից,
- Նոր պարտքի թողարկման համար կապիտալի շուկաներ մուտք գործելու երկրի կարողությունը:

Ակնկալվող պարտքային կորուստների պահուստի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է հետևյալ կերպ.

- ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ՝ որպես ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից նվազում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կորստի պահուստ չի ճանաչվում, քանի որ այս ակտիվների համար հաշվեկշռային արժեքը վերջիններիս իրական արժեքն է: Այնուամենայնիվ, կորստի պահուստը բացահայտվում և ճանաչվում է իրական արժեքի փոփոխությունների գծով պահուստում,
- փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար, որպես կանոն, պահուստի տեսքով,
  - Փոխատվության հանձնառությունների չօգտագործված մասի գծով ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գնահատման ժամանակ, Բանկը գնահատում է փոխատվության հանձնառությանամբողջ ժամկետի ընթացքում պորտֆելի այն մասը, որը ակտնկալվում է օգտագործել: Ակնկալվող պարտքային կորուստները հետագայում հիմնվում են դրամական հոսքերի ակնկալվող պակասորդի ներկա արժեքի վրա, եթե վարկը օգտագործվել է: Ակնկալվող դրամական պակասորդները զեղչվում են վարկի ակնկալվող պարտքային կորուստների մոտավոր հաշվարկով:
  - Երբ ֆինանսական գործիքը ներառում է թե՛ օգտագործված և թե՛ չօգտագործված բաղադրիչ, և Բանկը չի կարող նույնականացնել փոխատվության հանձնառության բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորուստներն օգտագործված բաղադրիչի գծով ակնկալվող պարտքային կորստներից առանձին՝ Բանկը ներկայացնում է ընդհանուր կորստի պահուստ երկու բաղադրիչների համար: Ընդհանուր գումարը ներկայացվում է որպես նվազեցում օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքից: Կորստի պահուստի ավելցուկը օգտագործված բաղադրիչի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ ներկայացվում է որպես պահուստ, և:
  - Յուրաքանչյուր երաշխավորության վերաբերյալ Բանկի պարտավորությունը չափվում է սկզբնապես ճանաչված գումարի առավելագույնով՝ հանած շահույթի կամ վնասի

մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Կրճատումները զեղչվում են ռիսկով ճշգրտված տոկոսադրույքով, որը ենթակա է բացահայտման: Ֆինանսական երաշխավորության պայմանագրերի հետ կապված ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են պահուստներում:

Դուրսգրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (մասնակի կամ ամբողջական), եթե չկան դրանց վերադարձման իրական հեռանկարներ: Դա, որպես կանոն, այն դեպքն է, երբ Բանկը որոշում է, որ պարտապանը չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնք կարող են առաջացնել բավարար դրամական հոսքեր՝ դուրսգրման ենթակա գումարը մարելու համար: Այդ ակտիվի ինչպես ընդհանուր հաշվեկշռային արժեքը, այնպես էլ արժեզրկման պահուստը (եթե առկա են) ուղղակիորեն դուրս են գրվում: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ճանաչման մասնակի կամ ամբողջական դադարեցում: Սակայն դուրսգրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են ենթարկվել պահանջների կատարման՝ Բանկի պարտքերի հավաքագրման ընթացակարգերի համապատասխան:

4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների) և այլ բանկերում հաշիվներից, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռքբերման օրից 90 օր է, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամկետայնության բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորություններ

Առևտրային նպատակներով պահվող ակտիվներ և պարտավորությունները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով, կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ: Առևտրային նպատակներով պահվող ակտիվները և պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են, ապա հետագայում չափվում իրական արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ շահույթում կամ վնասում ճանաչված գործարքային ծախսերով: Իրական արժեքի բոլոր փոփոխությունները ճանաչվում են որպես շահույթում կամ վնասում զուտ առևտրային եկամտի մի մաս:

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդես է գալիս որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնպիսի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեք ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն:

4.8 Հաճախորդներին տրված վարկեր

Վարկերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.9 Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներդրումային արժեթղթերը ներառում են,

- պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
- պարտքային և բաժնային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով կամ նախորոշվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իսկ իրական արժեքի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային ներդրումային արժեթղթեր:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ

ֆինանսական արդյյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

- տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,
- ակնկալվող պարտքային կորուստներ և հակադարձում
- արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում ակնկալվող պարտքային կորուստներում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Բանկը կարող է ոչ առևտրային նպատակներով պահվող բաժնային գործիքներում որոշ ներդրումների իրական արժեքի փոփոխությունները ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Այսպիսի ընտրություն կայացվում է սկզբնական ճանաչման ժամանակ անհատական սկզբունքով և անշրջելի է:

Այսպիսի բաժնային գործիքների գծով օգուտ և վնասը երբեք չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում, իսկ արժեզրկում չի ճանաչվում: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե դրանք հստակ չեն հանդիսանում ներդրումների մի մասի վերադարձ, որի դեպքում նրանք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակային օգուտը և վնասը ներդրումների օտարման դեպքում փոխանցվում են չբաշխված շահույթ:

4.10 Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերե և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր: Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ հետգնման պայմանագրով գնված ակտիվները վաճառվեն երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը գրանցվում է որպես առևտրային պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

4.11 Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Բանկը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման

դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Բանկը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Բանկին,
- Բանկն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,
- Բանկն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Բանկն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Բանկը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած

վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

Բանկը որպես վարձատու

Որպես վարձատու՝ Բանկը դասակարգում է իր վարձակալությունները ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

Վարձակալության մեկնարկն այն ամսաթիվն է, երբ վարձակալն իրավունք ունի օգտվել վարձակալած ակտիվը օգտագործելու իր իրավունքից: Դա վարձակալության սկզբնական ճանաչման ամսաթիվն է: Ֆինանսական վարձակալության մեկնարկից հետո Բանկը ճանաչում է վարձակալության զուտ ներդրումը, որը ստացվելիք նվազագույն վարձավճարն է, որը զեղչվում է վարձակալության ենթադրվող տոկոսադրույքով: Համախառն ներդրման և ներկայիս արժեքի միջև տարբերությունը գրանցվում է որպես ֆինանսական վարձակալության չվաստակված եկամուտ:

Ֆինանսական եկամուտը ճանաչվում է վարձակալության ընթացքում այնպես, որ ապահովի անփոփոխ պարբերական դրույք վարձակալության շրջանակներում չմարված զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսերը ներառվում են ստացվելիք գումարների սկզբնական ճանաչման ժամանակ:

Երբ վարձակալման պայմանագրերի դադարեցման արդյունքում Բանկի տիրապետության տակ է անցնում վարձակալության առարկան, այդ ակտիվները չափվում են իրացման զուտ արժեքի և պատմական ամորտիզացված արժեքների նվազագույնով:

4.12 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ/վնաս հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.13 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքը ներկայացված է իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	30	3.3
Համակարգիչներ և կապի միջոցներ	6	16.67
Տրանսպորտային միջոցներ	7	14.29
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Շենքը վերագնահատվում է կանոնավոր կերպով մոտավորապես 3-5 տարի հետո: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.14 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 3- ից 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.15 Բռնագանձված ակտիվներ

Բանկի քաղաքականությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց համապատասխան ակտիվների դաս սկզբնական ապահովված ակտիվի բռնագանձված կամ հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքն ավելի լավ տարբերակ է ճանաչվում, ըստ Բանկի քաղաքականության՝ փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը:

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.16 Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն

արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

4.17 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրաված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Երբ Բանկը գնում է իրեն պատկանող արժեթղթերը, դրանք դուրս են գրվում հաշվեկշռից, և հաշվեկշռային արժեքի ու վճարված գումարի տարբերությունն արտացոլվում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

4.18 Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Բանկից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով: Փոխատվության հանձնառություններն իրենցից ներկայացնում են նախապես սահմանված պայմաններով վարկ տրամադրելու կայուն հանձնառություններ:

Ֆինանսական երաշխավորությունները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու հանձնառությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.19 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.18 ծանոթագրությունում:

4.20 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի ազից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման ազը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի ազը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի ազին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.21 Հավատարմագրային գործառնություններ

Բանկն իրականացնում է հավատարմագրային գործառնություններ իր հաճախորդների համար: Բանկը նաև մատուցում է դեպոզիտարիոն ծառայություններ, ինչը ներառում է հաճախորդներին պատկանող արժեթղթերի դեպո հաշիվներով գործառնությունները: Բանկի կողմից կառավարվող ակտիվները, ինչպես նաև դրանցից ծագող պարտավորությունները չեն ներառվում Բանկի ֆինանսական հաշվետվություններում: Բանկը կրում է հավատարմագրային գործառնությունների գծով գործառնական ռիսկը, իսկ նշված գործառնությունների վարկային և շուկայական ռիսկը կրում են հաճախորդները:

Հավատարմագրային գործառնություններից ստացված վարձավճարները արտացոլվում են կոմիսիոն և այլ տեսքով եկամուտներում:

4.22 Սեգմենտների ներկայացում

ՖՀՄՍ 8-ի համաձայն՝ Բանկի գործառնությունները առանձնացված չեն գործառնական սեգմենտների և ամբողջական բիզնես միավոր են: Բանկի գործառնությունների վերաբերյալ որոշումներ կայացնող գլխավոր մարմինը որոշումներ է կայացնում համատեղ արդյունքների հիման վրա, և ոչ մի օպերացիոն սեգմենտ չի հանվում ընդհանուր գործառնություններից: Բանկի ակտիվները հիմնականում կենտրոնացած են Հայաստանի Հանրապետության տարածքում: Բանկի եկամուտները ստացվում են հիմնականում կորպորատիվ հաճախորդներին մատուցվող ծառայություններից:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

5.1 Դատողություններ

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տե՛ս 4.4.2 ծանոթագրությունը):

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբերող չափանիշների սահմանում

Բանկը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

5.2 Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տե՛ս ծանոթագրություն 33):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Վարձակալության երկարաձգման հնարավորություններ

Երբ Բանկն ունի վարձակալության երկարաձգման հնարավորություն, ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը՝ որոշելու այդ հնարավորության ողջամտորեն կիրառումը: Ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները՝ ներառյալ իրենց նախկին փորձը և ակտիվը փոխելու դեպքում առաջացած ցանկացած ծախս, եթե երկարաձգման հնարավորությունը չի կիրառվում վարձակալության ժամկետը որոշելու համար:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը էականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների

չափման գործընթացում ապագայամետ տեղեկատվության ներառումը (տե՛ս ծանոթագրություն 36.1.2), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տե՛ս ծանոթագրություն 4.4.6):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տե՛ս ծանոթագրություն 31:

6 Զուտ տոկոսային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	10,938,405	9,374,832
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	13,654,991	10,039,987
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8,252,134	6,922,880
Ֆակտորինգից եկամուտ	297,922	463,656
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	212,394	248,289
Հակադարձ հետգնման պայմանագրեր	84,017	172,688
Ակրեդիտիվների գծով եկամուտ	46,355	8,796
Այլ	-	313
	33,486,218	27,231,441
Այլ տոկոսային եկամուտ		
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	205,169	90,015
	205,169	90,015
Ընդամենը տոկոսային եկամուտ	33,691,387	27,321,456

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	10,722,149	10,528,567
Թողարկված պարտքային արժեթղթեր	4,401,756	3,316,928
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,868,607	1,515,933
Հետգնման պայմանագրեր	5,788,073	1,654,529
Վարձակալության գծով պարտավորություններ	7,318	20,865
Այլ տոկոսային ծախսեր	389	1,590
Ընդամենը տոկոսային ծախս	22,788,292	17,038,412
Ընդամենը զուտ տոկոսային եկամուտ	10,903,095	10,283,044

7 Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Դրամարկղային գործառնություններ	44,724	37,214
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	119,665	114,409
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	76,591	87,281
Բրոքերային գործառնություններ	71,100	78,022
Վճարային քարտերով գործառնություններ	27,441	15,443
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	2,818	3,036
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտներ	342,339	335,405
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	66,137	62,955
Բրոքերային գործառնություններ	87,571	72,014
Այլ ծախսեր	3,108	21,139
Ընդամենը միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախսեր	156,816	156,108

8 Զուտ առևտրային եկամուտ/(ծախս)

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Զուտ եկամուտ/(ծախս) ածանցյալ գործիքներից	252,013	(670,859)
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	545,098	644,305
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ/(ծախս)	797,111	(26,554)

9 Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Թանկարժեք մետաղներով գործառնություններից եկամուտներ	26,690	-
Բռնագանձված ակտիվների վաճառքից զուտ եկամուտ	-	670
Հիմնական միջոցների վաճառքից զուտ եկամուտ	12,215	-
Շահաբաժիններից եկամուտ	4,006	6,041
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ	-	701,828
Ֆինանսական միջնորդությունից եկամուտ	21,330	16,693
Այլ եկամուտ	16,543	11,738
Ընդամենը այլ եկամուտներ	80,784	736,970

10 Արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)

Հազար ՀՀ դրամ		2021			
	Ծանոթ.	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	(1,376)	-	-	(1,376)
Հաճախորդներին տրված վարկեր	17	(811,349)	1,731,734	107,455	1,027,840
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	18	223,951	-	-	223,951
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	18	368,016	-	-	368,016
Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ	30	(3,653)	-	-	(3,653)
Ընդամենը արժեզրկման ծախս/(արժեզրկման հակադարձում)		(224,411)	1,731,734	107,455	1,614,778

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը
					2020թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	(5,168)	-	-	(5,168)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	13,751	-	-	13,751
Հաճախորդներին տրված վարկեր	17	1,246,940	209,009	4,025,825	5,481,774
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	18	250,006	-	-	250,006
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	18	(3,804)	-	-	(3,804)
Այլ ակտիվներ	22	1,524	-	-	1,524
Ֆինանսական երաշխավորություններ և փոխատվության հանձնառություններ	30	(599)	-	-	(599)
Ընդամենը արժեզրկման ծախս		1,502,650	209,009	4,025,825	5,737,484

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Աշխատակիցների հատուցումներ ներառյալ դրանց վերաբերող հարկերը	1,565,924	1,715,632
Անձնակազմի ուսուցման ծախսեր	964	1,149
Այլ	2,703	649
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	1,569,591	1,717,430

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ոչ առևտրային ակտիվների արտարժութային փոխարկումներից զուտ վնաս	310,007	-
Թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ վնաս	-	1,152
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	81,584	69,736
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	106,233	95,956
Ներկայացուցչական ծախսեր	37,899	31,150
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	39,892	24,480
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	27,423	33,870
Վճարներ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	129,170	104,263
Ապահովագրության գծով ծախսեր	41,362	36,656
Գործուղման ծախսեր	8,892	6,490
Անվտանգության գծով ծախսեր	9,045	9,000
Վճարներ ֆինանսական հաշտարարին	38,915	28,313
Գրասենյակային ծախսեր	11,398	13,161
Վարկերի հավաքագրման վճարներ	41,196	18,509
Հիմնական միջոցների օտարումից վնաս	-	169,795
Այլ ակտիվների վաճառքից վնաս	58,778	-
Վճարահաշվարկային ծառայություններ (ԱրՔա)	50,514	38,569
Գովազդի ծախսեր	3,813	4,714
Բարեգործություն	37,592	187,331
Այլ ծախսեր	13,388	30,939
Ընդամենը այլ ծախսեր	1,047,101	904,084

13 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,733,305	1,578,733
Նախորդ տարիների շահութահարկի ճշգրտում	-	(77,614)
Հետաձգված հարկ	(89,768)	(74,001)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,643,537	1,427,118

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2020թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 18% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2021	Արդյունավետ դրույքաչափ (%)	2020	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	9,408,996		7,453,193	
Շահութահարկ	1,693,619	18	1,341,575	18
Զուտ չնվազեցվող ծախսեր/(չհարկվող եկամուտներ)	(815)	-	7,929	-
Նախորդ տարիների չճանաչված հետաձգված հարկի ազդեցություն	(49,267)	(1)	-	-
Նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	-	-	77,614	1
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	1,643,537	17	1,427,118	19

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	01 հունվարի 2021			31 դեկտեմբերի 2021		
	Զուտ մնացորդ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(5,566)	11,212	-	5,646	5,646	-
Հաճախորդներին տրված վարկեր	286,184	(65,392)	-	220,792	220,792	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(1,823,501)	40,312	2,553,101	769,912	769,912	-
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	36,096	66,243	-	102,339	102,339	-
Հիմնական միջոցներ	(237,232)	59,509	-	(177,723)	-	(177,723)
Այլ ակտիվներ	(9,010)	(5,782)	-	(14,792)	-	(14,792)
Այլ պահուստներ	(19,809)	(11,168)	-	(30,977)	-	(30,977)
Վարձակալության գծով պարտավորություններ	(9,388)	(4,956)	-	(14,344)	-	(14,344)
Այլ պարտավորություններ	68,544	(210)	-	68,334	68,334	-
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(1,713,682)	89,768	2,553,101	929,187	1,167,023	(237,836)

Հազար ՀՀ դրամ	01 հունվարի 2020			31 դեկտեմբերի 2020		
	Զուտ մնացորդ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(6,616)	6,616	-	-	-	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,002	(12,568)	-	(5,566)	-	(5,566)
Հաճախորդներին տրված վարկեր	133,925	152,259	-	286,184	286,184	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	(2,411,776)	(32,615)	620,890	(1,823,501)	-	(1,823,501)
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	36,780	(684)	-	36,096	36,096	-
Հիմնական միջոցներ	(226,455)	(10,777)	-	(237,232)	-	(237,232)
Այլ ակտիվներ	1,959	(10,969)	-	(9,010)	-	(9,010)
Այլ պահուստներ	(25,053)	5,244	-	(19,809)	-	(19,809)
Վարձակալության գծով պարտավորություններ	19,396	(28,784)	-	(9,388)	-	(9,388)
Այլ պարտավորություններ	62,265	6,279	-	68,544	68,544	-
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(2,408,573)	74,001	620,890	(1,713,682)	390,824	(2,104,506)

14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Կանխիկ դրամական միջոցներ	1,895,416	1,951,867
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	24,303,499	24,726,715
Թղթակցային հաշիվներ բանկերում	861,531	885,647
Մինչև 90 օր տևողությամբ ավանդներ	269,733	182,565
	27,330,179	27,746,794
Արժեզրկումից պահուստներ	-	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,330,179	27,746,794

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային միջոցների 4%-ի (2020թ՝ 2%) չափով և արտարժույթով ներգրաված միջոցների 18%-ի չափով: Բանկերը արտարժույթով ներգրաված միջոցների 10%-ը

պահուստավորում են ՀՀ դրամով և 8%-ը՝ արտարժույթով: Այդ միջոցները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 22,045,485 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,025,198 հազար դրամ):

ՀՀ դրամով պահվող պահուստները ելքագրելու Բանկի իրավունքը չի սահմանափակվում օրենսդրությամբ, սակայն եթե Բանկը չի ապահովում պահուստի նվազագույն միջին ամսական գումարը, վերջինիս նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ: Արտարժույթով պահվող պարտադիր պահուստի համար Բանկն պարտավոր է ապահովել նվազագույն օրական մնացորդ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի թղթակցային հաշիվներ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), բացառությամբ ՀՀ ԿԲ-ի, որի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
	Փուլ 1	Փուլ 1
Հունվարի 1-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	-	5,168
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	-	(5,168)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-

15 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոպերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոփերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Բանկի պարտքային ռիսկը ներկայացնում է սվոպային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	606,623	4,887	270
Արժեթղթերի ֆորվարդ	1,925,112	30,238	63,972
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	2,531,735	35,125	64,242

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
Արտարժույթով պայմանագրեր			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	2,808,844	-	68,369
Արժեթղթերի ֆորվարդ	2,111,914	8,980	100,415
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ	4,920,758	8,980	168,784

16 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վարկեր բանկերին	292,714	317,338
Միջազգային ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	-	1,474,747
Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	623,981	877,327
Ավանդներ բանկերում	-	2,005,082
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	210,000	310,000
Դեպոնացված միջոցներ բանկերում	-	145,890
Դեպոնացված միջոցներ այլ ֆինանսական կազմակերպություններում	1,440,471	705,056
Հակադարձ հետգնման պայմանագրեր վարկային կազմակերպությունների հետ	-	1,011,058
Ռեգուլյար գնման պայմանագրեր՝ արտարժույթով սփոթ գործարքներ	-	4,405
Այլ հաշիվներ	32,238	34,065
	2,599,404	6,884,968
Արժեզրկումից պահուստներ	(58,918)	(60,294)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,540,486	6,824,674

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,094,719 հազար դրամ գումարի չափով դեպոնացված միջոցները ֆինանսական կազմակերպություններում (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՝ 446,851 հազար դրամ) իրենցից ներկայացնում են ՎՋԵԲ-ում սառեցված միջոցներ հետգնման պայմանագրերով ստանձնված պարտավորությունների կատարման համար:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի որևէ բանկի տրված միջոցներ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի սեփական կապիտալի 10%-ը:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	60,294	46,543
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(1,376)	13,751
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,918	60,294

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	Գրավի իրական արժեքը	Վարկի հաշվեկշռայի ն արժեք	Գրավի իրական արժեքը	Վարկի հաշվեկշռայի ն արժեք
ՀՀ կառավարության պարտատոմսեր	-	-	1,045,623	1,011,058
Ընդամենը գրավադրված ակտիվներ և հակադարձ հետգնման պայմանագրերով տրամադրված վարկեր	-	-	1,045,623	1,011,058

17 Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			31 դեկտեմբերի 2020թ.		
	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Արժեզրկման պահուստ	Հաշվեկշռային արժեք
Հիփոթեքային և սպառողական վարկեր						
Հիփոթեքային վարկեր	17,761,661	(440,314)	17,321,347	16,620,599	(567,371)	16,053,228
Սպառողական վարկեր	2,701,649	(1,069,794)	1,631,855	2,257,717	(828,107)	1,429,610
Վարկային քարտեր	388,067	(9,488)	378,579	426,411	(7,132)	419,279
Հակադարձ հետգնման պայմանագրեր	188,943	(754)	188,189	130,094	(796)	129,298
	21,040,320	(1,520,350)	19,519,970	19,434,821	(1,403,406)	18,031,415
Առևտրային վարկեր						
Առևտուր	19,872,785	(451,917)	19,420,868	19,233,313	(586,593)	18,646,720
Արդյունաբերություն	48,464,350	(3,022,222)	45,442,128	45,884,356	(3,704,208)	42,180,148
Գյուղատնտեսություն	6,446,564	(61,325)	6,385,239	13,032,676	(290,892)	12,741,784
Շինարարություն	14,285,067	(75,354)	14,209,713	16,072,482	(91,440)	15,981,042
Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր	2,096,193	(36,514)	2,059,679	1,669,336	(31,873)	1,637,463
Այլ	10,047,606	(325,693)	9,721,913	14,407,496	(127,844)	14,279,652
	101,212,565	(3,973,025)	97,239,540	110,299,659	(4,832,850)	105,466,809
Ընդամենը	122,252,885	(5,493,375)	116,759,510	129,734,480	(6,236,256)	123,498,224

2021թ. մայիսին 5-ին և 25-ին Արցախի Հանրապետության կառավարության և Բանկի միջև կնքվել են ցեսիայի պայմանագրեր, համաձայն որոնց Արցախի Հանրապետության կառավարությանն են փոխանցվել 16,030,084 հազար դրամի վարկեր, որոնք հանդիսանում էին 2020թ. Արցախում զինված հակամարտության արդյունքում տուժված Արցախի տարածաշրջանում գործող ձեռնարկություններին և պետական հիմնադրամներին տրված վարկերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության և Արցախի կառավարության որոշումների համաձայն այդ վարկերը վերաֆինանսավորվել են Արցախի Հանրապետության կառավարության 10 տարի մարման ժամկետով պարտատոմսերով, որոնց մարմանը աջակցելու է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (տես ծանոթագրություն 18):

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող

առանձնացնել փոխատվության հանձնառության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 406,610 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,121,596 հազար դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի էական կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 43,662,748 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 35.7%-ը) ընդհանուր գումարով, տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապված անձանց (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 43,591,440 հազար դրամ կամ 33.6%)՝ տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապված անձանց (տես՝ ծանոթագրություն 32): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 1,995,625 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 798,142 հազար դրամ):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երկու փոխառու և կապակցված կողմերի խումբ, որոնց վարկի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10%-ը: Այս վարկերի համախառն արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 14,568,040 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12,580,695 հազար դրամ, համախառն վարկային պորտֆել, որը տրամադրվել է երկու փոխառու և կապակցված կողմերի խմբին):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	17,940,675	699,532	794,614	19,434,821
Սկզբնավորված նոր ակտիվներ	39,177,383	423,526	111,620	39,712,529
Մարված ակտիվներ	(36,563,224)	(293,962)	(223,099)	(37,080,285)
- փոխանցում Փուլ 1	62,646	(62,646)	-	-
- փոխանցում Փուլ 2	(132,890)	881,320	(748,430)	-
- փոխանցում Փուլ 3	(1,208,144)	(23,049)	1,231,193	-
Ակտիվի զուտ փոփոխություն արտարժույթի վերագնահատումից	(839,362)	(55,444)	(68,495)	(963,301)
Վերականգնում	-	-	217,201	217,201
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(280,645)	(280,645)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,437,084	1,569,277	1,033,959	21,040,320

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	96,520,169	7,806,747	5,972,743	110,299,659
Սկզբնավորված նոր ակտիվներ	129,987,086	10,489,628	1,506,232	141,982,946
Մարված ակտիվներ	(131,124,348)	(5,974,775)	(5,828,541)	(142,927,664)
- փոխանցում Փուլ 1	108,659	-	(108,659)	-
- փոխանցում Փուլ 2	(1,888,162)	1,888,162	-	-
- փոխանցում Փուլ 3	(459,517)	(2,905,267)	3,364,784	-
Ակտիվի զուտ փոփոխություն արտարժույթի վերագնահատումից	(5,432,064)	(664,209)	(338,826)	(6,435,099)
Վերականգնում	-	-	1,063,144	1,063,144
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(2,770,421)	(2,770,421)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	87,711,823	10,640,286	2,860,456	101,212,565

Հազար ՀՀ դրամ				2020
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	15,821,815	1,181,180	50,674	17,053,669
Սկզբնավորված նոր ակտիվներ	62,532,014	78,988	-	62,611,002
Մարված ակտիվներ	(61,567,443)	(96,721)	(29,817)	(61,693,981)
- փոխանցում Փուլ 1	113,200	(113,200)	-	-
- փոխանցում Փուլ 2	(297,877)	297,877	-	-
- փոխանցում Փուլ 3	(65,367)	(793,184)	858,551	-
Ակտիվի զուտ փոփոխություն արտարժույթի վերագնահատումից	1,404,333	144,592	2,963	1,551,888
Վերականգնում	-	-	34,998	34,998
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(122,755)	(122,755)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,940,675	699,532	794,614	19,434,821

Հազար ՀՀ դրամ				2020
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	75,102,887	6,362,746	153,482	81,619,115
Սկզբնավորված նոր ակտիվներ	104,428,407	1,230,730	3,343,505	109,002,642
Մարված ակտիվներ	(83,142,553)	(713,349)	(3,179,251)	(87,035,153)
- փոխանցում Փուլ 1	1,144,293	(1,144,293)	-	-
- փոխանցում Փուլ 2	(3,671,952)	3,671,952	-	-
- փոխանցում Փուլ 3	(4,491,618)	(2,371,311)	6,862,929	-
Ակտիվի զուտ փոփոխություն արտարժույթի վերագնահատումից	7,150,705	770,272	10,702	7,931,679
Վերականգնում	-	-	1,168,346	1,168,346
Դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(2,386,970)	(2,386,970)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	96,520,169	7,806,747	5,972,743	110,299,659

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	507,814	158,410	737,182	1,403,406
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում Փուլ 1	30,488	(30,488)	-	-
- փոխանցում Փուլ 2	(4,278)	725,736	(721,458)	-
- փոխանցում Փուլ 3	(11,926)	(5,924)	17,850	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(234,924)	(88,363)	32,384	(290,903)
Նոր տրամադրված վարկեր	74,131	382,889	14,271	471,291
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(63,444)	(63,444)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	361,305	1,142,260	16,785	1,520,350

Հազար ՀՀ դրամ				2021
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	1,808,677	592,095	2,432,078	4,832,850
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում Փուլ 1	24,864	-	(24,864)	-
- փոխանցում Փուլ 2	(12,695)	12,695	-	-
- փոխանցում Փուլ 3	(4,940)	(213,866)	218,806	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(1,292,940)	45,208	(1,274,005)	(2,521,737)
Նոր տրամադրված վարկեր	642,384	1,392,000	1,334,805	3,369,189
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,707,277)	(1,707,277)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,165,350	1,828,132	979,543	3,973,025

Հազար ՀՀ դրամ				2020
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	230,218	161,624	9,061	400,903
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում Փուլ 1	5,131	(5,131)	-	-
- փոխանցում Փուլ 2	(5,841)	5,841	-	-
- փոխանցում Փուլ 3	(259)	(108,846)	109,105	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	19,015	95,382	706,773	821,170
Նոր տրամադրված վարկեր	259,550	9,540	-	269,090
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(87,757)	(87,757)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	507,814	158,410	737,182	1,403,406

Հազար ՀՀ դրամ				2020
	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Առևտրային վարկեր				
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	853,604	770,268	36,088	1,659,960
Տարեսկզբի մնացորդում ճանաչված ֆինանսական ակտիվների փոփոխություններ՝				
- փոխանցում Փուլ 1	16,977	(16,977)	-	-
- փոխանցում Փուլ 2	(26,590)	26,590	-	-
- փոխանցում Փուլ 3	(3,689)	(291,873)	295,562	-
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(66,401)	(65,125)	2,053,714	1,922,188
Նոր տրամադրված վարկեր	1,034,776	169,212	1,265,338	2,469,326
Զուտ դուրսգրում տարվա ընթացքում	-	-	(1,218,624)	(1,218,624)
Մնացորդ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,808,677	592,095	2,432,078	4,832,850

Բանկն ընդունել է արժեթղթեր՝ որպես գրավ առևտրային վարկերի համար, որոնք թույլատրվում են վաճառել կամ վերագրավադնել: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ պետական պարտատոմսեր	202,605	188,943	119,576	114,406
Արտարժույթով կորպորատիվ բաժնետոմսեր	-	-	25,769	15,688
Ընդամենը հակադարձ հետգնման պայմանագրերով գնված արժեթղթեր և տրամադրված վարկեր	202,605	188,943	145,345	130,094

Ինչպես նշված է 33 ծանոթագրությունում, 2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխատվությունների ժամկետային վերլուծությունը ներկայացված է 35 ծանոթագրությունում:

Հաճախորդներին տրված վարկերի պարտքային, փոխարժեքային և տոկոսադրույքային վերլուծությունը բացահայտված է 36 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը կապակցված անձանց հետ գործարքների վերաբերյալ բացահայտված է 32 ծանոթագրությունում:

Ֆինանսական վարձակալության գծով տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ		
Մինչև 1 տարի	589,653	424,986
Մինչև 1 տարի և 5 տարուց ավելի	1,748,042	1,426,844
5 տարուց ավելի	519,952	502,846
	2,857,647	2,354,676
Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ապագա ֆինանսական եկամուտ	(761,454)	(685,340)
Պահուստ	(36,514)	(31,873)
Ֆինանսական վարձակալության գծով զուտ ներդրումներ	2,059,679	1,637,463

Ֆինանսական վարձակալության գծով պահուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկումից պահուստում:

Ֆինանսական վարձակալության գծով ենթադրվող տոկոսադրույքը կազմում է 12.17% (2020թ.՝ 12.62%):

18 Ներդրումային արժեթղթեր

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր		
Պետական պարտատոմսեր	88,810,474	63,265,237
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	732,502	-
Արժեզրկման գծով պահուստ	(568,548)	(200,532)
Ընդամենը ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	88,974,428	63,064,705

Ելնելով հաշվառման առանձնահատկությունից Պետական պարտատոմսերում ներառված են նաև Արցախի Հանրապետության կառավարության կողմից թողարկված պարտատոմսերը, որոնց մարման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվել է տրամադրել ֆինանսական աջակցություն: Ղեկավարության գնահատմամբ, Արցախի Հանրապետության կառավարության կողմից թողարկված պարտատոմսերն ունեն Հայաստանի Հանրապետության կողմից թողարկված պարտատոմսերից մեկ վարկանիշով ցածր վարկանիշ:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	200,532	204,336
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	368,016	(3,804)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	568,548	200,532

Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթերն ըստ եկամտաբերության և մարմանը մնացած ժամկետների.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
Պետական պարտատոմսեր	10.87-14.15	2047	8.00-10.69	2025-2047
Պետական պարտատոմսեր արտարժույթային	5.07-10.14	2025-2031	8.15	2025
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	7.7	2024	-	-

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	59,043,262	67,642,663
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	5,770,144	10,078,161
Բաժնային գործիքներ	64,150	64,150
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	64,877,556	77,784,974
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
ՀՀ պետական պարտատոմսեր	89,923,037	80,530,321
Ընդամենը հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	89,923,037	80,530,321

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով այլ կազմակերպություններում, Բանկի պարտազանցման բացակայության դեպքում գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով, բայց գործընկերոջ կողմից պայմանագրի ժամկետի ավարտին արժեթղթերը հետ վերադարձնելու պայմանով: Բանկը սահմանել է, որ պահպանում է այդ արժեթղթերի հետ կապված բոլոր հիմնական ռիսկերն ու հատույցները և հետևաբար, չի ապաճանաչում դրանք: Գրավադրված արժեթղթերի դիմաց հաշվառվող պարտավորությունները ներկայացված են 23,24,25 ծանոթագրություններում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
	Փուլ 1	Փուլ 1
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	603,586	353,580
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	223,951	250,006
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	827,537	603,586

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանի որ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Բանկը տարվա ընթացքում ամորտիզացված արժեքով չափվող որևէ ֆինանսական ակտիվ չի վերադասակարգել որպես իրական արժեքով չափվող (2020թ.՝ ոչինչ):

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
Պետական պարտատոմսեր	8.57-16.52	2024-2050	7.12-16.52	2022-2050
Պետական պարտատոմսեր արտարժույթային	3.84-6.86	2025-2031	3.84-6.86	2025-2029
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	3.3-12.50	2022-2026	2.25-12.50	2021-2025

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերում ներառված բաժնային արժեթղթերը ստորև ներկայացվող չգնանշվող բաժնային արժեթղթերն են՝.

Անվանումը	Գրանցման երկիրը	Վերահսկվող %		Հազար ՀՀ դրամ	
		2021	2020	2021	2020
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	1.25	1.25	16,500	16,500
ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ	Հայաստանի Հանրապետություն	3.68	3.68	19,575	19,575
Արցախ ՀԷԿ	Հայաստանի Հանրապետություն	0.25	0.25	28,075	28,075
				64,150	64,150

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ այս գործիքների գնահատված իրական արժեքը մոտարկում է դրանց սկզբնական արժեքին 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

19 Հիմնական միջոցներ

	Շենքեր	Կապիտալ ներդրումներով վարձակալված հիմանական միջոցներում	Համակար-գիչներ և կապի միջոցներ	Փոխադրա-միջոցներ	Գրասե-նյակային սարքա-վորում	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ Շենքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք/ վերագնահատված արժեք							
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	2,017,603	45,395	270,282	124,247	152,309	130,759	2,740,595
Ավելացում	-	13,670	46,286	-	13,889	43,006	116,851
Օտարում	-	-	(5,579)	-	(13,247)	-	(18,826)
Արժեզրկման ծախս	(196,341)	-	-	-	-	-	(196,341)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,821,262	59,065	310,989	124,247	152,951	173,765	2,642,279
Ավելացում	-	-	25,422	16,150	14,595	819	56,986
Օտարում	-	-	(13,800)	(47,101)	(1,527)	(820)	(63,248)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,821,262	59,065	322,611	93,296	166,019	173,764	2,636,017

	Շենքեր	Կապիտալ ներդրումներով վարձակալված հիմանական միջոցներում	Համակարգիչներ և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Գրասենյակային սարքավորում	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ Շենքեր	Ընդամենը
Կուտակված մաշվածություն							
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	311,644	19,985	184,091	84,466	121,660	29,033	750,879
Տարվա ծախս	84,564	9,087	27,915	8,040	10,144	36,842	176,592
Օտարում	-	-	(5,579)	-	(13,247)	-	(18,826)
Արժեզրկման ծախս	(26,546)	-	-	-	-	-	(26,546)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	369,662	29,072	206,427	92,506	118,557	65,875	882,099
Տարվա ծախս	78,034	11,526	26,766	8,313	7,974	45,553	178,166
Օտարում	-	-	(13,800)	(45,524)	(1,527)	(820)	(61,671)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	447,696	40,598	219,393	55,295	125,004	110,608	998,594
Հաշվեկշիռային արժեք							
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,451,600	29,993	104,562	31,741	34,394	107,890	1,760,180
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,373,566	18,467	103,218	38,001	41,015	63,156	1,637,423

Ակտիվների վերագնահատում

Բանկի շենքի վերագնահատումը կատարվել է անկախ գնահատողի կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները: Իրական արժեքով շենքի գնահատման համար Ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողի կողմից ներկայացված արդյունքները:

Հիմնական միջոցների իրական արժեքի հիերարխիայի համար տես ծանոթագրություն 33.3-ը:

Բանկի ղեկավարության գնահատմամբ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց իրական արժեքից:

Եթե վերագնահատված հիմնական միջոցները՝ շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի մոդելի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքները կունենային հետևյալ տեսքը՝

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Սկզբնական արժեք	748,647	748,647
Կուտակված մաշվածություն	(259,947)	(234,992)
Հաշվեկշռային արժեք	488,700	513,655

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի համար: Յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այլ պարտավորություններ տողում (տե՛ս ծանոթագրություն 28):

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Բանկը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Բանկին արգելված է վաճառել կամ գրավադրել վարձակալված հիմքում ընկած ակտիվները: Բանկը պետք է այդ գույքերը պահպանի բարեկարգ վիճակում (վերանորոգված) և վարձակալության ավարտին գույքը վերադարձնի իր սկզբնական վիճակով:

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկբնական արժեքը կազմում է 266,072 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 261,950 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Պայմանագրային պարտավորություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը նախնական պայմանագիր ունի նոր գրասենյակային շենք ձեռք բերելու համար, նոր մասնաշենքի պայմանագրային նախնական գինը կազմում է 2,500,000 հազար դրամ: 2021թ. Բանկն արդեն որպես կանխավճար վճարել է 1,620,000 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,030,000 հազար դրամ (ծանոթ. 22): Բանկի ղեկավարությունը հատկացրել է անհրաժեշտ ռեսուրսներ այս պարտավորության մարման համար: Բանկի ղեկավարությունը կարծում է, որ հետագա զուտ եկամուտները և ֆինանսավորումը կբավարարեն վճարելու այս և նմանատիպ այլ պարտավորությունները:

20 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Արտոնագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	100,301	69,563	169,864
Ավելացում	29,192	11,851	41,043
Օտարում	(12,160)	(1,504)	(13,664)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	117,333	79,910	197,243
Ավելացում	15,925	6,070	21,995
Օտարում	(13,400)	(4,782)	(18,182)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	119,858	81,198	201,056
Կուտակված ամորտիզացիա			
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	85,852	19,859	105,711
Մասհանումներ	12,826	9,174	22,000
Օտարում	(12,160)	(1,504)	(13,664)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	86,518	27,529	114,047
Մասհանումներ	13,176	13,322	26,498
Օտարում	(13,400)	(4,782)	(18,182)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	86,294	36,069	122,363
Հաշվեկշռային արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,815	52,381	83,196
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	33,564	45,129	78,693

Պայմանագրային պարտավորություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի որևէ պայմանագրային պարտավորություն (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

Ոչ նյութական ակտիվների սահմանափակումներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ:

21 Բռնագանձված ակտիվներ

Տարվա ընթացքում Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների նկատմամբ սեփականության իրավունք ստանալու արդյունքում

ձեռք բերված ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Անշարժ գույք	1,715,272	1,910,001
Այլ ակտիվներ	79,488	356,869
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	1,794,760	2,266,870

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

22 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	256,454	215,989
Այլ ֆինանսական ակտիվներ	22,243	8,489
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	278,697	224,478
Կանխավճարներ	1,701,716	1,127,007
Կանխավճարներ լիզինգի առարկաների ձեռք բերման գծով	822,695	-
Ոսկու ձուլակտորներ	688,505	834,280
Հաշվեգրված ծախսեր	33,535	81,753
Պահեստ	12,227	12,144
Այլ ակտիվներ	2,679	8,890
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	3,261,357	2,064,074
Ընդամենը այլ ակտիվներ	3,540,054	2,288,552

Կանխավճարները ներառում են Բանկի կողմից կապակցված կողմին կատարված 1,620,000 հազար դրամի չափով կանխավճարները (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,030,000 հազար դրամ), որպես Բանկի 2,500,000 հազար դրամ նախնական արժեքով նոր մասնաշենքի կառուցման երաշխիք:

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
	Փուլ 1	Փուլ 1
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	-	3,412
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	-	1,524
Զուտ դուրսգրում	-	(4,936)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-

23 Պարտավորություններ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հետգնման պայմանագրեր	66,043,438	49,014,600
Միջազգային ծրագրերով վարկեր	11,861,320	6,908,636
	77,904,758	55,923,236

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ ոչինչ):

Հետգնման պայմանագրերով ներգրաված վարկերը ապահովված են Բանկի կողմից գրավադրված 71,691,678 հազար ՀՀ դրամ գումարով (2020թ.՝ 52,953,633 հազար ՀՀ դրամ) իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ՀՀ պետական պարտատոմսերով (ծանոթ. 18):

24 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	18,659,479	17,814,397
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	2,244,466	5,633,386
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	11,244,704	3,015,353
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	1,796,393	900,337
Ակրեդիտիվների գծով պարտավորություններ	4,324,563	1,141,872
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	21,404	23,534
Հետգնման պայմանագրեր	15,333,514	22,280,410
Այլ պարտավորություններ	29,193	14,103
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	53,653,716	50,823,392

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկերը ներառում են Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկից, responsAibility SICAV (Lux) և responsAibility Միկրո և ՓՄՁ ֆինանսավորման ֆոնդերից ստացված վարկերը:

Ֆինանսական կազմակերպություններից բոլոր ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույքներ: Ֆինանսական կազմակերպություններից վարկերն ունեն հաստատուն և լողացող տոկոսադրույքներ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ուներ ընդամենը երկու ֆինանսական կազմակերպություն (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10% -ը: Այս վարկերի և ավանդների համախառն արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 32,817,690 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 34,520,267 հազար դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ նույնպես):

25 Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
ՀՀ Կառավարություն		
Այլ պարտավորություններ	-	20,000
	-	20,000
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	12,893,715	13,596,404
Ժամկետային ավանդներ	73,076,583	82,215,419
Հետգնման պայմանագրեր	251,326	-
	86,221,624	95,811,823
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	14,292,672	13,857,381
Ժամկետային ավանդներ	23,482,933	25,011,017
	37,775,605	38,868,398
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	123,997,229	134,700,221

Վարկերը և ավադները ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

ՀՀ կառավարությունից ստացված վարկերը իրենցից ներկայացնում են «Տնտեսության կայունության վարկավորման» ծրագրի շրջանակներում ստացված միջոցները:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների ընթացիկ և ժամկետային ավանդներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի, երաշխիքների և այլ պայմանական պարտավորությունների գծով համապատասխանաբար 7,193,330 հազար դրամ գումարով (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 14,106,500 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի փոխկապակցված հաճախորդների երկու խումբ (ներառյալ կապակցված անձինք, ծանոթ. 32) (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու), որոնց մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10% -ը: Այս մնացորդների համախառն արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 90,505,104 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 104,963,288 հազար դրամ):

Հետգնման պայմանագրերով ներգրաված վարկերը ապահովված են Բանկի կողմից գրավադրված 252,374 հազար ՀՀ դրամ գումարով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ՀՀ պետական պարտատոմսերով (ծանոթագրություն 18):

26 Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Պարտատոմսեր	58,839,075	64,911,905
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	58,839,075	64,911,905

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված որևէ պարտատոմս (2020թ.՝ ոչինչ):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի փոխկապակցված հաճախորդների երկու խումբ (ներառյալ կապակցված անձինք, ծանոթ. 32) (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երեք), որոնց պարտատոմսերի մնացորդները գերազանցում են սեփական կապիտալի 10% -ը: Այս մնացորդների համախառն արժեքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 37,388,904 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 46,395,209 հազար դրամ):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Պարտատոմսի տեսակը	Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Անվանական արժեք	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
AMSWISB26ER6	15.06.17	AMD	50,000	40,000	12.75	15.06.2021	2,000,000,000
AMSWISB27ER4	24.05.18	AMD	50,000	120,000	11.50	24.05.2023	6,000,000,000
AMSWISB25ER8	15.06.17	EUR	100	100,000	5.00	15.06.2023	10,000,000
AMSWISB24ER1	15.06.17	USD	100	100,000	6.75	15.06.2024	10,000,000
AMSWISB29ER0	22.11.18	USD	100	100,000	6.00	22.11.2024	10,000,000
AMSWISB28ER2	24.05.18	USD	100	60,000	6.50	24.05.2025	6,000,000
AMSWISB2AER6	02.05.19	USD	100	50,000	6.50	02.05.2025	5,000,000
AMSWISB2BER4	02.05.19	EUR	100	30,000	4.00	02.05.2023	3,000,000
AMSWISB2CER2	01.06.20	AMD	50,000	200,000	9.00	01.06.2025	10,000,000,000
AMSWISB2DER0	01.06.20	USD	100	100,000	6.00	01.06.2026	10,000,000
AMSWISB2EER8	01.06.20	EUR	100	100,000	3.50	01.06.2025	10,000,000
AMSWISB2FER5	28.09.20	AMD	50,000	200,000	8.50	28.09.2026	10,000,000,000

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ ոչինչ):

Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը գնանշված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

27 Ստորադաս փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Իրավաբանական անձանց կողմից ստացված ստորադաս փոխառություն	23,417,085	13,826,587
Ընդամենը ստորադաս փոխառություն	23,417,085	13,826,587

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ վարկային համաձայնագիր, որը Բանկի անվճարունակության դեպքում դասվում է երկրորդական Բանկի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ ոչինչ):

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է Բանկի կապակցված կողմից ստացված գումարները (տես՝ ծանոթագրություն 32):

Իրավաբանական անձանց կողմից տրամադրված ստորադաս փոխառությունների մնացորդը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

				31 դեկտեմբերի 2021թ.
Տրամադրման տարի	Արժույթ	%	Մարման ժամկետ, տարի	Գումար, հազար ՀՀ դրամ
2015թ.	ԱՄՆ դոլար	3	9	2,401,687
2016թ.	ԱՄՆ դոլար	8	7	2,412,276
2016թ.	ՀՀ դրամ	14	7	8,067,507
2016թ.	ԱՄՆ դոլար	3	7	480,890
2021թ	ՀՀ դրամ	11,75	7	10,054,725
Ընդամենը ստորադաս փոխառություններ				23,417,085

28 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վճարվելիք գումարներ	257,631	228,730
Վարձակալության գծով պարտավորություններ	79,689	126,176
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	379,771	382,738
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	717,091	737,644
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	254,783	279,567
Ստացված կանխավճարներ	-	30,034
Պահուստներ*	25,542	29,195
Այլ	3,532	62,803
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	283,857	401,599
Ընդամենը այլ պարտավորություններ	1,000,948	1,139,243

*Պահուստները ստեղծվել են ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների գծով կորուստներից: ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերաբերյալ վերլուծությունը տես 30 ծանոթագրությունում:

Վարձակալության գծով պարտավորություններ

Բանկը վարձակալության պայմանագրեր է կնքել գլխամասային գրասենյակի համար: Յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Գույքի վարձակալությունները հիմնականում ունեն սկսած 0.6 տարուց մինչև 2.6 տարի վարձակալության ժամկետ: Վարձակալության վճարները հիմնականում ֆիքսված են:

Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորությունների շարժը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հունվարի 1-ի դրությամբ	126,176	107,755
Ավելացում	819	43,006
Տոկոսի կուտակում	7,318	20,865
Վճարումներ	(54,624)	(45,450)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	79,689	126,176

Վարձակալության գծով պարտավորությունները ապահովագրված են համապատասխան հիմքում ընկած ակտիվներով: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության գծով չզեղչված պարտավորությունների ժամկետային վերլուծությունը արտացոլված է ծանոթագրություն 36.3-ում:

29 Սեփական կապիտալ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 10,000,200 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 16,667 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 600 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով:

2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Էյչ-Վի-Էս Հոլդինգ Ջի Էմ Բի Էյչ	8,752,800	87.53
«ՖՄՏՄ Դիստրբյուշն» ՍՊԸ	1,247,400	12.47
	10,000,200	100

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը ունեն մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում և իրավունք ստանալու շահաբաժին:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով

30 Փոխատվության հանձնառություններ և ֆինանսական երաշխավորություններ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վարկային գծերի չօգտագործված մաս	4,917,386	4,144,978
Տրամադրված երաշխիքներ	2,414,770	4,123,067
Ակրեդիտիվներ	1,483,673	-
Ֆակտորինգային սահմանաչափի չօգտագործված մաս	5,053,461	4,691,236
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	13,869,290	12,959,281

Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի պահուստներում (տե՛ս ծանոթագրություն 17):

Ֆինանսական երաշխիքների և ակրեդետիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունները ներկայացվում են այլ պարտավորություններում, որոնց գծով վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Հազար ՀՀ դրամ	2021թ.	2020թ.
	Փուլ 1	Փուլ 1
Ֆինանսական երաշխավորություններ և ակրեդիտիվներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	29,195	29,794
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	(3,653)	(599)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,542	29,195

31 Պայմանականություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով

կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Բանկը նախատեսում է իր գործունեության դադարեցմանը, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորությանը վերաբերող մասնակի ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Բանկի վերջնական վերահսկող է համարվում շվեյցարացի գործարար Վարդան Սիրմաքեսը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2021		2020	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Հունվարի 1-ի դրությամբ	70,000	-	2,004,164	-
Տարվա ընթացքում ստացված	-	-	546,838	-
Տարվա ընթացքում վճարված	(70,000)	-	(2,481,002)	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքների մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	-	-	70,000	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	70,000	-
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Հունվարի 1-ի դրությամբ	(2,005,082)	-	-	-
Տարվա ընթացքում տրամադրված	-	-	2,162,452	-
Տարվա ընթացքում մարված	(2,005,082)	-	(157,370)	-
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	-	-	2,005,082	-
Արժեզրկումից պահուստ	-	-	(18,306)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	1,986,776	-
Հաճախորդներին տրված վարկեր				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	12,580,695	1,099,475	9,586,904	768,122
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	9,232,799	359,013	7,055,700	601,587
Տարվա ընթացքում մարված վարկեր	(18,066,549)	(980,835)	(4,061,909)	(270,234)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	3,746,945	477,652	12,580,695	1,099,475
Արժեզրկումից պահուստ	(16,357)	(8,787)	(289,643)	(183,437)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,730,588	468,865	12,291,052	916,038
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				

Հազար ՀՀ դրամ	2021		2020	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
Հունվարի 1-ի դրությամբ	9,548	-	8,246	-
Տարվա ընթացքում ստացված	273,904	-	226,908	-
Տարվա ընթացքում վճարված	(274,799)	-	(225,606)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,653	-	9,548	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Ավանդներ 1 հունվարի դրությամբ	84,230,453	240,318	67,653,561	221,567
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	75,966,558	4,666,678	109,995,187	13,205,772
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(88,579,401)	(4,752,563)	(93,418,295)	(13,187,021)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	71,617,610	154,433	84,230,453	240,318
Թողարկված պարտատոմսեր				
Հունվարի 1-ի դրությամբ	33,885,382	1,133,684	12,575,995	683,304
Տարվա ընթացքում ստացված	2,810,815	154,904	25,663,238	633,985
Տարվա ընթացքում վճարված	(5,372,248)	(613,449)	(4,353,851)	(183,605)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,323,949	675,139	33,885,382	1,133,684
Ստորադաս փոխառություն				
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,417,085	-	13,826,587	-
Չօգտագործված վարկային պարտավորվածություններ	66,001	226,276	128,828	34,283
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Տոկոսային եկամուտ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	78,317	-	157,527	-
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրամադրված վարկերի գծով	803,450	57,311	821,007	60,917
Տոկոսային ծախսեր հաճախորդների նկատմամբ պարտավորությունների գծով	(6,474,677)	(7,884)	(7,824,969)	(6,017)
Տոկոսային ծախսեր թողարկված պարտատոմսերի գծով	(2,594,254)	(56,462)	(1,703,607)	(63,733)
Տոկոսային ծախսեր ստորադաս փոխառության գծով	(2,544,164)	-	(1,410,110)	-
Վարկային կորուստների արժեզրկման (ծախս)/ հակադարձում	273,286	174,650	49,133	(139,014)

Բաժնետերերին, ղեկավար անձնակազմին և կապակցված անձանց տրամադրված վարկերը վճարման են ենթակա 2022-2041թթ. ընկած ժամանակահատվածում և դրանց միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 6.72% (2020թ.՝ 7.22%):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 61.3% (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 61.8%) կազմում են բաժնետիրոջից (Բանկի վերջնական վերահսկող Վարդան Սիրմաքեսից) և նրա հետ կապակցված անձանցից ներգրաված միջոցները, որի գծով վճարված տարեկան տոկոսային ծախսերը կազմում են ընդհանուր տոկոսային ծախսերի 50.9% (2020թ.՝ 74.3%):

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Աշխատավարձ և պարգևատրումներ	548,891	624,376
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	548,891	624,376

33 Իրական արժեքի չափումը

Բանկի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ անշարժ գույքի և բռնագանձված ակտիվների գնահատման մեջ: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).

- Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՞ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

33.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռայի և արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	27,330,179		27,330,179	27,330,179
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	2,540,486	-	2,540,486	2,540,486
Հաճախորդներին տրված վարկեր	-	116,032,300	-	116,032,300	116,759,510
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	92,797,201	-	92,797,201	88,974,428
Այլ ֆինանսական ակտիվներ	-	278,697	-	278,697	278,697
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	-	77,904,758	-	77,904,758	77,904,758
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	53,653,716	-	53,653,716	53,653,716
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	123,997,229	-	123,997,229	123,997,229
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	61,320,040	-	61,320,040	58,839,075
Ստորադաս փոխառություն	-	23,417,085	-	23,417,085	23,417,085
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	717,091	-	717,091	717,091

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային և արժեք
Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	27,746,794	-	27,746,794	27,746,794
Պահանջներ ֆինանսական կազմակեպությունների նկատմամբ	-	6,824,674	-	6,824,674	6,824,674
Հաճախորդներին տրված վարկեր	-	123,498,224	-	123,498,224	123,498,224
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	-	76,751,222	-	76,751,222	63,064,705
Այլ ֆինանսական ակտիվներ	-	224,478	-	224,478	224,478
Ֆինանսական պարտավորություններ					
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	-	55,923,236	-	55,923,236	55,923,236
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	50,823,392	-	50,823,392	50,823,392
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	134,700,221	-	134,700,221	134,700,221
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	65,993,662	-	65,993,662	64,911,905
Ստորադաս փոխառություն	-	13,826,587	-	13,826,587	13,826,587
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	737,644	-	737,644	737,644

Պահանջներ և պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի

պարտքային ռիսկից և տատանվում են 4.4% մինչև 21% տարեկան (2020թ.՝ 4% մինչև 18% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների իրական արժեքը հիմնված է շուկայում գործող տոկոսադրույքների վրա: Այն արժեթղթերի իրական արժեքը, որոնց վերաբերյալ բացակայում են գնանշումները, հիմնված են ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկի վրա, որոնք զեղչվում են տարվա վերջին շուկայում գործող տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքերին:

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, ստորադաս փոխառություններ, թողարկված արժեթղթեր

Հաճախորդների ավանդների, ստորադաս փոխառությունների, թողարկված արժեթղթերի իրական արժեքները գնահատվում են օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող գործիքների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

33.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ				
Պարտատոմսեր (այդ թվում գրավադրված)	4,495,755	150,240,688	-	154,736,443
Բաժնային գործիքներ	28,075	36,075		64,150
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	35,125	-	35,125
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	(64,242)	-	(64,242)
Ընդամենը	4,523,830	150,247,646	-	154,771,476

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ				
Պարտատոմսեր (այդ թվում գրավադրված)	8,872,948	149,378,197	-	158,251,145
Բաժնային գործքիներ	28,075	36,075	-	64,150
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	8,980	-	8,980
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	(168,784)	-	(168,784)
Ընդամենը	8,901,023	149,254,468	-	158,155,491

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Գնանշվող ներդրումներ

Բոլոր ցուցակված պարտատոմսերը թողարկվել են Հայաստանում հրապարակայնորեն գնանշվող ընկերությունների կողմից:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ զեղչված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, որպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Բանկի կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժութային ֆորվարդային պայմանագրերից:

33.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Շենքեր	-	*1,821,262*	-	*1,821,262*
Ընդամենը	-	1,821,262	-	1,821,262

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
Հիմնական միջոցներ				
Շենքեր	-	*1,821,262*	-	*1,821,262*
Ընդամենը	-	1,821,262	-	1,821,262

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են տնօրենների խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է կիրառելով համեմատական մոտեցումը, որն արտացոլում է նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հողին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

Շենքը վերագնահատվել է 2016թ փետրվարի 8-ին՝ կիրառելով շուկայական, եկամտային և ծախսային մեթոդների համադրություն:

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա:

Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվների շարժը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Հունվարի 1-ի դրությամբ	1,821,262	2,017,603
Առք	-	-
Արժեզրկում	-	(196,341)
Զուտ իրական արժեք դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,821,262	1,821,262

34 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

				31 դեկտեմբերի 2021թ.		
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների / Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման համաձայնագրեր (Ծանոթ. 17)	188,943	-	188,943	-	188,943	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերով վարկեր (Ծանոթ. 23, 24, 25)	81,628,278	-	81,628,278	(89,923,037)	-	(8,294,759)

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել		
	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների / Պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	Ֆինանսական գործիքներ	Ստացված դրամական ապահովում	Զուտ
Ֆինանսական ակտիվներ						
Հակադարձ հետգնման համաձայնագրեր (Ծանոթ.16, 17)	1,141,152	-	1,141,152	-	1,141,152	-
Ֆինանսական պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերով վարկեր (Ծանոթ. 23, 24)	71,295,010	-	71,295,010	(80,530,321)	-	(9,235,311)

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների համախառն արժեքները և դրանց զուտ արժեքները, որոնք ներկայացվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ և բացահայտվել են վերոնշյալ աղյուսակներում, չափվում են համաձայն հետևյալ հիմունքների՝ հակադարձ հետգնման պայմանագրերով տրամադրված վարկերը, հետգնման պայմանագրերով ներգրաված պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով:

35 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Բանկի չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 36.3-ում:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,330,179	-	*27,330,179*	-	-	-	27,330,179
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	4,541	86	*4,627*	350	30,148	*30,498*	35,125
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,642,241	254,890	*1,897,131*	643,355	-	*643,355*	2,540,486
Հաճախորդներին տրված վարկեր	4,583,782	32,530,714	*37,114,496*	54,393,562	25,251,452	*79,645,014*	116,759,510
Ներդրումային արժեթղթեր	376,427	16,231,819	*16,608,246*	88,579,880	48,663,858	*137,243,738*	153,851,984
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	76,361,800	13,561,237	*89,923,037*	-	-	-	89,923,037
Այլ ֆինանսական ակտիվներ	278,697	-	*278,697*	-	-	-	278,697
	110,577,667	62,578,746	*173,156,413*	143,617,147	73,945,458	*217,562,605*	390,719,018
Պարտավորություններ							
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	66,688,413	919,583	*67,607,996*	7,842,986	2,453,776	*10,296,762*	77,904,758
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	472	5,720	*6,192*	22,801	35,249	*58,050*	64,242
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,728,986	16,601,134	*27,330,120*	25,831,037	492,559	*26,323,596*	53,653,716
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	27,961,871	21,571,545	*49,533,416*	68,217,799	6,246,014	*74,463,813*	123,997,229
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	673,305	*673,305*	58,165,770	-	*58,165,770*	58,839,075
Ստորադաս փոխառություն	135,545	-	*135,545*	13,281,540	10,000,000	*23,281,540*	23,417,085
Վարձակալության գծով պարտավորություններ	4,045	47,004	*51,049*	28,640	-	*28,640*	79,689
Այլ ֆինանսական պարտավորություններ (բացառությամբ վարձակալության գծով պարտավորությունների)	637,402	-	*637,402*	-	-	-	637,402
	106,156,734	39,818,291	*145,975,025*	173,390,573	19,227,598	*192,618,171*	338,593,196
Զուտ Դիրք	4,420,933	22,760,455	*27,181,388*	(29,773,426)	54,717,860	*24,944,434*	52,125,822
Կուտակված ճեղքվածք	4,420,933	27,181,388		(2,592,038)	52,125,822		

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.						
	Պահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրագումար	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,746,794	-	*27,746,794*	-	-	-	27,746,794
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	14	171	*185*	712	8,083	*8,795*	8,980
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,984,131	4,444,545	*6,428,676*	395,998	-	*395,998*	6,824,674
Հաճախորդներին տրված վարկեր	3,905,883	39,076,774	*42,982,657*	59,104,405	21,411,162	*80,515,567*	123,498,224
Ներդրումային արժեթղթեր	65,310	8,928,550	*8,993,860*	8,941,306	122,914,513	*131,855,819*	140,849,679
-Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	75,407,917	5,122,404	*80,530,321*	-	-	-	80,530,321
Այլ ֆինանսական ակտիվներ	224,478	-	*224,478*	-	-	-	224,478
	109,334,527	57,572,444	*166,906,971*	68,442,421	144,333,758	*212,776,179*	379,683,150
Պարտավորություններ							
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	49,604,562	632,828	*50,237,390*	3,880,252	1,805,594	*5,685,846*	55,923,236
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	68,651	8,008	*76,659*	33,354	58,771	*92,125*	168,784
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20,878,095	21,925,921	*42,804,016*	7,550,087	469,289	*8,019,376*	50,823,392
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	41,446,841	21,079,217	*62,526,058*	68,588,321	3,585,842	*72,174,163*	134,700,221
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	2,740,185	*2,740,185*	46,945,820	15,225,900	*62,171,720*	64,911,905
Ստորադաս փոխառություն	78,097	-	*78,097*	13,748,490	-	*13,748,490*	13,826,587
Վարձակալության գծով պարտավորություններ	3,645	42,238	*45,883*	80,293	-	*80,293*	126,176
Այլ ֆինանսական պարտավորություններ (բացառությամբ վարձակալության գծով պարտավորությունների)	611,468	-	*611,468*	-	-	-	611,468
	112,691,359	46,428,397	*159,119,756*	140,826,617	21,145,396	*161,972,013*	321,091,769
Զուտ Դիրք	(3,356,832)	11,144,047	7,787,215	(72,384,196)	123,188,362	*50,804,166*	58,591,381
Կուտակված ճեղքվածք	(3,356,832)	7,787,215		(64,596,981)	58,591,381		

36 Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարումը Բանկն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման գործընթացը էական նշանակություն ունի Բանկի շահութաբերության կայունության ապահովման գործում, և Բանկի յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի առաջացման համար: Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային, իրացվելիության ռիսկերի և շուկայական ռիսկի, որն իր հերթին բաժանվում է առևտրային և ոչ առևտրային գործառնությունների հետ կապված շուկայական ռիսկի: Բանկը նաև ենթարկվում է գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ կառավարման գործընթացը չի ներառում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի փոփոխությունները, տեխնոլոգիաների կամ արդյունաբերության փոփոխությունները: Դրանք կառավարվում են Բանկի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացում:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը կրում է Բանկի Խորհուրդը, սակայն, գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության հաստատման և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Տնօրինություն

Տնօրինությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման գործընթացի վերահսկման համար:

Վարկային կոմիտե

Վարկային կոմիտեն իրականացնում է վարկային ռիսկի ընդհանուր կառավարումը և վերահսկողությունը, հաստատում է վարկեր իրեն հատկացված սահմանաչափերի շրջանակներում:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է հիմնականում ներդրումային ռիսկերի կառավարման սկզբունքների, քաղաքականության և Բանկի ռիսկի սահմանաչափերի մշակման և կիրառման համար:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը գնահատում է ընթացակարգերի ամբողջականությունը, Բանկի գործունեության համապատասխանությունը գործող ընթացակարգերին, ինչպես նաև Բանկի կողմից իրականացվող գործառնությունների արդյունավետությունը և դրանց կատարելագործման

հնարավորությունները: Ներքին աուդիտի ստորաբաժանումը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է Բանկի ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկների վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Բանկի Տնօրինությանն ու Խորհրդին:

Ռիսկի գնահատման և ռիսկերի ներկայացման համակարգեր

Բանկի ռիսկերը գնահատվում են այն մեթոդով, որն արտացոլում է ինչպես սպասվող կորուստը, որը հնարավոր է սովորական գործունեության ընթացքում, այնպես էլ անսպասելի կորուստները, որոնք իրենցից ներկայացնում են փաստացի ամենաշատ կորուստների արժեքը ըստ վիճակագրական մոդելների հիմքի: Մոդելում կիրառվում են նախորդ փորձից ստացված և շտկված հնարավորությունների նշանակությունները, հաշվի առնելով տնտեսական պայմանները: Բանկը նաև մոդելավորում է «վատագույն դեպքերը», որոնք տեղ կունենան քիչ հավանական թվացող դեպքերի առաջացման ժամանակ:

Ռիսկերի մոնիթորինգը և կառավարումը հիմնականում հիմնված է Բանկի կողմից սահմանված ռիսկերի սահմանաչափերի վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Բանկի գործարար ռազմավարությունը և շուկայական պայմանները, որոնցում գործում է Բանկը, ինչպես նաև Բանկի համար ընդունելի ռիսկի մակարդակը, որը Բանկը պատրաստ է ընդունել, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում առանձին բնագավառների վրա: Բացի դրանից, Բանկը վերահսկում և գնահատում է իր ընդհանուր կարողությունը կրել ռիսկեր՝ կապված բոլոր տեսակի ռիսկերի և գործառնությունների համապարփակ դիրքերի հետ:

Գործունեության բոլոր տեսակների գծով ստացվող տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերի վերլուծության, վերահսկողության և գնահատման նպատակով: Տվյալ տեղեկատվությունը բացատրություններով ներկայացվում է ղեկավարությանը: Հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ կրեդիտային ռիսկի համապարփակ չափի, կանխատեսումային կրեդիտային ցուցանիշների, ռիսկի սահմանված սահմանաչափերի բացառությունների վերաբերյալ, ռիսկի աստիճանի փոփոխության և այլ ցուցանիշների վերաբերյալ:

Ռիսկի նվազեցում

Բանկը ռիսկերի կառավարման շրջանակներում կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ արտարժութային դիրքերի կառավարման համար, ինչպես նաև ձեռք է բերում բանկային ռիսկերի համապարփակ, անշարժ և շարժական գույքի ապահովագրության վկայագրեր:

Բանկն ակտիվ կիրառում է ապահովումը, իր պարտքային ռիսկի նվազեցման համար (հավելյալ տեղեկությունը տե՛ս ստորև):

Ռիսկի չափազանց կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, և տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխության արդյունքում ցուցաբերում են նմանատիպ ազդեցություն այդ գործընկերների պայմանագրային պարտավորությունների կատարման ունակության վրա: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար, Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ, ուղղված բազմաբնույթ պորտֆելի պահպանմանը: Իրականացվում է կառավարում ռիսկի սահմանված կենտրոնացումներով:

36.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորվածությունները: Պարտքային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի ՌԿՎ պարտքային ռիսկի կառավարման խմբի կողմից և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Խորհրդին:

36.1.1 Վարկային որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված հանձնառությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի գումարները:

Ներքին վականիշների վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 36.1.2-ում:

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2021թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Ստանդարտ	27,330,179	-	-	27,330,179
Համախառն հաշվեկշռային արժեք	27,330,179	-	-	27,330,179
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	27,330,179	-	-	27,330,179
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	2,599,404	-	-	2,599,404
Համախառն հաշվեկշռային արժեք	2,599,404	-	-	2,599,404
Արժեզրկումից պահուստ	(58,918)	-	-	(58,918)
Զուտ հաշվեկշռային արժեք	2,540,486	-	-	2,540,486

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2021թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	18,437,084	-	-	18,437,084
Ստանդարտ	-	1,569,277	-	1,569,277
Ոչ ստանդարտ	-	-	-	-
Չաշխատող	-	-	1,033,959	1,033,959
Համախառն հաշվեկշռային արժեք	18,437,084	1,569,277	1,033,959	21,040,320
Արժեզրկումից պահուստ	(361,305)	(1,142,260)	(16,785)	(1,520,350)
Զուտ հաշվեկշռային արժեք	18,075,779	427,017	1,017,174	19,519,970
Առևտրային վարկեր				
Բարձր	87,711,823	-	-	87,711,823
Ստանդարտ	-	9,229,101	-	9,229,101
Ոչ ստանդարտ	-	1,411,185	-	1,411,185
Չաշխատող	-	-	2,860,456	2,860,456
Համախառն հաշվեկշռային արժեք	87,711,823	10,640,286	2,860,456	101,212,565
Արժեզրկումից պահուստ	(1,165,350)	(1,828,132)	(979,543)	(3,973,025)
Զուտ հաշվեկշռային արժեք	86,546,473	8,812,154	1,880,913	97,239,540
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ	89,542,976	-	-	89,542,976
Համախառն հաշվեկշռային արժեք	89,542,976	-	-	89,542,976
Արժեզրկումից պահուստ	(568,548)	-	-	(568,548)
Զուտ հաշվեկշռային արժեք	88,974,428	-	-	88,974,428
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ, այդ թվում գրավադրվածները				
Ստանդարտ	154,800,593	-	-	154,800,593
Հաշվեկշռային արժեք-իրական արժեք	154,800,593	-	-	154,800,593
Արժեզրկումից պահուստ	(827,537)	-	-	(827,537)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	278,697	-	-	278,697
Համախառն հաշվեկշռային արժեք	278,697	-	-	278,697
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	278,697	-	-	278,697

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2021թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Ստանդարտ	13,869,290	-	-	13,869,290
	13,869,290	-	-	13,869,290
Արժեզրկումից պահուստ*	(25,542)	-	-	(25,542)

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2020թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Ստանդարտ	27,746,794	-	-	27,746,794
Համախառն հաշվեկշռային արժեք	27,746,794	-	-	27,746,794
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	27,746,794	-	-	27,746,794
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				
Ստանդարտ	6,884,968	-	-	6,884,968
Համախառն հաշվեկշռային արժեք	6,884,968	-	-	6,884,968
Արժեզրկումից պահուստ	(60,294)	-	-	(60,294)
Զուտ հաշվեկշռային արժեք	6,824,674	-	-	6,824,674
Հիփոթեքային և սպառողական վարկեր				
Բարձր	17,940,675	-	-	17,940,675
Ստանդարտ	-	666,010	-	666,010
Ոչ ստանդարտ	-	33,522	-	33,522
Չաշխատող	-	-	794,614	794,614
Համախառն հաշվեկշռային արժեք	17,940,675	699,532	794,614	19,434,821
Արժեզրկումից պահուստ	(507,814)	(158,410)	(737,182)	(1,403,406)
Զուտ հաշվեկշռային արժեք	17,432,861	541,122	57,432	18,031,415
Առևտրային վարկեր				
Բարձր	96,520,169	-	-	96,520,169
Ստանդարտ	-	7,688,754	-	7,688,754
Ոչ ստանդարտ	-	117,993	-	117,993
Չաշխատող	-	-	5,972,743	5,972,743
Համախառն հաշվեկշռային արժեք	96,520,169	7,806,747	5,972,743	110,299,659
Արժեզրկումից պահուստ	(1,808,677)	(592,095)	(2,432,078)	(4,832,850)
Զուտ հաշվեկշռային արժեք	94,711,492	7,214,652	3,540,665	105,466,809

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2020թ.
Ներքին վարկանիշեր	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքներ				
Ստանդարտ	63,265,237	-	-	63,265,237
Համախառն հաշվեկշռային արժեք	63,265,237	-	-	63,265,237
Արժեզրկումից պահուստ	(200,532)	-	-	(200,532)
Զուտ հաշվեկշռային արժեք	63,064,705	-	-	63,064,705
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ, այդ թվում գրավադրվածները				
Ստանդարտ	158,251,145	-	-	158,251,145
Հաշվեկշռային արժեք-իրական արժեք	158,251,145	-	-	158,251,145
Արժեզրկումից պահուստ	(603,586)	-	-	(603,586)
Այլ ֆինանսական ակտիվներ				
Ստանդարտ	224,478	-	-	224,478
Համախառն հաշվեկշռային արժեք	224,478	-	-	224,478
Արժեզրկումից պահուստ	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային արժեք	224,478	-	-	224,478
Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ				
Ստանդարտ	12,959,281	-	-	12,959,281
	12,959,281	-	-	12,959,281
Արժեզրկումից պահուստ*	(29,195)	-	-	(29,195)

Ածանցյալ գործարքների հետևանքով առաջացող պարտքային ռիսկը բացահայտվում է 15 ծանոթագրությունում:

*Արժեզրկումից պահուստը ներկայացնում է Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստները: Փոխատվության հանձնառությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի պահուստներում:

36.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տե՛ս 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո:

Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում պարտազանցում տեղի ունենալու ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցման տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտվող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան):Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալուհավանականության մեջ: 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Պարտազանցում («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքի, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես պարտազանցման դեպք, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա պարտազանցման տեղի ունենալու հավանականության

էական փոփոխությունը դիտարկվում է որպես պարտազանցում տեղի ունենալու հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:

- Պարտազանցման տեղի ունենալու հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - պարտազանցման տեղի ունենալու հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's и Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ պարտազանցման վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցէ մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են պարտազանցում տեղի ունենալու ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված՝ ոչ ժամկետանց ֆինանսական ակտիվները սահմանվում են որպես բարձր վարկանիշ ունեցող, մինչև 30 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ստանդարտ վարկանիշ ունեցող, ավելի քան 30 օր և մինչև 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ ոչ ստանդարտ կամ ցածր և ավելի քան 90 օր ժամկետանց ֆինանսական ակտիվները՝ չաշխատող վարկանիշ ունեցող) գործոններով, որոնք մատնանշում են պատազանցում տեղի ունենալու ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հաճախորդներին տրված վարկերի, փոխատվության հանձնառությունների և ֆինանսական երաշխավորությունների համար միջին 12-ամսյա PD-ները ըստ յուրաքանչյուր վարկանիշի.

Հազար ՀՀ դրամ		2021	2020
	Վարկանիշ	12-ամսյա PD –ի միջակայք	12-ամսյա PD –ի միջակայք
Հիփոթեքային և սպառողական վարկեր	Բարձր	1.26-6.99%	0.30-8.87%
	Ստանդարտ	13.65-35.12%	17.94-36.15%
	Ոչ ստանդարտ	13.65-35.12%	17.94-36.15%
	Չաշխատող	81.68-100%	98.36-100%
Վարկեր կոմերցիոն հաճախորդներին	Բարձր	0.87-5.4%	0.75-5.54%
	Ստանդարտ	1.76-77.28%	0.38-83.62%
	Ոչ ստանդարտ	1.76-77.28%	0.38-83.62%
	Չաշխատող	93.13-100%	96.64-100%

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի գնահատման համակարգի քարտեզագրումը և գործընկերների արտաքին վարկանիշները.

		2021	2020
Միջազգային արտաքին վարկանիշային գործակալության (S&P) վարկանիշ	Վարկանիշ	12-ամսյա PD	12-ամսյա PD
AAA -ից A-	Բարձր	0.001-0.025%	0.001-0.040%
BBB+ -ից B-	Ստանդարտ	0.043-3.472%	0.059-7.207%
CCC+ to CC	Ոչ ստանդարտ	6.003-31.025%	12.834-23.604%
D	Չաշխատող	100%	100%

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապափակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Պարտազանցման սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը պարտազանցման ենթարկված, և, հետեւաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Բանկը միջբանկային հաշիվները համարում է պարտազանցման ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուն համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուն պարտազանցման ենթարկված է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում պարտազանցման սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է:

Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ ապագային առնչվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է պայմանների փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը:

Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Պարտազանցման տեղի ունենալու հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի պարտազանցման տեղի ունենալու հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Սա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են պարտազանցումից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար պարտազանցման տեղի ունենալու ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում պարտազանցման տեղի ունենալու պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի պարտազանցումների վերջին տվյալների վերլուծության վրա:

Ապագայամետ տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և

ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Ակնկալվող պարտքային կորուստների մակրոտնտեսական ճշգրտումը հաշվարկելու համար Ընկերությունն օգտագործում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակ՝ որպես իր մոդելների տնտեսական ներածություն, ներառյալ.

- ՀՆԱ-ի աճ
- ՀՆԱ (արտահայտված ՀՀ դրամով)
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանսֆերտներ
- Գործազրկության մակարդակ
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում
- Առևտրի աճի տեմպ
- Արդյունաբերության աճի տեմպ
- Շինարարության աճի տեմպ
- Գյուղատնտեսության աճի տեմպ
- Անշարժ գույքի գները (միջին գինը Երևանում)

36.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Պարտքային ռիսկի ենթարկվող ակտիվներն հիմնականում տեղաբաշխված են ՀՀ տարածքում:

36.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Բանկը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով

վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Անշարժ գույք	65,469,347	68,598,628
Շարժական գույք	7,760,782	13,634,964
ՀՀ կառավարության երաշխիքներ	-	10,348,387
Այլ կազմակերպությունների երաշխիքներ	11,289,070	9,990,875
Դրամական միջոցներ	7,610,601	7,437,933
Այլ կազմակերպությունների բաժնետոմսեր և ներդրումային արժեթղթեր	12,676,230	10,265,675
Պատրաստի արտադրանք	12,311,506	3,829,101
Այլ	5,135,349	5,628,917
Ընդամենը վարկեր (համախառն)	122,252,885	129,734,480

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

2021 թ. դեկտեմբերի 31-ին կորպորատիվ հաճախորդներին տրամադրված արժեզրկված վարկերի զուտ հաշվեկշռային արժեքը կազմել է 3,894,414 հազար դրամ (2020թ.՝ 6,767,355 հազար), իսկ այդ նույն վարկերի դիմաց գրավի (հիմնականում արտադրական գույք) գումարը՝ 5,213,826 հազար դրամ (2020թ՝ 9,550,715 հազար դրամ):

36.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է

զգայունության վերլուծությունների օգնությամբ: *Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:*

36.2.1 Շուկայական ռիսկ – Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Բանկի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Բանկի Խորհուրդը սահմանել է որոշված ժամկետների համար տոկոսադրույքների ճեղքվածքների չափ: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դրանք սահմանված շրջանակներում պահելու համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամուտի վրա՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով՝ ներառյալ հեջավորման գործիքների ազդեցությունը: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, ներառյալ հեջերի և որպես դրամական միջոցների հոսքերի հեջ բնորոշված սվոպերի ազդեցությունները, 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սվոպի իրացման ժամկետների: Կապիտալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ				**2021**
Արտարժույթ	**Փոփոխություններ հիմնական տոկոսա-դրույքներում**	**Տոկոսային եկամուտի զգայունություն**	**Կապիտալի զգայունություն**	**Ընդամենը**
ՀՀ դրամ	+0.5	59,931	(4,706,046)	(4,646,115)
ԱՄՆ դոլար	+0.5	25,627	(769,917)	(744,290)
Եվրո	+0.5	(7,979)	-	(7,979)
Ռուբլի	+0.5	18,745	-	18,745
ՀՀ դրամ	- 0.5	(59,931)	5,030,218	4,970,287
ԱՄՆ դոլար	- 0.5	(25,627)	283,812	285,185
Եվրո	- 0.5	7,979	-	7,979
Ռուբլի	- 0.5	(18,745)	-	(18,745)
Հազար ՀՀ դրամ				**2020**

Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսա-դրույքներում	Տոկոսային եկամուտի զգայունություն	Կապիտալի զգայունություն	Ընդամենը
ՀՀ դրամ	+0.5	15,236	(5,501,265)	(5,486,029)
ԱՄՆ դոլար	+0.5	33,924	(358,883)	(324,959)
Ռուբլի	+0.5	4,819	-	4,819
ՀՀ դրամ	- 0.5	(15,236)	5,919,978	5,904,742
ԱՄՆ դոլար	- 0.5	(33,924)	369,389	335,465
Ռուբլի	- 0.5	(4,819)	-	(4,819)

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսաբեր ակտիվների և տոկոսակիր պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2021թ. և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

Հազար ՀՀ դրամ	2021			2020		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսաբեր ակտիվներ						
Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններում	11.69	7.13	6.17	6.07	7.12	4.06
Հաճախորդներին տրված վարկեր	11.87	8.66	6.47	10.75	8.64	6.61
Ներդրումային արժեթղթեր	10.33	5.2	5.07	10.34	5.63	4.1
Տոկոսաբեր պարտավորություններ						
Հետգնման պայմանագրերով վարկեր ՀՀ ԿԲ-ից	8.3	-	-	5.59	-	-
ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր	6.02	-	-	5.9	-	-
Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	9.7	3.49	6.01	6.81	3.43	3.19
Հաճախորդների ժամկետային ավանդներ	10.42	4.79	2.08	10.95	4.85	3.96
Թողարկված պարտքային արժեթղթեր	9.6	6.45	4.29	9.65	6.32	4.23
Ստորադաս փոխառություն	13.53	5.45	-	14.93	5.45	-
Վարձակալության գծով պարտավորություններ	11.1	-	-	11.1	-	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Տնօրենների Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: *Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով, և հեջավորման ռազմավարություն է օգտագործվում դիրքերը սահմանված շրջանակներում պահելու համար:*

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական միջոցների հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
Արտարժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
Ազատ փոխարկելի	+5	86,563	+5	91,707
Ոչ փոխարկելի	+5	6,490	+5	(157)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ/ թանկարժեք մետաղներ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12,570,523	14,271,307	488,349	27,330,179
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	781,555	1,709,016	49,915	2,540,486
Հաճախորդներին տրված վարկեր	51,775,175	63,011,235	1,973,100	116,759,510
Ներդրումային արժեթղթեր	137,717,087	16,134,897	-	153,851,984
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	75,804,814	14,118,223	-	89,923,037
Այլ ակտիվներ	270,761	7,936	-	278,697
	278,919,915	109,252,614	2,511,364	390,683,893

Հազար ՀՀ դրամ				31 դեկտեմբերի 2021թ.
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ/ թանկարժեք մետաղներ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	77,904,758	-	-	77,904,758
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	29,573,976	21,891,860	2,187,880	53,653,716
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	76,397,687	47,415,649	183,893	123,997,229
Թողարկված պարտքային արժեթղթեր	26,520,200	32,318,875	-	58,839,075
Ստորադաս փոխառություն	18,122,233	5,294,852	-	23,417,085
Վարձակալության գծով պարտավորություններ	79,689	-	-	79,689
Այլ պարտավորություններ	629,497	777	7,128	637,402
	229,228,040	106,922,013	2,378,901	338,528,954
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	572,889	(599,342)	(2,664)	(29,117)
Զուտ դիրք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	50,264,764	1,731,259	129,799	52,125,822
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2021թ. դեկտեմբերի 31-ին	9,208,847	4,656,997	3,446	13,869,290
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	255,156,151	122,007,078	2,510,941	379,674,170
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	201,113,180	117,295,732	2,514,073	320,922,985
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքների ազդեցությունը	2,808,844	(2,877,213)	-	(68,369)
Զուտ դիրք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	56,851,815	1,834,133	(3,132)	58,682,816
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ 2020թ. դեկտեմբերի 31-ին	9,348,462	3,610,819	-	12,959,281

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն, բայց ներառում է նաև ՏՀՋԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

36.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տե՛ս ծանոթագրություն 14-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ցուցանիշները հետևյալն են.

	Աուդիտ չարված	
	2021, %	2020, %
Ն2/1- Ընդհանուր իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ Ընդհանուր ակտիվներ)	56.97	52.94
Ն2/2- Ընթացիկ իրացվելիություն (Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	577.56	533.46

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Տե՛ս ծանոթագրություն 35-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական

միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2021թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը	Հաշվեկշռային և արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	68,138,004	948,747	9,217,607	3,350,117	81,654,475	77,904,758
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,102,914	26,359,076	56,536,448	757,880	96,756,318	53,653,716
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	27,961,872	24,659,873	75,610,315	6,270,677	134,502,737	123,997,229
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	2,187,324	68,395,993	-	70,583,317	58,839,075
Ստորադաս փոխառություն	226,285	2,482,741	18,341,272	11,178,219	32,228,517	23,417,085
Վարձակալության գծով պարտավորություններ	4,552	50,609	28,716	-	83,877	79,689
Այլ ֆինանսական պարտավորություններ (բացառությամբ վարձակալության գծով պարտավորությունները)	637,402	-	-	-	637,402	637,402
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	110,071,029	56,688,370	228,130,351	21,556,893	416,446,643	338,528,954
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	100,077	-	-	-	100,077	-
Արտահոսք	(100,347)	-	-	-	(100,347)	(270)
ՀՀ պետական պարտատոմսերի ֆորվարդ պայմանագրեր						
Արտահոսք	(1,655)	(41,047)	(223,358)	(1,723,022)	(1,989,082)	(63,972)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	11,739,765	1,379,159	750,366	-	13,869,290	13,869,290

Հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2020թ.					
	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	1 - 12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	49,611,216	818,916	4,764,846	2,069,451	57,264,429	55,923,236
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	20,887,387	22,551,714	8,272,152	532,596	52,243,849	50,823,392
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	41,680,757	23,747,170	77,131,781	3,713,547	146,273,255	134,700,221
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	4,453,435	57,372,851	21,468,670	83,294,956	64,911,905
Ստորադաս փոխառություն	124,822	-	16,928,654	-	17,053,476	13,826,587
Վարձակալության գծով պարտավորություններ	4,552	49,817	81,956	-	136,325	126,176
Այլ ֆինանսական պարտավորություններ (բացառությամբ վարձակալության գծով պարտավորությունները)	611,468	-	-	-	611,468	611,468
Ընդամենը չզեղչված ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	112,920,202	51,621,052	164,552,240	27,784,264	356,877,758	320,922,985
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
Արտարժույթի սվոփ պայմանագրեր						
Ներհոսք	2,807,373	1,471	-	-	2,808,844	-
Արտահոսք	(2,875,669)	(1,545)	-	-	(2,877,214)	(68,369)
ՀՀ պետական պարտատոմսերի ֆորվարդ պայմանագրեր						
Արտահոսք	(1,833)	(39,479)	(214,119)	(1,956,898)	(2,212,329)	(100,415)
Պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	9,062,184	2,850,554	1,046,543	-	12,959,281	12,959,281

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունները երկու անձի և նրան կապակցված անձանց նկատմամբ կազմում է 153,076,609 հազար դրամ, որից մեկը Բանկի

հետ կապված անձ է: Բանկի ղեկավարությունը վստահ է, որ ֆինանսավորման ներկայիս մակարդակը կպահպանվի տեսանելի ապագայում, և միջոցների վերադարձի դեպքում նա կտեղեկացվի նախապես, ինչը հնարավորություն կտա Բանկին ժամանակին իրացնելու իր իրացվելի միջոցները և վերադարձնելու պարտքը:

36.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքները քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

37 Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համաձրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ

	Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ստորադաս փոխառություն	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2021						
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	6,908,636	17,814,397	64,911,905	13,826,587	126,176	103,587,701
Դրամային հոսքերից	*4,899,615*	*2,554,579*	*(2,000,000)*	*10,000,000*	*(54,624)*	*15,399,570*
Վճարումներ	(1,507,186)	(15,025,761)	(2,000,000)	-	(54,624)	(18,587,571)
Ստացված գումար	6,406,801	17,580,340	-	10,000,000	-	33,987,141
Ոչ դրամային հոսքերից	*53,069*	*(1,709,497)*	*(4,072,830)*	*(409,502)*	*8,137*	*(6,130,623)*
Փոխարժեքային տարբերության ազդեցություն	-	(1,775,254)	(4,034,050)	(467,446)	-	(6,276,750)
Վարձակալության ավելացում	-	-	-	-	819	819
Հաշվեգրված տոկոս	53,069	65,757	(38,780)	57,944	7,318	145,308
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,861,320	18,659,479	58,839,075	23,417,085	79,689	112,856,648

Հազար ՀՀ դրամ

	Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	Վարկեր միջազգային ֆինանսական կազմակերպություններից	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ստորադաս փոխառություն	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2020						
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	3,412,007	15,748,747	32,489,020	13,353,624	107,755	65,111,153
Դրամային հոսքերից	*3,423,162*	*494,293*	*28,098,352*	-	*(45,450)*	*31,970,357*
Վճարումներ	(776,136)	(10,503,903)	(2,461,565)	-	(45,450)	(13,787,054)
Ստացված գումար	4,199,298	10,998,196	30,559,917	-	-	45,757,411
Ոչ դրամային հոսքերից	*73,467*	*1,571,357*	*4,324,533*	*472,963*	*63,871*	*6,506,191*
Փոխարժեքային տարբերության ազդեցություն	-	1,571,357	4,008,743	471,780	-	6,051,880
Վարձակալության ավելացում	-	-	-	-	43,006	43,006
Հաշվեգրված տոկոս	73,467	-	315,790	1,183	20,865	411,305
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,908,636	17,814,397	64,911,905	13,826,587	126,176	103,587,701

38 Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալի, ռիսկով կշռված ակտիվների և կապիտալի համարժեքության նորմատիվի չափերը՝ հաշվարկված համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

	Աուդիտ չարված	
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Հիմնական կապիտալ	60,060,302	54,796,362
Լրացուցիչ կապիտալ	10,850,050	15,874,930
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	70,910,352	70,671,292
Ռիսկով կշռված ակտիվներ	393,972,350	413,789,383
Կապիտալի համարժեքության նորմատիվ	18%	17.08%

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվել է ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափ 30,000,000 հազար ՀՀ դրամ:

39 Սեգմենտային հաշվետվություններ

ՄՖՀՍ 8-ի առումով Բանկի գործառնությունները տարանջատված չեն գործառնական սեգմենտների և հանդիսանում են մեկ ամբողջական բիզնես միավոր: Բանկի գլխավոր գործառնական որոշումներ կայացնող մարմնի կողմից իրականացվում են որոշումներ միասնական արդյունքների հիման վրա, և բացակայում է որևէ գործառնական սեգմենտի առանձնացում ընդհանուր գործառնություններից: Բանկի ակտիվները հիմնականում տեղաբաշխված են Հայաստանի Հանրապետության տարածքում: Բանկի եկամուտները ստացվում են հիմնականում իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններից:

40 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձություններ

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով համաշխարհային տնտեսության վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի դեմ: Արևմտյան ուժերը քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանը Հայաստանի գլխավոր առևտրատնտեսական գործընկերն է, ուստի ներկայումս կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Իրավիճակի անմիջական ազդեցությունը դժվար է հստակորեն կանխատեսել, սակայն ղեկավարության գնահատմամբ այն նշանակալի ազդեցություն չի ունենա Բանկի գործունեության և ֆինանսական հաշվետվությունների վրա:

«ԱրմՍվիսԲանկ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 1
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 4
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 5

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն 6
2. Պատրաստման հիմունքներ 6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր 8
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ 24
5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն 25
6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 28
7. Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ 28
8. Ածանցյալ ֆինանսական գործիքներ 29
9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ 30
10. Ներդրումային արժեթղթեր 36
11. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ 38
12. Ոչ նյութական ակտիվներ 39
13. Բռնագանձված ակտիվներ 40
14. Հարկում 40
15. Վարկային կորստի գծով ծախսեր և այլ արժեզրկումներ և պահուստներ 41
16. Այլ ակտիվներ և պարտավորություններ 42
17. Պարտավորություններ բանկերի նկատմամբ 43
18. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ 43
19. Թողարկված պարտքային արժեթղթեր 44
20. Այլ փոխառու միջոցներ 44
21. Ստորադաս փոխառություններ 45
22. Սեփական կապիտալ 45
23. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 46
24. Զուտ տոկոսային եկամուտ 47
25. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ 48
26. Զուտ առևտրային եկամուտ 48
27. Այլ եկամուտ 48
28. Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսեր 49
29. Ռիսկերի կառավարում 49
30. Իրական արժեքի չափում 62
31. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ 66
32. Ֆինանսական գործիքների հաշվանցում 67
33. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն 68
34. Կապակցված կողմերի բացահայտումներ 69
35. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն 71
36. Կապիտալի համարժեքություն 71

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱրմՍվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱրմՍվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի ապրիլի 4-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացում, ներկայացված է այդ համատեքստում:

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում, այդ թվում այդ հարցի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարց	**Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի ընթացում**
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ	
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստը հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա՝ ինչպես հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների էականության, այնպես էլ ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի («ՖՀՄՍ 9») շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գնահատման հետ կապված բարդությունների և գնահատման համար պահանջվող դատողությունների պատճառով:	Աուդիտն իրականացնելիս մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հետևյալին՝ ▸ Պորտֆելային հիմունքով ԱՎԿ որոշելու համար կիրառված վարկային ռիսկի մոդելների և ենթադրությունների վերլուծություն; ▸ Բանկի՝ վարկային ռիսկի էական աճը բացահայտելու նկատմամբ ներքին հսկողության միջոցների թեստավորում; ▸ Հաճախորդներին տրված էական արժեզրկված վարկերի և փոխառություններ գծով ԱՎԿ-ի թեստավորում՝անհատական հիմունքով:
Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը ենթադրում է բարդ վիճակագրական մոդելավորում պահանջող գնահատման մեթոդների և մասնագիտական դատողությունների կիրառում: Այս մեթոդներն օգտագործվում են դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ժամանակ գործիքի ակնկալվող արժեքը և դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստները գնահատելու համար՝ հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների առկա տեղեկատվությունը, որը ճշգրտվում է ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությամբ,	Պորտֆելային հիմունքով հաշվարկված պահուստի թեստավորման նպատակով մենք գնահատել ենք դրա հիմքում ընկած վիճակագրական մոդելները, օգտագործված հիմնական ելակետային տվյալներն ու ենթադրությունները և ԱՎԿ հաշվարկում ներառված ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությունը, ներառյալ՝ վերանայված մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Մենք թեստավորել ենք վարկային ռիսկի գործոնների հաշվարկի հիմքում ընկած

Աուդիտի առանցքային հարց

ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը մեծապես կախված է նախնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճի առկայության գնահատումից: Այդ գնահատումը էապես կախված է վարկառուի ժամկետանց օրերի ցուցանիշից (ներառյալ այլ ֆինանսական հաստատություններում ժամկետանց օրերը) և վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումից:

Արժեզրկված էական ֆինանսական ակտիվների համար անհատական հիմունքով ԱՎԿ հաշվարկը պահանջում է հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից և այլ աղբյուրներից ապագա դրամական հոսքերի գնահատում:

Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ԱՎԿ էականորեն տարբեր գնահատումների: Սա կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Բնակի ֆինանսական արդյունքների վրա:

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 9-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ» և Ծանոթագրություն 29-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի ընթացում

առանցքային վիճակագրական տվյալները, ինչպիսիք են՝ վարկերի ժամկետանց օրերը, հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների՝ դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնման վիճակագրությունը և արժեզրկված վարկերի մնացորդների փոփոխությունը սկզբնական ճանաչման ամսաթվից մինչև դեֆոլտի ամսաթիվը: Մենք նաև թեստավորել ենք վարկային ռիսկի էական աճի բացահայտման գործընթացում առանցքային հսկողության միջոցների նախագծման և գործարկման արդյունավետությունը և գնահատել ենք հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկի էական աճը որոշելու համար ղեկավարության կողմից ընտրված չափանիշների կիրառման հետևողականությունը:

Արժեզրկված էական վարկերի գծով մենք թեստավորել ենք հաշվարկի հիմքում ընկած գրավի առարկայի իրացումից և այլ աղբյուրներից ապագա գնահատված դրամական հոսքերի հաշվարկները:

Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Բանկի՝ վարկային ռիսկին ենթարկվածությունը նկարագրող ֆինանսական հաշվետվությունների բացահայտումների նկատմամբ:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Բանկի 2022թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի 2022թ. տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Բանկի 2022թ. տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Բանկի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի գործունեության անընդհատության դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Խորհրդին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, սպառնալիքների վերացմանը անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման նպատակով անցկացված աուդիտի ղեկավար գործընկեր է հանդիսանում Էրիկ Հայրապետյանը:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր Էրիկ Հայրապետյան

Պատասխանատու աուդիտոր Ելենա Ադամյան

2023թ. մայիսի 2

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ. (վերադասակարգված)
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	28,552,473	27,330,179
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	8	26,252	35,125
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	7	7,449,029	2,540,486
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	9	125,003,048	116,531,510
Ներդրումային արժեթղթեր	10	133,432,483	153,851,984
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	10	78,718,547	89,923,037
Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	11	2,020,076	1,637,423
Ոչ նյութական ակտիվներ	12	82,402	78,693
Բռնագանձված ակտիվներ	13	1,175,804	1,794,760
Հետաձգված հարկային ակտիվներ	14	4,178,389	929,187
Այլ ակտիվներ	16	4,533,679	3,768,054
Ընդամենը ակտիվներ		**385,172,182**	**398,420,438**
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	17	80,803,726	86,526,829
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	8	29,108	64,242
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	18	129,536,044	136,066,628
Թողարկված պարտքային արժեթղթեր	19	52,408,743	58,839,075
Այլ փոխառու միջոցներ	20	34,778,666	31,964,736
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		186,533	476,439
Այլ պարտավորություններ	16	2,210,310	1,998,458
Ստորադաս փոխառություններ	21	34,484,130	23,417,085
Ընդամենը պարտավորություններ		**334,437,260**	**339,353,492**
Սեփական կապիտալ	22		
Կանոնադրական կապիտալ		10,000,200	10,000,200
Էմիսիոն եկամուտ		6,205,548	6,205,548
Գլխավոր պահուստ		35,000,000	30,000,000
Չբաշխված շահույթ		16,755,005	14,555,290
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		(18,784,599)	(2,828,795)
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		1,558,768	1,134,703
Ընդամենը սեփական կապիտալ		**50,734,922**	**59,066,946**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**385,172,182**	**398,420,438**

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝

Գևորգ Մաչանյան — Գլխավոր գործադիր տնօրեն

Սեդրակ Բաղդասարյան — Գլխավոր հաշվապահ

2023թ. մայիսի 2

1-ից 36 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2022թ.*	*2021թ. (վերադասա-կարգված)*
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	24	33,775,065	33,486,218
Այլ տոկոսային եկամուտ	24	337,003	205,169
Տոկոսային ծախս	24	(26,168,283)	(22,788,292)
Զուտ տոկոսային եկամուտ	24	**7,943,785**	**10,903,095**
Վարկային կորուստների գծով վերակագնում/(ծախս)	15	3,137,574	(1,614,778)
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո		**11,081,359**	**9,288,317**
Միջնորդավճարների գծով եկամուտ	25	504,994	342,339
Միջնորդավճարների գծով ծախս	25	(184,766)	(156,816)
Զուտ առևտրային եկամուտ	26	1,547,990	797,111
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչումից զուտ օգուտ		20,943	1,878,617
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս		(927,915)	(310,007)
Այլ եկամուտ	27	316,966	80,784
Ոչ տոկոսային եկամուտ		**1,278,212**	**2,632,028**
Անձնակազմի գծով ծախսեր	28	(1,919,187)	(1,569,591)
Հիմնական միջոցների մաշվածություն	11	(179,770)	(178,166)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	12	(28,373)	(26,498)
Այլ ծախսեր	28	(634,776)	(737,094)
Այլ արժեզրկման ծախսեր	15	(667,845)	–
Ոչ տոկոսային ծախսեր		**(3,429,951)**	**(2,511,349)**
Շահույթ մինչև շահութահարկ		**8,929,620**	**9,408,996**
Շահութահարկի գծով ծախս	14	(1,729,905)	(1,643,537)
Տարվա շահույթ		**7,199,715**	**7,765,459**

1-ից 36 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2022թ.*	*2021թ.*
Տարվա շահույթ		**7,199,715**	**7,765,459**
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ			
Հիմնական միջոցների վերագնահատում	11	517,152	–
Շահութահարկ այլ համապարփակ եկամուտի տարրերի գծով	14	(93,087)	–
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ		**424,065**	**–**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի զուտ փոփոխություն		(18,932,920)	(14,407,850)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ԱՎԿ պահուստի փոփոխություն		(525,377)	223,951
Շահութահարկ այլ համապարփակ եկամուտի տարրերի գծով	14	3,502,493	2,553,101
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող զուտ այլ համապարփակ վնաս		**(15,955,804)**	**(11,630,798)**
Տարվա այլ համապարփակ վնաս, առանց հարկերի		**(15,531,739)**	**(11,630,798)**
Ընդամենը տարվա այլ համապարփակ վնաս		**(8,332,024)**	**(3,865,339)**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

	Կանոնադրական կապիտալ	*Էմիսիոն եկամուտ*	*Գլխավոր պահուստ*	*Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ*	*Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը*
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**10,000,200**	**6,205,548**	**25,000,000**	**8,802,003**	**1,134,703**	**11,789,831**	**62,932,285**
Տարվա շահույթ	–	–	–	–	–	7,765,459	**7,765,459**
Հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	–	–	–	(12,146,863)	–	–	**(12,146,863)**
Զուտ օգուտ վերադասակարգված շահույթում կամ վնասում այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից	–	–	–	(2,260,987)	–	–	**(2,260,987)**
Զուտ փոփոխություններ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ԱՎԿ պահուստում	–	–	–	223,951	–	–	**223,951**
Շահութահարկ այլ համապարփակ եկամուտի տարրերի գծով	–	–	–	2,553,101	–	–	**2,553,101**
Ընդամենը տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	**–**	**–**	**–**	**(11,630,798)**	**–**	**–**	**(11,630,798)**
Հատկացումներ պահուստին	–	–	5,000,000	–	–	**(5,000,000)**	**–**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**–**	**–**	**5,000,000**	**–**	**–**	**(5,000,000)**	**–**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,000,200**	**6,205,548**	**30,000,000**	**(2,828,795)**	**1,134,703**	**14,555,290**	**59,066,946**
Տարվա շահույթ	–	–	–	–	–	7,199,715	**7,199,715**
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք							
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն	–	–	–	(18,849,853)	–	–	**(18,849,853)**
Զուտ օգուտ վերադասակարգված շահույթում կամ վնասում այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից	–	–	–	(83,067)	–	–	**(83,067)**
Հիմնական միջոցների վերագնահատում	–	–	–	–	517,152	–	**517,152**
Զուտ փոփոխություններ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ԱՎԿ պահուստում	–	–	–	(525,377)	–	–	**(525,377)**
Շահութահարկ այլ համապարփակ եկամուտի տարրերի գծով	–	–	–	3,502,493	(93,087)	–	**3,409,406**
Ընդամենը տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	**–**	**–**	**–**	**(15,955,804)**	**424,065**	**–**	**(15,531,739)**
Հատկացումներ պահուստին	–	–	5,000,000	–	–	**(5,000,000)**	**–**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**–**	**–**	**5,000,000**	**–**	**–**	**(5,000,000)**	**–**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,000,200**	**6,205,548**	**35,000,000**	**(18,784,599)**	**1,558,768**	**16,755,005**	**50,734,922**

1-ից 36 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2022թ.*	*2021թ. (վերադասա-կարգված)*
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ նախքան հարկումը		8,929,620	9,408,996
Ճշգրտումներ՝			
Ֆինանսական ակտիվների արժեզրկման (վերակագնում)/ծախս	15	(3,137,574)	1,614,778
Այլ արժեզրկումներ	15	667,845	–
Ամորտիզացիայի և մաշվածության գծով պահուստ	11,12	208,143	204,664
Ստացման ենթակա տոկոսներ		(677,601)	(1,165,859)
Վճարման ենթակա տոկոսներ		808,288	413,135
Հիմնական միջոցների օտարումից զուտ եկամուտ		(275)	(12,215)
Բռնագանձված ակտիվների օտարումից զուտ (օգուտ)/վնաս		(36,739)	58,778
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս		927,915	310,007
Թանկարժեք մետաղների վերագնահատումից զուտ վնաս		109,447	93,481
Աճանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ		(26,262)	(130,687)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**7,772,807**	**10,795,078**
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում			
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ		(6,034,565)	4,145,618
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ		(17,665,892)	(2,503,899)
Բռնագանձված ակտիվներ		111,756	345,082
Այլ ակտիվներ		(321,326)	(1,061,699)
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ		(3,769,403)	19,124,770
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ		2,429,171	(6,681,430)
Այլ պարտավորություններ		72,269	909,355
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝(օգտագործված) գործառնական գործունեությունում/ գործառնական գործունեությունից, նախքան շահութահարկը		**(17,405,183)**	**25,072,875**
Վճարված շահութահարկ		(1,859,608)	(975,001)
Զուտ դրամական միջոցներ՝ գործառնական գործունեությունից/ (օգտագործված) գործառնական գործունեությունում		**(19,264,791)**	**24,097,874**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերումներ	10	(63,358,002)	(111,276,767)
Ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից մուտքեր		71,267,487	73,897,656
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով կանխավճարներ		(788,000)	(590,000)
Հիմնական միջոցների ձեռքբերում	11	(45,271)	(56,167)
Հիմնական միջոցների վաճառք		275	13,792
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	12	(32,082)	(21,995)
Զուտ դրամական միջոցներ՝ ներդրումային գործունեությունից/ (օգտագործված) ներդրումային գործունեությունում		**7,044,407**	**(38,033,481)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Այլ փոխառու միջոցներից մուտքեր	35	19,042,056	20,059,280
Այլ փոխառու միջոցների մարում	35	(13,760,849)	(12,605,086)
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	35	–	(2,000,000)
Ստորադաս փոխառությունից մուտքեր	35	12,000,000	10,000,000
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	35	(61,885)	(54,624)
Զուտ դրամական միջոցներ ֆինանսավորման գործունեությունից		**17,219,322**	**15,399,570**
Արտրաժույթի փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(3,765,492)	(1,880,578)
Ակնկալվող վարկային կորուստների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(11,152)	–
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**1,222,294**	**(416,615)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	5	27,330,179	27,746,794
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջում	**5**	**28,552,473**	**27,330,179**

1-ից 36 ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

(հազար ՀՀ դրամ)

1. Հիմնական գործունեության նկարագրություն

ա) Կազմակերպչական կառուցվածք և հիմնական գործունեություն

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 2004 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գործում է 2004 թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրված N84 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունն է ավանդների ընդունումը և հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկավորում, երաշխիքների տրամադրումը, հաշվարկադրամարկղային գործառնությունները, արժեթղթային և արտարժութային գործարքները: Բանկը հանդիսանում է ՀՀ ավանդների ապահովագրման պետական համակարգի անդամ: Բանկի գործունեությունը վերահսկվում ՀՀ ԿԲ կողմից:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10:

2022թ. 31-ի դեկտեմբերի դրությամբ, Բանկի աշխատակիցների քանակը 146 է (2021թ. դեկտեմբերի 31՝ 144):

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

Բաժնետեր	***2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %***	***2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %***
“ԷյչՎիԷս Հոլդինգ”	87.53	87.53
“ԷՖԷմԹիԷմ Դիսթրիբյուշն” ՍՊԸ	12.47	12.47
Ընդամենը	**100.00**	**100.00**

Բանկի վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Վարտան Սիրմակեսը:

բ) Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իր իրավական, հարկային և կարգավորվող դաշտերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից ու զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից: Ղեկավարությունը կարծում է, որ ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ աջակցելու Բանկի բիզնեսի կայունությանը ներկա պայմաններում:

Ուկրաինայի հետ պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների Ուկրաինայում, Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանը և Ուկրաինան Հայաստանի առանցքային առևտրային գործընկերներից են: Ակնկալվում է, որ պատերազմը նշանակալի ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել այն ազդեցությունը, որը կարող է ունենալ Բանկի գործունեության վրա, քանի որ անորոշություն կա ընդհանուր տնտեսության վրա ազդեցության աստիճանի վերաբերյալ: Բանկի ղեկավարությունը մոնիթորինգի է ենթարկում տնտեսական իրավիճակը ընթացիկ պայմաններում:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ»), որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ՝ «ՀՀՄՍԽ») կողմից և Մեկնաբանությունների՝ հրապարկված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (այսուհետ՝«ՖՀՄՄԿ»):

(հազար ՀՀ դրամ)

Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի: Օր.՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթերը, ածանցյալ ֆինանսական գործիքները և շենքերը/շինությունները չափվում են իրական արժեքով:

Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով:

Վերադասակարգումներ

Որոշակի վերադասակարգումներ են կատարվել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում՝ ընթացիկ տարում օգտագործված դասակարգմանը համապատասխանելու համար: Այս վերադասակարգումները որևէ ազդեցություն չեն ունեցել նախկինում ներկայացված զուտ շահույթի կամ սեփական կապիտալի վրա:

	Նախկինում ներկայացված	***Վերադասա-կարգում***	***Ճշգրտված***
Հաճախորդների տրված վարկեր և փոխառություններ	116,759,510	(228,000)	116,531,510
Այլ ակտիվներ	3,540,054	228,000	3,768,054
Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ	77,904,758	(77,904,758)	–
Պարտավորություններ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	53,653,716	(53,653,716)	–
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	123,997,229	12,069,399	136,066,628
Այլ պարտավորություններ	1,000,948	997,510	1,998,458
Պարտավորությունների բանկերի նկատմամբ	–	86,526,829	86,526,829
Այլ փոխառու միջոցներ	–	31,964,736	31,964,736
Այլ պահուստներ	(1,694,092)	1,694,092	–
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	–	(2,828,795)	(2,828,795)
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	–	1,134,703	1,134,703

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որոշ գումարներ վերադասակարգվել են:

	Նախկինում ներկայացված	***Վերադասա-կարգում***	***Ճշգրտված***
Այլ ծախսեր	(1,047,101)	310,007	(737,094)
Արտարժութային գործարքներից զուտ վնաս	–	(310,007)	(310,007)

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում որոշ գումարներ վերադասակարգվել են:

(հազար ՀՀ դրամ)

	Նախկինում ներկայացված	*Վերադասա-կարգում*	*Ճշգրտված*
Թանկարժեք մետաղների վերագնահատումից զուտ վնաս	–	93,481	93,481
Հաճախորդների տրված վարկեր և փոխառություններ	(2,731,899)	228,000	(2,503,899)
Այլ ակտիվներ	(740,218)	(321,481)	(1,061,699)
Հետգնման պայմանագրեր ՀՀ ԿԲ հետ	16,999,989	(16,999,989)	–
Պարտավորություններ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	2,403,427	(2,403,427)	–
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	19,124,770	19,124,770
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(5,962,566)	(718,864)	(6,681,430)
Այլ պարտավորություններ	(88,155)	997,510	909,355
ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր	4,899,615	(4,899,615)	–
Այլ ֆինանսական հաստատություններից ստացված վարկեր	2,554,579	(2,554,579)	–
Մուտքեր այլ փոխառու միջոցներից	–	20,059,280	20,059,280
Այլ փոխառու միջոցների մարումներ	–	(12,605,086)	(12,605,086)
Ներդրումային արժեթղթերի զուտ ձեռքբերում	(37,379,111)	37,379,111	–
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	–	(111,276,767)	(111,276,767)
Ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից մուտքեր	–	73,897,656	73,897,656

Բանկը 2022 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա իր դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում փոխել է ներդրումային արժեթղթերի ձեռքբերման և ներդրումային արժեթղթերի վաճառքից ր մարումից ստացված մուտքերի ներկայացումը զուտ հիմունքից համախառն հիմունքով, քանի որ Բանկն այլևս չի կիրառում բացառություն՝ ՀՀՄՍ 7.22-ի համաձայն:

Այս վերադասակարգումները ազդեցություն չեն ունեցել Գործառնական, Ներդրումային և Ֆինանսական հոդվածներում արտացոլված դրամական միջոցների հոսքերի ընդհանուր գումարների վրա:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

«Հղումներ հայեցակարգային հիմունքներին» (ՖՀՄՍ 3 փոփոխություններ)

Փոփոխությունները փոխարինում են ՀՀՄՍԽ-ի *Հայեցակարգային հիմունքների* նախորդ տարբերակին հղումը՝ միաժամանակ հղում կատարելով 2018 թվականի մարտին թողարկված ներկա տարբերակին՝ առանց դրա պահանջները էականորեն փոփոխելու:

Փոփոխությունները բացառություն են ավելացնում ՖՀՄՍ 3 *Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ* ստանդարտում սահմանված ճանաչման սկզբունքին՝ խուսափելու համար «երկրորդ օրվա» հավանական շահույթի կամ վնասի խնդրից, որը բխում է այն պարտավորություններից և պայմանական պարտավորություններից, որոնք կներառվեին ՀՀՄՍ 37 *Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ* կամ ՖՀՄՄՄԿ 21 *Պարտադիր վճարներ* ստանդարտների շրջանակներում, եթե առաջանային առանձին: Բացառությունը պահանջում է, որ կազմակերպությունները կիրառեն ՀՀՄՍ 37-ում կամ ՖՀՄՄՄԿ 21-ում սահմանված չափանիշները, համապատասխանաբար, *Հայեցակարգային հիմունքների* փոխարեն՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ընթացիկ պարտավորության առկայությունը որոշելու նպատակով:

Փոփոխությունները նաև նոր պարբերություն են ավելացնում ՖՀՄՍ 3-ում՝ պարզաբանելու, որ պայմանական ակտիվները չեն համապատասխանում ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչման պայմանին:

Անցումային դրույթների համաձայն՝ Բանկը կիրառում է փոփոխությունները առաջընթաց սկզբունքով, այսինքն՝ այն ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ, որոնք առաջանում են տարեկան հաշվետու ժամանակաշրջանի սկզբից հետո, երբ առաջին անգամ կիրառվում են փոփոխությունները (նախնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ ժամանակաշրջանի ընթացքում այս փոփոխությունների շրջանակներում չեն առաջացել պայմանական ակտիվներ կամ պայմանական պարտավորություններ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցներ – մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

Այս փոփոխությունը չի թույլատրում կազմակերպություններին հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում, որն անհրաժեշտ է ղեկավարության կողմից նախանշված նպատակով այն գործարկելու համար, արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է տվյալ միավորների վաճառքից մուտքերը և տվյալ միավորների արտադրման նպատակով ծախսումները շահույթում կամ վնասում:

Անցումային դրույթների համաձայն՝ Բանկը կիրառում է այս փոփոխությունները հետընթաց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք մատչելի են օգտագործման համար ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ չի իրականացվել հիմնական միջոցներով արտադրված այդպիսի միավորների վաճառք, որոնք մատչելի են եղել ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ - Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեսթում ներառվող վճարներ

Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ փոխառուի կամ փոխատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Համանման փոփոխություն չի առաջարկվում ՀՀՄՍ 39 *Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում* ստանդարտի համար:

Անցումային դրույթների համաձայն՝ Բանկը փոփոխությունը կիրառում է այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար (նախնական կիրառման ամսաթիվը): Այս փոփոխությունները Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Բանկի ֆինանսական գործիքներում փոփոխություններ չեն կատարվել:

Անբարենպաստ պայմանագրեր - Պայմանագրի կատարման ծախսեր – ՀՀՄՍ 37 փոփոխություններ

Պայմանագիրը համարվում է անբարենպաստ, եթե այդ պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսերը (այսինքն, այն ծախսերը, որոնց մասով Բանկը չի կարող խուսափել պայմանագրի առկայության դեպքում) գերազանցում են դրա շրջանակներում ակնկալվող տնտեսական օգուտները: Փոփոխությունները հստակեցնում են, որ պայմանագրի անբարենպաստ կամ վնասաբեր լինելը գնահատելիս, կազմակերպությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ինչպես լրացուցիչ ծախսերը (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և նյութերի ծախսերը), այնպես էլ պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերի բաշխումը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածությունը և պայմանագրի կառավարման և վերահսկողության ծախսերը): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում այդ ծախսերում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսերը հստակորեն գանձվում են պայմանագրի մյուս Կողմից:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Իրական արժեքի չափում

Բանկն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները (օր.՝շենքեր) չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, կստացվեր շուկայի մասնակիցների միջև՝ սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Բանկը պետք է հասանելիություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկա: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Բանկն օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Բանկը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչում

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվով: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման տեսակներ

Բանկն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով.

- Ամորտիզացված արժեքով;
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով;
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բանկն իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բանկը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային պարտավորություններից և ֆինանսական երաշխիքներից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ, հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ, ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր

Բանկը չափում է վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկերը և այլ ֆինանսական ներդրումները ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները.

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև:

Բիզնես մոդելի գնահատում

Բանկն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

Բանկի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով, և հիմնվում է այնպիսի դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և կազմակերպության առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- Բիզնեսի կառավարիչների փոխհատուցման եղանակները (օրինակ՝ փոխհատուցումը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքների կամ պայմանագրային դրամական հոսքերի վրա),
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Բանկի գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Բանկի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Բանկը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Բանկը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պարտավորվածության մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Բանկը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Ի հակադրություն, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ

Բանկը չափում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պարտքային գործիքները, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող վարկային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո տեղափոխվում է շահույթի և վնասի կազմ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ

Սկզբնական ճանաչումից հետո Բանկը, երբեմն ընտրում է իր բաժնային ներդրումների մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի *«Ֆինանսական գործիքներ. Ներկայացում»* ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Բանկը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և վարկավորման չօգտագործված պարտավորություններ

Բանկը թողարկում է Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և վարկավորման չօգտագործված պարտավորվածություններ:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Բանկի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարների առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեքի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիայի տարբերության և ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ ակնկալվող վարկային կորուստների պահուստի:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Բանկը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում, այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

Բանկը ժամանակ առ ժամանակ թողարկում է վարկային պարտավորվածություններ շուկայականից ցածր տոկոսադրույքով: Այսպիսի պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, ապա չափվում են ԱՎԿ պահուստի և սկզբնապես ճանաչված գումարներից առավելագույնով՝ հանած, անհրաժեշտության դեպքում, ճանաչված կուտակված եկամուտը:

Կատարողական երաշխիքի պայմանագրեր

Կատարողական երաշխիքները պայմանագրեր են, որոնք տրամադրում են փոխհատուցում, երբ մյուս կողմը չի կատարում պայմանագրային պարտավորությունը: Համաձայն կատարողական երաշխիքի պայմանագրի՝ ռիսկը, դա հավանականությունն է, որ մյուս կողմը չի կատարի պայմանագրային պարտավորությունը: Դրանք ճանաչվում են ֆինանսական երաշխիքի պայմանագրերին համահունչ՝ չամորտիզացված սկզբնական միջնորդավճարների և վնասի պահուստների առավելագույնով:

Կատարողական երաշխիքները ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով ֆինանսական հաշվետվություններում, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո Բանկի պարտավորությունները յուրաքանչյուր երաշխիքի համար չափվում են սկզբնապես ճանաչված գումարներից առավելագույնով՝ հանած այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիան և ԱՎԿ պահուստը:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների վերադասակարգում

Բանկը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Բանկը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը: Ֆինանսական պարտավորությունները երբեք չեն վերադասակարգվում: Բանկը չի վերադասակարգել ոչ մի ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն 2022 թվականին:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները և այլ բանկերում պահվող մնացորդները (բացառությամբ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների համար դեպոնացված գումարների), որոնք կարճ ժամանակամիջոցում կարող են փոխարկվել կանխիկի:

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ գնման գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին՝ Լոնդոնի մետաղների բորսայի գնանշումների նկատմամբ զեղչմամբ: Թանկարժեք մետաղները ներառված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության «Այլ ակտիվներ» հոդվածում: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից որպես զուտ եկամուտ/վնաս՝ այլ եկամուտների կամ ծախսերի կազմում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսավորման գործառնություններ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում:

Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Եթե հակադարձ ռեպո պայմանագրով գնված ակտիվները վաճառվում են երրորդ կողմին, արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բանկը բնականոն գործունեության ընթացքում արժութային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ՝ ֆորվարդները, ֆյուչերսները, սվոպերը և օպցիոնները: Այդ ֆինանսական գործիքները նախատեսված են առևտրի համար և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման հիման վրա կամ գնորոշման մոդելներով, որոնք հիմնված են բազիսային գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքների և այլ գործոնների վրա: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում: Նշված գործիքներից ստացված արդյունքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես առևտրական նպատակով պահվող ակտիվներից կամ արտարժութային գործառնություններից զուտ շահույթ/(վնաս)՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Ներկառուցված ածանցյալ գործիքը հիբրիդային գործիքի բաղադրիչ է, որը ներառում է նաև ոչ ածանցյալ հիմնական պայմանագիր, որի արդյունքում համակցված գործիքի դրամական հոսքերի մի մասը տատանվում է առանձին ածանցյալ գործիքի նման: Ներկառուցված ածանցյալ գործիքը առաջացնում է փոփոխություններ որոշ կամ բոլոր դրամական միջոցների հոսքերում, որոնք հակառակ դեպքում պահանջվում էին պայմանագրով, կախված սահմանված տոկոսադրույքից, ֆինանսական գործիքի գնից, ապրանքի գնից, արտարժույթի փոխարժեքից, գների ինդեքսից կամ դրույքից, վարկային վարկանշից կամ ինդեքսից կամ այլ փոփոխականից, պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այն հատուկ չէ պայմանագրի կողմի համար: Ֆինանսական գործիքին կցված, բայց այդ գործիքից անկախ՝ ըստ պայմանագրի փոխանցելի ածանցյալ գործիքը, կամ գործիքը, որի պայմանագրային կողմը տարբերվում է այդ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմից, չի հանդիսանում ներկառուցված ածանցյալ գործիք, այլ առանձին ածանցյալ գործիք է: Պարտավորությունների և ոչ ֆինանսական «հիմնական» պայմանագրերի մեջ ներկառուցված ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե համապատասխանում են ածանցյալ գործիքի վերոնշյալ սահմանմանը, նրանց տնտեսական հատկանիշները և ռիսկերը սերտորեն կապված չեն «հիմնական» պայմանագրի հետ, և «հիմնական» պայմանագիրը չի համարվում առևտրային նպատակներով կնքված կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող: Ներկառուցված ածանցյալ գործիքները, որոնք առանձնացվել են «հիմնական»-ից, հաշվառվում են առևտրային պորտֆելում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և SPPI- ի գնահատումների հիման վրա:

Փոխառություններ

Փոխառությունները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի, ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Վարձակալություն

*i. **Բանկը՝ որպես վարձակալ***

Բանկը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Բանկը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Բանկն ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Բացառությամբ եթե Բանկը խելամտորեն համոզված է ձեռք բերել վարձակալված ակտիվը սեփականության իրավունքով, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Բանկը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Բանկը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Բանկի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Բանկն օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Բանկը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Բանկը կիրառում է նաև փոքրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն գրասենյակային գույքի համար, որոնք համարվում են փոքրարժեք (այսինքն՝ 2,500 հազար ՀՀ դրամը չգերազանցող): Կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

ii. ***Գործառնական – Բանկը ՝ որպես վարձատու***

Վարձակալությունները, երբ Բանկը չի փոխանցում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված նշանակալի բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակահատվածի ընթացքում, որում դրանք ստացվում են:

iii. ***Ֆինանսական – Բանկ՝ը որպես վարձատու***

Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից Բանկը ճանաչում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով: Ֆինանսական եկամտի ճանաչումը հիմնված է այնպիսի գրաֆիկի վրա, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձատուի զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների սկզբնական գնահատման մեջ:

Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է ունենա իրավական ուժ բոլոր ստորև ներկայացված դեպքերում՝

- բնականոն գործունեության ընթացքում,
- պարտականությունների չկատարման դեպքում,
- կազմակերպության կամ դրա որևէ գործընկերոջ վճարունակ չլինելու կամ լուծարման ժամանակ:

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

Վերակազմակերպված վարկեր

Հնարավորության դեպքում Բանկը ձգտում է վերակազմակերպել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Բանկը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմանները այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարկ, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Բանկը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- վարկի արժույթի փոփոխությունը;
- գործընկերոջ փոփոխությունը;
- եթե փոփոխությունը այնպիսին է, որ գործիքը այլևս չի համապատասխանի SPPI չափանիշին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Եթե փոփոխությունը չի հանգեցնում զգալիորեն տարբերվող դրամական հոսքերի, փոփոխությունը չի բերում ապաճանաչման: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական հոսքերի փոփոխությունը, Բանկը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին ֆինանսական հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով, այն չափով, որքանով արժեզրկումից վնասը դեռ չի հաշվառվել:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի դեպքերում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- Բանկը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Բանկը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Բանկը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Բանկից:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), Բանկի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Բանկը դադարեցրել է վերականգնումը: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ: Բոլոր հետագա վերականգնումները հաշվանցվում են վարկային կորուստներից ծախսերի հետ: Դուրս գրումը հանդիսանում է ապաճանաչման դեպք:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն փոփոխված են նախորդի համեմատ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկում

Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվությունները հաստատված են թողարկման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի վճարում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են ժամանակավոր տարբերությունների հիման վրա՝ օգտագործելով պարտավորությունների մեթոդը: Հետաձգված հարկերը հաշվարկվում են բոլոր ժամանակային տարբերություններից, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված հարկն առաջացել է գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ ձեռնարկատիրական գործունեությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում, և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք տեսանելի ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում գործում են նաև այլ գործառնական հարկեր, որոնք վերաբերում են Բանկի գործունեությանը: Այդ հարկերը ներառված են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ գործառնական ծախսեր» հոդվածում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով, հանած կուտակված մաշվածությունը, բացառությամբ հողի և շենքերի:

Ինքնարժեքով սկզբնական ճանաչումից հետո շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով, որը իրական արժեքն է վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած ցանկացած հետագա կուտակված մաշվածությունը և հետագա կուտակված արժեզրկումից կորուստները: Գնահատումները կատարվում են բավարար հաճախականությամբ, որպեսզի երաշխավորվի, որ վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չի տարբերում դրա հաշվեկշռային արժեքից:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը հանվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, իսկ զուտ արժեքը ներկայացվում է ակտիվի վերագնահատված գումարը: Վերագնահատման ցանկացած հավելաճ ավելանում է այլ համապարփակ ֆինանսական արդյուներում ներառված հիմնական միջոցների վերագնահատման պահուստին, բացառությամբ այնքանով, որքանով այն հակադարձում է նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված նույն ակտիվի վերագնահատման նվազումը, որի դեպքում աճը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վերագնահատման պակասուրդը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ նույն ակտիվի նախկին հավելաճը ուղղակիորեն հակադարձող պակասուրդը ուղղակիորեն հակադարձում է հիմնական միջոցների վերագնահատման պահուստի հավելաճը:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստից փոխանցումը չբաշխված շահույթին կատարվում է ակտիվների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերության համար: Օտարումից հետո վաճառված որոշակի ակտիվի հետ կապված ցանկացած վերագնահատման պահուստ փոխանցվում է չբաշխված շահույթին:

Բանկի շենքերը հաշվառվում են վերագնահատված արժեքով: Եթե հիմնական միջոցների փոխահատուցվող արժեքը ցածր է դրա հաշվեկշռային արժեքից, ժամանակավոր չհամարվող հանգամանքների պատճառով, համապատասխան ակտիվը դուրս է գրվում մինչև դրա փոխհատուցվող արժեքը: Հողը հաշվառվում է վերագնահատված արժեքով: Հողն ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ, և, հետևաբար, չի մաշվում:

Ակտիվի մաշվածությունը սկսվում է այն օգտագործման համար հասանելի լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Տարի
Շենքեր	30
Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ	6
Փոխադրամիջոցներ	7
Այլ հիմնական միջոցներ	8

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց հաշվեկշռային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում, քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ դրանք բավարարում են ակտիվի ճանաչման չափանիշին: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Ակտիվի ապաճանաչումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն և ներառվում է այլ եկամուտում կամ այլ ծախսերում:

Շինությունները վերագնահատվում են կանոնավոր կերպով առնվազն 3-5 տարին մեկ: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտիվների իրական արժեքի և նրանց հաշվեկշռային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում շինությունների համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցների օգտագործմանը զուգահեռ, տվյալ ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրսգրման դեպքում, հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ առնվազն 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական հաշվետու տարվա վերջում:

Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվներ են բռնագանձվում վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրական արժեքից նվազագույնով՝ հանած իրացման հետ կապված ծախսեր:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ բիզնես միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես էմիսիոն եկամուտ:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը ներառում է բաժնետոմսերի թողարկումից ստացված ցանկացած հավելավճար: Գործարքի գծով ցանկացած ծախսում, որը կապված է բաժնետոմսերի թողարկման հետ, նվազեցվում է էմիսիոն եկամուտից:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են ֆինանսական հաշվետվություններում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստը օգտագործվում է գույքի իրական արժեքի աճը և նույն ակտիվի՝ նախկինում կապիտալում ճանաչված աճի սահմաններում իրական արժեքի նվազեցումը գրանցելու համար:

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների/ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

Սեգմենտային հաշվետվություն

Բանկի սեգմենտային հաշվետվությունները հիմնված են հետևյալ գործառնական սեգմենտների վրա՝ կորպորատիվ բանկային գործունեություն, ներդրումային բանկային գործունեություն:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված ռեսուրսների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Եկամուտների և ծախսերի ճանաչումը

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Բանկ, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան եկամտի ճանաչումը:

Տոկոսային և համանման եկամուտ և ծախս

Բանկը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ կիրառելի դեպքերում՝ ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Բանկի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է արժեզրկված, Բանկը հաշվարկում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս արժեզրկված չէ, Բանկը վերադառնում է համախառն հիմքով տոկոսային եկամտի հաշվարկին:

Ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների համար Բանկը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով սկզբնական ճանաչման ժամանակ զեղչվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը (ներառյալ՝ վարկային կորուստները)՝ ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքին:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում «Այլ տոկոսային եկամուտ» հոդվածում՝ օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը:

Միջնորդավճարների գծով եկամուտ

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ուղղակի ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույքը: Վճարները, այլ եկամուտները և ծախսերը հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում:

Այլ միջնորդավճարների գծով եկամուտները, ներառյալ հաշվի սպասարկման վճարները, ներդրումների կառավարման վճարները, վաճառքի միջնորդավճարները, տեղաբաշխման վճարները և սինդիկացիոն վճարները, ճանաչվում են, երբ մատուցվում են համապատասխան ծառայությունները: Եթե չի ակնկալվում, որ վարկային պարտավորությունը կհանգեցնի վարկի մարմանը, ապա այդ վարկի պարտավորության վճարը ճանաչվում է գծային հիմունքներով՝ պարտավորության ժամանակահատվածում:

Հաճախորդի հետ պայմանագիրը, որը հանգեցնում է Բանկի ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական գործիքի ճանաչմանը, կարող է մասամբ ընդգրկվել ՖՀՄՍ 9 և մասամբ՝ ՖՀՄՍ 15 շրջանակներում: Այդ դեպքում Բանկը սկզբնապես կիրառում է ՖՀՄՍ 9 ստանդարտը՝ տարանջատելու և չափելու պայմանագրի այն հատվածը, որը հանդիսանում է ՖՀՄՍ 9-ի մաս, ապա կիրառում է ՖՀՄՍ 15 ստանդարտը մնացյալի նկատմամբ:

Այլ միջնորդավճարների գծով ծախսերը հիմանականում վերաբերում են գործարքային և սպասարկման վճարներին, որոնք ծախսագրվում են ծառայությունների մատուցման դեպքում:

Արտարժույթի վերահաշվարկ

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Բանկի գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները սկզբնապես գրանցվում են գործառնական արժույթով, փոխարկվում են՝ կիրառելով գործարքի պահին գործող փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ որպես արտարժույթի վերագնահատման տարբերություններից օգուտ/(վնաս): Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ-ի փոխարժեքի տարբերությունը ներառվում է եկամտի կազմում՝ նվազեցված արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: 2022 և 2021 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր համապատասխանաբար 393.57 և 480.14 ՀՀ դրամ:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Բանկի ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Բանկը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր

2017թ. Մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 17 *“Ապահովագրության պայմանագրեր”* , համապարփակ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտը, որը նախատեսված է ապահովագրական պայմանագրերի համար՝ ներառելով ճանաչումը, չափումը, ներկայացումը և բացահայտումը: Ուժի մեջ մտնելուց հետո, ՖՀՄՍ 17-ը կփոխարինի ՖՀՄՍ 4 *“Ապահովագրության պայմանագրեր”* ստանդարտին, որը թողարկվել է 2005թ.: ՖՀՄՍ 17-ը կիրառելի է ապահովագրական պայմանագրերի բոլոր տեսակներին (ներառյալ՝ կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն, ուղղակի ապահովագրություն և վերաապահովագրություն), անկախ ապահովագրություն տրամադրող կազմակերպության տեսակից, ինչպես նաև կիրառելի է որոշակի երաշխիքների և հայեցողական մասնակցության հատկանիշներով ֆինանսական գործիքների դեպքում: Կիրառելի կլինեն որոշ բացառություններ: ՖՀՄՍ 17-ը սահմանում է հաշվապահական հաշվառման նոր պահանջներ ապահովագրական հատկանիշներով բանկային պրոդուկտների նկատմամբ, իսկ այդ պահանջները կարող են ազդել որոշելու վրա, թե որ գործիքները կամ դրանց բաղադրիչները կներառվեն ՖՀՄՍ 9-ի կամ ՖՀՄՍ 17-ի շրջանակներում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

(հազար ՀՀ դրամ)

Կրեդիտ քարտեր և համանման պրոդուկտներ, որոնք ապահովագրական ծածկույթ են ապահովում. թողարկողներից շատերը կարող են շարունակել կիրառել առկա հաշվապահական մոտեցումը՝ որպես ՖՀՄՍ 9-ի համաձայն ֆինանսական գործիք: ՖՀՄՍ 17-ը իր շրջանակից բացառում է կրեդիտ քարտերի պայմանագրերը (և այլ նմանատիպ պայմանագրերը, որոնք տրամադրում են կրեդիտային կամ վճարային պայմանավորվածություններ), որոնք համապատասխանում են ապահովագրության պայմանագրի սահմանմանը, միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս չի արտացոլում առանձին հաճախորդի հետ կապված ապահովագրական ռիսկի գնահատումը:

Երբ ապահովագրական ծածկույթը տրամադրվում է որպես կրեդիտ քարտի պայմանագրային պայմանների մաս, թողարկողը պարտավոր է՝

- Առանձնացնել ապահովագրության ծածկույթը և դրա նկատմամբ կիրառել ՖՀՄՍ 17,
- Այլ բաղադրիչների նկատմամբ գործադրել այլ կիրառելի ստանդարտներ (օրինակ՝ ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15 - Հասույթ գնորդների հետ պայմանագրերից կամ ՀՀՄՍ 37 - Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ):

Վարկային պայմանագրերը, որոնք համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, բայց ապահովագրական իրադարձությունների փոխհատուցումը սահմանափակում են այն չափով, որն այլապես պահանջվում է ապահովադրի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունը մարելու համար - այդպիսի վարկերի թողարկողները, օրինակ՝ մահվամբ կասեցվող վարկերը, ունեն տարբերակ կիրառելու ՖՀՄՍ 9-ը կամ ՖՀՄՍ 17-ը: Ընտրությունը կատարվում է պորտֆելի մակարդակով և համարվում է անփոփոխ:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ պահանջելով համեմատական տվյալներ: Վաղ կիրառումը թույլատրելի է այն պայմանով, որ կազմակերպությունը նաև կիրառում է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 17 առաջին անգամ կիրառելու ամսաթվին կամ դրանից առաջ:

Ներկայումս Բանկը գտնվում է իր ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 17-ի ընդունման ազդեցության գնահատման փուլում:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է:

Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները ՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Քանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Բանկը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը՝ որոշելու, թե ինչ ազդեցություն կունենան դրանք Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վրա:
Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)

2021 թվականի մայիսին Խորհուրդը հրապարակել է ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները, որոնք նեղացնում են ՀՀՄՍ 12-ի համաձայն սկզբնական ճանաչման բացառությունների շրջանակը, այն այլևս չի կիրառվում այն գործարքների մասով, որոնք հանգեցնում են հավասար հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների:

Փոփոխությունները պետք է կիրառվեն այն գործարքների համար, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Ինչպես նաև, ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում պետք է ճանաչվեն նաև հետաձգված հարկային ակտիվը (եթե առկա է բավարար հարկվող շահույթ) և հետաձգված հարկային պարտավորությունը՝ վարձակալության և ապագործարկման պարտավորությունների հետ կապված բոլոր նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Բանկը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունը:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են ունենում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները՝ հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք խելամիտ են համարվում տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Սույն ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Շենքերի վերագնահատում

Հիմնական միջոցների իրական արժեքը որոշվում է շուկայական համեմատական մեթոդով: Այսինքն, գնահատողի կողմից իրականացված գնահատումը հիմնված է շուկայական գործարքների գների վրա՝ էականորեն ճշգրտված գույքի բնույթի, գտնվելու վայրի և պայմանների տարբերություններն արտացոլելու համար: Բանկը ներգրավում է անկախ փորձագետների իր գույքերը գնահատելու համար (տե՛ս Ծան. 30):

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է իրական արժեքի գնահատման մոդելներ: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում, որքան հնարավոր է, հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կստացվեր շուկայական գործարքների դեպքում (տե՛ս Ծան. 30):

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստ

ՖՀՄՍ 9-ի համաձայն Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստի գնահատումը ֆինանսական ակտիվների բոլոր դասերի համար պահանջում է դատողություն, մասնավորապես՝ ապագա դրամական հոսքերի գումարի և ժամանակի և գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկման գծով վնասների որոշման և վարկային ռիսկի զգալի աճի գնահատման ժամանակ: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Բացի այդ, խոշոր բիզնեսի խափանումները կարող են առաջացնել իրացվելիության խնդիրներ որոշ կազմակերպությունների և սպառողների համար:

Բանկի՝ ակնկալվող վարկային կորուստների հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ (տես Ծան. 29): ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են՝

- Վիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- Ֆինանսական ակտիվների սեգմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար:

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

2022 թվականի ընթացքում գործառնական որոշումներ կայացնող ղեկավարը՝ հիմնվելով մատուցվող ապրանքների և ծառայությունների տարատեսակների վրա, Բանկը բաժանում է հետևյալ երկու սեգմենտների՝

Կորպորատիվ բանկային գործունեություն	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում:
Ներդրումային բանկային գործունեություն	Հիմնականում առևտրային և ներդրումային բանկային ծառայություններ, ներառյալ կորպորատիվ ֆինանսներ, միաձուլման և ձեռքբերման գծով խորհրդատվություն, մասնագիտացված ֆինանսական խորհրդատվություն և այլ գործառնություններ:

Համապատասխանության նպատակով Բանկը հրապարակել է նաև նախորդ տարվա գործառնական սեգմենտների տեղեկատվությունը:

Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով ղեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին: Շահութահարկը կառավարվում է «շահույթը նախքան շահութահարկով հարկումը»հիմունքով և բաշխվում է գործառնական սեգմենտների միջև:

2022 և 2021 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Բանկի ընդհանուր հասույթի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի գրանցվել:

Ստորև նշված աղյուսակները ներկայացնում են Բանկի գործառնական սեգմենտների գծով եկամտի և շահույթի, ինչպես նաև առանձին ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն.

(հազար ՀՀ դրամ)

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31	*Ներդրումային բանկային գործունեություն*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Ընդամենը*
Արտաքին աղբյուրներից եկամուտ			
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	22,155,377	11,619,688	**33,775,065**
Այլ տոկոսային եկամուտ	–	337,003	**337,003**
Տոկոսային ծախս	(11,725,144)	(14,443,139)	**(26,168,283)**
Զուտ տոկոսային եկամուտ	**10,430,233**	**(2,486,448)**	**7,943,785**
Վարկային կորուստների գծով վերականգնում	775,338	2,362,236	**3,137,574**
Միջնորդավճարների գծով եկամուտ	61,045	443,949	**504,994**
Միջնորդավճարների գծով ծախս	–	(184,766)	**(184,766)**
Այլ ոչ տոկոսային եկամուտ	1,483,863	402,036	**1,885,899**
Ոչ տոկոսային ծախս	(507,350)	(3,182,671)	**(3,690,021)**
Արժեզրկումների գծով այլ ծախսեր	–	(667,845)	**(667,845)**
Սեգմենտների գծով շահույթ/(վնաս)	**12,243,129**	**(3,313,509)**	**8,929,620**
Շահութահարկի գծով ծախս	(2,371,820)	641,915	**(1,729,905)**
Հաշվետու տարվա շահույթ	**9,871,309**	**(2,671,594)**	**7,199,715**

2021 թ. դեկտեմբերի 31	*Ներդրումային բանկային գործունեություն*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Ընդամենը*
Արտաքին աղբյուրներից եկամուտ			
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	22,061,507	11,424,711	**33,486,218**
Այլ տոկոսային եկամուտ	–	205,169	**205,169**
Տոկոսային ծախս	(10,642,778)	(12,145,514)	**(22,788,292)**
Զուտ տոկոսային եկամուտ	**11,418,729**	**(515,634)**	**10,903,095**
Վարկային կորուստների գծով ծախս	(591,967)	(1,022,811)	**(1,614,778)**
Միջնորդավճարների գծով եկամուտ	71,102	271,237	**342,339**
Միջնորդավճարների գծով ծախս	–	(156,816)	**(156,816)**
Այլ ոչ տոկոսային եկամուտ	2,420,652	335,860	**2,756,512**
Ոչ տոկոսային ծախս	(138,564)	(2,682,792)	**(2,821,356)**
Սեգմենտների գծով շահույթ/(վնաս)	**13,179,952**	**(3,770,956)**	**9,408,996**
Շահութահարկի գծով ծախս	(2,302,237)	658,700	**(1,643,537)**
Հաշվետու տարվա շահույթ	**10,877,715**	**(3,112,256)**	**7,765,459**

Ստորև նշված աղյուսակը ներկայացնում է Բանկի գործառնական սեգմենտների գծով ակտիվները և պարտավորությունները՝

	Կորպորատիվ բանկային գործունեություն	*Ներդրումային բանկային գործունեություն*	*Չբաշխված մնացորդներ*	*Ընդամենը*
Սեգմենտի ակտիվներ				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	132,391,592	216,416,156	36,364,434	**385,172,182**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	164,020,174	168,020,243	2,396,843	**334,437,260**

(հազար ՀՀ դրամ)

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

	Կորպորատիվ բանկային գործունեություն	*Ներդրումային բանկային գործունեություն*	*Չբաշխված մնացորդներ*	*Ընդամենը*
Սեգմենտի պարտավորություններ				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	120,001,183	243,810,146	34,609,109	**398,420,438**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	159,483,713	154,316,028	2,474,897	**339,353,492**

Չբաշխված մնացորդները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, հիմնական միջոցները, օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, ոչ նյութական ակտիվները, բռնագանձված ակտիվները, այլ ակտիվները, շահութահարկի գծով ընթացիկ պարտավորությունները և այլ պարտավորություններ:

Աշխարհագրական տեղեկատվություն

Բանկն իր հիմնական գործունեությունը իրականացնում է ՀՀ-ում: Բացի ֆինանսական գործիքներից, Բանկը չունի ՀՀ-ի տարածքից դուրս այլ ընթացիկ ակտիվներ:

Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ

ՖՀՄՍ 15-ի շրջանակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի բացվածքը ըստ սեգմենտների 2022 և 2021 թվականների դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետևյալն է՝

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ներդրումային բանկային գործունեություն*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Ընդամենը*
Միջնորդավճարների գծով եկամուտ			
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	–	194,218	**194,218**
Միջնորդավճարներ փոխանցումներից	10,879	99,095	**109,974**
Հաշվարկային գործառնություններ	–	76,585	**76,585**
Վճարային քարտերով գործառնություններ	–	64,323	**64,323**
Բրոկերային գործառնություններ	50,166	–	**50,166**
Այլ եկամուտ	–	9,728	**9,728**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ	**61,045**	**443,949**	**504,994**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ներդրումային բանկային գործունեություն*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Ընդամենը*
Միջնորդավճարների գծով եկամուտ			
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	–	76,591	**76,591**
Միջնորդավճարներ փոխանցումներից	2	119,663	**119,665**
Բրոկերային գործառնություններ	71,100	–	**71,100**
Հաշվարկային գործառնություններ	–	44,724	**44,724**
Վճարային քարտերով գործառնություններ	–	27,441	**27,441**
Այլ եկամուտ	–	2,818	**2,818**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ	**71,102**	**271,237**	**342,339**

(հազար ՀՀ դրամ)

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
ԿԲ-ում ընթացիկ հաշիվներ	22,789,055	24,303,499
Կանխիկ դրամական միջոցներ	2,947,963	1,895,416
Ընթացիկ հաշիվներ այլ վարկային կազմակերպություններում	1,685,095	861,531
Մինչև 90 օր ժամկետային ավանդներ վարկային կազմակերպություններում	1,141,512	269,733
	28,563,625	**27,330,179**
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ	(11,152)	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**28,552,473**	**27,330,179**

Դրամական միջոցների բոլոր մնացորդները վերագրված են Փուլ 1-ին: Տարվա ընթացում ԱՎԿ պահուստի փոփոխության վերլուծությունը հետևյալն է.

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	*2022թ.*	*2021թ.*
ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	**–**	**–**
ԱՎԿ փոփոխություն	11,152	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**11,152**	**–**

7. Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ

Վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջները ներառում են՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Այլ ֆինանսական հատատություններում դեպոնացված միջոցներ	4,115,478	1,650,471
Հակադարձ հետգնման պայմանագրեր	2,327,437	–
Վարկեր վարկային կազմակերպություններին	558,562	309,632
Վարկեր ներդրումային կազմակերպություններին	230,068	184,021
Վարկեր բանկերին	119,928	292,714
Այլ գումարներ	109,430	162,566
	7,460,903	**2,599,404**
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ	(11,874)	(58,918)
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	**7,449,029**	**2,540,486**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը կնքել է հակադարձ հետգնման պայմանագրեր 4 (չորս) վարկային կազմակերպությունների հետ (2021թ. դեկտեմբերի 31՝ նմանատիպ պայմանագրեր չեն կնքվել): Տվյալ պայմանագրերի առարկան է ՀՀ պետական արժեթղթերը 2,396,109 հազար ՀՀ դրամ իրական արժեքով 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2021թ. դեկտեմբերի 31՝ զրո):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին տրված վարկերի և ավանդների 119,928 հազար ՀՀ դրամ մնացորդը մեկ կոնտրագենտի մասով է (2021թ.՝ 292,714 հազար ՀՀ դրամ՝ մեկ կոնտրագենտ):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ ֆինանսական հատատություններում դեպոնացված միջոցները ներառում են 260,000 հազար ՀՀ դրամի ՀՀ ԿԲ-ում երաշխավորված դեպոնացված միջոցներ ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների վճարումների համար (2021թ.՝ 210,000 հազար ՀՀ դրամ):

(հազար ՀՀ դրամ)

7. Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ (շարունակություն)

Վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջների բոլոր մնացորդները գտնվում են փուլ 1-ում: Տարվա ընթացքում համախառն հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացվում է ստորև՝

Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	*2022թ.*	*2021թ.*
Համախառն հաշվեկշռային արժեք հունվարի 1-ի դրությամբ	**2,599,404**	**6,884,968**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	5,732,632	1,603,503
Մարված ակտիվներ	(842,379)	(5,845,445)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(28,754)	(43,622)
Համախառն հաշվեկշռային արժեք դեկտեմբերի 31-ի դրությամբ	**7,460,903**	**2,599,404**

Վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջների բոլոր մնացորդները գտնվում են փուլ 1-ում: Տարվա ընթացքում ԱՎԿ գծով պահուստի փոփոխությունները ներկայացվում է ստորև՝

Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	*2022թ.*	*2021թ.*
ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	**58,918**	**60,294**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,071	11,045
Մարված ակտիվներ	(10,975)	(12,421)
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(34,355)	–
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(2,785)	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**11,874**	**58,918**

8. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Բանկը օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները առևտրային նպատակներով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս որպես ակտիվներ և պարտավորություններ ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները, ինչպես նաև պայմանական արժեքները: Գրանցված համախառն պայմանական արժեքը ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվի, հաշվարկային տոկոսադրույքի կամ ինդեքսի արժեքն է և ածանցյալ գործիքների արժեքների փոփոխությունների չափման հիմք է հանդիսանում: Պայմանական արժեքները ներկայացնում են գործարքների ծավալները տարեվերջին և չեն արտացոլում վարկային ռիսկը:

	2022թ. դեկտեմբերի 31			*2021թ. դեկտեմբերի 31*		
		Իրական արժեք			*Իրական արժեք*	
	Պայմանական գումար	*Ակտիվ*	*Պարտավորություն*	*Պայմանական գումար*	*Ակտիվ*	*Պարտավորություն*
Տոկոսադրույքի պայմանագրեր						
Ֆորվարդներ և սվոփներ - ՀՀ	2,629,311	20,011	27,039	1,925,112	30,238	63,972
Արտարժույթի փոխարժեքի պայմանագրեր						
Ֆորվարդներ և սվոփներ – ՀՀ	3,111,665	6,241	2,069	606,623	4,887	270
Ընդամենը ածանցյալ ակտիվներ / պարտավորություններ	**5,740,976**	**26,252**	**29,108**	**2,531,735**	**35,125**	**64,242**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի դիրքեր հետևյալ ածանցյալ գործիքների մասով՝

Ֆորվարդներ

Ֆորվարդ պայմանագրերը պայմանագրում նշված ֆինանսական գործիքը սահմանված գնով և ամսաթվին ապագայում գնելու կամ վաճառելու պայմանագրային համաձայնագրեր են: Ֆորվարդները արտաբորսայական շուկայում կնքվող անհատականացված պայմանագրեր են:

Սվոփեր

Սվոփերը երկու կողմերի միջև տոկոսներ, արտարժույթի փոխարժեքներ և բաժնային ինդեքսներ փոխանակելու վերաբերյալ պայմանագրային համաձայնագրեր են՝ (և վարկային դեֆոլտային սվոփերի դեպքում) սահմանված վարկային իրադարձությունների մասով որոշակի պայմանական գումարների վրա հիմնված վճարումներ կատարելու համար:

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ

Հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները ներառում են՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Խոշոր բիզնես վարկեր	87,262,076	79,851,349
ՓՄՁ վարկեր	18,898,791	20,109,318
Այլ	4,465,216	4,466,390
Իրավաբանական անձանց ամորտիզացված արժեքով տրված համախառն վարկեր և փոխառություններ	**110,626,083**	**104,427,057**
Հիփոթեքային վարկեր	18,604,750	17,761,661
Սպառողական վարկեր	2,044,826	3,278,659
Ֆիզիկական անձանց ամորտիզացված արժեքով տրված համախառն վարկեր և փոխառություններ	**20,649,576**	**21,040,320**
Հաճախորդների ամորտիզացված արժեքով տրված համախառն վարկեր և փոխառություններ	**131,275,659**	**125,467,377**
Նվազում՝ արժեզրկման գծով պահուստ	(6,272,611)	(8,935,867)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**125,003,048**	**116,531,510**

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Օվերդրաֆտներ/վարկային գծեր	68,133,849	72,303,618
Վարկեր հաճախորդներին	56,266,797	48,648,078
Դեբիտորական պարտքեր ֆինանսական վարձակալության գծով	4,107,822	2,096,193
Ֆակտորինգ	2,587,504	2,230,538
Հակադարձ հետգնման պայմանագրեր	179,687	188,950
Հաճախորդներին ամորտիզացված արժեքով տրված համախառն վարկեր և փոխառություններ	**131,275,659**	**125,467,377**
Նվազում՝ արժեզրկման գծով պահուստ	(6,272,611)	(8,935,867)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	**125,003,048**	**116,531,510**

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Հաճախորդներին ամորտիզացված արժեքով տրված վարկերի և փոխառությունների գծով արժեզրկման պահուստ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում խոշոր բիզնես վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Վարկեր և փոխառություններ իրավաբանական անձանց	***Փուլ 1***	***Փուլ 2***	***Փուլ 3***	***POCI***	***Ընդամենը***
Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**87,483,823**	**10,640,286**	**6,302,948**	**–**	**104,427,057**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	54,991,125	–	–	16,831	**55,007,956**
Մարված ակտիվներ	(39,827,454)	(1,571,661)	(1,737,454)	–	**(43,136,569)**
Տեղափոխում Փուլ 1	2,237,202	(2,237,202)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(11,456,648)	11,456,648	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(1,531,441)	(1,421,620)	2,953,061	–	**–**
Վերականգնումներ	–	–	4,951,120	–	**4,951,120**
Դուրս գրված գումարներ	–	–	(5,049,943)	–	**(5,049,943)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(3,408,426)	(1,720,779)	(444,333)	–	**(5,573,538)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**88,488,181**	**15,145,672**	**6,975,399**	**16,831**	**110,626,083**

Վարկեր և փոխառություններ իրավաբանական անձանց	***Փուլ 1***	***Փուլ 2***	***Փուլ 3***	***POCI***	***Ընդամենը***
ԱՎԿ 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,165,350**	**1,828,132**	**4,422,035**	**–**	**7,415,517**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,453,647	–	–	13,145	**1,466,792**
Մարված ակտիվներ	(576,112)	(214,515)	(1,649,435)	–	**(2,440,062)**
Տեղափոխում Փուլ 1	83,043	(83,043)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(625,178)	625,178	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(137,872)	(336,176)	474,048	–	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա	(35,038)	893,393	1,801,012	–	**2,659,367**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	254,869	–	**254,869**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(31,045)	(851,469)	(2,250,634)	–	**(3,133,148)**
Վերականգնումներ	–	–	4,951,120	–	**4,951,120**
Դուրս գրված գումարներ	–	–	(5,049,943)	–	**(5,049,943)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(48,386)	(235,501)	(27,187)	–	**(311,074)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,248,409**	**1,625,999**	**2,925,885**	**13,145**	**5,813,438**

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում սպառողական վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Վարկեր և փոխառություններ ֆիզիկական անձանց	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**18,437,084**	**1,569,277**	**1,033,959**	**21,040,320**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	6,090,078	–	–	**6,090,078**
Մարված ակտիվներ	(4,224,348)	(885,242)	(20,244)	**(5,129,834)**
Տեղափոխում Փուլ 1	278,831	(278,831)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(353,242)	353,242	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(70,277)	(190,191)	260,468	**–**
Վերականգնումներ	–	–	20,520	**20,520**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(1,046,417)	(95,077)	(230,014)	**(1,371,508)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**19,111,709**	**473,178**	**1,064,689**	**20,649,576**

Վարկեր և փոխառություններ ֆիզիկական անձանց	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ	**361,305**	**1,142,260**	**16,785**	**1,520,350**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	101,381	–	–	**101,381**
Մարված ակտիվներ	(75,760)	(664,230)	(14,049)	**(754,039)**
Տեղափոխում Փուլ 1	86,547	(86,547)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(10,473)	10,473	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(23,579)	(182,441)	206,020	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա	(63,507)	42,622	(53,658)	**(74,543)**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	957	**957**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(180,012)	(83,510)	(16,980)	**(280,502)**
Վերականգնումներ	–	–	20,520	**20,520**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(33,453)	(38,872)	(2,626)	**(74,951)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**162,449**	**139,755**	**156,969**	**459,173**

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում կորպորատիվ վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Վարկեր և փոխառություններ իրավաբանական անձանց	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**96,520,169**	**7,806,747**	**9,395,235**	**113,722,151**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	61,319,762	–	–	**61,319,762**
Մարված ակտիվներ	(55,348,177)	(5,247,293)	(6,069,474)	**(66,664,944)**
Տեղափոխում Փուլ 1	108,656	–	(108,656)	**–**
Տեղափոխում Փուլ 2	(11,066,350)	11,066,350	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(1,838,104)	(2,906,595)	4,744,699	**–**
Վերականգնումներ	–	–	950,592	**950,592**
Դուրս գրված գումարներ	–	–	(2,296,733)	**(2,296,733)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(2,212,133)	(78,923)	(312,715)	**(2,603,771)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**87,483,823**	**10,640,286**	**6,302,948**	**104,427,057**

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Վարկեր և փոխառություններ իրավաբանական անձանց	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,808,677**	**592,095**	**5,874,570**	**8,275,342**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	3,263,726	–	–	**3,263,726**
Մարված ակտիվներ	(1,070,692)	(355,168)	(1,779,600)	**(3,205,460)**
Տեղափոխում Փուլ 1	24,864	–	(24,864)	**–**
Տեղափոխում Փուլ 2	(1,496,512)	1,496,512	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(1,074,380)	(213,866)	1,288,246	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա	(17,742)	261,987	1,353,168	**1,597,413**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	22,475	**22,475**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(237,711)	47,355	(936,876)	**(1,127,232)**
Վերականգնումներ	–	–	950,592	**950,592**
Դուրս գրված գումարներ	–	–	(2,296,733)	**(2,296,733)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(34,880)	(783)	(28,943)	**(64,606)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,165,350**	**1,828,132**	**4,422,035**	**7,415,517**

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում սպառողական վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Վարկեր և փոխառություններ ֆիզիկական անձանց	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**17,940,675**	**699,532**	**794,614**	**19,434,821**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	6,863,306	–	–	**6,863,306**
Մարված ակտիվներ	(3,944,627)	(311,254)	(25,019)	**(4,280,900)**
Տեղափոխում Փուլ 1	62,646	(62,646)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(540,597)	1,289,027	(748,430)	**–**
Տեղափոխում Փուլ 3	(1,309,477)	(23,047)	1,332,524	**–**
Վերականգնումներ	–	–	22,293	**22,293**
Դուրս գրված գումարներ	–	–	(253,070)	**(253,070)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(634,842)	(22,335)	(88,953)	**(746,130)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**18,437,084**	**1,569,277**	**1,033,959**	**21,040,320**

Վարկեր և փոխառություններ ֆիզիկական անձանց	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**507,814**	**158,410**	**737,182**	**1,403,406**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	505,090	–	–	**505,090**
Մարված ակտիվներ	(113,699)	(46,090)	(5,394)	**(165,183)**
Տեղափոխում Փուլ 1	30,488	(30,488)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(381,384)	1,102,842	(721,458)	**–**
Տեղափոխում Փուլ 3	(35,809)	(25,727)	61,536	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխման ազդեցությունը ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԱՎԿ-ների վրա	(23,461)	14,563	235,703	**226,805**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(107,562)	34,358	5,885	**(67,319)**
Վերականգնումներ	–	–	22,293	**22,293**
Դուրս գրված գումարներ	–	–	(253,070)	**(253,070)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(20,172)	(65,608)	(65,892)	**(151,672)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**361,305**	**1,142,260**	**16,785**	**1,520,350**

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Գրավ և վարկային ռիսկը զսպող այլ գործիքներ

Պահանջվող գրավի տեսակն ու չափը կախված է վարկառուի վարկային ռիսկի գնահատականից: Բանկի կողմից սահմանված են ապահովման միջոցների թույլատրելիության և գնահատման չափորոշիչներ:

Ձեռքբերված գրավի հիմնական տեսակները հետևյալն են՝

- Արժեթղթային վարկերի և հակադարձ հետգնման գործարքների համար՝ դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- Առևտրային վարկերի համար՝ անշարժ գույքի, պաշարների, դեբիտորական պարտքերի գրավադրում,
- Մանրածախ վարկավորման համար՝ բնակելի անշարժ գույքի գրավադրում:

Բանկը նաև ստանում է երաշխիքներ մայր կազմակերպություններից դուստր կազմակերպություններին տրամադրված վարկերի գծով:

Ղեկավարությունը հետևում է գրավի շուկայական արժեքին և պահանջում է լրացուցիչ գրավ՝ դրա հիմքում ընկած պայմանագրի համաձայն՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Ստորև աղյուսակը ներկայացնում է գրավի ընթացիկ իրական արժեքների և արժեզրկված ակտիվների (փուլ 3) վարկային ռիսկը զսպող այլ գործիքների վերլուծությունը՝

	Վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը	*Անշարժ գույք*	*Այլ**	*Ավելցուկ գրավ*	*Ընդամենը գրավ*	*Զուտ ենթարկվածություն*	*Համապատասխան ԱՎԿ*
31 դեկտեմբերի 2022թ.							
Կորպորատիվ վարկավորում	5,083,921	2,549,858	1,035,192	(687,903)	**2,897,147**	2,186,774	2,125,310
Փոքր և միջին ձեռնարկություններ ի վարկավորում	568,541	772,137	–	(242,219)	**529,918**	38,623	227,446
Հիփոթեքային վարկեր	858,015	945,390	–	(113,057)	**832,333**	25,682	17,289
Սպառողական վարկեր	206,674	167,520	–	–	**167,520**	39,154	139,680
Այլ	1,339,768	1,844,941	–	(505,173)	**1,339,768**	–	586,274
	8,056,919	**6,279,846**	**1,035,192**	**(1,548,352)**	**5,766,686**	**2,290,233**	**3,095,999**

	Վարկային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը	*Անշարժ գույք*	*Այլ**	*Ավելցուկ գրավ*	*Ընդամենը գրավ*	*Զուտ ենթարկվածություն*	*Համապատասխան ԱՎԿ*
31 դեկտեմբերի 2021թ.							
Կորպորատիվ վարկավորում	6,156,194	6,041,005	–	(493,240)	**5,547,765**	608,429	4,374,628
Փոքր ձեռնարկություններ ի վարկավորում	146,754	117,595	–	–	**117,595**	29,159	47,407
Հիփոթեքային վարկեր	1,033,959	1,458,372	–	(426,034)	**1,032,338**	1,621	16,785
	7,336,907	**7,616,972**	**–**	**(919,274)**	**6,697,698**	**639,209**	**4,438,820**

* *Փոխադրամիջոցներ, սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր:*

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների համակենտրոնացում

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տասը խոշոր վարկառուներին տրամադրված վարկերի կենտրոնացում 32,347,346 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով (համախառն վարկային պորտֆելի 26.19%) (2021թ.՝ 28,060,708 հազար ՀՀ դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 24.08%): Նշված վարկերի գծով արժեզրկման պահուստը կազմում է 1,248,949 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 343,840 հազար ՀՀ դրամ):

Վարկերը տրամադրվել են հաճախորդների հետևյալ տեսակներին.

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Մասնավոր ձեռնարկություններ	109,454,783	103,518,659
Ֆիզիկական անձինք	21,293,674	21,731,097
Պետական ձեռնարկություններ	455,744	75,765
Ֆինանսական կազմակերպություններ	71,458	141,856
	131,275,659	**125,467,377**

Վարկերը առավելապես տրամադրվել են ՀՀ հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են տնտեսության հետևյալ ոլորտներում՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Արտադրություն	40,235,648	36,508,357
Մանրածախ	18,898,791	20,110,601
Հիփոթեքային վարկեր	18,604,753	17,761,281
Էլ.Էներգիայի ստեղծում, փոխանցում և բաշխում	17,501,485	16,252,971
Շինարարարություն	13,400,522	14,285,936
Գյուղատնտեսություն	9,559,733	7,402,650
Տուրիզմ	6,528,902	5,395,422
Սպառողական վարկեր	1,632,396	2,895,722
Վարկային քարտի վարկ	448,213	388,047
Այլ	4,465,216	4,466,390
	131,275,659	**125,467,377**

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքեր

Ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերը ներառված են կորպորատիվ վարկավորման պորտֆելում: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի վերլուծությունը հետևյալն է՝

Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ	
Մինչև 1 տարի	1,173,535
1-2 տարի	1,082,234
2-3 տարի	928,696
3-4 տարի	846,335
4-5 տարի	735,123
5 տարուց ավել	1,038,174
	5,804,097
Ապագա ժամանակաշրջանների չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով	(1,696,275)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում նախքան արժեզրկման գծով պահուստը	**4,107,822**
Արժեզրկման գծով պահուստ	(194,774)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**3,913,048**

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (շարունակություն)

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքերի վերլուծությունը հետևյալն է՝

Ֆինանսական վարձակալության գծով համախառն ներդրումներ	
Մինչև 1 տարի	589,653
1-2 տարի	538,774
2-3 տարի	487,752
3-4 տարի	380,451
4-5 տարի	341,065
5 տարուց ավել	519,952
	2,857,647
Ապագա ժամանակաշրջանների չվաստակած ֆինանսական եկամուտ ֆինանսական վարձակալության գծով	(761,454)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում նախքան արժեզրկման գծով պահուստը	**2,096,193**
Արժեզրկման գծով պահուստ	(36,514)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**2,059,679**

10. Ներդրումային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթերը՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը, բաղկացած են՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր		
Պետական պարտատոմսեր	86,767,519	88,810,474
Կորպորատիվ պարտատոմսեր	911,092	732,502
	87,678,611	**89,542,976**
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ	(339,097)	(568,548)
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	**87,339,514**	**88,974,428**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր		
Պետական պարտատոմսեր	41,854,755	59,043,262
Կորպորատիվ պարտատոմսեր	2,220,261	5,770,144
ԱՄՆ Գանձապետական պարտատոմսեր	1,966,005	–
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	**46,041,021**	**64,813,406**
Պետական պարտատոմսեր	78,718,547	89,923,037
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր՝ հետգնման պայմանագրերով գրավադրված	**78,718,547**	**89,923,037**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնեմասային արժեթղթեր		
ՀՀ բաժնեմասային արժեթղթեր	51,948	64,150
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնեմասային արժեթղթեր	**51,948**	**64,150**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնեմասային արժեթղթեր՝ հետգնման պայմանագրերով գրավադրված	**124,811,516**	**154,800,593**

(հազար ՀՀ դրամ)

Ամորտիզացված արժեքով չափվող պարտաքային արժեթղթերի բոլոր մնացորդները գտնվում են փուլ 1-ում: Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների փոփոխության և համապատասխան ԱՎԿ-ի վերլուծությունը հետևյալն է՝

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	***2022թ.***	***2021թ.***
Համախառն հաշվեկշռային արժեքը հունվարի 1-ի դրությամբ	**89,542,976**	**63,265,237**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	300,000	34,641,783
Մարված ակտիվներ	(1,211,997)	(7,723,909)
Արտարժույթի փոխարժեքի շարժ	(952,368)	(640,135)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**87,678,611**	**89,542,976**

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	***2022թ.***	***2021թ.***
ԱՎԿ-ներ հունվարի 1-ի դրությամբ	**568,548**	**200,532**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,536	236,970
Մարված ակտիվներ	(9,343)	(3,479)
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(214,298)	134,525
Արտարժույթի փոխարժեքի շարժ	(8,346)	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**339,097**	**568,548**

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող պարտաքային արժեթղթերի բոլոր մնացորդները գտնվում են փուլ 1-ում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների փոփոխության և համապատասխան ԱՎԿ-ի վերլուծությունը հետևյալն է՝

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	***2022թ.***	***2021թ.***
Իրական արժեքը հունվարի 1-ի դրությամբ	**154,800,593**	**158,315,295**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	63,058,002	76,634,984
Մարված ակտիվներ	(5,250,534)	(11,195,410)
Վաճառված ակտիվներ	(65,078,308)	(55,057,396)
Իրական արժեքի զուտ փոփոխություն	(18,849,853)	(12,146,863)
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(3,868,384)	(1,750,017)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**124,811,516**	**154,800,593**

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	***2022թ.***	***2021թ.***
ԱՎԿ-ներ հունվարի 1-ի դրությամբ	**827,537**	**603,586**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	303,722	640,649
Մարված ակտիվներ	(679,693)	(472,512)
Վաճառված ակտիվներ	(18,716)	(24,185)
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(126,438)	79,999
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(4,252)	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**302,160**	**827,537**

(հազար ՀՀ դրամ)

11. Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հիմնական միջոցների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների շարժը հետևյալն է՝

	Շենքեր	Տնտեսական գույք	Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,821,262**	**166,019**	**322,611**	**93,296**	**59,065**	**173,764**	**2,636,017**
Ավելացումներ	–	1,306	23,005	20,960	–	**–**	**45,271**
Օտարում և դուրսգրում	–	(476)	(25,905)	–	–	**–**	**(26,381)**
Վերագնահատում	517,152	–	–	–	–	**–**	**517,152**
Վերագնահատված ակտիվների գծով կուտակված մաշվածության վերացում	(525,520)	–	–	–	–	**–**	**(525,520)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,812,894**	**166,849**	**319,711**	**114,256**	**59,065**	**173,764**	**2,646,539**
Կուտակված մաշվածություն							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**447,696**	**125,004**	**219,393**	**55,295**	**40,598**	**110,608**	**998,594**
Մաշվածության ծախս	77,824	7,262	28,424	10,130	11,492	44,638	**179,770**
Օտարում և դուրսգրում	–	(476)	(25,905)	–	–	**–**	**(26,381)**
Վերագնահատված ակտիվների գծով կուտակված մաշվածության վերացում	(525,520)	–	–	–	–	**–**	**(525,520)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**131,790**	**221,912**	**65,425**	**52,090**	**155,246**	**626,463**
Զուտ հաշվեկշռային արժեք							
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,373,566**	**41,015**	**103,218**	**38,001**	**18,467**	**63,156**	**1,637,423**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,812,894**	**35,059**	**97,799**	**48,831**	**6,975**	**18,518**	**2,020,076**

	Շենքեր	Տնտեսական գույք	Համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,821,262**	**152,951**	**310,989**	**124,247**	**59,065**	**173,765**	**2,642,279**
Ավելացումներ	–	14,595	25,422	16,150	–	819	**56,986**
Օտարում և դուրսգրում	–	(1,527)	(13,800)	(47,101)	–	(820)	**(63,248)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,821,262**	**166,019**	**322,611**	**93,296**	**59,065**	**173,764**	**2,636,017**
Կուտակված ամորտիզացիա							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**369,662**	**118,557**	**206,427**	**92,506**	**29,072**	**65,875**	**882,099**
Մաշվածության ծախս	78,034	7,974	26,766	8,313	11,526	45,553	**178,166**
Օտարում և դուրսգրում	–	(1,527)	(13,800)	(45,524)	–	(820)	**(61,671)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**447,696**	**125,004**	**219,393**	**55,295**	**40,598**	**110,608**	**998,594**
Զուտ հաշվեկշռային արժեք							
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,451,600**	**34,394**	**104,562**	**31,741**	**29,993**	**107,890**	**1,760,180**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,373,566**	**41,015**	**103,218**	**38,001**	**18,467**	**63,156**	**1,637,423**

(հազար ՀՀ դրամ)

Ակտիվների վերագնահատում

Բանկին պատկանող շենքերը վերագնահատվել են անկախ գնահատողի կողմից 2022 թվականին: Շենքերի զուտ հաշվեկշռային արժեքը, որը կճանաչվեր սկզբնական արժեքի մեթոդով, կազմել է 294,307 հազար ՀՀ դրամ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2021թ.՝ 312,701 հազար ՀՀ դրամ):

Եթե հիմնական միջոցները ներկայացվեին սկզբնական արժեքի մեթոդի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքները կկազմեին՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Սկզբնական արժեք	551,825	551,825
Կուտակված մաշվածություն և արժեզրկում	(257,518)	(239,124)
Զուտ հաշվեկշռային արժեք	**294,307**	**312,701**

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների կազմում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվները կազմում են 245,153 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 266,072 հազար ՀՀ դրամ):

12. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվների շարժը հետևյալն է՝

	Արտոնագրեր	*Համակարգչային ծրագրեր*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք			
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**81,198**	**119,858**	**201,056**
Ավելացումներ	3,763	28,319	32,082
Օտարումներ և դուրսգրումներ	(4,731)	(4,950)	(9,681)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**80,230**	**143,227**	**223,457**
Կուտակված ամորտիզացիա			
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**36,069**	**86,294**	**122,363**
Ամորտիզացիայի գծով ծախս	11,604	16,769	**28,373**
Օտարումներ և դուրսգրումներ	(4,731)	(4,950)	**(9,681)**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**42,942**	**98,113**	**141,055**
Զուտ հաշվեկշռային արժեք			
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**45,129**	**33,564**	**78,693**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**37,288**	**45,114**	**82,402**

	Արտոնագրեր	*Համակարգչային ծրագրեր*	*Ընդամենը*
Սկզբնական արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**79,910**	**117,333**	**197,243**
Ավելացումներ	6,070	15,925	21,995
Օտարումներ և դուրսգրումներ	(4,782)	(13,400)	(18,182)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**81,198**	**119,858**	**201,056**
Կուտակված ամորտիզացիա			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**27,529**	**86,518**	**114,047**
Ամորտիզացիայի գծով ծախս	13,322	13,176	26,498
Արժեզրկում	(4,782)	(13,400)	(18,182)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**36,069**	**86,294**	**122,363**
Զուտ հաշվեկշռային արժեք			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**52,381**	**30,815**	**83,196**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**45,129**	**33,564**	**78,693**

(հազար ՀՀ դրամ)

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոչ նյութական ակտիվների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ոչ նյութական ակտիվները կազմում են 36,713 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 36,713 հազար ՀՀ դրամ):

13. Բռնագանձված ակտիվներ

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխառությունների ապահովվածություն հանդիսացող գրավների բռնագանձման արդյունքում ձեռք բերված գրավները ներկայացված են ստորև.

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Կող և շենքեր	1,640,255	1,715,272
Այլ ակտիվներ	79,488	79,488
	1,719,743	**1,794,760**
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ	(543,939)	–
Ընդամենը բռնագանձված ակտիվներ	**1,175,804**	**1,794,760**

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել գրավի՝ ժամանակին և պատշաճ կերպով իրացմանը: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ դրամային գրավները իր սեփական գործունեության իրականացման նպատակով: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, նվազագույնով: 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում Բանկի բռնագանձված ակտիվների արժեքը կազմել է 320,142 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 374,754 հազար ՀՀ դրամ) և վաճառված ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 395,159 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 846,864 հազար ՀՀ դրամ):

14. Հարկում

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է հետևյալ հոդվածներից՝

	2022թ.	*2021թ.*
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	1,569,701	1,733,305
Հետաձգված հարկային ծախս՝ ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	160,204	(89,768)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**1,729,905**	**1,643,537**

2022 թվականի համար շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2021թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև:

Հաշվապահական շահույթի և հարկային ծախսերի միջև թվաբանական համաձայնեցումը ներկայացված է ստորև՝

	2022թ.	*2021թ.*
Շահույթ նախքան հարկումը	**8,929,620**	**9,408,996**
Օրենքով սահմանված հարկի դրույքաչափ	18%	18%
Շահութահարկի գծով տեսական ծախս՝ օրենքով սահմանված դրույքաչափով	**1,607,332**	**1,693,619**
Չնվազեցվող ծախսեր/(Չհարկվող եկամուտ)	156,088	(815)
Նախորդ ժամանակաշրջանի շահութահարկի ճշգրտում	(33,515)	–
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվների փոփոխություններ	–	(49,267)
Շահութահարկի գծով ծախս	**1,729,905**	**1,643,537**

(հազար ՀՀ դրամ)

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև՝

	2021թ. հունվարի 1	*Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում*		*2021թ. դեկտեմբեր ի 31*	*Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում*		*2022 թ. դեկտեմբեր ի 31*
		Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	*Այլ համապարփակ եկամտի կազմում*		*Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում*	*Այլ համապարփակ եկամտի կազմում*	
Դրանական միջոցներ և դրանց համարժեքներ	–	–	–	–	2,007	–	2,007
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	–	–	–	(6,256)	–	(6,256)
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	(5,566)	11,212	–	5,646	(11,237)	–	(5,591)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	286,184	(65,392)	–	220,792	(147,045)	–	73,747
Ներդրումային արժեթղթեր այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող	(1,823,501)	40,312	2,553,101	769,912	(94,569)	3,502,493	4,177,836
Ներդրումային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	36,096	66,243	–	102,339	(41,301)	–	61,038
Հիմնական միջոցներ	(237,232)	59,509	–	(177,723)	9,113	(93,087)	(261,697)
Բռնագանձված ակտիվներ	–	–	–	–	97,909	–	97,909
Այլ ակտիվներ	(9,010)	(5,782)	–	(14,792)	(4,130)	–	(18,922)
Այլ պահուստներ	(19,809)	(11,168)	–	(30,977)	33,771	–	2,794
Վարձակալության գծով պարտավորություններ	(9,388)	(4,956)	–	(14,344)	12,804	–	(1,540)
Այլ պարտավորություններ	68,544	(210)	–	68,334	(11,270)	–	57,064
Զուտ հետաձգված հաչկային ակտիվներ/(պարտավորություններ)	**(1,713,682)**	**89,768**	**2,553,101**	**929,187**	**(160,204)**	**3,409,406**	**4,178,389**

15. Վարկային կորստի գծով ծախսեր և այլ արժեզրկումներ և պահուստներ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ վերականգնումը հետևյալն է՝

	Ծան.	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	11,152	–	–	–	**11,152**
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	9	(44,259)	–	–	–	**(44,259)**
Հաճախորդների տրված վարկեր և փոխառություններ ամորտիզացված արժեքով	11	593,554	(877,709)	(2,183,744)	13,145	**(2,454,754)**
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	13	(221,105)	–	–	–	**(221,105)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջովոց իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	13	(521,125)	–	–	–	**(521,125)**
Այլ ֆինանսական ակտիվներ	19	21,554	–	–	–	**21,554**
Փոխատվության հանձառություններ	27	70,963	–	–	–	**70,963**
Ընդամենը վարկային կորստի գծով վերականգնում		**(89,266)**	**(877,709)**	**(2,183,744)**	**13,145**	**(3,137,574)**

(հազար ՀՀ դրամ)

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական գործիքների գծով ԱՎԿ փոփոխությունը հետևյալն է՝

	Ծան.	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	9	(1,376)	–	–	**(1,376)**
Հաճախորդների տրված վարկեր և փոխառություններ ամորտիզացված արժեքով	11	2,197,949	(42,995)	(1,127,114)	**1,027,840**
Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	13	368,016	–	–	**368,016**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթեր	13	223,951	–	–	**223,951**
Երաշխիքներ	23	(3,653)	–	–	**(3,653)**
Ընդամենը վարկային կորստի գծով ծախսեր		**2,784,887**	**(42,995)**	**(1,127,114)**	**1,614,778**

Արժեզրկման այլ պահուստների գծով շարժը հետևյալն է՝

	Բռնագահծված ակտիվներ	*Երաշխիքներ*	*Ընդամենը*
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**29,195**	**29,195**
Ծախս	–	(3,653)	**(3,653)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**25,542**	**25,542**
Ծախս	543,939	123,906	**667,845**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**543,939**	**149,448**	**693,387**

16. Այլ ակտիվներ և պարտավորություններ

Այլ ակտիվները բաղկացած են՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Այլ ֆինանսական ակտիվներ		
Դեբիտորական պարտքեր	798,986	382,361
Նվազեցում՝ այլ ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստ	(21,554)	–
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	**777,432**	**382,361**
Կանխավճարներ մատակարարներին	3,544,913	2,557,946
Կանխավճարներ այլ հարկերի գծով	164,130	124,336
Թանկարժեք մետաղներ	38,239	688,505
Նյութեր	6,179	12,227
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ	2,786	2,679
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	**3,756,247**	**3,385,693**
Այլ ակտիվներ	**4,533,679**	**3,768,054**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում այլ ֆինանսական ակտիվների գծով ԱՎԿ-ի վերլուծությունը հետևյալն է՝

Այլ ֆինանսական ակտիվներ	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՎԿ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	**–**	**–**
ԱՎԿ փոփոխություններ	21,554	**21,554**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**21,554**	**21,554**

(հազար ՀՀ դրամ)

Այլ պարտավորուրությունները բաղկացած են՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Այլ ֆինանսական պարտավորություններ		
Պարտավորություններ աշխատակազմի նկատմամբ	361,199	379,771
Կրեդիտորական պարտքեր	326,542	257,631
Վարկային կորուստների գծով պահուստ (Ծան. 23)	70,963	-
Անցումային հաշիվներ	33,653	174,815
Վարձակալության գծով պարտավորություններ	23,470	79,689
Այլ ֆինանսական պարտավորություններ	**815,827**	**891,906**
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ		
Կանխավճարներ ստացված վարձակալական պայմանագրերից	941,586	822,695
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	302,625	254,783
Պահուստներ (Ծան. 23)	149,448	25,542
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	824	3,532
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	**1,394,483**	**1,106,552**
Այլ պարտավորություններ	**2,210,310**	**1,998,458**

17. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պարտավորությունները ներառում են՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Հետգնման պայմանագրեր	74,982,612	81,376,952
Ակրեդիտիվներ բանկերի հետ	3,503,711	4,324,563
Վարկեր բանկերից	2,296,123	800,529
Բանկերի թղթակցային հաշիվներ	17,252	21,404
Այլ պարտավորություններ	4,028	3,381
Ընդամենը պարտավորություններ բանկերի նկատմամբ	**80,803,726**	**86,526,829**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ութ բանկի հետ կնքել է հետգնման պայմանագրեր (2021թ. դեկտեմբերի 31.՝ 4 բանկ): Տվյալ պայմանագրերի առարկան է՝ ՀՀ պետական արժեթղթերը 78,718,547 հազար ՀՀ դրամ իրական արժեքով 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2021թ. դեկտեմբերի 31.՝ 89,703,618 հազար ՀՀ դրամ): Տես Ծան. 10:

18. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Իրավաբանական անձիք		
Ժամկետային ավանդներ	79,569,002	84,321,287
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	22,706,528	13,851,435
Հետգնման պայմանագրեր	–	251,326
Ֆիզիկական անձիք		
Ժամկետային ավանդներ	18,700,258	23,482,933
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	8,560,256	14,159,647
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	**129,536,044**	**136,066,628**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 88,281,270 հազար ՀՀ դրամ (68.15%) հաճախորդների նկատմամբ պարտավորությունները հանդիսանում են պարտավորություններ տաս խոշորագույն հաճախորդների նկատմամբ (2021թ.՝ 103,190,800 հազար ՀՀ դրամ (75.98%)):

(հազար ՀՀ դրամ)

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ Բանկը պարտավոր է ավանդատուի պահանջով մարել ֆիզիկական անձանց ավանդները: Եթե ժամկետային ավանդը մարվում է ավանդատուի պահանջով մինչև մարման ժամկետը, ապա դրա նկատմամբ տոկոսները վճարվում են ցպահանջ ավանդների տոկոսադրույքի հիման վրա, եթե պայմանագրով այլ տոկոսադրույք նախատեսված չէ:

Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները ներառում են հաշիվներ հետևյալ հաճախորդների գծով՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Առևտրային կազմակերպություններ	74,724,997	77,025,213
Ֆինանսական հաստատություններ	19,178,661	16,716,145
Ֆիզիկական անձիք	27,260,513	37,642,580
Պետական հաստատություններ	4,390,750	1,646,565
Ներդրումային ընկերություններ	2,233,620	335,657
Ոչ առևտրային կազմակերպություններ	954,312	1,412,113
Անհատ ձեռնարկատերեր	71,585	181,200
Այլ	721,606	1,107,155
	129,536,044	**136,066,628**

19. Թողարկված պարտքային արժեթղթեր

Թողարկված պարտքային արժեթղթերը բաղկացած են.

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր ՀՀ դրամով	26,486,434	26,520,200
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր ԱՄՆ դոլարով	16,230,440	19,800,257
ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր եվրոյով	9,691,869	12,518,618
Թողարկված պարտքային արժեթղթեր	**52,408,743**	**58,839,075**

ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով պարտատոմսերի պայմանագրային մարման ժամկետը տատանվում է 2023-2026թթ. շրջանակներում: ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում արժեկտրոնի տոկոսադրույքը 8.50%, 9.00% և 11.50% է, ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ 6.00%, 6.50% և 6.75%, եվրոյով պարտատոմսերի դեպքում՝ 3.50%, 4.00% և 5.00%: Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում:

20. Այլ փոխառու միջոցներ

Այլ փոխառու միջոցները բաղկացած են հետևյալ հոդվածներից՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	22,861,157	11,861,320
Վարկեր միջազգային ֆինանսկաան կազմակերպություններից	10,300,385	18,659,479
Վարկեր վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից	1,617,124	1,443,937
Այլ փոխառու միջոցներ	**34,778,666**	**31,964,736**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ից վարկերը ներառում են Գերմանա-Հայկական հիմնադրամի կողմից Փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման, սպառողական և այլ նպատակով վարկերի տրամադրման համար ներգրավված միջոցները:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Ասիական Զարգացման Բանկից, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից և Տնտեսական համագործակցության միջազգային բանկից ստացված վարկերը:

Վերաֆինանսավորող վարկային կազմակերպություններից ներգրավված վարկերը ներառում են Ազգային Հիփոթեքային Ընկերությունից և Բնակարան երիտասարդներին ՈՒՀԿ-ից ներգրավված վարկերը:

Պարտադիր պայմաններ

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը բավարարում է պարտքային բոլոր պարտադիր պայմաններին:

(հազար ՀՀ դրամ)

21. Ստորադաս փոխառություններ

Ստորադաս վարկերը ներառում են հետևյալը՝

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Ստորադաս փոխառություններ՝ ստացված կապակցված կողմից	34,484,130	23,417,085
Ստորադաս փոխառություններ	**34,484,130**	**23,417,085**

Ստորադաս փոխառությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ փոխառության համաձայնագիր, որը Բանկի անվճարունակության դեպքում հանդիսանում է ստորադաս Բանկի մնացած պարտավորությունների նկատմամբ՝ ներառյալ ավանդները և այլ պարտքային գործիքները:

Կապակցված կողմերից ստացված ստորադաս փոխառությունները տրամադրված են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:

22. Սեփական կապիտալ

2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 10,000,200 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 10,000,200 հազար ՀՀ դրամ):

Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 16,667 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 600,000 դրամ անվանական արժեքներով:

2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են՝

	2022թ. դեկտեմբերի 31		*2021թ. դեկտեմբերի 31*	
	Վճարված կանոնադրական կապիտալ	*Բաժնեմասը վճարված կապիտալում (%)*	*Վճարված կանոնադրական կապիտալ*	*Բաժնեմասը վճարված կապիտալում (%)*
Էյչ-Վի-Էս Հոլդինգ Ս.ա.ր.	8,752,800	87.53	8,752,800	87.53
«ՖՄՏՄ Դիստրբյուշն» ՍՊԸ	1,247,400	12.47	1,247,400	12.47
	10,000,200	**100.00**	**10,000,200**	**100.00**

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

2022 և 2021թթ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարվել և վճարվել:

Բանկի բաժնետիրական կապիտալը ձևավորվել է բաժնետերերի դրամական ներդրումներից ՀՀ դրամով, ընդ որում, բաժնետերերն ունեն շահաբաժիններ ստանալու և կապիտալը ՀՀ դրամով տեղաբաշխելու իրավունք:

Բանկի բաժնետերերի միջև բաշխման ենթակա պահուստները հավասար են չբաշխված շահույթին՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության:

Գլխավոր պահուստ

Գլխավոր պահուստը ստեղծվում է ՀՀ կարգավորումներով սահմանված պահանջներին համապատասխան ընդհանուր բանկային ռիսկերի, ներառյալ՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի կամ արտակարգ իրավիճակների գծով: Պահուստը ստեղծվում է Բանկի կանոնադրության համաձայն, որը պահանջում է ձևավորել գլխավոր պահուստ ոչ պակաս քան բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով, ինչը օգտագործվելու է Բանկի կորուստները (վնասները) փոխհատուցելու նպատակով, եթե Բանկի շահույթը բավարար չէ այդ նպատակների համար:

Հողի և շենքերի վերագնահատումից հավելաճ

Հողի և շենքերի վերագնահատումից հավելաճն օգտագործվում է հողի և շենքերի իրական արժեքի աճի գրանցման համար և նվազում է նույն ակտիվի գծով սեփական կապիտալում նախկինում ճանաչված աճի չափով:

(հազար ՀՀ դրամ)

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ

Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստը գրանցում է իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի և ԱՎԿ փոփոխությունները:

23. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

Գործառնական միջավայր

Հայաստանը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իր իրավական, հարկային և կարգավորվող դաշտերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից ու զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից:

Իրավական միջավայր

Գործունեության բնականոն ընթացքում Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Հարկային միջավայր

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և ենթարկվում են տարբեր մեկնաբանությունների հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել էական տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի: Որոշ հանգամանքներից ելնելով՝ հարկային ստուգումները կարող են ավելի երկար տևել:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա:

Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

2022թ. և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պայմանական և պայմանագրային պարտավորությունները ներառում են հետևյալ հոդվածները.

	2022թ. դեկտեմբերի 31	*2021թ. դեկտեմբերի 31*
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ		
Երաշխիքներ	8,529,391	2,414,770
Չօգտագործված վարկային գծեր	5,745,810	4,273,940
Ֆակտորինգի չօգտագործված մաս	3,542,663	5,053,461
Ակրեդիտիվներ	–	1,483,674
	17,817,864	**13,225,845**
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ	(220,411)	(25,542)
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**17,597,453**	**13,200,303**

(հազար ՀՀ դրամ)

Պայմանական և պայմանագրային պարտավորություններ

2022 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Չօգտագործված վարկային գծեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ 2022 թ. հունվարի 1-ի դրությամբ	**–**	**–**	**–**	**–**
Նոր վարկային գծեր	70,963	–	–	**70,963**
Տեղափոխում փուլ 2	(2,140)	2,140	–	**–**
Տեղափոխում փուլ 3	(11,440)	–	11,440	**–**
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**57,383**	**2,140**	**11,440**	**70,963**

Երաշիքի գծով բոլոր մնացորդները գտնվում են փուլ 1-ում: Տարվա ընթացքում ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Երաշխիքներ	*2022թ.*	*2021թ.*
Պահուստ հունվարի 1-ի դրությամբ	**25,542**	**29,195**
Նոր երաշխիքներ	132,137	–
Ժամկետը սպառված երաշխիքներ	(8,201)	(3,653)
Պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**149,448**	**25,542**

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռևս չեն կիրառվում Հայաստանում: Այսուամենայնիվ, 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն իրականացրել է ավտոտրանսպորտային միջոցների (նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն), շենքերի և շինությունների, շահագործվող գույքի, բանկոմատների, բանկային ռիսկերի, էլեկտրոնային և համակարգչային հանցագործության, տնօրենների և ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն: Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

24. Զուտ տոկոսային եկամուտ

Զուտ տոկոսային եկամուտը ներառում է՝

	2022թ.	*2021թ.*
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	11,671,717	11,476,100
Ներդրումային արժեթղթեր	9,049,588	8,252,134
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	45,005	24,168
Դրամական համարժեքներ	7,158	78,826
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	13,001,597	13,654,990
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	**33,775,065**	**33,486,218**
Ֆինանսական վարձակալություն	337,003	205,169
Այլ տոկոսային եկամուտ	**337,003**	**205,169**
Ընդամենը տոկոսային եկամուտ	**34,112,068**	**33,691,387**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	9,052,302	8,542,065
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	7,217,621	5,860,894
Թողարկված պարտքային արժեթղթեր	3,982,670	4,402,145
Ստորադաս փոխառություններ	3,857,277	2,542,093
Այլ փոխառու միջոցներ	2,057,282	1,433,777
Վարձակալության գծով պարտավորություններ	1,131	7,318
Ընդամենը տոկոսային ծախս	**26,168,283**	**22,788,292**
Զուտ տոկոսային եկամուտ	**7,943,785**	**10,903,095**

(հազար ՀՀ դրամ)

25. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Միջնորդավճարների գծով զուտ եկամուտը ներառում է հետևյալ հոդվածները՝

	2022թ.	*2021թ.*
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	194,218	76,591
Միջնորդավճարներ փոխանցումներից	109,974	119,665
Հաշվարկային գործառնություններ	76,585	44,724
Վճարային քարտերով գործառնություններ	64,323	27,441
Բրոկերային գործառնություններ	50,166	71,100
Այլ	9,728	2,818
Ընդամենը միջնորդավճարների գծով եկամուտ	**504,994**	**342,339**
Միջնորդավճարներ փոխանցումներից	71,220	66,137
Արմենիան Քարդ համակարգին վճարումներ	55,124	–
Բրոկերային գործառնություններ	51,243	87,571
Այլ ծախսեր	7,179	3,108
Ընդամենը միջնորդավճարների գծով ծախս	**184,766**	**156,816**
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ	**320,228**	**185,523**

26. Զուտ առևտրային եկամուտ

	2022թ.	*2021թ.*
Արտարժույթային գործաքներից զուտ օգուտ	1,491,260	545,098
Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ	56,730	252,013
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	**1,547,990**	**797,111**

27. Այլ եկամուտ

	2022թ.	*2021թ.*
Տույժեր և տուգանքներ	237,867	–
Բռնագանձված ակտիվների օտարումից զուտ օգուտ	36,739	–
Ինկասացիայի գծով եկամուտ	20,197	21,330
Եկամուտ շահաբաժիններից	2,949	4,006
Հիմնական միջոցների օտարումից զուտ օգուտ	275	12,215
Թանկարժեք մետաղներով գործարքներից զուտ օգուտ	–	26,690
Այլ	18,939	16,543
Ընդամենը այլ եկամուտ	**316,966**	**80,784**

(հազար ՀՀ դրամ)

28. Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսեր

Անձնակազմի գծով և այլ գործառնական ծախսերը ներառում են՝

	2022թ.	*2021թ.*
Աշխատավարձ և պարգևավճարներ	1,909,137	1,565,699
Այլ ծախսեր	10,050	3,892
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	**1,919,187**	**1,569,591**
Ավանդների ապահովագրման ծախսեր	119,901	129,170
Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր	103,452	106,233
Հաղորդակցություն	78,818	81,584
Խորհրդատվական և այլ ծառայություններ	67,192	39,892
Ներկայացուցչական ծախսեր	49,388	37,899
Ապահովագրության գծով ծախսեր	45,340	41,362
Ֆինանսական համակարգի հաշտարար	40,174	38,915
Գործուղման ծախսեր	28,792	8,892
Թանկարժեք մետաղներով գործարքներից զուտ վնաս	24,685	–
Բարգործություն	21,165	37,592
Գրասենյակային/կոմունալ ծախսեր	14,709	11,398
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	12,953	27,423
Անվտանգություն	9,075	9,045
Բռնագանձված ակտիվների օտարումից զուտ վնաս	–	58,778
Այլ վարչական ծախսեր	19,132	108,911
Այլ գործառնական ծախսեր	**634,776**	**737,094**

29. Ռիսկերի կառավարում

Ներածություն

Բանկի գործունեությանը բնորոշ են բազմազան ֆինանսական ռիսկեր, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Բանկի առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Բանկի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

Ռիսկերի կառավարման գործընթացի նպատակն է ռիսկերի նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների, սահմանաչափերի և ներքին իրավական ակտերի շրջանակներում օժանդակել Բանկի ղեկավարությանը կայացնելու որոշումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կառավարել Բանկի և Բանկի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը, հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով, շահութաբերության, իրացվելիության և վճարունակության սահմանաչափերի ընդունելի մակարդակի ապահովումը: Ռիսկերի կառավարումը հիմնվում է Բանկի իրավասու մարմնի կողմից հաստատված ընթացակարգերի, կարգերի, նորմատիվների և սահմանաչափերի վրա: Բանկի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Ռիսկերի վերլուծությունը հանդիսանում է Բանկի ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման մի մասը: Բանկի ռիսկերի կառավարման սկզբունքներին են դասվում. ճգնաժամային իրավիճակներում ռիսկերի կառավարման ոչ ստանդարտ ընթացակարգերի օգտագործումը, ֆինանսական դրության կայունության ստուգման նպատակով սթրես սցենարների պարբերաբար կիրառումը, ակտիվներում բիզնես գործառնությունների և վարկային պորտֆելի տեսակների կենտրոնացումից խուսափելը, Բանկի ակտիվների և պարտավորությունների դիվերսիֆիկացումը, Բանկի կողմից ստանձնած ռիսկերի համապատասխան հաճախականությամբ մոնիտորինգի իրականացումը, բանկային ռիսկերի կենտրոնացված կառավարումը, ռիսկերի կառավարման վարչության և այլ ստորաբաժանումների միջև անընդհատ կապը:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Բանկում ռիսկերի կառավարումը կազմակերպում և կոորդինացնում է Գործադիր տնօրենը՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

(հազար ՀՀ դրամ)

Բանկի Խորհուրդ

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողության, ռազմավարության և ռիսկերի կառավարման քաղաքականության, ինչպես նաև ռիսկերի կառավարմանը վերաբերող այլ քաղաքականությունների հաստատման համար, որոնց հիման վրա Բանկի Գործադիր տնօրենը կազմակերպում է ռիսկերի կառավարումը՝ հիմք ընդունելով ռիսկերի կառավարման սահմանաչափերը և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները:

Վարչություն

Բանկում ռիսկերի կառավարման կազմակերպման նպատակով Բանկի Վարչությունն իրականացնում է՝

- Ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի ենթարկվածության և ռիսկերի ռազմավարության հաստատում,
- Վերականգնումների պլանի հաստատում
- որոշակի գործարքների հանդեպ արգելքների սահմանումը,
- միջբանկային շուկայում առանց ապահովվածության իրականացվող գործառնությունների սահմանաչափերի սահմանումը,
- բանկային ռիսկերի կարգավորման և վերահսկման ներքին նորմատիվների սահմանումը:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման վարչության հիմնական գործառույթներն են՝

- Բանկում ռիսկերի կառավարման գործուն մեխանիզմների և գործընթացների մշակումն ու ներդրումը, դրանց ներդրման նկատմամբ հսկողության իրականացումը,
- Սահմանված սահամանաչափերի մոնիտորիգ և ռիսկերի վերակուծության վերաբերյալ հաշվետվությունների ներկայավում Բանկի Խորհրդին;
- Բանկի կողմից տրամադրվող վարկերի ռիսկայնության վերլուծությունը և ծրագրային վարկերի տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողությունը,
- տրամադրված վարկերի մոնիտորինգը, խնդիրների բացահայտումը և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը,
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի գործառնեոյթների իրականացում;
- Համապատասխանության ապահովում;
- Տեղեկատվական անվտանգության ապահովում:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհրդին:

Ռիսկերի չափման և հաշվետվությունների համակարգ

Կախված տարատեսակ գործոններից՝ Բանկը նպատակահարմար է գտնում բանկային ռիսկերը բաժանել արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են՝ երկրի, օրենսդրական, ֆորս-մաժորային հանգամանքների, գնային և մրցակցային ռիսկերը:

Բանկի ներքին ռիսկերի դասին են պատկանում իր իսկ գործառնություններից բխող ռիսկերը: Դրանք են վարկային, գործառնական, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժութային, հեղինակության, կապիտալի նվազման, անձնակազմի և փողերի լվացման:

(հազար ՀՀ դրամ)

Երկրի ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման վարչությունը կատարում է Բանկի գործընկեր արտասահմանյան բանկերի վարկանիշների մոնիտորինգ և եռամսյակը մեկ Բանկի Վարչության հաստատմանն է ներկայացնում այդ բանկերի և ֆինանսական հաստատությունների գծով սահմանաչափերը:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում՝ հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի) սահմանում, արժեթղթերի փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Մրցակցային ռիսկի կառավարումը իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և բիզնեսի զարգացման բաժնի կողմից պարբերաբար իրականացվող Բանկի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկը Բանկում կառավարվում է Ռիսկերի կառավարման վարչության կողմից՝ մշակելով և կիրառելով տոկոսադրույքի ռիսկի զսպման մեխանիզմեր/մոդելներ, որի հիման վրա էլ Բանկի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի կողմից ընդունվում են որոշումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը տոկոսադրույքի ռիսկի կառավարման համար ընտրել է տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի, դյուրացիայի և բազային ռիսկի մոդելները: Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայունության ճեղքվածքի և դյուրացիայի մոդելները կիրառվում են սթրես սցենարների միջոցով ամսական կտրվածքով: Տոկոսադրույքի բազային ռիսկը կառավարվում է սթրես սցենարի միջոցով տարբեր խստության սցենարների կիրառմամբ եռամսյակային կտրվածքով:

Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով իրականացվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքի՝ իրացվելիության ճեղքվածքի (liquitidy GAP) ամենօրյա քննարկում, ինչպես նաև բարձր իրացվելի գործիքներում ներդրումների տեսակարար կշռի նկատմամբ հսկողություն: Իրացվելիության ռիսկի զսպման նպատակով Բանկի Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեին Ռիսկերի կառավարման վարչության կողմից ամսական կտրվածքով ներկայացվում է վերլուծություն Բանկի սպասվելիք մարումների, տրամադրվելիք միջոցների և դիրքի վերաբերյալ: Իրացվելիության ռիսկի կառավարումն իր մեջ ներառում է՝ Բանկի ակտիվների գնագոյացման մեխանիզմի մշակումը, բանկին տրամադրված փոխառությունների գումարների, տեսակների կամ հասախառն տոկոսային ծախսերի սահմանաչափերը, իրացվելիության պահանջները բավարարելու համար օգտագործվող ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանաչափերի կիրառումը, փոխառությունները, ըստ մարման ժամկետների դիվերսիֆիկացնելու պահանջը, իրացվելիության պահանջները բավարարելու համար Բանկի հետ կապված անձանցից (կազմակերպություններից) փոխառու միջոցների ներգրավման սահմանափակումները, տոկոսադրույքի ռիսկը սահմանափակելու սկզբունքներն ու մեթոդները՝ ներառյալ հետհաշվեկշռային հոդվածների հետ առնչվող տոկոսադրույքի ռիսկն ու սահմանաչափերը, տոկոսային մարժայի նպատակային մակարդակը, միջոցների ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքի վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմներն ու ընթացակարգերը, Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի թույլատրելի սահմանաչափերը, Բանկի այն ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացման եղանակները, որոնք կարող են իրենց կողմից իրականացվող գործառնություններով ազդել Բանկի իրացվելիության մակարդակի վրա, իրացվելիության արտահերթ պահանջները (ինչը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացման) բավարարելու ծրագիրը, Խորհրդին ու գործադիր մարմնին Բանկի իրացվելիության կառավարման վերաբերյալ տրամադրվող համապատասխան հաշվետվությունների ձևերը:

Կապիտալի նվազման ռիսկի չափման մեխանիզմներ են հանդիսանում ներքին և ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվները (կապիտալի համարժեքության, մեկ փոխառուի գծով ռիսկ և այլն): Ամսական կտրվածքով կիրառվող սթրես սցենարները հնարավորություն են տալիս որոշելու կապիտալի առավելագույն կորստի մեծությունը՝ կախված տարբեր հանգամանքներից:

Անձնակազմի ռիսկը կառավարվում է Անձնակազմի կառավարման բաժնի կողմից, որը պարբերաբար իրականացնում է ՀՀ բանկային համակարգում աշխատատեղերի և դրանց պայմանների ուսումնասիրություն, ինչպես նաև կազմակերպում է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միջոցների հաշվին:

Փողերի լվացման ռիսկի կառավարումը իրականացվում է ֆինանսական դիտարկումների բաժնի կողմից, որը գործում է փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

(հազար ՀՀ դրամ)

Ռիսկի կենտրոնացումներ

Ռիսկի կենտրոնացումները առաջանում են, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են նմանատիպ գործունեություն, կամ գործունեությունը կատարվում է միևնույն աշխարհագրական շրջանում, կամ նրանք ունեն համանման տնտեսական հատկանիշներ, որի հետևանքով տնտեսական, քաղաքական կամ այլ պայմաններում փոփոխությունները պայմանագրային պարտավորությունների կատարման նրանց ունակության վրա նույն կերպ են ազդում: Ռիսկի կենտրոնացումները արտացոլում են Բանկի գործունեության արդյունքների հարաբերական զգայունությունը պայմանների փոփոխություններին, որոնք ազդեցություն են ունենում կոնկրետ բնագավառի կամ աշխարհագրական շրջանի վրա:

Ռիսկի չափազանց կենտրոնացումներից խուսափելու համար Բանկի քաղաքականությունը և գործընթացները ներառում են հատուկ սկզբունքներ՝ ուղղված բազմաբնույթ ակտիվների տեսակների, վարկային և արժեթղթերի պորտֆելների պահպանմանը:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որի պատճառով Բանկը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Բանկը իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ սահմանելով ռիսկի այն սահմանաչափը, որը պատրաստ է ընդունել անհատական գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև դիտարկելով զգայունությունը նման սահմանաչափերի նկատմամբ:

Բանկը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Գործընկերների սահմանաչափերը հաստատված են վարկային ռիսկերի դասակարգման համակարգի միջոցով, որը յուրաքանչյուր գործընկերոջ համար սահմանում է ռիսկի վարկանիշ: Ռիսկերի վարկանիշները ենթակա են պարբերաբար վերանայման: Վարկերի որակի ստուգման գործընթացը Բանկին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

Վարկային բնույթ ունեցող պարտավորությունների հետ կապված ռիսկեր

Բանկը իր հաճախորդներին ընձեռում է երաշխիքների ստացման հնարավորություն, որոնց գծով Բանկի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները նման վճարումները հատուցում են Բանկին՝ ակրեդիտիվների տրամադրման պայմաններին համապատասխան: Նշված պայմանագրերի համաձայն՝ Բանկը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություն 9-ում:

(հազար ՀՀ դրամ)

Արժեզրկման գնահատում

Բանկը ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված երեք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

PD — *Դեֆոլտի հավանականությունը* որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

EAD — *Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը* դա ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:

LGD — *Դեֆոլտի դեպքում կորստի չափը* դա դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնակ ան ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Բանկը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում ՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Բանկը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1: Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

Փուլ 2: Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Բանկը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

Փուլ 3: Ակտիվը համարվում է արժեզրկված: Բանկը ձևակերպում է ԱԿԱՎԿ պահուստ:

POCI: Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

(հազար ՀՀ դրամ)

Դեֆոլտի և վերականգնման սահմանումը

Բանկը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ և, հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 91 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը, վերանայման կարգավիճակը, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ պարտազանցման ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է՝ արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող վարկային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2- ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- Փոխառու ֆինանսական ակտիվի գծով առավելագույն ժամկետանց օրերի փուլ;
- Այլ ֆինանսական կազմակերպություններում վարկառուի ժամկետանց վարկերի պատճառով սուբյեկտիվորեն դասակարգված վարկեր;
- Խնդրահարույց, վերակազմակերպված և ոչ սուբյեկտիվորեն դասակարգված ակտիվներ, որոնք ժամկետանց են 31 օր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «վերականգնված», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն վեց անընդմեջ ամիսների ընթացքում դեֆոլտի սահմանված չափանիշներից ոչ մեկը առկա չի եղել: Ակտիվի՝ վերականգնվելուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է վերականգնման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է վարկային ռիսկի զգալի աճ:

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Գանձապետական և միջբանկային հարաբերություններ

Բանկի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Բանկը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

Խմբավորում

Հաճախորդներին տրված վարկերի, որոնք պատկանում են Փուլ 1-ին և Փուլ 2-ին, ինչպես նաև անհատապես ոչ էական Փուլ 3-ին պատկանող վարկերի համար, Բանկը հաշվարկում է ԱՎԿ պորտֆելի մակարդակով: Բանկն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները.

- Խոշոր բիզնես վարկեր,
- ՓՄՁ վարկեր,
- Սպառողական վարկեր,
- Հիփոթեքային վարկեր,
- Այլ վարկեր:

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Բանկը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության: Դեֆոլտի հավանականությունների կանխատեսումները գնահատվում են հիմնվելով պաշտոնապես հասանելի կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

(հազար ՀՀ դրամ)

Հիմք ընդունելով մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատման շեղումները փաստացի միտումներից՝ մակրոտնտեսական զարգացման երեք սցենարները ուղղված են երեք դեֆոլտի հավանականության PIT մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% և 15% հավանականություններով՝ լավագույն, բազային և վատագույն սցենարներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է Բանկի ներքին վարկանիշների հիման վրա, ինչպես նկարագրված է վերևում: Բանկն ունի վարկանշային համակարգ, համաձայն որի այն դասակարգում է իր ֆինանսական ակտիվները ըստ բարձր դաս, ստանդարտ դաս, ստանդարտից ցածր դաս, արժեզրկված:

Միջազգային վարկանշային գործակալության (Moody's, Fitch) վարկանիշ	***Վարկանիշի նկարագրություն***
A3-ից AAA/ A- -ից AAA	Բարձր դաս
Ba3-ից Baa1/ BB- -ից BBB+	Ստանդարտ դաս
B3-ից B1/ B- -ից B+	Ստանդարտից ցածր դաս
B3-ից ցածր/ B-	Արժեզրկված դաս

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը՝ մեծացնելու իր վարկի գումարը դեֆոլտին մոտենալու դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Բանկը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամԱՎԿ հաշվարկելու նպատակով: Փուլ 2, Փուլ 3 և ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) դասին պատկանող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

Դեֆոլտի դեպքում կորստի չափը

Դեֆոլտի դեպքում կորստի չափի ցուցանիշը հաշվարկվում է յուրաքանչյուր գործիքի գծով գրավի արժեքի հիման վրա, ինչը թարմացվում է յուրաքանչյուր պահուստավորման ամսաթվին: Դեֆոլտի դեպքում կորստի չափը արտացոլում է ակնկալվող դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD)՝ համեմատած պահվող գրավի վաճառքից ակնկալվող իրացման կամ վերականգման գումարների հետ:

Ընդհանուր վերականգնումները հետագայում զեղչվում են դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով:

Վարկային ռիսկի զգալի աճ

Բանկը սահմանել է քաղաքականություն՝ գնահատելու յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի մնացորդային կյանքի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունը: Բանկը որպես հիմնական հայտանիշ է օգտագործում վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Բանկը համարում է, որ վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Վարկային ռիսկի աճը գնահատելիս Բանկի ղեկավարությունը նաև առաջնորդվում է հետևյալ գործոններով՝

- ՀՀ այլ ֆինանսական հաստատություններում տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը,
- Բանկը շարունակաբար վերահսկում է այն ակտիվները, որոնք ենթակա են ակնկալվող վարկային կորուստների: Որոշելու համար, արդյոք գործիքը կամ գործիքների պորտֆելը ենթակա 12ամԱՎԿ թե ԱԿԱՎԿ, Բանկը գնահատում է, արդյոք տեղի է ունեցել վարկային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո:

(հազար ՀՀ դրամ)

Հավաքական հիմունքով չափվող ֆինանսական ակտիվների խմբավորում

Հիմք ընդունելով ստորև գործոններ՝ Բանկը հաշվարկում է ԱՎԿ կամ հավաքական կամ անհատական հիմունքով:

ԱՎԿ-ն անհատական հիմունքով չափման դեպքում ակտիվների դասերը ներառում են՝

- Բոլոր փուլ 3-ի ակտիվները, անկախ ֆինանսական ակտիվների դասից;
- Փուլ 2 և փուլ 3-ում գտնվող կորպորատիվ վարկային պորտֆել;
- Փոքր բիզնեսի վարկային պորտֆելի լայնածավալ և յուրահատուկ ռիսկերը;
- որպես POCI դասակարգված ռիսկեր, երբ սկզբնական վարկը ապաճանաչվել է և նոր վարկը ճանաչվել է վարկային պարտքի վերակառուցման արդյունքում:

ԱՎԿ-ն հավաքական հիմունքով չափման դեպքում ակտիվների դասերը ներառում են՝

- Բանկի՝ փոքր բիզնեսի վարկավորման գծով ավելի փոքր և ընդհանուր մնացորդներ
- Փուլ 1 և փուլ 2-ում գտնվող հիփոթեքային և սպառողական վարկեր և փուլ 1-ում գտնվող կորպորատիվ վարկավորման պորտֆել:

Կանխատեսվող տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Բանկը հիմնվում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- Սպառողական գների աճ;
- ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք;
- Ընդհանուր վարկեր:

Կանխատեսվող տեղեկատվությունը Բանկը ստանում է արտաքին աղբյուրներից (արտաքին վարկանիշային գործակալություններ, կառավարական մարմիններ,օրինակ՝ կենտրոնական բանկեր և միջազգային ֆինանսական հաստատություններ): Բանկի Վարկային Ռիսկի Վարչության մասնագետները որոշում են բազմակի սցենարներին վերագրելի կշիռները: Ստորև աղյուսակը ներկայացնում է հիմնական կանխատեսվող տնտեսական փոփոխականների/ենթադրությունների արժեքները, որոնք օգտագործվել են ԱՎԿ հաշվարկի համար յուրաքանչյուր տնտետսական սցենարում:

Հիմնական գործոնները	*ԱՎԿ սցենար*	*Որոշված հավանակա-նությունը, %*	*2023թ.*	*2024թ.*	*2025թ.*
Սպառողական գների աճ, % (կուտ.)					
	Լավատեսական	0.15	0.50%	0.10%	0.10%
	Բազիսային	0.70	4.40%	3.80%	4.00%
	Վատատեսական	0.15	7.50%	6.90%	7.10%
ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք					
	Լավատեսական	0.15	418	445	460
	Բազիսային	0.70	438	465	490
	Վատատեսական	0.15	458	485	520
Ընդամենը վարկեր, հազար ՀՀ դրամ					
	Լավատեսական	0.15	5,321,847,528	6,024,025,587	6,726,203,647
	Բազիսային	0.70	4,808,637,985	5,365,512,082	5,922,386,180
	Վատատեսական	0.15	4,577,122,105	4,840,033,521	5,102,944,937

(հազար ՀՀ դրամ)

Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վարկային որակը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված վարկային գծով ակտիվների դասերի համար՝ հիմնվելով Բանկի վարկանշման համակարգի վրա 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ստորև ներկայացված աղյուսակում բարձր վարկանիշ ունեցող վարկերը հաճախորդներին տրված վարկերն են, որոնք ունեն նվազագույն մակարդակի վարկային ռիսկ, սովորաբար ապահովված բարձրակարգ գրավով (որպես գրավ են հանդիսանում դրամական միջոցներ կամ պետական երաշխիքներ): Լավ ֆինանսական վիճակ և պարտքերի սպասարկման լավ պատմություն ունեցող այլ վարկառուները ընդգրկվում են ստանդարտ վարկանիշի մեջ: Ստանդարտ վարկանիշից ցածր վարկերը կազմում են անհատապես չարժեզրկված, ստանդարտից ցածր գնահատական ունեցող վարկերը:

2022թ. դեկտեմբերի 31	*Ծան.*		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ստանդարտից ցածր դաս*	*Արժեզրկված*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	6	Փուլ 1	117,192	25,487,318	–	–	**25,604,510**
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	7	Փուլ 1	2,739,247	4,709,782	–	–	**7,449,029**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	9						
- Կորպորատիվ վարկավորում		Փուլ 1	25,140	67,423,322	–	–	**67,448,462**
		Փուլ 2	–	–	14,729,693	–	**14,729,693**
		Փուլ 3	–	–	–	5,083,921	**5,083,921**
		Փուլ 1	1,148,325	16,823,677	–	–	**17,972,002**
		Փուլ 2	–	–	358,248	–	**358,248**
- ՓՄՁ վարկեր		Փուլ 3	–	–	–	568,541	**568,541**
		Փուլ 1	–	17,567,420	–	–	**17,567,420**
		Փուլ 2	–	–	179,315	–	**179,315**
- Հիփոթեքային վարկեր		Փուլ 3	–	–	–	858,015	**858,015**
		Փուլ 1	33,300	1,510,989	–	–	**1,544,289**
		Փուլ 2	–	–	293,863	–	**293,863**
- Սպառողական վարկեր		Փուլ 3	–	–	–	206,674	**206,674**
		Փուլ 1	33,111	3,034,606	–	–	**3,067,717**
		Փուլ 2	–	–	57,731	–	**57,731**
- Այլ		Փուլ 3	–	–	–	1,322,937	**1,322,937**
		POCI	–	–	–	16,831	**16,831**
Պարտքային ներդրումային արժեթղթեր	10						
-Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող		Փուլ 1	1,966,005	44,075,016	–	–	**46,041,021**
-ամորտիզացված արժեքով չափվով		Փուլ 1	–	87,678,611	–	–	**87,678,611**
Այլ ֆինանսական ակտիվներ	16	Փուլ 1	–	777,432	–	–	**777,432**
Չօգտագործված վարկային գծեր	23	Փուլ 1	–	5,745,810	–	–	**5,745,810**
Ֆակտորինգի չօգտագործված մաս	23	Փուլ 1	–	3,542,663	–	–	**3,542,663**
Ընդամենը			**6,062,320**	**278,376,646**	**15,618,850**	**8,056,919**	**308,114,735**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վարկային որակը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված վարկային գծով ակտիվների դասերի համար՝ հիմնվելով Բանկի վարկանշման համակարգի վրա 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

(հազար ՀՀ դրամ)

2021թ. դեկտեմբերի 31	*Ծան.*		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ստանդարտից ցածր դաս*	*Արժեզրկված*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	6	Փուլ 1	251,534	25,183,229	–	–	**25,434,763**
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	7	Փուլ 1	1,094,719	1,445,767	–	–	**2,540,486**
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	9						
		Փուլ 1	210,420	65,000,118	–	–	**65,210,538**
		Փուլ 2	–	–	8,484,617	–	**8,484,617**
- Կորպորատիվ վարկավորում		Փուլ 3	–	–	–	6,156,194	**6,156,194**
		Փուլ 1	7,064,968	12,145,226	–	–	**19,210,194**
		Փուլ 2	–	–	752,370	–	**752,370**
- ՓՄՁ վարկեր		Փուլ 3	–	–	–	146,754	**146,754**
		Փուլ 1	88,683	16,205,383	–	–	**16,294,066**
		Փուլ 2	–	–	433,636	–	**433,636**
- Հիփոթեքային վարկեր		Փուլ 3	–	–	–	1,033,959	**1,033,959**
		Փուլ 1	22,912	2,120,106	–	–	**2,143,018**
		Փուլ 2	–	–	1,135,641	–	**1,135,641**
- Սպառողական վարկեր		Փուլ 3	–	–	–	–	**–**
		Փուլ 1	22,255	3,040,836	–	–	**3,063,091**
		Փուլ 2	–	–	1,403,299	–	**1,403,299**
- Այլ		Փուլ 3	–	–	–	–	**–**
Պարտքային ներդրումային արժեթղթեր	10						
-Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող		Փուլ 1	–	64,813,406	–	–	**64,813,406**
-ամորտիզացված արժեքով չափվով		Փուլ 1	–	89,542,976	–	–	**89,542,976**
Այլ ֆինանսական ակտիվներ		Փուլ 1	–	382,361	–	–	**382,361**
Չօգտագործված վարկային գծեր	23	Փուլ 1	–	4,273,940	–	–	**4,273,940**
Ֆակտորինգի չօգտագործված մաս	23	Փուլ 1	–	5,053,461	–	–	**5,053,461**
Ակրեդիտիվներ	23	Փուլ 1	–	1,483,674	–	–	**1,483,674**
Ընդամենը			**8,755,491**	**290,690,483**	**12,209,563**	**7,336,907**	**318,992,444**

Բանկի քաղաքականությունն է իր վարկային պորտֆելում ճշգրիտ և հետևողական ռիսկերի վարկանիշներ սահմանել: Այն դյուրացնում է կիրառելի ռիսկերի կենտրոնացված կառավարումը և վարկային ռիսկերի համեմատությունը բիզնեսի բոլոր ոլորտներում, աշխարհագրական տարածաշրջաններում և արտադրանքներում: Վարկանիշային համակարգը հիմնված է մի շարք ֆինանսական վերլուծությունների վրա՝ համակցված շուկայի մշակված տեղեկատվության հետ՝ ապահովելու կոնտրագենտների գծով ռիսկերի չափման նպատակով հիմնական ելակետային տվյալները: Բոլոր ներքին ռիսկերի վարկանիշները հարմարեցված են տարբեր կատեգորիաների և որոշվում են Բանկի վարկանիշային քաղաքականության համաձայն: Վերագրելի ռիսկերի վարկանիշները գնահատվում և պարբերաբար թարմացվում են:

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման պահուստի գծով մանրամասն տեղեկատվության համար տես ծանոթագրությունը 9-ը:

Ֆինանսական երաշխիքները, ակրեդիտիվները և վարկային պարտավորությունները գնահատվում են և ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստ է հաշվարկվում այնպես, ինչպես վարկերի համար:

(հազար ՀՀ դրամ)

Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումը ներկայացված է ստորև՝

	2022 թ. դեկտեմբերի 31				2021 թ. դեկտեմբերի 31			
	Հայաստան	ՏՀՀԿ երկրներ	ԱՊՀ և այլ երկրներ	Ընդամենը	Հայաստան	ՏՀՀԿ երկրներ	ԱՊՀ և այլ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	25,791,358	24,030	2,737,085	**28,552,473**	26,198,915	29,000	1,102,264	**27,330,179**
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	4,676,206	2,739,247	33,576	**7,449,029**	1,191,450	1,094,719	254,317	**2,540,486**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	26,252	–	–	**26,252**	35,125	–	–	**35,125**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	123,094,528	1,509,775	398,745	**125,003,048**	114,386,227	1,828,930	316,353	**116,531,510**
Ներդրումային արժեթղթեր	131,466,478	1,966,005	–	**133,432,483**	153,851,984	–	–	**153,851,984**
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	78,718,547	–	–	**78,718,547**	89,923,037	–	–	**89,923,037**
Այլ ֆինանսական ակտիվներ	777,432	–	–	**777,432**	382,361	–	–	**382,361**
	364,550,801	**6,239,057**	**3,169,406**	**373,959,264**	**385,969,099**	**2,952,649**	**1,672,934**	**390,594,682**
Պարտավորություններ								
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	66,796,630	3,503,774	10,503,322	**80,803,726**	70,408,132	3,676,271	12,442,426	**86,526,829**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	29,108	–	–	**29,108**	64,242	–	–	**64,242**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	65,254,784	23,650,851	40,630,409	**129,536,044**	47,483,787	24,023,317	64,559,524	**136,066,628**
Թողարկված պարտքային արժեթղթեր	19,313,528	2,987,030	30,108,185	**52,408,743**	22,237,982	3,704,613	32,896,480	**58,839,075**
Այլ փոխառու միջոցներ	24,478,281	9,534,472	765,913	**34,778,666**	13,305,258	17,616,412	1,043,066	**31,964,736**
Ստորադաս փոխառություններ	–	2,363,037	32,121,093	**34,484,130**	–	2,882,576	20,534,509	**23,417,085**
Այլ ֆինանսական պարտավորություններ	815,172	655	–	**815,827**	891,129	777	–	**891,906**
	176,687,503	**42,039,819**	**114,128,922**	**332,856,244**	**154,390,530**	**51,903,966**	**131,476,005**	**337,770,501**
Զուտ ակտիվներ / (պարտավորություններ)	**187,863,298**	**(35,800,762)**	**(110,959,516)**	**41,103,020**	**231,578,569**	**(48,951,317)**	**(129,803,071)**	**52,824,181**

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Բանկը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի: Ղեկավարությունն իրականացնում է նաև ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

(հազար ՀՀ դրամ)

Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հարաբերակցությունները կազմել են՝

	Սահմանային արժեք	*2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %*	*2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, %*
Ն21 – Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ)	նվ. 15%	53.84	56.97
Ն22 – Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	նվ. 60%	509.90	577.56

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա, բացառությամբ առևտրային ածանցյալ գործիքների, որոնք իրական արժեքով ներկայացված են առանձին սյունակում և համախառն մարված ածանցյալ գործիքները, որոնք ներկայացվում են պայմանագրային մարման ժամկետով: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն, Բանկը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Բանկը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Բանկի կողմից՝ անցյալ ժամանակաշրջանների ներդրումների պահանջների տեղեկատվության հիման վրա:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*մինչև մեկ ամիս*	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 տարի*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*	*Հաշվեկշռային արժեք*
Ֆինանսական պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	80,425,745	146,805	248,452	–	–	**80,821,002**	**80,803,726**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	29,108	–	–	–	–	**29,108**	**29,108**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	35,611,175	5,221,351	40,302,780	63,010,630	221,125	**144,367,061**	**129,536,044**
Այլ փոխառու միջոցներ	3,130,239	1,409,963	3,249,309	21,567,162	15,318,576	**44,675,249**	**34,778,666**
Թողարկված պարտքային արժեթղթեր	317,819	880,327	13,899,068	45,721,676	–	**60,818,890**	**52,408,743**
Ստորադաս փոխառություններ	871,132	8,491,199	2,242,532	14,752,872	22,946,438	**49,304,173**	**34,484,130**
Այլ ֆինանսական պարտավորություններ	33,653	–	782,174	–	–	**815,827**	**815,827**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**120,418,871**	**16,149,645**	**60,724,315**	**145,052,340**	**38,486,139**	**380,831,310**	**332,856,244**
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**17,597,453**	**–**	**–**	**–**	**–**	**17,597,453**	

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*մինչև մեկ ամիս*	*1-3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 տարի*	*5 տարուց ավելի*	*Ընդամենը*	*Հաշվեկշռային արժեք*
Ֆինանսական պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	87,530,419	515,485	–	–	–	**88,045,904**	**86,526,829**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	64,242	–	–	–	–	**64,242**	**64,242**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	30,189,511	5,338,011	20,634,578	94,976,920	6,242,479	**157,381,499**	**136,066,628**
Այլ փոխառու միջոցներ	591,871	1,697,057	11,599,312	17,586,810	6,969,742	**38,444,792**	**31,964,736**
Թողարկված պարտքային արժեթղթեր	346,019	942,830	3,439,650	67,375,100	–	**72,103,599**	**58,839,075**
Ստորադաս փոխառություններ	347,064	423,038	211,519	20,503,266	10,788,699	**32,273,586**	**23,417,085**
Այլ ֆինանսական պարտավորություններ	174,815	–	717,091	–	–	**891,906**	**891,906**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**119,243,941**	**8,916,421**	**36,602,150**	**200,442,096**	**24,000,920**	**389,205,528**	**337,770,501**
Պայմանական և պայմանագրային պարտավորություններ	**13,200,303**	**–**	**–**	**–**	**–**	**13,200,303**	

(հազար ՀՀ դրամ)

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում ընթացիկ հաշիվների պատմական կայունությունը: Պատմականորեն դրանց մարումը տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան ցույց է տրվում տվյալ աղյուսակում: Դրանց մնացորդները աղյուսակներում ընդգրկվում են «ցպահանջ և մինչև մեկ ամիս» ժամանակահատվածի գումարներում:

Հաճախորդների նկատմամբ պարտավորությունների մեջ ներառված են ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն ֆիզիկական անձիք կարող են ցանկացած պահի ետ պահանջել իրենց ժամկետային ավանդները:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների՝ ներառյալ արտարժույթի փոխարժեքի և տոկոսադրույքների, սեփական կապիտալի արժեքի փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Բանկի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է ժամանակաշրջանի զուտ տոկոսային եկամտի վրա՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հիման վրա, և զուտ առևտրային եկամտի վրա՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող առևտրային գործիքների հիման վրա: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

Արժույթ	***Բազիսային կետերի ավելացում 2022թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2022թ.***	***Կապիտալի զգայունություն 2022թ.***
ՀՀ դրամ	3.18%	(4,081,065)	(26,330,148)
ԱՄՆ դոլար	2.18%	(554,331)	(1,403,551)

Արժույթ	***Բազիսային կետերի նվազում 2022թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2022թ.***	***Կապիտալի զգայունություն 2022թ.***
ՀՀ դրամ	3.18%	4,081,065	26,330,148
ԱՄՆ դոլար	2.18%	554,331	1,403,551

Արժույթ	***Բազիսային կետերի ավելացում 2021թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2021թ.***	***Կապիտալի զգայունություն 2021թ.***
ՀՀ դրամ	1.50%	(1,055,394)	(17,496,161)
ԱՄՆ դոլար	1.25%	(787,124)	(1,356,473)

Արժույթ	***Բազիսային կետերի նվազում 2021թ.***	***Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2021թ.***	***Կապիտալի զգայունություն 2021թ.***
ՀՀ դրամ	1.50%	1,055,394	17,496,161
ԱՄՆ դոլար	0.25%	157,425	271,295

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Ղեկավարությունը սահմանել է սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

(հազար ՀՀ դրամ)

Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են այն արժույթները, որոնցով 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի էական արժութային դիրքեր՝ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է ՀՀ դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից), երբ բոլոր այլ փոփոխականները մնում են կայուն: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը:

Արժույթ	*Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2022թ.*	*Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2022թ.*	*Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2021*	*Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2021թ.*
ԱՄՆ դոլար	12.62%	119,895	5.00%	48,288
ԱՄՆ դոլար	(12.62%)	(119,985)	(5.00%)	(48,288)
Եվրո	21.31%	39,278	8.50%	(715)
Եվրո	(21.31%)	(39,278)	(8.50%)	715
Ռուբլի	16.00%	40,278	15.00%	6,985
Ռուբլի	(16.00%)	(40,278)	(15.00%)	(6,985)

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից տույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ, իրավական հետևանքներ կամ հանգեցնել ֆինանսական վնասների: Բանկը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան արձագանքի միջոցով Բանկը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների արդյունավետ տարանջատում, մուտքի թույլտվության, համադրման և հաստատման գործընթացներ, աշխատակազմի վերապատրաստում և գնահատում, այդ թվում՝ ներքին աուդիտ:

30. Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթաց

Բանկի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի համար, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքների համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ բռնագանձված ակտիվների համար:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի գնահատման համար: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխություն համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

(հազար ՀՀ դրամ)

Իրական արժեքի հիերարխիա

Բանկն օգտագործում է հետևյալ հիերարխիան՝ ըստ գնահատման մեթոդների ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու և բացահայտելու նպատակով՝

- Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):
- Մակարդակ 2 – մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Իրական արժեքի բացահայտման նպատակով Բանկը սահմանել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հինք ընդունելով ակտիվի կամ պարտավորության բնույթը, բնութագրերը և ռիսկերը և իրական արժեքի հիերարխիայի մակարդակը, ինչպես նկարագրված է վերևում:

	Իրական արժեքի չափում			
2022թ. դեկտեմբերի 31	***Մակարդակ 1***	***Մակարդակ 2***	***Մակարդակ 3***	***Ընդամենը***
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ գրավադրված հետգնման պայմանագրերով	–	78,718,547	–	**78,718,547**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	1,966,005	44,126,964	–	**46,092,969**
Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ - շենքեր	–	–	1,821,262	**1,821,262**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	26,252	–	**26,252**
Ընդամենը	**1,966,005**	**122,871,763**	**1,821,262**	**126,659,030**
Ակտիվներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է				
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	–	81,785,826	–	**81,785,826**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	–	–	125,693,518	**125,693,518**
Ընդամենը	**–**	**81,785,826**	**125,693,518**	**207,479,344**
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	–	29,108	–	**29,108**
Ընդամենը	**–**	**29,108**	**–**	**29,108**
Պարտավորություններ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է				
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	–	80,803,726	**80,803,726**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	–	130,315,815	**130,315,815**
Այլ փոխառու միջոցներ	–	–	34,379,759	**34,379,759**
Թողարկված պարտքային արժեթղթեր	–	52,408,743	–	**52,408,743**
Ստորադաս փոխառություններ	–	–	34,432,580	**34,432,580**
Ընդամենը	**–**	**52,408,743**	**279,931,880**	**332,340,623**

(հազար ՀՀ դրամ)

2021թ. դեկտեմբերի 31	*Իրական արժեքի չափում*			
	Մակարդակ 1	*Մակարդակ 2*	*Մակարդակ 3*	*Ընդամենը*
Իրական արժեքով չափվող ակտիվներ				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր՝ գրավադրված հետգնման պայմանագրերով	–	89,923,037	–	**89,923,037**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	–	64,877,556	–	**64,877,556**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	35,125	–	**35,125**
Ընդամենը	**–**	**154,835,718**	**–**	**154,835,718**
Ակտիվներ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է				
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	–	92,797,201	–	**92,797,201**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	–	–	115,805,714	**115,805,714**
Ընդամենը	**–**	**92,797,201**	**115,805,714**	**208,602,915**
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	–	64,242	–	**64,242**
Ընդամենը	**–**	**64,242**	**–**	**64,242**
Պարտավորություններ, որոնց համար իրական արժեքը բացահայտված է				
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	–	–	86,526,829	**86,526,829**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	–	–	140,256,886	**140,256,886**
Այլ փոխառու միջոցներ	–	–	32,532,435	**32,532,435**
Թողարկված պարտքային արժեթղթեր	–	61,320,040	–	**61,320,040**
Ստորադաս փոխառություններ	–	–	23,348,972	**23,348,972**
Ընդամենը	**–**	**61,320,040**	**282,665,122**	**343,985,162**

Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Ստորև ներկայացվում է Բանկի ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքների և իրական արժեքների համեմատությունն ըստ դասերի, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն հաշվառվում իրական արժեքով: Աղյուսակը չի ներառում ոչ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները:

	Հաշվեկշռային արժեք 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**Իրական արժեքը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Չճանաչված օգուտ/(վնաս) 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Հաշվեկշռային արժեք 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Իրական արժեքը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Չճանաչված օգուտ/(վնաս) 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Ֆինանսասական ակտիվներ						
Հաճախորդների տրված վարկեր և փոխառություններ ամորտիզացված արժեքով	125,003,048	125,693,518	(690,470)	116,531,510	115,805,714	725,796
Ներդրումային արժեթղթեր- պարտքային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	87,339,514	81,785,826	5,553,688	88,974,428	92,797,201	(3,822,773)
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	80,803,726	80,803,726	–	86,526,829	86,526,829	–
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	129,536,044	130,315,815	(779,771)	136,066,628	140,256,886	(4,190,258)
Թողարկված պարտքային արժեթղթեր	52,408,743	52,878,756	(470,013)	58,839,075	61,320,040	(2,480,965)
Այլ փոխառու միջոցներ	34,778,666	34,379,759	398,907	31,964,736	32,532,435	(567,699)
Ստորադաս փոխառություններ	34,484,130	34,432,580	51,550	23,417,085	23,348,972	68,113
Ընդամենը իրական արժեքի չճանաչված փոփոխություն	**544,353,871**	**540,289,980**	**4,063,891**	**542,320,291**	**552,588,077**	**(10,267,786)**

(հազար ՀՀ դրամ)

Գնահատման մեթոդներ և ենթադրություններ

Հետևյալը նկարագրում է այն մեթոդները և ենթադրությունները, որոնք օգտագործվում են ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով չափվող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները որոշելու նպատակով և այն հոդվածները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվում իրական արժեքով, բայց որոնց իրական արժեքը բացահայտվում է:

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է իրենց հաշվեկշռային արժեքին

Այն ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, որոնք իրացվելի են կամ ունեն կարճ ժամկետայնություն (երեք ամսից պակաս), ենթադրվում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են իրական արժեքին: Այս ենթադրությունը կիրառվում է նաև առանց որոշակի մարման ժամկետ ունեցող ցպահանջ ավանդների և խնայողական հաշիվների նկատմամբ:

Ներդրումային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը գնահատվում են գնահատման մեթոդի կամ գնագոյացման մոդելների կիրառմամբ և բաղկացած են հիմնականում ՀՀ պետական պարտքային արժեթղթերից: Այս արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորերի միջոցով, որոնք ներառում են շուկայում դիտարկելի և Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալները:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող կորպորատիվ արժեթղթերը գնահատվում են գնահատման մեթոդի կամ գնագոյացման մոդելների միջոցով՝ հիմնված ՀՀ բորսայի ամենօրյա գնանշումների վրա:

Ածանցյալ գործիքներ

Ածանցյալ գործիքները, որոնք գնահատվում են շուկայի դիտարկելի ելակետային տվյալների միջոցով գնահատման մեթոդի կիրառմամբ, հիմնականում արտարժույթային սվոփ և ֆորվարդային պայմանագրեր են: Գնահատման առավել հաճախ կիրառվող մեթոդները ներառում են ֆորվարդային գնագոյացում ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկները: Մոդելները ներառում են տարբեր ելակետային տվյալներ, ներառյալ արտարժույթի սփոթ փոխարժեքները, ֆորվարդային տոկոսադրույքները և ռիսկից զուրկ տոկոսադրույքների կորերը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Գնանշված պարտատոմսերի իրական արժեքը հիմնված է կորպորատիվ պարտատոմսերի գների գնանշումների և պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի վրա հաշվետու ամսաթվի դրությամբ: Չգնանշված գործիքների իրական արժեքը, հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները, հաճախորդների ավանդները, վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջներիը բանկերի նկատմամբ պարտավորությունները և այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները չափվում են ապագա դրամական միջոցների հոսքերի զեղչմամբ՝ հիմնվելով գործող տոկոսադրույքների վրա՝ կիրառելի փոխառու միջոցներ համար նմանատիպ պայմաններով, վարկային ռիսկով և մարման ժամկետով:

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-ում

Երրորդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների գնահատումը հիմնված է էական ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ֆինանսական ակտիվների շարժը կարելի է համադրել հետևյալ կերպ.

Ոչ ֆինանսական ակտիվներ	***2022թ.***	***2021թ.***
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	**1,373,566**	**1,451,600**
Վերագնահատում	525,520	–
Մաշվածության ծախս	(77,824)	(78,034)
Զուտ իրական արժեքը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,821,262**	**1,373,566**

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության:

Գնահատումը իրականացվել է՝ կիրառելով համեմատական մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում են վերոնշյալ գույքին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը, ներկայիս օգտագործումը:

(հազար ՀՀ դրամ)

Շենքերը վերագնահատվել են 2022 թվականին: Շենքերը նախկինում վերագնահատվել էին 2016 թվականի դեկտեմբերի 31-ին:

Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալները վերագնատված ակտիվին բնորոշ գործոնների ճշգրտումներն են: Տվյալ ճշգրտման չափը և նպատակը կախված է համանման ակտիվի մասով դիտարկելի շուկայական գործարքների քանակից և բնութագրերից, որն օգտագործվում է որպես գնահատման մեկնարկային կետ: Կապիտալացման դրույքաչափի խելամիտ հնարավոր միջակայքը 5.00%-15.00%-ն է: Չնայած այս ելակետային տվյալը հանդիսանում է սուբյեկտիվ դատողություն, ղեկավարությունը կարծում է, հնարավոր այլընտրանքային ենթադրությունները նշանակալի ազդեցություն չեն ունենա ընդահանուր գնահատման վրա:

31. Փոխանցված ֆինանսական ակտիվներ և որպես գրավ պահվող կամ տրամադրված ակտիվներ

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջությամբ չեն ապաճանաչվում

Հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանագրով վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին, և Բանկը դրա փոխարեն ստանում է դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ: Արժեթղթերի արժեքի ավելացման կամ նվազման դեպքում, Բանկը, որոշակի իրավիճակներում, կարող է պահանջել կամ նրանից կարող է պահանջվել դրամական միջոցների տեսքով լրացուցիչ ապահովություն: Բանկը եկել է այն եզրակացության, որ պահպանում է գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները կապված այդպիսի արժեթղթերի հետ, այդ թվում վարկային, շուկայական, երկրային և գործառնական ռիսկերը, և այդ պատճառով չի ապաճանաչել դրանք: Բացի այդ, Բանկը ճանաչում է ֆինանսական պարտավորությունները ստացված դրամական միջոցների նկատմամբ:

Նմանապես, Բանկն իրավունք ունի վաճառել կամ գրավադրել փոխառությամբ ներգրավված կամ հակադարձ հետգնման պայմանագրով ձեռք բերած արժեթղթերը, բայց պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Այս դեպքում գործընկերը պահպանում է սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերը և օգուտները: Հետևաբար, Բանկը չի ճանաչում այդպիսի արժեթղթերը, այլ ճանաչում է առանձին ակտիվ դրամական տեսքով տրամադրված ցանկացած գրավի նկատմամբ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունեցել է հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթեր 78,718,547 հազար ՀՀ դրամի, որոնք դասակարգվել են որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով և ամորտիզացված արժեքով չափվող (2021թ.՝ 89,923,037 հազար ՀՀ դրամ):

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ունեցել է 74,982,612 հազար ՀՀ դրամ (2021թ.՝ 81,628,278 հազար ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքի չափով համապատասխան պարտավորությունները, որոնք արտացոլված են այդպիսի գործարքների գծով ստացված դրամական միջոցների դիմաց և ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որպես «Պարտավորություններ բանկերի նկատմամբ»:

(հազար ՀՀ դրամ)

32. Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև ներկայացված աղյուսակները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք հաշվանցվել են ֆինանսական պարտավորությունների հետ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ինչպես նաև հաշվանցման վերաբերյալ իրավաբանորեն ամրագրված գլխավոր համաձայնագրերի և նմանատիպ համաձայնագրերի հետևանքները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

2022թ. դեկտեմբերի 31	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված դրամական ապահովում*	
Ֆինանսական ակտիվներ						
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ – հակադարձ հետգնման պայմանագրեր	2,327,437	–	2,327,437	–	2,237,437	–
Հաճախորդների տրված վարկեր և փոխառություններ – հակադարձ հետգնման պայմանագրեր	179,687	–	179,687	–	179,687	–
Ընդամենը	**2,507,124**	**–**	**2,507,124**	–	**2,507,124**	**–**
Ֆինանսական ապրտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ-հետգնման պայմանագրեր	74,982,612	–	74,982,612	(74,982,612)	–	**–**
Ընդամենը	**74,982,612**	**–**	**74,982,612**	**(74,982,612)**	**–**	**–**

2021թ. դեկտեմբերի 31	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված դրամական ապահովում*	
Ֆինանսական ակտիվներ						
Հաճախորդների տրված վարկեր և փոխառություններ – հակադարձ հետգնման պայմանագրեր	188,950	–	188,950	–	188,950	**–**
Ընդամենը	**188,950**	**–**	**188,950**	–	**188,950**	**–**
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ-հետգնման պայմանագրեր	81,376,952	–	81,376,952	(81,376,952)	–	**–**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ-հետգնման պայմանագրեր	251,326	–	251,326	(251,326)	–	**–**
Ընդամենը	**81,628,278**	**–**	**81,628,278**	**(81,628,278)**	**–**	**–**

(հազար ՀՀ դրամ)

33. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ակտիվները և պարտավորությունները՝ իրենց սպասվելիք մարման ժամկետների կտրվածքով: Բանկի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 29-ում «Ռիսկերի կառավարում»:

	2022թ. դեկտեմբերի 31			*2021թ. դեկտեմբերի 31*		
	Մեկ տարվա ընթացքում	***Մեկ տարուց ավել***	***Ընդամենը***	***Մեկ տարվա ընթացքում***	***Մեկ տարուց ավել***	***Ընդամենը***
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,552,473	–	**28,552,473**	27,330,179	–	**27,330,179**
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	7,289,392	159,637	**7,449,029**	1,966,801	573,685	**2,540,486**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	26,252	–	**26,252**	35,125	–	**35,125**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	39,814,980	85,188,068	**125,003,048**	33,248,362	83,283,148	**116,531,510**
Ներդրումային արժեթղթեր	3,650,185	129,782,298	**133,432,483**	3,587,135	150,264,849	**153,851,984**
Հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	78,718,547	–	**78,718,547**	89,923,037	–	**89,923,037**
Հիմնական միջոցներ	–	2,020,076	**2,020,076**	–	1,637,423	**1,637,423**
Ոչ նյութական ակտիվներ	–	82,402	**82,402**	–	78,693	**78,693**
Բռնագանձված ակտիվներ	1,175,804	–	**1,175,804**	–	1,794,760	**1,794,760**
Հետաձգված հարկային ակտիվներ	–	4,178,389	**4,178,389**	–	929,187	**929,187**
Այլ ակտիվներ	4,515,725	17,954	**4,533,679**	1,808,493	1,959,561	**3,768,054**
Ընդամենը	**163,743,358**	**221,428,824**	**385,172,182**	**157,899,132**	**240,521,306**	**398,420,438**
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	80,803,726	–	**80,803,726**	86,526,829	–	**86,526,829**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	29,108	–	**29,108**	64,242	–	**64,242**
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	66,253,938	63,282,106	**129,536,044**	53,494,265	82,572,363	**136,066,628**
Այլ փոխառու միջոցներ	7,170,876	27,607,790	**34,778,666**	7,408,184	24,556,552	**31,964,736**
Թողարկված պարտքային արժեթղթեր	11,949,934	40,458,809	**52,408,743**	518,605	58,320,470	**58,839,075**
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	186,533	–	**186,533**	476,439	–	**476,439**
Ստորադաս փոխառություններ	10,516,280	23,967,850	**34,484,130**	135,546	23,281,539	**23,417,085**
Այլ պարտավորություններ	2,210,310	–	**2,210,310**	1,998,458	–	**1,998,458**
Ընդամենը	**179,120,705**	**155,316,555**	**334,437,260**	**150,622,568**	**188,730,924**	**339,353,492**
Զուտ	**(15,377,347)**	**66,112,269**	**50,734,922**	**7,276,564**	**51,790,382**	**59,066,946**

(հազար ՀՀ դրամ)

34. Կապակցված կողմերի բացահայտումներ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա մայր կազմակերպությունը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները: Բանկի վերջնական վերահսկող է հանդիսանում Վարտան Սիրմակեսը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտը և ծախսը հետևյալն են.

	2022թ.			*2021թ.*		
	Բաժնետերեր	*Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ*	*Առանցքային ղեկավար անձնակազմ*	*Բաժնետերեր*	*Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ*	*Առանցքային ղեկավար անձնակազմ*
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ						
Հունվարի 1-ի դրությամբ	–	–	–	–	70,000	–
Աճ	–	–	–	–	–	–
Նվազում	–	–	–	–	(70,000)	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**–**	**–**	**–**	**–**	**–**	**–**
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	–	–	–	–	–	–
Դրամական միջեցների և դրանց համարժեքների մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, զուտ	**–**	**–**	**–**	**–**	**–**	**–**
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ						
Հունվարի 1-ի դրությամբ	–	–	–	–	2,070,000	–
Աճ	–	–	–	–	347,302	–
Նվազում	–	–	–	–	(2,417,302)	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	–	–	–	–	–	–
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	–	–	–	–	–	–
Դրամական միջեցների և դրանց համարժեքների մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, զուտ	–	–	–	–	–	–
Հաճախորդների տրված վարկեր և փոխառություններ						
Վարկերի մնացորդը հունվարի 1-ի դրությամբ, համախառն	**–**	**9,642,903**	**292,065**	**–**	**13,248,645**	**441,194**
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	–	6,004,098	420,761	–	16,555,136	362,079
Տարվա ընթացքում մարված վարկեր	–	(10,291,448)	(401,497)	–	(20,144,521)	(502,421)
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, համախառն	**–**	**5,355,553**	**311,329**	**–**	**9,659,260**	**300,852**
Նվազեցում՝ արժեզրկման գծով պահուստ դեկտեմբերի 31-ի դրությամբ	–	(429,796)	(3,744)	–	(16,357)	(8,787)
Վարկերի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, զուտ	**–**	**4,925,757**	**307,585**	**–**	**9,642,903**	**292,065**

(հազար ՀՀ դրամ)

Պարտավորություններ բանկերի նկատմամբ						
Հունվարի 1-ի դրությամբ	**–**	**8,653**	**–**	**–**	**9,548**	**–**
Աճ	–	1,837,123	–	–	273,904	–
Նվազում	–	(1,839,427)	–	–	(274,799)	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	–	6,349	–	–	8,653	–
Ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	**54,014,694**	**17,487,368**	**19,146,647**	**65,024,148**	**16,128,105**	**21,375,827**
Տարվա ընթացքում ստացված ավանդներ	48,602,476	44,115,562	2,636,507	60,812,525	36,770,762	21,797,841
Տարվա ընթացքում վճարված ավանդներ	(62,533,380)	(40,676,702)	(21,530,676)	(71,821,979)	(35,411,499)	(24,027,021)
Ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**40,083,790**	**20,926,228**	**252,478**	**54,014,694**	**17,487,368**	**19,146,647**
Թողարկված պարտքային արժեթղթեր						
Հունվարի 1-ի դրությամբ	**26,812,905**	**4,511,043**	**6,716,163**	**28,812,062**	**5,073,320**	**7,709,314**
Աճ	33,919,485	6,368,765	433,222	6,821,768	1,550,787	2,111,789
Նվազում	(35,610,863)	(7,048,805)	(6,929,768)	(8,820,925)	(2,113,064)	(3,104,940)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**25,121,527**	**3,831,003**	**219,617**	**26,812,905**	**4,511,043**	**6,716,163**
Ստորադաս փոխառություններ						
Հունվարի 1-ի դրությամբ	**20,534,509**	**2,882,576**	**–**	**10,689,415**	**3,137,172**	**–**
Աճ	20,184,071	906,608	–	15,329,601	692,095	–
Նվազում	(8,597,488)	(1,426,147)	–	(5,484,507)	(946,691)	–
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**32,121,092**	**2,363,037**	**–**	**20,534,509**	**2,882,576**	**–**
Պարտավորություններ և երաշխիքներ, տրված	–	355,415	18,357	–	314,586	32,279
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն						
Տոկոսային եկամուտ	–	295,536	40,045	–	767,963	38,131
ԱՊԿ ծախս	–	830,575	2,258	–	(807,266)	4,421
Միջնորդավճարների գծով եկամուտ	9,826	14,258	577	8,284	10,394	4,947
Զուտ առևտրային եկամուտ	92,520	13,479	8,962	50,140	33,220	15,125
Տոկոսային ծախս	(9,399,452)	(1,901,904)	(22,912)	(9,560,137)	(1,756,976)	(1,329,851)
Վարչական և այլ ծախսեր	–	–	(23,904)	–	(375)	7,802
Միջնորդավճարների գծով ծախս	–	(20)	–	–	–	–
Անձնակազմի գծով ծախսեր	–	(894)	(1,895)	–	(1,015)	(410)
Այլ եկամուտ	–	8,461	2,018	–	8,668	2,591

(հազար ՀՀ դրամ)

Ղեկավար անձնակազմի գծով կատարված հատուցումները հետևյալն են՝

	2022թ.	*2021թ.*
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	610,989	548,891
Ընդամենը առանցքային ղեկավար անձնակազմի հատուցում	**610,989**	**548,891**

35. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

	Ծան.	*Թողարկված պարտքային արժեթղթեր*	*Այլ փոխառու միջոցներ*	*Ստորադաս փոխառություններ*	*Վարձակալության գծով պարտավորություններ*	*Ֆինանսավորման գործունեությունից ընդամենը պարտավորություններ*
Հաշվեկշռային արժեք 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16, 19, 20, 21**	**64,911,905**	**26,153,713**	**13,826,587**	**126,176**	**105,018,381**
Թողարկումից մուտքեր		–	20,059,280	10,000,000	–	**30,059,280**
Մարումներ		(2,000,000)	(12,605,086)	–	(54,624)	**(14,659,710)**
Արտարժութային փոխարկումներ		(4,034,050)	(1,775,254)	(467,446)	–	**(6,276,750)**
Անկանխիկ գործարքներ		–	–	–	819	**819**
Այլ		(38,780)	132,083	57,944	7,318	**158,565**
Հաշվեկշռային արժեք 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16, 19, 20, 21**	**58,839,075**	**31,964,736**	**23,417,085**	**79,689**	**114,300,585**
Թողարկումից մուտքեր		–	19,042,056	12,000,000	–	**31,042,056**
Մարումներ		–	(13,760,849)	–	(61,885)	**(13,822,734)**
Արտարժութային փոխարկումներ		(6,458,780)	(2,637,025)	(953,854)	–	**(10,049,659)**
Այլ		28,448	169,748	20,899	5,666	**224,761**
Հաշվեկշռային արժեք 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**16, 19, 20,21**	**52,408,743**	**34,778,666**	**34,484,130**	**23,470**	**121,695,009**

«Այլ» տողում ներառված է տարվա ընթացքում թողարկված պարտքային արժեթղթերի, այլ փոխառու միջոցների, ստորադաս փոխառությունների և վարձակալության գծով պարտավորությունների գծով վճարված և հաշվեգրված տոկոսների զուտ ազդեցությունը: Բանկը դասակարգում է վճարված տոկոսները որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

36. Կապիտալի համարժեքություն

Բանկն ակտիվորեն կառավարում է կապիտալը իր գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու նպատակով: Բանկի կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ կիրառելով Բազելյան համաձայնագրով սահմանված կապիտալի գծով սկզբունքներն ու ցուցանիշները և Բանկի վերահսկման նպատակով ՀԲ-ի կողմից սահմանված նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանած պահանջներին, և որ Բանկն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է ներգրավել ստորադաս վարկեր, փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

(հազար ՀՀ դրամ)

Բանկը որպես կապիտալ ճանաչում է ՀՀ օրենսդրությամբ բանկերի կապիտալի համար սահմանված հոդվածները: ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կապիտալի ներկայիս պահանջների համաձայն, որոնք հիմնված են 1988թ. Բազելյան համաձայնագրի սկզբունքների վրա, բանկերը պետք է ապահովեն, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը, ինչպես նաև հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշը (Ն1.1 և Ն1.2 կապիտալի համարժեքության ցուցանիշները) բարձր լինի սահմանված նվազագույն մակարդակից: 2022 և 2021 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ն1.1 և Ն1.2 ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 9% և 12%: 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կապիտալի համարժեքության ցուցանիշը համապատասխանում է սահմանված մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է 1988թ. Բազելյան համաձայնագրի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի կառուցվածքի վերլուծությունը 2022 և 2021թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	2022թ. դեկտեմբերի 31	***2021թ. դեկտեմբերի 31***
1-ին դասի կապիտալ	67,960,753	60,060,302
2-րդ դասի կապիտալ	17,523,779	10,850,050
Ընդհանուր կապիտալ	**85,484,532**	**70,910,352**
Ռիսկով կշռված ակտիվներ	**319,637,636**	**393,972,350**
Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1.1	**21.26%**	**15.24%**
Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1.2	**26.74%**	**18.00%**